



«Միտք» վերլուծական կենտրոն

**Հայոց հյուսիսային դարպասները.
ՋԱՎԱԽՔ
ԼՈՌԻ**

**ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԱՄՐԱԳՐՈՒՄԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ**

*Յեղիճակ - կազմող՝ Վահե ՍԱՐԳՍՅԱՆ
Խմբագիր և առաջաբանի հեղինակ՝ Արա ՊԱՊՅԱՆ*

ԵՐԵՎԱՆ

«Միտք» վերլուծական կենտրոն
2009

ՀՏԳ- 341
ԳՄԳ- 67. 91
Հ 282

*Խմբագիր և առաջաբանի հեղինակ՝
Արա Պապյան*

Գրախոսներ՝

*ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալբերտ Ստեփանյան
պատմական գիտությունների թեկնածու
Էդուարդ Ափրամյան*

Հայոց հյուսիսային դարպասները. ՋԱՎԱԽՔ, ԼՈՌԻ:
Հ 282 Ջավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային
փաստաթղթերում - Եր.: «Միտք» վերլուծական կենտրոն,
2009.- 392 էջ:

Ներկայացվող աշխատանքում միջազգային իրավունքի լույսի ներքո առաջին անգամ համապարփակ կերպով քննության է առնված ջավախահայության իրավունքների խնդիրը: Այդ նպատակով գրքում ամբողջականորեն բերված և Ջավախքի հիմնախնդրի տեսանկյունից վերլուծված են ջավախահայության իրավունքներին անմիջականորեն առնչվող մի շարք հռչակագրեր, արձանագրություններ, կոնվենցիաներ և հանձնարարականներ:

Գրքում Ջավախքի խնդիրը հիմնավոր կերպով դուրս է բերվում միջազգային արենա, ի ցույց տրվում ջավախահայության՝ միջազգային իրավունքին առնչվող փաստաթղթերով սահմանված իրավունքները:

Նախատեսված է ջավախահայության, ինչպես նաև՝ հասարակական – քաղաքական գործիչների, պետական այրերի, Ջավախքի խնդրով խկապես մտահոգ ընթերցող շրջանակների համար:

ԳՄԳ- 67. 91

ISBN 978-99941-2-296-7

© «Միտք» վերլուծական կենտրոն, 2009թ.

**Նվիրվում է ջավախահայուլթյանը,
որը հայրենի հողի վրա ապրում և
պայքարում է հանուն իր
սրբազան իրավունքների:**

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ



Միջազգային իրավունքը որպես փոքրամասնությունների հիմնախնդիրները լուծելու վստահելի ճանապարհ

1991թ. անկախացումից ի վեր
Հայաստանի Հանրապետությունն
ամեն գնով աշխատել է անխաթար

պահել հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը: Հայաստանի բոլոր իշխանությունները հետևողականորեն ջանքեր են գործադրել մեր երկրի և Վրաստանի միջև կայուն բարիդրացիական հարաբերություններ պահպանելու համար: Հայաստանը դա արել է անսակարկ և իր քաղաքականությունը բնավ չի պայմանավորել Վրաստանի ներքաղաքական կամ տարածաշրջանի արտաքին քաղաքական հանգամանքերով:

Դյուրին չի եղել այդ ընթացքը: Վրաստանում մեկը մյուսին հաջորդած հեղաշրջումները, ներքին ռազմական բախումներն ու պատերազմները, ռազմատենչ ազգայնականությունը, այլազգիների որպես տնվոր ու անկոչ հյուր դիտելու քաղաքականությունը, միջազգային կառույցներում մշտապես Հայաստանի դեմ քվեարկելը, էական խոչընդոտներ են ստեղծել այդ ճանապարհին: Անգամ իր տարածքով հայաստանյան բեռնափոխադրումների իրականացումը Վրաստանը դիտարկել է ոչ թե որպես բազմակողմ և երկկողմ միջպետական պարտավորությունների կատարում, որը էապես համալրում է երկրի բյուջեն, այլ լծակ՝ Հայաստանի հետ հարաբերություններում առավելագույնը կորզելու համար: Նման քաղաքականությունը, թերևս, կարելի է բացատրել Վրաստանի այն սխալ ընկալմամբ, որով մեկնաբանվել և առ այսօր մեկնաբանվում են հայերի և Հայաստանի հանդուրժողականությունն ու համբերատարությունը:

Հայ-վրացական հարաբերությունների մեջ հարցերի մի ողջ փաթեթ առնչվում է վիրահայության ճակատագրին: Թեև այսօր իրավական տեսանկյունից վիրահայությունն ընկալվում է որպես մեկ ան-

բողջություն, այսուհանդերձ, այն բաղկացած է երկու մեծ՝ սերտաճած ու հարափոփոխ, հատվածից. **Թիֆլիսի և այլ քաղաքների ու շրջանների գաղթականասերունդ հայություն և Ջավախքի բնիկ հայություն:**

Վիրահայությունն ընդհանրապես և թիֆլիսահայությունը մասնավորապես, բացառիկ դերակատարություն են ունեցել Վրաստանի կյանքում: Աշխարհում քիչ ժողովուրդներ կան, որ ուրիշի երկրի շենացման գործում այնքան մեծ ներդրում ունեցած լինեն, որքան հայերը Վրաստանի: Դարեր շարունակ հայի քրտինքը առատորեն հոսել է ի շահ Վրաստանի շենացման, իսկ արյունն ի պաշտպանություն այդ երկրի: Հայերը դա արել և անում են առաջնորդվելով իրենց նոր հայրենիքի նկատմամբ ունեցած սիրո և հավատարմության զգացումից: Սակայն միշտ չէ, որ նրանց այդ վարքը գնահատվել ու գնահատվում է ըստ արժանվույն, հաճախ են նրանք երախտագիտության խոսքերի փոխարեն արժանանում պարսավանքի, տուժում ազգային և կրոնական խտրականության դրսևորումներից:

Ընդհանուր վիրահայության հարցի մեջ, առանձնակի և էապես տարբեր է Ջավախքի հայության հարցը: Եթե, օրինակ, թիֆլիսահայության համար բնակավայրը եղել է գիտակցված ընտրություն, որի հետևանքով էլ նրանք այսօր ունեն ազգային փոքրամասնության կարգավիճակ, ապա այլ է ջավախահայության ճակատագիրը: **Հայրենի հողում ապրող բնիկ հայության այդ հատվածը բոլշևիկյան կամայականության հետևանքով նախ դրվել է Սովետական Վրաստանի վարչական ենթակայության տակ, իսկ ՍՍՀՄ փլուզումից հետո հայտնվել է սեփական հայրենիքի սահմաններից դուրս:**

Տեսնենք պատմական ի՞նչ զարգացումների հետևանք է Ջավախքի ներկա կարգավիճակը և ի՞նչ իրավական փաստաթղթերի վրա է դա խարսխված: Երբ 1918թ. մայիսին Ռուսական կայսրության Կովկասի փոխարքայության հարավային մասի վրա իրենց անկախությունը հռչակեցին երեք նորաստեղծ երկիր, միջազգային հանրությունը չէր շտապում ճանաչել դրանց անկախությունը: Կային մի շարք պատճառներ: Էական պատճառներից մեկն այն էր, որ դեռևս չէին հստակեցված նշյալ երկրների սահմանները: Փարիզի խաղաղության վեհաժողովը (1919-1920թթ.), որի հիմնական խնդիրն էր մշակել նոր աշխարհակարգի ձևավորման սկզբունքները, բնականաբար պիտի անդրադառնար նաև այս նորաստեղծ երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Կովկասի թաթարների պետության սահմաններին: Իհարկե, սահմանների վերջնական հստակեցումը պիտի կատար-

վեր նշյալ երկրների երկկողմ համաձայնությամբ, այսուհանդերձ Չարավային Կովկասի համար վեհաժողովը որդեգրեց երկու առաջնորդող սկզբունք. **ա/. Ռուսաստանի կայսրության նախկին վարչա-տարածքային բաժանումը չի կարող հիմք հանդիսանալ միջպետական օրինական սահմանների համար; բ/. տարածքների իրավատիրությունը որոշելու հարցում պետք է առաջնորդվել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի ազգերի ինքնորոշման սկզբունքով և սահմանորոշումը (delimitation) կատարել հաշվի առնելով ազգային տեղաբաշխման պատկերը:**

Այս և նման այլ խնդիրներ լուծելու համար Փարիզի վեհաժողովի շրջանակում ստեղծվեցին մի շարք հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր: Միացյալ Նահանգները, բացի համատեղ աշխատանքներին մասնակցելուց, ստեղծեց նաև հատուկ հանձնախումբ. **Ամերիկյան պատվիրակության հետազոտական բաժինը (The Intelligence Section of the American Delegation)**, որի նպատակն էր մշակել ԱՄՆ դիրքորոշումը բոլոր կարևորագույն հարցերի նկատմամբ: Ահա այս հանձնախումբը պատրաստեց և 1919թ. հունվարի 31-ին նախագահ Վիլսոնի ուշադրությանը ներկայացրեց ԱՄՆ-ի դիրքորոշման հիմնադրույթները Չարավային Կովկասի և Միջին արևելքի տարածքային հարցերի նկատմամբ: Այստեղ, բնականաբար անդրադարձ կար նաև Չայաստանի սահմաններին: Ամերիկյան մտտեցմամբ Ջավախքը միանշանակորեն դիտարկվում էր որպես Չայաստանի Չանրապետության տարածք. **«Նախկին Ռուսական [կայսրության] Կարսի և Երևանի նահանգների, Ախալքալաքի և Ախալցխի ենթաշրջանների հետ միասին, ներառումը պայմանավորված է այն փաստով, որ նրանք ունեն հայկական բնակչության ամենամեծ զանգվածը»** («*The inclusion of the former Russian provinces of Kars and Erivan, with the sub-districts of Akhalkalaki and Akhaltsikh, is determined by the fact that they contain the largest block of Armenian peoples*».)¹

Հետագայում Ջավախքի հայաստանապատկանությունը վերահաստատվեց Ազգերի լիգայի խորհրդի հովանու ներքո գործող **Չայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի (Commission for the Delimitation of the Boundaries of Armenia)**

1 Tentative Recommendations for President Wilson by the Intelligence Section of the American Delegation to the Peace Conference, 21 January 1919. [J.C. Hurewitz, Diplomacy in the Near and Middle East, v. II, A Documentary Record, 1914-1956, New Jersey, 1956, p. 42.]

կողմից: Սույն հանձնաժողովի զեկույցի տակ դրված են Ազգերի լիգայի խորհրդի (Council of League of Nations) անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Բրիտանական կայսրության, Իտալիայի և Ճապոնիայի, լիազոր ներկայացուցիչների ստորագրությունները: Այս զեկույցը, որը թվագրված է 24 փետրվարի, 1920թ.-ով և վերնագրված է **«Ձեկույց և առաջարկներ Չայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի» (Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, 24 February 1924)**² հստակեցրել և ամրագրել է Չայաստանի Չանրապետության սահմանագատման սկզբունքները նրա հյուսիսային հարևանների հետ: Այն մասնավորապես արձանագրում է. **«Ինչ վերաբերում է Չայաստանի պետության և Վրաստանի, ինչպես նաև Ադրբեյջանի սահմանին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ ներկայումս նախընտրելի է սպասել վերոնշյալ սահմանների հստակեցման վերաբերյալ այնպիսի համաձայնության արդյունքների, որոնց երեք հանրապետություններն իրենք կհանգեն պայմանագրերի մեջ: Այն դեպքում, եթե սույն հանրապետություններն իրենց սահմանների վերաբերյալ չեն հանգի որևէ համաձայնության, ապա հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի իրավաբանությանը, որը կստեղծի միջդաշնակցային Հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները»:** (*As regards the boundary between the State of Armenia and Georgia and Azerbaijan, the Commission considers that, it is advisable for the present to await the results of the agreement, provided for in the treaties existing between the three Republics, in regard to the delimitation of their respective frontiers by the States themselves. In the event of these Republics not arriving at an agreement respecting their frontiers, resort must be had to arbitration by the League of Nations, which would appoint an interallied Commission to settle on the spot the frontiers referred to above, taking into account, in principle, of ethnographical data.*)

Հուլիս կարևոր է, որ նշյալ փաստաթուղթն ընդգրկվել է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռի (22 նոյեմբերի, 1920թ.) (Arbitral Award, November 22, 1920) *Ամբողջական զե-*

2 United States National Archives, Records of the Department of State Relating to Political Relations between Armenia and other States, 1910-1929, 760J.6715/60-760J.90C/7, Appendix I, No. 2.

կույցի մեջ, որպես 1-ին հավելվածի 2-րդ փաստաթուղթ (*Full Report, Annex I, No 2*), որը վկայում է, որ Միացյալ Նահանգները ճանաչել են նշյալ փաստաթղթի իրավական էությունն ու օրինականությունը:

Նշյալ դրույթները ներառվել են նաև Սևրի պայմանագրի (10 օգոստոսի, 1920թ.) մեջ³, որպես Պայմանագրի 92-րդ հոդված. «**Հայաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի, միջև սահմանները կորոշվեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնության միջոցով: Այն դեպքում, երբ շահագրգիռ երկրները մինչև 89-րդ հոդվածում հիշատակված որոշման օրը չեն կարողանա համաձայնությամբ որոշել սահմանները, ապա խնդրո առարկա սահմանը կորոշվի Գլխավոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կիրականացնեն նաև սահմանանշումը»:** (*The frontiers between Armenia and Azerbaijan and Georgia respectively will be determined by direct agreement between the states concerned. In the either case the States concerned have failed to determine the frontier by agreement at the date of the decision referred to in Article 89, the frontier line in question will be determined by the Principal Allied Powers, who will also provide for its being traced on the spot.*)

Սկզբունքները մշակված էին, վճիռները կայացված, անգամ Սահմանային հանձնաժողովն (Boundary Commission) էր ձևավորված: Սակայն Հայաստանի, ապա և Վրաստանի խորհրդայնացումը, Ազգերի լիգային թույլ չտվեց իրականացնել իր իսկ որոշումը, այն է ազգային տեղաբաշխման սկզբունքի հիման վրա կատարել սահմանազատում և սահմանանշում: Իշխանության եկած բոլշևիկները, թեև մշտապես խոսում էին ազգերի ինքնորոշումից, սակայն, ինչպես միշտ, Ջավախքի հարցում էլ նրանց գործը տարբերվեց խոսքից:

Այսպես, 1921թ. հուլիսի 7-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Ռուսաս-

3 Պետք է շեշտել, որ Սևրի պայմանագիրը կատարման համար պարտադիր փաստաթուղթ է, քանի որ այն ստորագրվել է «բարձր պայմանավորվող կողմերի» միջև և ինչպես ամրագրված է *Վիեննայի Պայմանագրերի մասին միջազգայնագրի [կոնվենցիայի]* (1969թ.) 2-րդ հոդվածի 6-րդ կետով, և *Պայմանագրերի նկատմամբ պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի միջազգայնագրի [կոնվենցիայի]* (1978թ.) 2-րդ հոդվածի 11-րդ կետով, կողմերը պարտավորվում են պայմանագիրն ընդունել որպես կատարման համար պարտադիր փաստաթուղթ, անկախ պայմանագրի ուժի մեջ մտած կամ չմտած լինելուց:

տանի Սոցիալ-Դեմոկրատական (բանվորական) Կուսակցության Կովկասյան բյուրոյի պենումի նիստ, որի հարցերից մեկը վերաբերում էր Ջավախքին: «*Հայաստանի միալքալարի և խրամի (Ծալկայի) շրջանների միացման հարցը*» որոշվեց փոխանցել Վրաստանի Կոմկուսի կենտկոմ, վեջինիցս այդ մասին ստացվելիք եզրակացությունը դնել Կավբյուրոյի հաջորդ նիստի քննարկմանը:⁴ 1921թ. հուլիսի 16-ին տեղի ունեցավ Վրաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստ՝ Մախարաձեի, Մդիվանու և Օրախելաշվիլու մասնակցությամբ: Նիստը Ջավախքի, վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը. «*Թիֆլիսի հետ միալքալարի շրջանի ունեցած քաղաքական, ինչպես նաև տնտեսական կապերի նկատառումներից ելնելով, ընկերներ հայերի առաջարկությունը համարել անընդունելի*»:⁵

Ահա այսպես, առանց որևէ իրավական վճռի, միայն կուսակցական որոշումով, Ջավախքը 1921-1991թթ. հայտնվեց Վրաստանի Սովետական [խորհրդային] Սոցիալիստական Հանրապետության ենթակայության ներքո: Անհրաժեշտ է ընդգծել, որ հետխորհրդային Վրաստանի բոլոր ղեկավարներն ու կառավարությունները միանշանակ բացասական գնահատականներ են տվել Վրաստանում կոմունիստական տիրապետության ժամանակաշրջանին (1921-1991թթ.), մերժել են այն, իրավացիորեն այդ ժամանակաշրջանը համարել օտարերկրյա ռազմական ուժի կողմից վրաց ժողովրդի պետականագրկման, երկրի ապօրենի բռնազավթման (1921թ. փետրվարից), ապա և բռնակցման (1922թ. դեկտեմբերից) տարիներ: Միջազգային իրավունքի տեսանկյունից միանգամայն օրինաչափ գնահատականներ, քանի որ նույն միջազգային իրավունքի հիմնադրույթներից է, որ զավթիչ վարչախմբի (օկուպացիոն ռեժիմի) գործողությունները չեն կարող և չեն ծնում իրավական հետևանքներ տվյալ երկրի համար, անկախ այն բանից այդ հետևանքները դրական են, թե բացասական:

Վրացկոմկուսի որոշման անօրինականության փաստը ամրապնդվում է նաև այն հանգամանքով, որ ներկա Վրաստանի ուղղակի իրավահաջորդությունը Վրաստանի առաջին հանրապետությանը ամրագրված է «*Վրաստանի պետական անկախության վերականգման ակտով*», /թվագրված 9 ապրիլի, 1991թ./, որն էլ վկայակոչման ճանապարհով ներառված է Վրաստանի գործող սահմանադրության 1-ին հոդվածի 1-ին մասում:

Այսպիսով, միանգամայն հստակ է, որ չկա որևէ միջազգային

4 ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 45:

5 ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 43:

փաստաթուղթ (international instrument), որը միջազգային իրավունքի հիման վրա և միջազգային իրավունքի ընթացակարգի կիրառմամբ որոշած լինի սահմանը Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև: Ավելին, չկա որևէ միջազգային փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանա Ջավախքի տարածաշրջանի (կամ ինչպես ամերիկացիներն էին գրում, *Ախալքալաքի և Ախալցխեի ենթաշրջաններ*) վրա վրացական տիտղոսի ամրակցման (consolidation) համար: Ընդհակառակն, կան միջազգային փաստաթղթեր⁶, որոնց մեջ ընդգրկված սկզբունքները և առաջարկները, ամրակցել են հայկական տիտղոսը խնդրո առարկա տարածքի վրա և հստակ նախանշել հայ-վրացական սահմանագատման միակ օրինական ուղին, այն է ըստ ազգագրական պատկերի: Առնվազն տարօրինակ է, որ այսօր փորձ է արվում կուսակցական որոշումներին գերակա կարգավիճակ տալ միջազգային փաստաթղթերի նկատմամբ:

Այսուհանդերձ, Հայաստանի Հանրապետությունը և ջավախահայությունը երբեք չեն բարձրացրել միջազգային իրավունքով իրենց վերապահված իրավունքների կյանքի կոչման հարցը: Նրանք հանուն տարածաշրջանային կայունության և հանուն երկու ժողովուրդների բարեկամության անխաթարության մշտապես ձգտել են հարցերը լուծել փոխզիջումների և բարիկամեցողության ոգով: Մինևույն ժամանակ Հայաստանն ու հայությունը լռելյայն ակնկալել են, որ Վրացական իշխանությունները կհասկանան հարցի նրբությունը և առկա խնդիրները կլուծեն նույն փոխզիջումների և բարիկամեցողության ոգով:

Ջավախքում կյանքը միշտ էլ դժվար է եղել, սակայն կրկնակի դժվար է հայրենի հողում խորթ զավակ լինելը: Այսօր Վրաստանի իշխանությունները, հակառակ իրենց ստանձնած բազմաթիվ միջազգային պարտավորությունների, վիրահայության և, մասնավորապես ջավախահայության նկատմամբ, իրականացնում են կոպիտ խտրականության և կոշտ ճնշման քաղաքականություն: Ազգային ինքնության ցանկացած դրսևորում որակվում է որպես ազգայնականություն, ցանկացած պատմական կամ իրավական հարցի քննարկում պիտակ-

6 Օրինակ՝ 1. Tentative Recommendations for President Wilson by the Intelligence Section of the American Delegation to the Peace Conference, 21 January 1919; 2. League of Nations Council, Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, 24 February 1924; 3. Woodrow Wilson, Arbitral Award, Full Report, November 22, 1920, Annex I, No 2.

վում է որպես անջատողականություն, ցանկացած մշակութային ծեռնարկ դիտարկվում է կասկածամտությամբ: Հաճախ այս ամենը վերջանում է պատժիչ անօրինական գործողություններով:

Հայաստանի իշխանությունների թողտվությամբ և Վրաստանի իշխանությունների գործողությունների պատճառով ջավախահայությունը հետզհետե գլորվում է մեկուսացման գիրկը, որի հետևանքով նրանց մեջ կուտակվում է անձնական և ազգային վիրավորանքը: Հայաստանի իշխանություններն իրավունք չունեն անտարբեր գտնվելու հայության այդ մի արժանավոր հատվածի նկատմամբ: Ջավախքի հայկական գոյությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության անկյունաքարերից է: Ջավախքը Հայաստանը մեծ աշխարհի հետ անխափան կապ ունենալու երաշխիքն է: Վրաստանի իշխանություններն էլ, իրենց իսկ երկրի շահերից ելնելով, պիտի զավառային խորամանկություն չանեն և պիտի չբավարարվեն Ջավախքում առկա հիմնախնդիրներին միայն սոցիալ-տնտեսական բացատրություններ տալով: **Մարդիկ հաճախ անձնական դժվարություններն ավելի հեշտ են տանում, քան ազգային վիրավորանքն ու խտրականությունը:**

Ջավախահայությունը Վրաստանում այսօր երկու կարգավիճակ ունի: Այն, ինչպես ողջ վիրահայությունը ազգային փոքրամասնություն է, մինևույն ժամանակ, նաև բնիկ ժողովուրդ է: Հետևաբար, ջավախահայության կյանքը Վրաստանում պետք է կարգավորի ոչ միայն Վրաստանի օրենքներով, այլև ազգային փոքրամասնություններին և բնիկ ժողովուրդներին վերաբերող միջազգային այն փաստաթղթերով, որոնց մաս է կազմում Վրաստանը:

Այս առումով խիստ շահեկան է «Միտք» վերլուծական կենտրոնի հովանու ներքո Վահե Սարգսյանի կողմից պատրաստված սույն «Ջավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում» ժողովածուն: Ժողովածուի մեջ ի մի են բերված միջազգային իրավունքի այն փաստաթղթերը, որոնցով Վրաստանը անսակարկ պարտավորություն է ստանձնել իր երկրի ազգային, կրոնական (հարանվանական), լեզվական և այլ փոքրամասնությունների իրավունքները հարգելու և պաշտպանելու գործում: Ջավախահայության իրավունքները ոչ միայն ամրագրված են Վրաստանի ներքին օրենսդրությամբ, այլև միջազգային իրավունքով: Այսօր Վրաստանը մաս է հանդիսանում հինգը տասնյակից ավելի միջազգայնագրերի՝ կոնվենցիաների, բազմակողմ արձանագրությունների, համաձայնագրերի, կանոնակարգերի և այլն, որոնք ուղղակի և անուղղակի վերաբերում են ազգային և կրոնական փոքրա-

մասնություններին, հասարակության կայուն խմբերին, տեղաբնիկ ժողովուրդներին:

Ցավոք սրտի, այսօր կարող ենք ասել, որ Հայաստանի Հանրապետությունը Վրաստանի, ինչպես նաև Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերություններում, ոչ բավարար է օգտագործում բազմակողմ միջազգային փաստաթղթերի ընձեռած հնարավորությունները:

Ցանկացած փոքրամասնություն ընդհանրապես ավելի խոցելի է: Միջազգային հանրությունը սա վաղուց է գիտակցել, ուստի միջազգային իրավունքի համապատասխան փաստաթղթերի միջոցով փոքրամասնություններին ոչ միայն հիմնական բնակչության հետ հավասարազոր իրավունքներ է շնորհել, այլև նրանց օժտել է որոշակի առանձնաշնորհումներով և նրանց շահերի պաշտպանությանը տվել է լրացուցիչ երաշխիքներ:

Հայաստանը և Վրաստանը հարևան երկրներ են և այդպիսին մնալու են: Հարևան երկրների միջև, ինչպես առօրյա կյանքում հարևանների միջև, կարող են առաջանալ թյուրիմացություններ, ծագել տարաբնույթ վեճեր ու անհամաձայնություններ, միջևիսկ շահերի բախումներ: Այսօր քաղաքակիրթ երկրները, մասնավորապես Արևմուտքի, որին այդքան ձգտում են Հայաստանը և հատկապես Վրաստանը, հարևանների հետ խնդիրները լուծում են միջազգային օրենքի դաշտում:

Այսօր միջազգային իրավունքում առկա է բավականին կայացած իրավական դաշտ, որտեղ կարելի է լուծել նաև փոքրամասնությունների, հասարակական կայուն խմբերի և տեղաբնիկ համայնքների առջև ծառայած խնդիրները, մասնավորապես վիրահայության և նրա մի հատվածը հանդիսացող ջավախահայության խնդիրները: Ընդհանրապես ցանկացած հարց կարելի է լուծել, եթե իհարկե Վրաստանի իշխանություններն այն լուծելու ցանկություն ունենան և փորձ չանեն հարցի էությունը նենգափոխելու ճանապարհով առկա հիմնախնդիրները ներկայացնել լոկ որպես Վրաստանի ողջ բնակչության համար ընդհանուր դժվարություններ:

Չավախքն ու ջավախահայությունն ունի իր առանձնահատկությունն ու առանձնահատուկ խնդիրները, ուստի նա կարիք ունի, որ դրանք համապատասխանաբար ընկալվեն և լուծումների արժանանան:

Արա Պապյան

*Մոդուս վիվենդի կենտրոնի ղեկավար
12 սեպտեմբերի 2009թ.*

*
* * *

Սանցիտե-Չավախք-Ծավկա (այսուհետև՝ Չավախք) տարածաշրջանի հիմնախնդիրը, իր բոլոր կողմերով, ձևախեղված, շատերի համար դեռ անհայտ, շատերի համար դեռ չընկալելի իրողություններով, գնալով ձեռք է բերում նոր թափ: Որքան էլ հայկական և վրացական պետական շրջանակները այն համարեն «սովորական սոցիալ տնտեսական հիմնախնդիր», այնուամենայնիվ՝ ճշմարտությունն այլ բան է պարտադրում մեզ. տարածաշրջանի հիմնախնդիրը, լինելով քաղաքական, մուտք է մեծապես գործել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ միջպետական քաղաքական հարաբերությունների ոլորտ: Այն մուտք է գործել՝ ուզենք, թե չուզենք: Չավախքի խնդրի քաղաքական լինելն այլևս ապացուցման կարիք չունեցող, կայացած իրողություն է: Վերջինս անտեսելն այլև ոչ միայն անհնար, այլև՝ վտանգավոր անհեռատեսություն է՝ և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Վրաստանի կողմից: Չավախքի խնդրով իսկապես մտահոգ հայկական ամենատարբեր շրջանակների, քաղաքական-հասարակական կազմակերպությունների, հայրենակցական միությունների և սփյուռքահայ շրջանակների վերջին շրջանում ներդրած ջանքերն՝ այս ուղղությամբ, գրանցեցին այս հաջողությունը: Չավախքի հետխորհրդային քսանամյա զարթոնքի շրջանում սա առաջին քաղաքական հաջողությունն էր: Այս իրողությունը համառորեն ժխտող հասարակական-պետական շրջանակները ներկայումս լայնորեն պայքար են ծավալել՝ կանխելու Չավախքում քաղաքական գործընթացների ծավալումը, որտեղ, սակայն, ամեն ինչ ուշացած է: Պատմաբանների, տարբեր մասնագետների կողմից Չավախքի մասին պատմական, աշխարհագրական (վարչական բաժանումների), քաղաքական իրավիճակի մասին տարաբնույթ լուսաբանումներն արդեն դուրս են եկել նախկին նեղ շրջանակներից՝ ընդգրկելով հասարակական լայն շերտեր: Այս գործընթացներն ի վերջո տանելու են հայկական շրջանակներում Չավախքի մասին հայեցակարգային պատկերացումների ձևավորմանը, որի պարագայում շատ դժվարին է լինելու կոծկելու, արհեստականորեն անտեսելու և ձևախեղելու տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացները:

Չավախքի խնդիրն ունի նաև իրավական ասպեկտ: Իրավական՝ ոչ միայն ներվրաստանյան օրենսդրական դաշտի, ՀՀ-Վրաստան միջպետական-հարևանական հարաբերությունների անցյալի և ներ-

կայի իմաստով, այլև՝ միջազգային իրավունքի համատեքստում: Կապված Վրաստանի՝ Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի, միջազգային այլ կազմակերպություններում անդամակցելու բերումով ստանձնած պարտավորությունների հետ, **Ջավախքի խնդիրն այլևս միջազգային իրավունքի խնդիր է:**

Սույն գրքում մենք, գործնականում թերևս առաջին անգամ՝ համապարփակ, ամբողջական կերպով անդրադառնալով Ջավախքի խնդրի՝ միջազգային իրավունքի հետ առնչություններին, եզրակացնելու ենք, որ Ջավախքի խնդիրը նաև Վրաստանի կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների չկատարման, դրանց կոպիտ ոտնահարման արդյունք է: Ներկա աշխատանքը ջավախահայության և հայկական տարբեր շրջանակներում Ջավախքի խնդիրը միջազգային իրավունքի համայնապատկերի վրա ներկայացնելու առաջին փորձն է լինելու: Այս ամենի իմացությունն անհրաժեշտ է առաջնահերթորեն Ջավախքի ժողովրդին ու այնտեղ հասարակական-քաղաքական գործունեություն ծավալող անձանց և կազմակերպություններին:

Ջավախքի խնդիրը միջազգային իրավունքի դաշտ տեղափոխելուց ակնկալվող հաջողությունները, սակայն, չպետք է գերազնահատել: Հայոց պատմությունը լի է անհաջողություններով, որոնք վերացնելու համար հայ ժողովուրդը բազմիցս իր հույսերը կապել է միջազգային կոնգրեսների, ամբիոնների ու կազմակերպությունների հետ: Հույսեր կապել և բազմիցս հիասթափվել, հիասթափվել ու մեղադրել վերջիններիս: Ներկա պարագայում նույնպես հնարավոր են հիասթափումներ, ուստի՝ գիտակցելով այս ամենը, հարկավոր է նկատի ունենալ հետևյալը. Ջավախքի հարցի միջազգայնացումից հարկավոր է առավելագույնս օգուտ քաղել և չտրվել հարցի՝ բուն միջազգայնացումից բխող ակնկալիքների հույսին: Ելնելով սրանից՝ Ջավախքի հիմնահարցի միջազգայնացումը առաջին հերթին պետք է համախմբող, Ջավախքը քաղաքական գործոնի վերածող ազդակ հանդիսանա ջավախահայության համար: Այս հանգամանքն ինքնին երաշխիք է, որ Ջավախքը հետագայում գրանցի մեծ հաջողություններ, եթե անգամ իրենց քար լռությունը շարունակեն պահպանել միջազգային ատյանները: **Ջավախքի խնդրում միջազգային ատյաններից ակնկալվող աջակցությունները պետք է լինեն խիստ չափավոր, և այդ աջակցությունների չափը մեծապես կախված է լինելու հենց իր՝ Ջավախքի վարքից և վերջինիս ներքին այս կամ այն զարգացումներից:**

Ջավախքի հիմնահարցի արտացոլումը Եվրոպայի խորհրդում: Վրաստանի պարտավորությունների կատարման առասպելի և իրականության խաչմերուկում:

Ադրադարձ Եվրոպայի խորհրդին¹:

Եվրոպայի խորհուրդը ստեղծվել է 1949թ. և Եվրոպական ամենահին և ամենամեծ կազմակերպություններից մեկն է, որին անդամակցում են 47 պետություններ: Այն խրախուսում է մարդու իրավունքների հիմնական սկզբունքների առաջխաղացումը: Իր գործունեության 50 տարիների ընթացքում կազմակերպությունը խորացրել և ընդլայնել է իր գործունեության ոլորտները ողջ մայրցամաքում: Եվրոպայի պատմության շրջադարձային փոփոխությունները՝ խորհրդային Միության անկումը, Բեռլինի պատի փլուզումը, հանգեցրել են խորհրդի անդամակցության համար դիմումների թվի աճին և կոչ արել հաստատելու նոր գերակայություններ ու համապատասխան ռազմավարություն:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտին, պետությունները հստակ որոշել էին, որ նման ողբերգությունները հետագայում կանխելու համար պետք է ձեռնարկեն քայլեր: 1946թ. սեպտեմբերի 19-ին Ցյուրիխում իր ճառի ժամանակ Ուինսթոն Չերչիլն առաջինն էր, ով մատնանշեց, որ անհրաժեշտ է «մի սպեղանի, որը կարծես թե հրաշքով կփոխեր ամբողջ պատկերն ու մի քանի տարվա ընթացքում Եվրոպան կդարձներ նույնքան ազատ և երջանիկ, որքան Շվեյցարիան է այսօր: Մենք պետք է ստեղծենք Եվրոպայի միացյալ նահանգների կարգի մի կառույց»:

1948թ. մայիսի 7-ին տեղի ունեցավ Հաագայի կոնգրեսը, որտեղ քսան երկրներից ժամանած ավելի քան հազար պատվիրակներ ներկայացրեցին այն բոլոր գաղափարները, որոնց շուրջ հիմնվեց «միացյալ» Եվրոպան: Ընդունվեցին մի շարք որոշում-

1 Տվյալները վերցված են ՀՀ-ում Եվրոպայի խորհրդի ներկայացուցչության կայքէջից՝ http://www.coe.am/index.php?cat_id=29:

ներ, այդ թվում՝ ազգային խորհրդարանների կողմից ընտրված խորհրդարանական վեհաժողովի ստեղծումը, Մարդու իրավունքների եվրոպական խարտիայի մշակումը և նրա որոշումների կատարումը հարկադրելու նպատակով դատարանի ստեղծումը:

Հասգայի կոնգրեսից կարճ ժամանակ անց, Բելգիայի արտաքին գործոց նախարար Փոլ Յենրի Սփաքը կոչ արեց ստեղծել եվրոպական վեհաժողով, որը կունենար ընդգրկուն լիազորություններ և կազմված կլիներ տարբեր երկրների խորհրդարանների անդամներից, և որը որոշումներ կկայացներ մեծամասնական սկզբունքով: Չնայած Մեծ Բրիտանիան, որը կողմնակից էր զուտ խորհրդակցական բնույթի մարմնի ստեղծմանը, մերժեց այս առաջարկը, 1949թ. հունվարին, փոխզիջումից հետո, ստեղծվեց եվրոպայի խորհուրդը՝ կազմված խորհրդակցական վեհաժողովից, որը գումարվում է հրապարակավ, և Նախարարների կոմիտեից, որն ունի որոշումներ կայացնելու իրավասություններ և գումարվում է փակ:

1949թ. մայիսի 5-ին Լոնդոնի Սուրբ Ջեյմսի պալատում տաս երկրներ՝ Բելգիան, Ֆրանսիան, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Միացյալ Թագավորությունը, Իռլանդիան, Իտալիան, Դանիան, Նորվեգիան և Շվեդիան, ստորագրեցին եվրոպայի խորհրդի հիմնադիր փաստաթուղթը հանդիսացող պայմանագիրը: Այսպիսով, ստեղծվեց և սկսեց աշխատել եվրոպայի խորհուրդը: Նրա առաջին նիստերը տեղի ունեցան Ստրասբուրգում, որը և դարձավ կազմակերպության մշտական նստավայրը: Մշակվեց առաջին հիմնական կոնվենցիան՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, որը ստորագրվեց Յոննում, 1950թ. նոյեմբերի 4-ին և ուժի մեջ մտավ 1953թ. սեպտեմբերի 3-ին:

Ինչպես նշվել էր Կանոնադրությունում, «Եվրոպայի խորհրդի նպատակն է անդամ պետությունների միջև առավել միասնության հիմքեր ստեղծել՝ նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող գաղափարները և սկզբունքները պահպանելու և իրականացնելու, ինչպես նաև տնտեսական և սոցիալական առաջընթացը դյուրին դարձնելու նկատառումներով: Այս նպատակները պետք է իրագործվեն «խորհրդի մարմինների միջոցով՝ ընդհանուր մտահոգության առարկա խնդիրների քննարկմամբ և տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական, իրավական և վարչաիրավական հարցերի վերաբերյալ պայմանագրերի միջոցով, ինչպես

նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման և իրագործման միջոցով»:

1949-1970թթ. Հունաստանը, Իսլանդիան, Թուրքիան, Գերմանիան, Ավստրիան, Կիպրոսը, Շվեյցարիան և Մալթան միացան կազմակերպությանը: Այս ժամանակահատվածի այլ մեծ զարգացումներից են՝ 1960թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առաջին լսումները, 1961թ. հոկտեմբերի 18-ին Յոննում եվրոպական սոցիալական խարտիայի ստորագրումը և 1959թ. առաջին մասնագիտացված նախարարական համաժողովները:

Եվրոպայի խորհրդի առաջին մեծ քաղաքական ճգնաժամը գրանցվեց 1967թ., երբ հույն գնդապետները տապալեցին օրինականորեն ընտրված կառավարությունն ու հաստատեցին ամբողջատիրական վարչակարգ: 1969թ. դեկտեմբերի 12-ին, Հունաստանի անդամակցությունը բացառելու վերաբերյալ կայացվելիք որոշումից ընդամենը մի քանի ժամ առաջ, գնդապետների վարչակարգը չեղյալ հայտարարեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և դուրս եկավ եվրոպայի խորհրդից: 1974թ. նոյեմբերի 28-ին Հունաստանը վերադարձավ կազմակերպություն, երբ բռնատիրության անկման հետ կրկին վերականգնվեց ժողովրդավարությունը: Միաժամանակ, 1974թ. ամռանը բռնկվեց Կիպրոսի ճգնաժամը՝ հանգեցնելով կղզու մասնատմանը Թուրքիայի ռազմական միջամտությունից հետո:

Մի նոր ճգնաժամ սկսվեց 1981թ., երբ խորհրդարանական վեհաժողովը Թուրքիայի խորհրդարանական պատվիրակությանը զրկեց իր քվեից՝ ի պատասխան մի քանի շաբաթ առաջ տեղի ունեցած ռազմական հեղաշրջմանը:

1985թ. ի վեր նախաձեռնվեցին Կենտրոնական և Արևելյան եվրոպայում ժողովրդավարությունը ներկայացնելու առաջին քայլերը: Համոզված լինելով, որ միասնությունը բազմազանության մեջ եվրոպայի հարուստ ժառանգության հիմքն է, եվրոպայի խորհուրդը նշեց, որ իրենց ընդհանուր ավանդույթը և եվրոպական ինքնությունը չեն սահմանափակվում տարբեր քաղաքական համակարգերով և բևեռվում են մշակութային համագործակցությանը, որպես մի միջոցի, որը նպաստում է ժողովուրդների և կառավարությունների միջև մշտական փոխըմբռնմանը: Եվրոպայի խորհուրդը՝ մարդու իրավունքների պաշտպանը, դարձավ բռնապետությունից ժողովրդավարությանն անցման շուրջ բանակցությունների ամբիոն:

1989թ. հուլիսի 6-ին առաջին անգամ Խորհրդային առաջնորդ Միխայիլ Գորբաչովը դիմեց Եվրոպական խորհրդարանականներին զինաթափման մասին նոր առաջարկով: 1989թ. Հունգարիան, Լեհաստանը, ԽՍՀՄ-ը և Հարավսլավիան ստացան հատուկ հրավիրյալի կարգավիճակ՝ բացելով իրենց լիիրավ անդամակցությանը տանող ուղին:

1989թ. նոյեմբերի 9-ին Բեռլինի պատի փլուզումից հետո Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը մատնանշեց, որ Խորհուրդը միակ կազմակերպությունն է, որը կարող է ընդգրկել Եվրոպայի բոլոր երկրները, հենց որ նրանք ընդունեն ժողովրդավարության կանոնները:

1990թ. նոյեմբերի 6-ին, անդրադառնալով իր երկրի անդամակցությանը Եվրոպայի խորհրդուն, Հունգարիայի արտաքին գործոց նախարարն ասաց, որ այդ իրադարձությունը նշանավորում է մայրցամաքի միասնության վերահաստատումը: Շուտով մշակվեցին հատուկ ծրագրեր՝ օգնելու Եվրոպական գործընկերներին ժողովրդավարությանն անցման գործընթացում և դառնալու Եվրոպական ժողովրդավարական և իրավական համայնքի մի մասը:

Ֆրանսուա Միտերանի նախաձեռնությամբ, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և կառավարությունների ղեկավարների առաջին գագաթաժողովը տեղի ունեցավ 1993թ. հոկտեմբերի 8-9-ը: Վիեննայի գագաթաժողովը հաստատեց և երկարաձգեց Եվրոպայի խորհրդի տարածման քաղաքականությունը: Գագաթաժողովը նաև հիմքեր դրեց Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի թիվ 11 արձանագրության մշակման համար՝ առավել արդյունավետ և արագընթաց դարձնելով նրա գործունեությունը:

Այսպես, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ժողովրդավարացման գործընթացը հանգեցրեց 1990թ. Հունգարիայի, 1991թ. Լեհաստանի, 1992թ. Բուլղարիայի և 1993թ. Էստոնիայի, Լիտվայի, Սլովենիայի և Ռումինիայի անդամակցությանը Եվրոպայի խորհրդին: Չեխիայի և Սլովակիայի հանրապետությունները 1993թ. փոխարինեցին 1991թ. Չեխոսլովակիայի անդամակցությանը: Լատվիան Եվրոպայի խորհրդին միացավ 1995թ. փետրվարի 10-ին, Մոլդովան և Ալբանիան՝ հուլիսի 13-ին, և Մակեդոնիայի Հարավսլավական Նախկին Հանրապետությունը՝ նոյեմբերի 9-ին: Ռուսաստանի Դաշնությունը անդամակցություն ձեռք բերեց 1996թ. փետրվարի 28-ին, իսկ Խորվաթիան՝ նույն թվականի նո-

յեմբերի 6-ին: Վրաստանը Եվրոպայի խորհրդի կազմում ընդգրկվեց 1999թ. ապրիլի 27-ին, իսկ Ադրբեջանն ու Հայաստանը՝ 2001թ. հունվարի 25-ին: Բոսնիա և Հերցեգովինան անդամակցություն ձեռք բերեց 2002թ. ապրիլի 24-ին, իսկ Սերբիա և Մոնթենեգրոն՝ 2003թ. ապրիլի 3-ին:

Վրաստանը և Եվրոպայի Խորհուրդը:

Ինչպես տեսանք, 2009թ. ապրիլի 27-ին լրացավ Վրաստանի՝ Եվրոպայի Խորհրդին անդամակցելու հոբելյանական 10 տարին: Վրաստանն անցած 10 տարիների ընթացքում վավերացրել և իրավական ուժի կարգավիճակ է տվել Եվրոպայի խորհրդի մինչ այժմ ընդունած շուրջ 200 կոնվենցիաներից, խարտիաներից, համաձայնագրերից և արձանագրություններից՝ 54 կոնվենցիաներ (2009թ. մայիսի 7-ի դրությամբ²): Մինչ դրանցից առանձինների՝ Ջավախքի հիմնահարցի հետ առնչությունների քննությանն անցնելը, ստորև ներկայացնում ենք բոլոր այդ 54 փաստաթղթերի անվանացանկը՝ նշելով ինչպես վերջիններիս ստեղծման և ուժի մեջ մտնելու, այնպես էլ վերջիններիս՝ Վրաստանի կողմից վավերացնելու և կիրառման ուժ տալու տարեթվերը³.

2 Աղբյուրը՝ [http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeTraites.asp?PO=GEO&MA=999&SI=2&DF=&CM=3&CL=RUS, տես նաև՝ Ministry of Foreign Affairs of Georgia, Conventions, javascript:void%20window.open\('http://mfagov.itdc.ge/files/521_9704_442905_11.doc'\)](http://conventions.coe.int/Treaty/Commun/ListeTraites.asp?PO=GEO&MA=999&SI=2&DF=&CM=3&CL=RUS, տես նաև՝ Ministry of Foreign Affairs of Georgia, Conventions, javascript:void%20window.open('http://mfagov.itdc.ge/files/521_9704_442905_11.doc')):

3 Աղբյուրը՝ Պայմանագրերի բյուրո՝ <http://conventions.coe.int>: Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

№	Անվանումը		Քսց է ...	Ուժի մեջ է	Է.	Ն.	Ը.
001	Եվրոպայի խորհրդի կանոնադրություն		5/5/1949	3/8/1949			
	Վավերացումը կամ ընդունումը՝ 27/4/1999	Ուժի մեջ մտնելը՝ 27/4/1999					
002	Եվրոպայի խորհրդի գերակայությունների և անհեռնմխելիության մասին գլխավոր համաձայնագիրը		2/9/1949	10/9/1952			
	Վավերացումը կամ ընդունումը՝ 25/5/2000	Ուժի մեջ մտնելը՝ 25/5/2000	4/11/1950	3/9/1953			
005	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան						
	Ստորագրումը՝ 27/4/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/5/1999	Ուժի մեջ մտնելը՝ 20/5/1999				
009	Մարդու իրավունքների և ազատությունների մասին Կոնվենցիային կից արչանագրությունը		20/3/1952	18/5/1954			
	Ստորագրումը՝ 17/6/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 7/6/2002	Ուժի մեջ մտնելը՝ 7/6/2002				
010	Եվրոպայի խորհրդի գերակայությունների և անհեռնմխելիության մասին Չ-լիավոր համաձայնագրին կից Արչանագրությունը		6/11/1952	11/7/1956			
	Վավերացումը կամ ընդունումը՝ 25/5/2000	Ուժի մեջ մտնելը՝ 25/5/2000					
018	Եվրոպական մշակութային Կոնվենցիան		19/12/1954	5/5/1955	X		
	Վավերացումը կամ ընդունումը՝ 25/4/1997	Ուժի մեջ մտնելը՝ 25/4/1997					
024	Վճարման մասին Եվրոպական Կոնվենցիան		13/12/1957	18/4/1960	X	X	
	Ստորագրումը՝ 22/3/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 15/6/2001	Ուժի մեջ մտնելը՝ 13/9/2001				

028	Եվրոպական խորհրդի գերակայությունների և անհեռնմխելիության մասին Գ-լիավոր համաձայնագրին կից երրորդ լրացուցիչ արչանագրությունը		6/3/1959	15/3/1963			
	Վավերացումը կամ ընդունումը՝ 25/3/2008	Ուժի մեջ մտնելը՝ 25/3/2008					
030	Քրեական գործերում փոխարդջ իրավական օգնության մասին Եվրոպական Կոնվենցիան		20/4/1959	12/6/1962	X	X	
	Ստորագրումը՝ 27/4/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/10/1999	Ուժի մեջ մտնելը՝ 11/1/2000				
044	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիային կից №2 Արչանագրությունը Եվրոպական դատարանին մարդու իրավունքների վերաբերյալ խորհրդարանական եզրակացություն անելու իրավասություն շնորհելու մասին		6/5/1963	21/9/1970			
	Ստորագրումը՝ 27/4/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/5/1999	Ուժի մեջ մտնելը՝ 20/5/1999				
045	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիային կից №3 Արչանագրությունը՝ Կոնվենցիայի 29, 30 և 34 հոդվածների փոփոխությունների կապակցությամբ		6/5/1963	21/9/1970			
	Ստորագրումը՝ 27/4/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/5/1999	Ուժի մեջ մտնելը՝ 20/5/1999				
046	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային կից №4 Արչանագրությունը որոշ իրավունքների և ազատություններ ապահովելու համար՝ զուգահեռ նրանց, որոնք արդեն ներառված են Կոնվենցիայում և նրա առաջին Արչանագրության մեջ		16/9/1963	2/5/1968			
	Ստորագրումը՝ 17/6/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 13/4/2000				

055	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման մասին Կոնվենցիային կից №5 Արշամագրությունը՝ Կոնվենցիայի 22 և 40 հոդվածների փոփոխությունների կապակցությամբ		20/1/1966	20/12/1971	
	Ստորագրումը՝ 27/4/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/5/1999			
062	Արդասահմանյան օրենսդրության վերաբերյալ զեղեկությունյան մասին Եվրոպական Կոնվենցիա		7/6/1968	17/12/1969	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 18/3/1999			
070	Քրեական գործերով միջազգային իրականության դատական հարցական որոշումների մասին Եվրոպական Կոնվենցիան		28/5/1970	26/7/1974	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 15/6/2002			
085	Արդասահմանական կապերից ծնված երեխաների վիճակի մասին Եվրոպական Կոնվենցիան		15/10/1975	11/8/1978	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 30/4/2002			
086	Վճարման մասին Եվրոպական Կոնվենցիային կից լրացուցիչ Արշամագրությունը		15/10/1975	20/8/1979	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 15/6/2001			
090	Միաբեկությունը կանխարգելելու մասին Եվրոպական Կոնվենցիան		27/11/1977	4/8/1978	
		Վավերացումը կամ ընդունումը՝ 14/12/2000			
092	Խրախուսման օգնության մասին հայտարարության փոխանցման մասին Եվրոպական Կոնվենցիան		27/11/1977	28/2/1977	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 17/7/2006			

097	Արդասահմանյան օրենսդրության վերաբերյալ զեղեկությունյան մասին Եվրոպական Կոնվենցիային կից լրացուցիչ Արշամագրություն		15/3/1978	31/8/1979	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 20/6/2000			
098	Վճարման մասին Եվրոպական Կոնվենցիային կից երկրորդ լրացուցիչ Արշամագրությունը		17/3/1978	5/6/1983	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 15/6/2001			
099	Քրեական գործերով իրականացված օգնության մասին Եվրոպական Կոնվենցիային կից լրացուցիչ արշամագրությունը		17/3/1978	12/4/1982	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 22/5/2003			
106	Տարածքային համակցությունների և խխանությունների ստեղծմանը համադրված զբաղմունքի մասին Եվրոպական 2րջանակային Կոնվենցիան		21/5/1980	22/12/1981	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 24/7/2006			
108	Անհրաժեշտ բնույթի փոխարինող ավտոմատացված մշակման վերաբերյալ մասնավոր անհանց պաշտպանության մասին Կոնվենցիան		28/1/1981	1/10/1985	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 14/12/2005			
112	Պատված անհանց փոխանցման մասին Կոնվենցիան		21/3/1983	1/7/1985	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 21/10/1997			

114	Մահապազժի վերացմանը վերաբերող մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի № 6 Արշանագրությունը	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/5/2000	28/4/1983	1/3/1985		
117	Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի № 7 Արշանագրությունը	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/7/2000	22/11/1984	1/11/1988		
118	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին № 8 Արշանագրությունը	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/7/2000	19/3/1985	1/1/1990		
121	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին № 8 Արշանագրության Կոնվենցիան	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/5/1999	Ուժի մեջ մտնելը՝ 20/5/1999	3/10/1985	1/12/1987	X	X
122	Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/8/2000	15/10/1985	1/9/1988		
126	Կրթականների և անմարդկային կամ արժանապատվությունը սպրտացնող վարքի կամ պազժի վերաբերյալ նախագրուշացման մասին Եվրոպական Կոնվենցիան	Վավերացումը կամ ընդունումը՝ 8/12/2004	Ուժի մեջ մտնելը՝ 1/4/2005	26/11/1987	1/2/1989	X	X
135	Խոթանչների ընդունման դեմ Կոնվենցիան	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/6/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/10/2000	16/11/1989	1/3/1990	X	X
		Վավերացումը կամ ընդունումը՝ 22/5/2003	Ուժի մեջ մտնելը՝ 1/7/2003				

141	Հանցագործ գործունեությունից եկամուտների բռնագրավման, հանձնման, հարցաքննման և լիազման մասին Կոնվենցիան	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/5/2004	Ուժի մեջ մտնելը՝ 1/9/2004	8/11/1990	1/9/1993	X	X
143	Հնազգիտական ժառանգության պահպանման մասին Եվրոպական Կոնվենցիան(վերանայված)	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 14/10/2000	16/1/1992	25/5/1995	X	X
147	Համադրելի հիմնարարությունների մասին Եվրոպական Կոնվենցիան	Վավերացումը կամ ընդունումը՝ 15/10/2002	Ուժի մեջ մտնելը՝ 1/2/2003	2/10/1992	1/4/1994	X	X
151	Կրթականների և անմարդկային կամ արժանապատվությունը վիրավորող վարքի կամ պազժի նախագրուշացման Եվրոպական Կոնվենցիայի կից № 1 Արշանագրությունը	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/6/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/3/2002	4/11/1993	1/3/2002		
152	Կրթականների և անմարդկային կամ արժանապատվությունը վիրավորող վարքի կամ պազժի նախագրուշացման Եվրոպական Կոնվենցիայի կից № 2 Արշանագրությունը	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/6/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/3/2002	4/11/1993	1/3/2002		
155	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ասպիակցմաներպան հսկողական մեխանիզմի մասին Եվրոպական Կոնվենցիայի կից № 11 Արշանագրությունը որը արդժվել է Կոնվենցիային համապատասխան	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/5/1999	Ուժի մեջ մտնելը՝ 20/5/1999	11/5/1994	1/11/1998		

157	Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային Կոնվենցիան		1/2/1995	1/2/1998	X	X
	Ստորագրումը՝ 21/1/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 22/12/2005	Ուժի մեջ մտնելը՝ 1/4/2006			
161	Եվրոպական Համաչափագիր, որը վերաբերում է այն անչանց, որանք մասնակցում են մարդու իրավունքների հարցերով Եվրոպական դատարանում ցեղի ունեցող գործընթացներին		5/3/1996	1/1/1999		
	Ստորագրումը՝ 10/5/2001	Վավերացումը կամ ընդունումը՝ 10/5/2001	Ուժի մեջ մտնելը՝ 1/7/2001			
162	Եվրոպայի խորհրդի գերակայությունների և անհանմխելիության մասին Փ-լիսովոր Համաչափագրին կից վեցերորդ լրացուցիչ Արշանագրությունը		5/3/1996	1/11/1998		
	Ստորագրումը՝ 25/5/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 20/6/2000	Ուժի մեջ մտնելը՝ 21/7/2000			
163	Եվրոպական սոցիալական խարդիխ (վերանայված)		3/5/1996	1/7/1999		
	Ստորագրումը՝ 30/6/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 22/8/2005	Ուժի մեջ մտնելը՝ 1/10/2005			
164	Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության Կոնվենցիան՝ կապված հենարանության և բժշկության նվաճումների հետ՝ մարդու իրավունքների և հենարանության մասին Կոնվենցիան		4/4/1997	1/12/1999	X	X
	Ստորագրումը՝ 11/5/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 22/11/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/3/2001			
165	Եվրոպական տարածաշրջանում բարչրագույն կրթության վերաբերյալ որակավորման ընդունման մասին Կոնվենցիան		11/4/1997	1/2/1999	X	X
	Ստորագրումը՝ 11/4/1997	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/10/1999	Ուժի մեջ մտնելը՝ 1/12/1999			

167	Գաղված անչանց փոխանցման մասին Կոնվենցիային կից լրացուցիչ Արշանագրություն		18/12/1997	1/6/2000	X	X
	Ստորագրումը՝ 17/9/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 13/4/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/8/2000			
168	Մարդու իրավունքների և արժանապատվության մասին Կոնվենցիան՝ հենարանության և բժշկության մեջ կիրառվող նվաճումների հետ կապված, որը վերաբերվում է մարդկային տարածների կրճատման արգելքին		12/1/1998	1/3/2001	X	X
	Ստորագրումը՝ 11/5/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 22/11/2000	Ուժի մեջ մտնելը՝ 1/3/2001			
173	Կոռուցիայի համար բրենկան պատասխանավորության մասին Կոնվենցիան		27/1/1999	1/7/2002	X	X
	Ստորագրումը՝ 27/1/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 10/1/2008	Ուժի մեջ մտնելը՝ 1/5/2008			
174	Կոռուցիայի դիմաց բարարացիական մասին Կոնվենցիան պատասխանավորության մասին Կոնվենցիան		4/11/1999	1/11/2003	X	X
	Ստորագրումը՝ 4/11/1999	Վավերացումը կամ ընդունումը՝ 22/5/2003	Ուժի մեջ մտնելը՝ 1/11/2003			
177	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի ՊՁ 12 Արշանագրությունը		4/11/2000	1/4/2005		
	Ստորագրումը՝ 4/11/2000	Վավերացումը կամ ընդունումը՝ 15/6/2001	Ուժի մեջ մտնելը՝ 1/4/2005			
186	Մարդու իրավունքների և հենարանության մասին Կոնվենցիային կից Արշանագրությունը, որը վերաբերվում է մարդու օրգանների և կրակաշրջների փոխազդեցությանը		24/1/2002	1/5/2006	X	X
	Ստորագրումը՝ 25/3/2002	Վավերացումը կամ ընդունումը՝ 18/12/2002	Ուժի մեջ մտնելը՝ 1/5/2006			

187	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի կից № 13 Արշանագրությունը՝ ցանկացած պարագայում մահապարձի վերացման վերաբերյալ	Ստորագրումը՝ 3/5/2002	Վավերացումը կամ ընդունումը՝ 22/5/2003	Ուժի մեջ մտնելը՝ 1/9/2003	3/5/2002	1/7/2003				X	
190	Ահաբեկչության կանխարգելման մասին Եվրոպական Կոնվենցիայում փոփոխություններ մտցնելու մասին Արշանագրությունը	Ստորագրումը՝ 15/5/2003	Վավերացումը կամ ընդունումը՝ 8/12/2004		15/5/2003						
194	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի կից № 14 Արշանագրությունը, որը փոփոխություններ է մտցրել Կոնվենցիայի հավորական մեխանիզմում	Ստորագրումը՝ 13/5/2004	Վավերացումը կամ ընդունումը՝ 10/11/2004		13/5/2004						
197	Մարդկանց առեղծվածի դեմ գործողությունների մասին Եվրոպական Կոնվենցիան	Ստորագրումը՝ 19/10/2005	Վավերացումը կամ ընդունումը՝ 14/3/2007	Ուժի մեջ մտնելը՝ 1/2/2008	16/5/2005	1/2/2008				X	

Նշումներ. Համաձայնագիր և Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններում, և, ծայրահեղ դեպքում, բաց Համաձայնագիր E. Եվրոպական պետություններում, որոնք անդամ չեն. N. ոչ Եվրոպական պետություններում, որոնք անդամ չեն. C. Եվրոպական Համագործակցությունում: Տեսնել յուրաքանչյուր պայմանագրի վերջնական պայմանները:

Եվրոպայի խորհրդի ստեղծման սկզբնաշրջանից ի վեր գործող և մի քանի արձանագրություններով փոփոխության ենթարկված հիմնարար փաստաթուղթը դա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» (4-ը նույնքերի, 1950թ., Հռոմ) (Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms) հանրահայտ կոնվենցիան է⁴:

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ⁵
(4-ը նույնքերի, 1950թ., Հռոմ)

Սույն կոնվենցիան ստորագրած կառավարությունները, լինելով Եվրոպայի խորհրդի անդամներ,
նկատի ունենալով, 1948թ. դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հռչակած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը,

- Հայաստանի Հանրապետությունը իր անդամակցության արարողության պահին ստորագրել է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության 1950 թվականի եվրոպական կոնվենցիան, և նրա թիվ 1, 4, 6, 7 արձանագրությունները:
- Կոնվենցիայի տեքստը փոփոխված է համաձայն 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտած 3-րդ Արձանագրության, 1971թ. դեկտեմբերի 20-ին ուժի մեջ մտած 5-րդ Արձանագրության և 1990թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած 8-րդ Արձանագրության, որը ընդգրկում է նաև 2-րդ Արձանագրության տեքստը, դրույթները, որը 1970թ. սեպտեմբերի 21-ին ուժի մեջ մտնելուց հետո նրա 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Կոնվենցիայի բաղկացուցիչ մասն է: Բոլոր դրույթները, որոնք լրացվել կամ փոփոխվել են այս Արձանագրություններով, փոխարինված են 1998թ. նոյեմբերի 1-ին ուժի մեջ մտած 11-րդ Արձանագրությամբ: Վերջինիս ուժի մեջ մտնելուց հետո դադարում են գործել 1994թ. հոկտեմբերի 1-ին ուժի մեջ մտած 9-րդ Արձանագրությունը և 10-րդ Արձանագրությունը կորցնում է իր նպատակը:

Ունենալով, որ սույն Հռչակագիրը նպատակ ունի ապահովելու այնտեղ հռչակված իրավունքների համընդհանուր և արդյունավետ ծանաչումն ու ապահովումը,

Ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնությունն ձեռք բերելն է, և որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումը և իրականացումն է,

Կրկին հավաստելով իրենց խորին հավատն առ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության հիմքն են աշխարհում, և որոնց լավագույն պահպանումը կախված է, մի կողմից, քաղաքականարդյունավետ ժողովրդավարությունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ըմբռնումից ու պահպանումից,

համակված վճռականությամբ՝ որպես միասնական հայացքներ և քաղաքական ավանդույթների, իդեալների, ազատության և իրավական պետության ընդհանուր ժառանգություն ունեցող եվրոպական երկրների կառավարություններ՝ առաջին քայլերն անել Համընդհանուր հռչակագրում ամրագրված որոշ իրավունքների հավաքական ճանապարհին, համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Բարձ պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I բաժնում:

ԲԱԺԻՆ I

Իրավունքներ և ազատություններ

Հոդված 2

Կյանքի իրավունք

Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ձանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալելու իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փոխուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:

Հոդված 3

Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հոդված 4

Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ կամ անազատ վիճակում:

2. Ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք:

3. Սույն հոդվածի նպատակների համար «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում՝

ա. ձանկացած աշխատանք, որը սովորաբար պահանջվում է կատարել սույն կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթների համաձայն կալանքի տակ գտնվելու կամ նման կալանքից պայմանականորեն ազատված լինելու ընթացքում,

բ. զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինակ է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզ-մունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը,

գ. ձանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

դ. սովորական քաղաքացիական պարտականությունների մաս կազմող ցանկացած աշխատանք կամ ծառայություն:

Յոդված 5

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձեռքակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձեռքակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դատախարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձեռքակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձեռքակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձեռքակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ եղեկացվում է իր ձեռքակալման պատճառների և ներկայացնող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձեռքակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ պարզում է դատավորի կամ այլ պաշտոնական անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննություն ազատ արձակվելու իրավունք: Ազատ

արձակվելը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք ձեռքակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինա-կանությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձեռքակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:

Յոդված 6

Արդար դատաքննության իրավունք

1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դմբաց միտում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափա-հասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կազմակերպելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով, կամ եթե նա բավարար միջոցներ չունի դատա-

պաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:

Յոթերորդ 7

Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա

1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործության չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածի չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին հանապատասխան համարվել է քրեական հանցագործություն:

Յոթերորդ 8

Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թուլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Յոթերորդ 9

Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Յոթերորդ 10

Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Յոդված 11

Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակայնությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անջանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչնդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Յոդված 12

Ամուսնության իրավունք

Ամուսնական տարիքի հասած տղամարդիկ ու կանայք ունեն ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք՝ այդ իրավունքի իրականացումը կարգավորող ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Յոդված 13

Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ում սույն կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Յոդված 14

Խտրականության արգելում

Սույն կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագու-

մից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Յոդված 15

Արտակարգ իրևալիճակներում պարտավորություններից շեղում

1. Պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրան մյուս պարտավորությունների հետ:

2. Այս դրույթը չի կարող հիմք ծառայել՝ շեղվելու 2-րդ հոդվածից բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ, կամ 3-րդ հոդվածի դրույթներից:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

Յոդված 16

Օտարերկրացիների քաղաքական գործունեության սահմանափակում

10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներում ոչինչ չի կարող խոչնդոտել Բարձր պայմանավորվող կողմերին՝ սահմանափակումներ նախատեսելու օտարերկրացիների քաղաքական գործունեության համար:

Յոդված 17

Իրավունքների չարաշահման արգելում

Սույն կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետության, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է այս կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է կոնվենցիայով:

Հոդված 18

Իրավունքների նկատմամբ սահմանափակումների կիրառման սահմանները Նշված իրավունքների և ազատությունների սույն Կոնվենցիայով թույլատրվող սահմանափակումները չեն կիրառվում որևէ այլ նպատակով, բացի այն, որի համար դրանք նախատեսվել են:

ԲԱԺԻՆ II⁶

Սարդու իրավունքների եվրոպական դատարան

Հոդված 19

Դատարանի հիմնումը

Սույն Կոնվենցիայով և դրանց կից Արձանագրություններով Բարձր պայմանավորվող կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար հիմնվում է Սարդու իրավունքների եվրոպական դատարան (այսուհետև՝ Դատարան): Այն գործում է մշտական հիմունքով:

Հոդված 20

Դատավորների թիվը

Դատարանի դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորվող կողմերի թվին:

Հոդված 21

Դատավորներին ներկայացվող պահանջները

1. Դատավորները պետք է ունենան բարոյական բարձր նկարագիր և բավարարեն դատական բարձր պաշտոններում նշանակվելիս ներկայացվող պահանջները կամ լինեն ծանաչված իրազեկ իրավագետներ:
2. Դատավորները Դատարանի աշխատանքին մասնակցում են անձամբ:
3. Պաշտոնավարության ժամկետի ընթացքում դատավորները չպետք է իրականացնեն որևէ գործունեություն, որն անհամատեղելի է նրանց անկախության, անաչառության կամ նրանց աշխատանքի մշտական բնույթից բխող պահանջների հետ, սույն կետի դրույթների կիրառման առնչությամբ ծագող հարցերը լուծում է Դատարանը:

6 Նոր Բաժին II՝ 11-րդ Արձանագրության (ETS N155) դրույթների համաձայն:

Հոդված 22

Դատավորների ընտրությունները

1. Խորհրդարանական վեհաժողովն ընտրում է յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմի դատավորին Բարձր պայմանավորվող կողմի առաջադրած երեկ թեկնածուների ցուցակից քվեների մեծամասնությամբ:

2. Նույն ընթացակարգը իրառվում է նոր Բարձր պայմանավորվող կողմի միանալու դեպքում Դատարանի կազմը, ինչպես և առաջացող թափուր տեղերը համալրելիս:

Հոդված 23

Պաշտոնավարության ժամկետը

1. Դատավորներն ընտրվում են վեց տարի ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել: Սակայն առաջին ընտրության ժամանակ ընտրված դատավորների պաշտոնավարության ժամկետը երեք տարի է:

2. Դատավորները, որոնց պաշտոնավարության ժամկետը պետք է լրանա առաջին երեք տարվա ավարտին, որոշվում են իրենց ընտրվելուց անմիջապես հետո Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից անցկացվող վիճակահա-նությամբ:

3. Յուրաքանչյուր երեք տարին մեկ Դատարանի կազմի, ըստ հնարավորին, կիսով չափի նորացումն ապահովելու նպատակով խորհրդարանական վեհաժողովը կարող է մինչև ցանկացած հաջորդ ընտրություններն անցկացնել որոշում ընդունել, որ մեկ կամ մի քանի ընտրվող դատավորների պաշտոնավարության ժամկետը լինել այլ, քան վեց տարին է, բայց ամեն դեպքում ոչ ավելի , քան ինը և ոչ պակաս, քան երեք տարի:

4. Այն դեպքում, երբ խոքը վերաբերվում է պաշտոնավարության մեկից ավելի ժամկետի, և խորհրդարանական վեհաժողովը կիրառում է նախորդ կետի դրույթները, պաշտոնավարության ժամկետը որոշում է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը՝ ընտրություններից անմիջապես հետո անցկացվող վիճակահա-նությամբ:

5. Այն դատավորը, որն ընտրվել է պաշտոնավարության ժամկետի դեռևս չլրացած դատավորին փոխարինելու համար, այդ պաշտոնն զբաղեցնում է նախորդ դատավորի լիազորությունների ժամկետից մնացած ժամանակահատվածում:

6. Դատավորների պաշտոնավարության ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին:

7. Դատավորները պաշտոնավարում են մինչև փոխարինվելը:

Նրանք սակայն փոխարինվելուց հետո շարունակում են քննել իրենց կողմից արդեն քննության առնված գործերը:

Յոթված 24

Պաշտոնից հեռացնելը

Դատավորը պաշտոնից կարող է հեռացվել միայն այն դեպքում, եթե մյուս դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացվող պահանջներին:

Յոթված 25

Գրասենյակը և իրավական հարցերով քարտուղարները

Դատարանն ունի Գրասենյակ, որի գործառույթները սահմանվում են Դատարանի ընթացակարգի կանոններով: Դատարանն օգտվում է իրավական հարցերով քարտուղարների ծառայություններից:

Յոթված 26

Դատարանի լիազումար նիստերը

Լիազումար նիստերում Դատարանը՝

- ա. ընտրում է իր նախագահին և Նախագահի մեկ կամ երկու տեղակալի՝ երեք տարի ժամկետով, նրանք կարող են վերընտրվել,
- բ. ձևավորում է Պալատներ, որոնք ստեղծվում են որոշակի ժամկետով,
- գ. ընտրում է Դատարանի պալատների նախագահներ, նրանք կարող են վերընտրվել,
- դ. ընդունում է Դատարանի ընթացակարգի կանոնները,
- ե. ընտրում է Քարտուղար և Քարտուղարի մեկ կամ մի քանի տեղակալ:

Յոթված 27

Կոմիտեները, Պալատները և Մեծ պալատը

1. Իրեն հանձնված գործերը քննելու համար Դատարանը նիստեր գումարում է երեք դատավորից կազմված կոմիտեներում, յոթ դատավորից կազմված Պալատներում և տասնյոթ դատավորից կազմված Մեծ պալատում: Դատարանի Պալատները որոշակի ժամկետով կազմում են կոմիտեներ:

2. Շահագրգիռ մասնակից պետությունից ընտրված դատավորը Պալատի և Մեծ պալատի ex officio անդամ է, նրան դատավորի բացակայության դեպքում, կամ եթե նա չի կարող մասնակցել նիստին,

այդ պետությունը նշանակում է որևէ այլ անձի, որը հանդես է գալիս որպես դատավոր:

3. Մեծ պալատի կազմի մեջ մտնում են նաև Դատարանի նախագահը, Դատարանի նախագահի տեղակալները, Պալատների նախագահները և Դատարանի այլ դատավորները, որոնք ընտրվում են Դատարանի ընթացակարգի կանոններին համապատասխան: Եթե գործը, 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, հանձնվում է Մեծ պալատ, որևէ դատավոր, որն ընդգրկված է եղել որոշում կայացրած Պալատում չի կարող մասնակցել մեծ պալատի նիստերին, բացառությամբ վերոնշյալ Պալատի նախագահի շահագրգիռ մասնակից կողմի դատավորի:

Յոթված 28

Կոմիտեների հայտարարությունները գանգառի անընդունելիության մասին

Կոմիտեն միաձայն որոշմամբ կարող է անընդունելի հայտարարել 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգառը կամ այն հանել քննության ենթակա գործերի ցուցակից, եթե նման որոշում կարող է ընդունվել առանց գանգառի լրացուցիչ ուսումնասիրման: Այդ որոշումը վերջնական է:

Յոթված 29

Պալատների որոշումները գանգառի ընդունելության մասին և ըստ էության

1. Եթե 28-րդ հոդվածին համապատասխան որոշում չի ընդունվում, Պալատը որոշում է կայացնում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված անհատական գանգառի ընդունելության մասին և ըստ էության:

2. Պալատը որոշում է կայացնում 33-րդ հոդվածին համապատասխան պետության ներկայացված գանգառի ընդունելության մասին և ըստ էության:

3. Գանգառի ընդունելիության մասին որոշակի կայացնում է առանձին, եթե դատարանը բացառության կարգով հակառակը չի որոշում:

Յոթված 30

Ընդդատության զիջումը Մեծ պալատին

Եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Կոմիտեների կամ նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման առնչվող լուրջ հարցի, կամ եթե Պալատի քննության

ներքո գտնվող հարցի լուծումը կարող է, մինչև իր որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում:

Ֆոդված 31

Մեծ պալատի լիազորությունները

Մեծ պալատը:

ա. քննության է առնում 33-րդ հոդվածներին համապատասխան ներկայացված գանգատները, եթե Պալատը 30-րդ հոդվածի դրույթների հիման վրա զիջել է ընդդատությունը, կամ եթե գործը նրան նրան է հանձնվել 43-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,

բ. քննության է առնում խորհրդատվական եզրակացություններ տալու մասին 47-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ներկայացված խնդրանքները:

Ֆոդված 32

Դատարանի իրավազորությունը

1. Դատարանի իրավազորությունը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանման ու կիրառմանը, և որոնք իրեն հանձնվում են 33-րդ և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում:

2. Դատարանի իրավազորության շուրձ եղած վեճի դեպքում հարցը լուծում է Դատարանը:

Ֆոդված 33

Միջպետական գործեր

Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ կարող է Դատարան դիմել Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների ցանկացած ենթադրվող խախտման հարցով, որը թույլ է տվել մեկ այլ Բարձր պայմանավորվող կողմ:

Ֆոդված 34

Անհատական գանգատները

Դատարանը կարող է գանգատներ ընդունել ցանկացած անձից, հասարակական կազմակերպությունից կամ անձանց խմբից, որոնք պնդում են, թե դարձել են սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրությունով ծանաչված իրենց իրավունքների՝ որևէ Բարձր պայմանավորվող կողմի թույլ տված խախտման զոհ: Բարձր պայմանա-

վորվող կողմերը պարտավորվում են որևէ կերպ չխոչնդոտել այդ իրավունքի արդյունավետ իրականացմամբ:

Ֆոդված 35

Ընդունելիության պայմանները

1. Դատարանը կարող է գործը քննության ընդունել միայն այն բանից հետո, երբ սպառվել են միջազգային իրավունքի հանրաճանաչ իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, և վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կայացվել է ներպետական վերջնական որոշումը:

2. Դատարանը քննության չի ընդունում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ոչ անհատական գանգատ, եթե այն՝

ա. անանուն է կամ,

բ. ըստ էության այն նույն հարցն է, որը Դատարանն արդեն քննել է կամ որն արդեն հանձնվել է միջազգային քննության կարգավորման այլ ընթացակարգի և չի բովանդակում գործին առնչվող նոր տեղեկություններ:

3. Դատարանը անընդունելի է համարում 34-րդ հոդվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է որ այն անհամատեղելի է սույն Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների դրույթների հետ կամ ակնհայտորեն անհիմն է կամ հանդիսանում է գանգատ ներկայացնելու իրավունքի չարաշահում:

4. Դատարանը մերժում է իրեն հանձնված ցանկացած գանգատ, որն անընդունելի է համարում սույն հոդվածին համապատասխան: Դատարանը կարող է դա անել քննության ցանկացած փուլում:

Ֆոդված 36

Երրորդ կողմի մասնակցությունը

1. Պալատի կամ մեծ պալատի կողմից քննության առնվող ցանկացած գործի կապակցությամբ յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, որի քաղաքացին է դիմողը, իրավունք ունի ներկայացնելու գրավոր դիտողություններ և մասնակցելու լսումներին:

2. Ելնելով արդարադատությունը պատշաճ կերպով իրականացնելու շահերից Դատարանի նախագահը կարող է ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի, որը գործի կողմ չէ, կամ ցանկացած շահագրգիռ անձի, որը դիմող չէ, հրավիրել՝ ներկայացնելու գրավոր դիտողություններ կամ մասնակցելու լսումներին:

Յոդված 37

Գանձատը ցուցակից հանելը

1. Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել գանձատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները համաձայնում են այն եզրակացության, թե՝

ա. դիմողը մտադիր չէ հետամուտ լինել իր գանձատին,

բ. վեճն արդեն կարգավորվել է,

գ. Դատարանի կողմից հիմք ընդունված որևէ այլ պատճառով գանձատի քննությունը շարունակելն արդարացված չէ: Այդուհանդերձ Դատարանը շարունակում է գանձատի քննությունը, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով և նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը:

2. Դատարանը կարող է որոշել գանձատը վերստին ընդգրկել գործերի ցուցակում, եթե գտնում է, որ հանգամանքներն արդարացնում են դա:

Յոդված 38

Գործի քննությունը և բարեկամական կարգավորման ընթացակարգը

1. Եթե դատարանը գանձատը հայտարարում է ընդունելի, նա՝

ա. նախաձեռնում է գործի քննությունը կողմերի կամ նրանց ներկայացուցիչների մասնակցությամբ և, եթե անհրաժեշտ է իրականացնում է հետաքննություն, որի արդյունավետ իրականացման համար գործին առնչվող պետություններն ապահովում են անհրաժեշտ բոլոր պայմանները,

բ. Իր ծառայությունն է տրամադրում գործին առնչվող կողմերին՝ սույն Կոնվենցիայով և նրա Արձանագրություններով սահմանված իրավունքների պահպանման հիման վրա հարցի բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով:

2.1-ին կետի «բ» ենթակետին համապատասխան իրականացվող քննությունը խորհրդապահական է:

Յոդված 39

Բարեկամական կարգավորում ձեռք բերելը

Բարեկամական կարգավորման դեպքում Դատարանը գործը հանում է իր ցուցակից՝ կայացնելով որոշում, որում տրվում է փաստերի և ձեռք բերված լուծման հակիրճ շարադրանքը:

Յոդված 40

Դռնբաց լսումները և փաստափոթերի մատչելիությունը

1. Լսումները դռնբաց են, եթե Դատարանը բացառիկ հանգամանքներով այլ որոշում չի ընդունում:

2. Քարտուղարությունն ի պահ հանձնված փաստաթղթերը մատչելի են հանրությանը, եթե Դատարանի նախագահը այլ որոշում չի ընդունում:

Յոդված 41

Արդարացի բավարարումը

Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:

Յոդված 42

Պալատների վճիռները

Պալատների վճիռները վերջնական են դառնում 44-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներին համապատասխան:

Յոդված 43

Գործի հանձնումը Մեծ պալատին

1. Պալատի՝ վճիռ կայացնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում գործի ցանկացած կողմ բացառիկ դեպքերում կառող է պահանջել, որ գործը հանձնվի Մեծ պալատին:

2. Մեծ պալատի հինգ դատավորից բաղկացած հանձնախումբն ընդունում է պահանջը, եթե գործն արձարձում է այնպիսի լուրձ հարց, որը վերաբերում է Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների մեկնաբանմանը կամ կիրառմանը, կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց: Եթե հանձնախումբն ընդունում պահանջը, ապա Մեծ պալատը գործը լուծում է՝ վճիռ կայացնելով:

Յոդված 44

Վերջնական վճիռները

1. Մեծ պալատի վճիռը վերջնական է:

2. Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝

ա. կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում
Մեծ պալատին կամ

բ. վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջ-
վում գործի հանձնում Մեծ պալատին կամ

գ. Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապա-
տասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը:

2. Վերջնական վճիռը ենթակա է հրապարակման:

Յոդված 45

Վճիռների և որոշումների պատճառաբանումը

1. Ինչպես վճիռները, այնպես էլ գանգատների ընդունելիության
կամ անընդունելիության մասին որոշումները պետք է լինեն պատ-
ճառաբանված:

2. Եթե վճիռը ամբողջությամբ կամ մասամբ չի արտահայտում
դատավորների միաձայն կարծիքը, ապա ցանկացած դատավոր ի-
րավունք ունի ներկայացնելու հատուկ կարծիք:

Յոդված 46

Վճիռների պարտադիր ուժն ու կատարումը

1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատա-
րել դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերա-
բերյալ, որոնցում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների
կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման
նկատմամբ:

Յոդված 47

Խորհրդատվական եզրակացությունները

Նախարարների կոմիտեի խնդրանքով Դատարանը կարող է
խորհրդատվական եզրակացություններ տալ Կոնվենցիայի և դրան
կից Արձանագրությունների մեկնաբանմանը վերաբերող իրավա-
կան հարցերի առնչությամբ:

2. Նման եզրակացությունները չպետք է շոշափեն այն հարցերը, ո-
րոնք վերաբերում են Կոնվենցիայի 1 բաժնում և նրան կից Արձա-
նագրություններում սահմանված իրավունքների կամ ազատություն-
ների բովանդակությունը, կամ ընդգրկմանը, կամ՝ ցանկացած այլ
հարց, որը Դատարանը կամ նախարարների կոմիտեն կարող էին
քննարկել ցանկացած այնպիսի լսումների արդյունքում, որոնց կա-
րող էին տեղի ունենալ Կոնվենցիային համապատասխան:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացություն խնդրելու
մասին նախարարների կոմիտեի որոշումն ընդունվում է կոմիտեի
նիստերին մասնակցելու իրավունք ունեցող ներկայացուցիչների
քվեների մեծամասնությամբ:

Յոդված 48

Դատարանի խորհրդատվական իրավագործությունը

Դատարանը որոշում է, թե արդյոք խորհրդատվական եզրակա-
ցության համար նախարարների կոմիտեի ներկայացված խնդրան-
քը 47-րդ հոդվածով սահմանված իր իրավասության շրջանակում է:

Յոդված 49

Խորհրդատվական եզրակացությունների պատճառաբանու- թյունը

1. Դատարանի խորհրդատվական եզրակացությունները պետք է
լինեն պատճառաբանված:

2. Եթե խորհրդատվական եզրակացությունն ամբողջությամբ
կամ մասամբ չի արտահայտում դատավորների միաձայն կարծիքը,
ապա ցանկացած դատավոր իրավունք ունի ներկայացնելու հա-
տուկ կարծիք:

3. Դատարանի խորհրդատվական եզրակացությունն ուղարկ-
վում է նախարարների կոմիտե:

Յոդված 50

Դատարանի պահպանման ծախսերը

Դատարանի գործունեության հետ կապված ծախսերը կրում է
Եվրոպայի խորհուրդը:

Յոդված 51

Դատավորների արտոնությունները

Դատավորներին իրենց գործառնությունները կատարելու ընթացքում
օգտվում են Եվրոպայի խորհրդի կանոնադրության 40-րդ հոդվա-
ծով և դրա հիման վրա կնքված համաձայնագրերով նախատեսված
արտոնություններից:

Բաժին III⁷
Այլ դրույթներ

Չոդված 52

Գլխավոր քարտուղարի պահանջները

Յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ, ի պատասխան Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի պայանջի, ներկայացնում է պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ, որով իր ներպետական իրավունքն ապահովում է Կոնվենցիայի ցանկացած դրույթի արդյունավետ իրականացումը:

Չոդված 53

Մարդու առկա իրավունքների երաշխավորումը

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մարդու այն իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակում կամ շեղում, որոնք կարող են երաշխավորել ցանկացած Բարձր պայմանավորվող կողմի օրենսդրությամբ կամ նրա մասնակցությամբ որևէ այլ համաձայնագրով:

Չոդված 54

Նախարարների կոմիտեի լիազորությունները

Սույն Կոնվենցիայում ոչինչ չի վնաս չէ Նախարարների Կոմիտեի լիազորություններին, որոնք նրան վերապահված են Եվրոպայի խորհրդի Կանոնադրությամբ:

Չոդված 55

Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը

Բարձր պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ, բացառությամբ հատուկ համաձայնագրի, իրենք չեն օգտվի իրենց միջև գործող պայմանագրերից, կոնվենցիաներից կամ հռչակագրերից՝ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը գանգատի միջոցով կարգավորման այլ միջոցների ներկայացնելու նպատակով, քան նրանք, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայով:

7 Սույն Բաժնի հոդվածները վերահամարակալվել են 11-րդ Արձանագրության (ETS N155) դրույթների համաձայն:

Չոդված 56

Տարածքային կիրառումը

1. Ցանկացած պետություն վավերացնելիս կամ հետագայում ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով հայտարարել, որ սույն Կոնվենցիան, սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն, տարածվում է այն բոլոր տարածքների կամ դրանցից ցանկացածի վրա, որոնց միջազգային հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

2. Կոնվենցիայի գործողությունը ծանուցագրի մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա տարածվում է այդ ծանուցագիրը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի ստանալուց հետո 30-րդ օրվանից:

3. Սույն Կոնվենցիայի դրույթները հիշյալ տարածքներում կիրառվում են՝ պատշաճորեն հաշվի առնելով տեղական պահանջները:

4. Ցանկացած պետություն, որը սույն հոդվածի առաջին կետի համապատասխան հայտարարություն է արել, հետագայում ցանկացած ժամանակ կարող է մեկ կամ մի քանի տարածքների անունից, որոնց վերաբերվում է այդ հայտարարությունը, հայտարարել, որ ինքը ճանաչում է անհատներից, ոչ կառավարական կազմակերպություններից կամ անձանց խմբերից գանգատներ ստանալու Դատարանի իրավասությունը, ինչպես դա նախատեսված է Կոնվենցիայի 34-րդ հոդվածում:

Չոդված 57

Վերապահումները

1. Ցանկացած պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերագիրն ի պահ հանձնելիս կարող է վերապահում անել Կոնվենցիայի ցանկացած դրույթի վերաբերյալ՝ այն առումով, որ այդ ժամանակ իր տարածքում գործող այս կամ այն օրենքը չի համապատասխանում այդ դրույթին: Սույն հոդվածը ընդհանուր բնույթի վերապահումներ չի թույլատրում:

2. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան կատարված ցանկացած վերապահում պետք է բովանդակի համապատասխան օրենքի հակիրճ շարադրանքը:

Չոդված 58

Չեղյալ հայտարարումը

1. Բարձր պայմանավորվող կողմը կարող է սույն Կոնվենցիան չեղյալ հայտարարել Կոնվենցիային մասնակից դառնալու պահից սկսած հինգ տարի անց միայն և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քար-

տողարհին ծանուցում ուղարկելու պահից սկսած վեց ամիսը լրանալուց հետո: Գլխավոր քարտուղարն այդ մասին իրազեկ է պահում մյուս Բարձր պայմանավորվող կողմերին:

2. Չեղյալ հայտարարելը համապատասխան Բարձր պայմանավորվող կողմին չի ազատում սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից ցանկացած գործողության կապակցությամբ, որը կարող է այդ պարտավորությունների խախտում լինել և նրա կողմից կատարվել մինչև չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ժամկետը:

3. Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, որը դադարում է Եվրոպայի Խորհրդի անդամ լինելուց նույն պայմաններով դադարում է սույն Կոնվենցիային մասնակից լինելուց:

4. Կոնվենցիան կարող է, նախորդ կետերի դրույթներին համապատասխան չեղյալ հայտարարվել ցանկացած տարածքի նկատմամբ, որի վրա տարածվում է նրա գործողությունը 56-րդ հոդվածի դրույթների համաձայն:

Հոդված 59

Ստորագրումը և վավերացումը

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 10-րդ վավերագիրն ի պահ հանձնելուց հետո:

3. Կոնվենցիան ստորագրված այն պետությունների համար, որոնք Կոնվենցիան վավերացնելու են հետագայում, վերջինս ուժի մեջ է մտնում նրանց վավերագրերն ի պահ հանձնելու ամսաթվից:

4. Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղար Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ պետություններին ծանուցում է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, այն վավերացրած Բարձր պայմանավորվող կողմերի և բոլոր այն վավերագրերն ի պահ հանձնելու մասին, որոնք կարող են ստացվել հետագայում:

Կնքված է Հռոմում 1950թ. նոյեմբերի 4՝ մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք պահվում են Եվրոպայի Խորհրդի արխիվում:

Գլխավոր քարտուղարը հաստատված պատճեններն ուղարկում է Կոնվենցիա ստորագրած բոլոր պետություններին:

Ինչպես տեսանք վերևում, Վրաստանը նույնպես Եվրոպայի Խորհրդին իր անդամակցության սկզբնական օրվանից և հետագա մի քանի տարիներին ստորագրել և վավերացրել է վերոբերյալ կոնվենցիան և վերջինս փոփոխության ենթարկող շուրջ մեկ տասնյակից ավելի արձանագրություններ: Պարզորոշ համարելով սույն կոնվենցիայի դրույթները՝ վերջիններիս մեկնաբանությունները և Վրաստանի կողմից իրականացման աստիճանի մասին քննությունը թողնում ենք ընթերցողին:

Եվրոպայի Խորհրդում Վրաստանի ընդունած և Ջավախքի հիմնահարցի հետ թերևս ամենամեծ առնչություն ունեցող կոնվենցիան թերևս «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային Կոնվենցիան» (**Framework Convention for the Protection of National Minorities**) է: Այստեղ «շրջանակային» բառն ընդգծում է այն ոլորտները, որոնց սահմաններում անդամ պետությունները, ելնելով երկրի իրավիճակից, պետք է ներպետական օրենսդրությունը և համապատասխան պետական քաղաքացիությունը համապատասխանեցնեն Կոնվենցիայի դրույթներին: Այս հանգամանքը բացարձակապես չի նվազեցնում Կոնվենցիայի՝ իրավական տեսանկյունից պարտադիր բնույթը: Շրջանակային կոնվենցիայի մոնիտորինգի հարցերով զբաղվում են ԵԽ Նախարարների կոմիտեն և անկախ փորձագետներից կազմված Խորհրդատվական հանձնախումբը: Հաշվետվությունների սկզբունքով գործող մոնիտորինգի ընթացակարգը պահանջում է, որ յուրաքանչյուր պետություն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում ներկայացնի առաջին հաշվետվությունը, իսկ լրացուցիչ հաշվետվությունները՝ յուրաքանչյուր հինգ տարին մեկ, կամ էլ՝ Նախարարների կոմիտեի հատուկ պահանջով: Կոնկրետ լրացուցիչ տեղեկատվություն պահանջելիս Խորհրդատվական հանձնախումբը գրավոր հարցաթերթիկներ է ուղարկում պետություններին:

Պետության հաշվետվությունները կազմելիս հաճախ Խորհրդակցություններ են անցկացվում փոքրամասնությունների և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, որոնց կողմից այլընտ-

րանքային հաշվետվություններ կամ տեղեկատվություն տրամադրելը քաջալերվում է⁸:

Կոնվենցիան Վրաստանի կողմից վավերացվեց բավականին ուշ՝ 2005թ. դեկտեմբերի 22-ին և ուժի մեջ մտավ 2006թ. ապրիլի 1-ին⁹:

**Ազգային փոքրամասնությունների մասին շրջանակային
Կոնվենցիա և բացատրական զեկույց¹⁰
Ստրասբուրգ, 1 փետրվարի, 1995 թ.**

(Рамочная конвенция о защите национальных меньшинств)

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Եվրոպայի Խորհրդի շրջանակներում, Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեի կողմից՝ Նախարարների Կոմիտեի լիազորությամբ, մշակված «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային Կոնվենցիան, ընդունվել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի կողմից 1994թ. նոյեմբերի 10-ին: Այն բաց էր Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար 1995թ. փետրվարի 1-ից: Անդամ չհանդիսացող պետությունները Նախա-

8 Տե՛ս COUNCIL OF EUROPE, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա (Եվրոպայի Խորհրդի Սարդու իրավունքների գլխավոր տնօրինության Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի քարտուղարության տեղեկատվական թերթիկ), Ստրասբուրգ, տես նաև Շրջանակային կոնվենցիայի հարցերով քարտուղարության տարբեր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության և փաստաթղթերի մասին գործող կայքէջը՝ http://www.coe.int/t/dghl/monitoring/minorities/default_en.asp.

9 Հայաստանի Հանրապետությունը Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան ստորագրել է 1997 թվականի հուլիսի 25-ին՝ վերջինիս 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Նախարարների կոմիտեի իրավերով, երբ դեռևս, Եվրոպայի Խորհրդի անդամ չէր հանդիսանում: Կոնվենցիան վավերացվել է 1998 թվականի փետրվարի 17-ին: Հայաստանի Հանրապետության համար կոնվենցիան ուժի մեջ է մտել 1998 թվականի նոյեմբերի 1-ին: 2001թ. մայիսին Հայաստանը ներկայացրել է «Հայաստանի Հանրապետության առաջին զեկույցը ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Շրջանակային կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն»:

10 Ոչ պաշտոնական բարգմանություն ռուսերենից:

րարների Կոմիտեի կողմից կարող են իրավիրվել սույն փաստաթղթին մասնակից դառնալու համար:

Հրատարակված սույն փաստաթուղթը ներառում է «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային Կոնվենցիայի տեքստը, ինչպես նաև բացատրական զեկույցը:

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ**

Սույն Շրջանակային Կոնվենցիան ստորագրած Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրները և այլ պետությունները,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է իր անդամ-երկրների ավելի սերտ միության հասնելը՝ նրանց ընդհանուր հարստություն համարվող իդեալների և սկզբունքների պաշտպանության և զարգացման նպատակով,

Հաշվի առնելով, որ այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը՝ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պահպանումը և հետագա իրականացումն է,

Ցանկանալով զարգացնել և կյանքի կոչել Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների Պետությունների և Կառավարությունների Ղեկավարների՝ 1993թ. հոկտեմբերի 9-ին ընդունված Վիեննայի Հռչակագրի դրույթները,

Իրենց համապատասխան տարածքներում ազգային փոքրամասնությունների գոյությունը պաշտպանելու վճռականությամբ լեցուն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի պատմության մեջ եղած ցնցումները ցույց են տվել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը անհրաժեշտ է Եվրոպական մայրցամաքում կայունության, ժողովրդավարական անվտանգության և խաղաղության համար,

Հաշվի առնելով, որ բազմակարծիք և իսկապես ժողովրդավարական հասարակությունը պարտավոր է ոչ միայն հարգել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը, այլև ստեղծել համապատասխան պայմաններ, որոնք թույլ կտան արտահայտել, պահպանել և զարգացնել այդ ինքնությունը,

Հաշվի առնելով, որ հանդուրժողականության և երկխոսության մթնոլորտի ստեղծումն անհրաժեշտ է, որպեսզի մշակութային բազ-

մազանությունը լինի յուրաքանչյուր հասարակության հարստացման և ոչ թե պառակտման աղբյուր և գործոն,

Հաշվի առնելով, որ հանդուրժող և բարգավաճող Եվրոպայի զարգացումը կախված է ոչ միայն երկրների միջև համագործակցությունից, այլև պահանջում է տեղական և տարածաշրջանային իշխանությունների միջսահմանային համագործակցություն՝ յուրաքանչյուր պետության սահմանադրությունն ու տարածքային ամբողջականությունը հարգելու պայմանով,

Ելնելով «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայից և դրա Արձանագրություններից,

Ելնելով Միավորված Ազգերի Կազմակերպության կոնվենցիաներում և հռչակագրերում, ինչպես նաև Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովի փաստաթղթերում, մասնավորապես, 1990թ. հունիսի 29-ի Կոպենհագենի փաստաթղթում, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում ստանձնած պարտավորություններից,

Վճռականությամբ լեցուն որոշելու այն սկզբունքները, որոնց պետք է հետևել, և դրանցից բխող պարտականությունները՝ անդամերկրներում և այլ պետություններում, որոնք կարող են դառնալ սույն փաստաթղթի մասնակիցներ, ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար՝ հարգելով օրենքի գերակայությունը, պետությունների տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը,

Սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքները, ազգային օրենսդրության և համապատասխան պետական քաղաքականության հիման վրա, կյանքի կոչելու վճռականությամբ լի,

Հանաձայնվեցին հետևյալի շուրջ.

Բաժին I

Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է և, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

Հոդված 2

Սույն շրջանակային Կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման և հանդուրժողականության ոգով և բարիդրացիության, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության սկզբունքներին համապատասխան:

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու, ազատ ընտրության իրավունք և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որ կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում:

2. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք, անհատապես, ինչպես նաև մյուսների հետ խմբերով, կարող են իրականացնել իրավունքներ և օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն շրջանակային Կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:

Բաժին II

Հոդված 4

1. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարությունը և օրենքով հավասար պաշտպանությունը: Այդ առումով, արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելիության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

2. Կողմերը պարտավորվում են, անհրաժեշտ դեպքերում, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում, աջակցեն ազգային փոքրամասնությանը և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև լիակատար և իրական հավասարությունը: Այս նպատակով, Կողմերը ըստ պատշաճի պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն:

Յոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները և մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

2. Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս, Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողություններից, որոնք հետապնդում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ և պետք է այդ անձանց պաշտպանեն ցանկացած գործողություններից, որոնք ուղղված են այդպիսի միաձուլման:

Յոդված 6

1. Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտը, և պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելիությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը և համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառներում:

2. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:

Յոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

Յոդված 8

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ

հավատը բացահայտ դավանելու, ինչպես նաև կրոնական հաստատություններ, կազմակերպություններ և ընկերություններ ստեղծելու իրավունքը:

Յոդված 9

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը՝ անկախ պետական իշխանությունների միջամտությունից և սահմաններից: Իրենց իրավական համակարգի շրջանակներում, Կողմերը պետք է ապահովեն, որպեսզի լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք չենթարկվեն խտրականության:

2. Առաջին կետը չի արգելում, որպեսզի Կողմերը, հնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման կամ կինամատուցող ֆիզիկալ ձեռնարկությունների համար արտոնագրում պահանջեն՝ առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա:

3. Կողմերը չպետք է արգելեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից տպագիր մամուլի միջոցների ստեղծումն ու օգտագործումը: Յնչուն ռադիոյի և հեռուստահեռարձակման իրավական դաշտի շրջանակներում, որքանով, որ դա հնարավոր է, և հաշվի առնելով 1-ին կետի դրույթները, Կողմերը, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, պետք է երաշխավորեն լրատվական սեփական միջոցների ստեղծման և օգտագործման հնարավորությունը:

4. Իրենց իրավական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է համապատասխան /ադեկվատ/ միջոցներ ձեռնարկեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվական միջոցների մատչելիությունը դյուրացնելու, ինչպես նաև հանդուրժողականությունը խրախուսելու և մշակութային բազմակարծությունը ապահովելու համար:

Յոդված 10

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, անձնական կյանքում և հասարակական վայրերում, իր փոքրամասնության լեզվից, բանավոր և գրավոր, անարգել օգտվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքներին, Կողմերը, որքանով որ հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը, ամենակարճ ժամկետներում, իրեն հասկանալի լեզվով, տեղեկություն ստանալ իր ձերբակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով, դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով թարգմանչի անվճար ծառայություն:

Ֆոդված 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:

2. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, իր փոքրամասնության լեզվով, հասարակության համար տեսանելի, մասնավոր բնույթի նշումներ, գրություններ և այլ տեղեկատվություն տեղադրելու իրավունք ունի:

3. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդապես բնակեցված տարածքներում, Կողմերը, իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում նաև ներառյալ այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով, ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա:

Ֆոդված 12

1. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում, պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար:

2. Այս կոնտեքստում, Կողմերը, մասնավորապես պետք է ադեկվատ հնարավորություններ տրամադրեն ուսուցիչների պատրաստման, դպրոցական դասագրքերով ապահովման համար և դյուրացնեն շփումները տարբեր համայնքների ուսանողների և ուսուցիչների միջև:

3. Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, բոլոր մակարդակներով, ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ:

Ֆոդված 13

1. Իրենց կրթական համակարգերի շրջանակներում, Կողմերը պետք է ճանաչեն, որ ազգային փոքրամասնության պատկանող անձիք իրավունք ունեն ստեղծել և ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները:

2. Այս իրավունքի իրագործումը Կողմերի վրա ոչ մի ֆինանսական պարտավորություններ չի դնում:

Ֆոդված 14

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը՝ սովորելու իր փոքրամասնության լեզուն:

2. Ավանդաբար կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված տարածքներում, բավարար կարիքի դեպքում, Կողմերը, հնարավորությունների սահմաններում և իրենց կրթական համակարգերի շրջանակներում, պետք է երաշխավորեն, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, իրենց լեզուն ուսումնասիրելու կամ այդ լեզվով կրթություն ստանալու ադեկվատ հնարավորություններ:

3. Սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթները չպետք է իրագործվեն ի վնաս պաշտոնական լեզվի ուսուցմանը և դասավանդմանը:

Ֆոդված 15

Կողմերը պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մաս-

նակցությունը մշակութային, հասարակական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, իրենց ամենօրյա հարցերում, ապահովելու համար:

Յոդված 16

Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով և նպատակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

Յոդված 17

1. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն:

2. Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց՝ ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը, ազգային և միջազգային մակարդակներով, մասնակցելու իրավունքը:

Յոդված 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ, երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

2. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

Յոդված 19

Կողմերը պարտավորվում են հարգել և կիրառել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքները, անհրաժեշտության դեպքում, կատարելով միայն այնպիսի սահմանափակումներ և բացառություններ, որոնք նախատեսված են միջազգային իրավական փաս-

տաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայում, այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են նշված սկզբունքներից բխող իրավունքներին և ազատություններին:

ԲԱԺԻՆ III

Յոդված 20

Սույն շրջանակային կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքների և ազատությունների իրագործման ժամանակ, ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ պետք է հարգի ազգային օրենսդրությունը և մյուսների իրավունքները, մասնավորապես, բնակչության մեծամասնության և այլ ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Յոդված 21

Ոչինչ սույն շրջանակային Կոնվենցիայում չի կարող մեկնաբանվել որպես ցանկացած անհատի որևէ ենթադրվող գործունեությանը զբաղվելու կամ ինչ որ գործողություններ կատարելու իրավունք, որը հակասում է միջազգային իրավունքի, մասնավորապես, ինքնիշխան հավասարության, տարածքային ամբողջականության և պետությունների քաղաքական անկախության սկզբունքներին:

Յոդված 22

Ոչինչ սույն շրջանակային Կոնվենցիայում չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրի օրենքներով կամ որևէ այլ համաձայնագրով, որին այդ Կողմը մասնակից է, երաշխավորվող մարդու իրավունքների կամ հիմնական ազատությունների սահմանափակում կամ նվազեցում:

Յոդված 23

Սույն շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքներից բխող ազատությունները և իրավունքները, այնքանով, որքանով որ հանդիսանում են «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի կամ դրա Արձանագրությունների առարկա, պետք է հասկացվեն որպես վերջինիս համապատասխան դրույթներ:

ԲԱԺԻՆ IV

Հոդված 24

1. Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն լիազորված է հետևել Պայմանավորվող պետությունների կողմից սույն շրջանակային Կոնվենցիայի իրազորմանը:

2. Կողմերը, որոնք չեն հանդիսանում Եվրոպայի Խորհրդի անդամ, կոնվենցիայի իրազորման մեխանիզմին կմասնակցեն համաձայն այն պայմանների, որոնք պետք է սահմանվեն:

Հոդված 25

1. Որևէ Պայմանավորվող Կողմի նկատմամբ սույն շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում, վերջինս Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին պետք է փոխանցի օրենսդրական և այլ միջոցառումների մասին համալիր տեղեկատվություն, որոնք ընդունվել և ձեռնարկվել են սույն շրջանակային Կոնվենցիայից բխող սկզբունքները իրականացնելու համար:

2. Հետագայում յուրաքանչյուր Կողմ պարբերաբար և ամեն անգամ, երբ Նախարարների Կոմիտեի կողմից կստանա համապատասխան խնդրանք, Գլխավոր քարտուղարին պետք է ներկայացնի ցանկացած այլ տեղեկատվություն, կապված սույն շրջանակային Կոնվենցիայի իրազորման հետ:

3. Սույն հոդվածի դրույթների համաձայն ստացված ամբողջ տեղեկատվությունը, Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի Նախարարների Կոմիտեին:

Հոդված 26

1. Սույն շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքների իրականացման համար Կողմերից որևէ մեկի ընդունած միջոցառումների նույնականության գնահատման ժամանակ, Նախարարների Կոմիտեին պետք է օժանդակի Խորհրդակցական Կոմիտեն, որի անդամները պետք է ճանաչված իրազեկություն ունենան ազգային փոքրամասնությունների պաշտպանության բնագավառում:

2. Խորհրդակցական Կոմիտեի կազմավորման կարգը, ինչպես նաև աշխատանքային ընթացակարգը, պետք է սահմանվեն Նախարարների Կոմիտեի կողմից, սույն շրջանակային կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում:

ԲԱԺԻՆ V

Հոդված 27

Սույն շրջանակային Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար: Մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, այն բաց է նաև ցանկացած այն պետության ստորագրման համար, ում կիրավորի ստորագրել Նախարարների Կոմիտեն: Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հավանության: Վավերացման, ընդունման կամ հավանության վերաբերյալ փաստաթղթերը պետք է ի պահ տրվեն Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին:

Հոդված 28

1. Սույն շրջանակային Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այն օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը, երբ սույն շրջանակային Կոնվենցիայի 27-րդ հոդվածի դրույթներին համաձայն, Եվրոպայի Խորհրդի տասներկու անդամ-երկրները կարտահայտեն իրենց համաձայնությունը սույն Կոնվենցիան իրենց համար պարտադիր լինելու մասին:

2. Յուրաքանչյուր անդամ-երկրի համար, որը հետագայում կարտահայտի իր համաձայնությունը սույն շրջանակային Կոնվենցիան իր համար պարտադիր լինելու մասին, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթը ի պահ հանձնելու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 29

1. Սույն շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց, և պայմանավորվող պետությունների հետ անցկացված խորհրդատվություններից հետո, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի որոշմամբ, որը համաձայն Եվրոպայի Խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի d-կետի, ընդունվում է մեծամասնությամբ, Նախարարների Կոմիտեն Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող յուրաքանչյուր պետության կարող է առաջարկել միանալ սույն շրջանակային Կոնվենցիային, որը համաձայն 27-րդ հոդվածի դրույթների հրավիրվել է ստորագրելու այն, բայց չի ստորագրել, ինչպես նաև որևէ այլ անդամ չհանդիսացող պետության:

2. Յուրաքանչյուր միացած պետության համար սույն շրջանակային Կոնվենցիան ուժի մեջ կմտնի միացման փաստաթուղթը Եվրո-

պայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրից ե-
ռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Ֆոդված 30

1. Յուրաքանչյուր պետություն ստորագրման կամ վավերացման
պահին, ինչպես նաև ընդունման և միանալու փաստաթուղթը ի պահ
հանձնելու ժամանակ, կարող է նշել տարածքը կամ տարածքները, ո-
րոնց սահմաններում նա պատասխանատվություն է կրում միջազգա-
յին հարաբերությունների և սույն Կոնվենցիայի կիրառման համար:

2. Յուրաքանչյուր պետություն կարող է հետագայում ցանկացած
պահի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայ-
տարարությանը տարածել սույն շրջանակային Կոնվենցիայի կիրա-
ռումը որևէ ուրիշ, հայտարարության մեջ նշված, տարածքի վրա: Այս
տարածքների վերաբերյալ սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ
հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օ-
րից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի դրույթների հիման վրա արված ցան-
կացած հայտարարություն կարող է հետ վերցվել, Գլխավոր քար-
տուղարին ուղղված ծանուցագրի միջոցով, այդպիսի հայտարա-
րության մեջ նշված ցանկացած տարածքի վերաբերյալ: Այդպիսի
հետ կանչումը ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից ծա-
նուցագիրը ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջոր-
դող ամսվա առաջին օրը:

Ֆոդված 31

1. Յուրաքանչյուր կողմ, ցանկացած պահի, կարող է չեղյալ հայ-
տարարել սույն շրջանակային Կոնվենցիան՝ ծանուցագրի հղելով
Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Այդպիսի չեղյալ հայտարարումը /դենոնսացիան/ ուժի մեջ
կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցագիրը ստանալու օ-
րից վեցամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օ-
րը:

Ֆոդված 32

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է տեղեկաց-
նի Եվրոպայի խորհրդի անդամ-երկրներին, սույն շրջանակային
Կոնվենցիան ստորագրած մյուս պետություններին և սույն Կոնվեն-
ցիային միացած յուրաքանչյուր պետության՝

a. ցանկացած ստորագրման մասին;

b. վավերացման, ընդունման, հավանության կամ միանալու վե-
րաբերյալ յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնելու մասին;

c. շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու ցանկացած օր-
վա մասին, համաձայն Կոնվենցիայի 28, 29 և 30 հոդվածներին:

d. սույն շրջանակային Կոնվենցիային վերաբերող ցանկացած
այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդագրության մասին:

Ի հավաստումս վերոհիշյալի, ներքոստորագրյալները, լինելով
պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն շրջանակային
Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1995թ, փետրվարի 1-ին, անգլե-
րեն և ֆրանսերեն լեզուներով, երկու տեքստներն էլ հավասարազոր
են, և մեկական տարբերակով հանձնվում են ի պահ Եվրոպայի
խորհրդի արխիվ: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը հաս-
տատված պատճենները պետք է փոխանցի Եվրոպայի խորհրդի յու-
րաքանչյուր անդամ-երկրի, ինչպես նաև յուրաքանչյուր պետու-
թյան, որին կառաջարկվի ստորագրել կամ միանալ սույն շրջանակա-
յին Կոնվենցիային:

ԲԱՑԱՏՐՎԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ

1. Ավելի քան քառասուն տարների ընթացքում, Եվրոպայի խոր-
հուրդը, բազմաթիվ առիթներով, ուսումնասիրել է ազգային փոքրա-
մասնությունների իրավիճակը: Խորհրդարանական Վեհաժողովը,
իր գոյության առաջին տարվա ընթացքում /1949թ./, Իրավական և
Վարչական Չեղցերի Կոմիտեի զեկույցով, ճանաչեց «ազգային փոք-
րամասնությունների իրավունքների ընդլայնված պաշտպանության
խնդիր» կարևորությունը: «Մարդու իրավունքների և հիմնական ա-
զատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվեն-
ցիայում չընդգրկված ազգային փոքրամասնությունների որոշ իրա-
վունքները երաշխավորելու համար, Վեհաժողովը 1961 թվականին
առաջարկեց Կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության
մեջ նոր հոդված ավելացնել: Կոնվենցիան, 14-րդ հոդվածում, պար-
զապես հղում էր կատարում «ազգային փոքրամասնության պատկե-
րացումներին» խտրականությունների չկիրառման տեսանկյունից:
285 Հանձնարարականը /1961թ./ ազգային փոքրամասնությունների
իրավունքների պաշտպանության մասին հոդվածի նախագծի հա-
մար առաջարկեց հետևյալ ձևակերպումը.

«Ազգային փոքրամասնությանը պատկանող անձիք, իրենց խմբի մյուս անդամների հետ միասին, և հասարակական կարգին համապատասխան, չպետք է զրկվեն իրենց սեփական մշակույթից օգտվելու, իրենց լեզուն գործածելու, իրենց դպրոցները ստեղծելու և իրենց ընտրած լեզվով կրթություն ստանալու կամ իրենց կրոնը դավանելու և կիրառելու իրավունքից»:

2. Այդպիսի արձանագրություն կազմելու հնարավորությունը և նպատակահարմարությունը որոշելու նպատակով լիազորված փորձագետների կոմիտեն, հետաձգեց իր աշխատանքները մինչև Բելգիական լեզվաբանական գործերում, /Մարդու իրավունքների Եվրոպական Դատարան. 1968թ. հուլիսի 27-ի դատավճիռը, Սերիա A # 6/ կրթության բնագավառում կիրառվող լեզուների վերաբերյալ, վերջնական վճռի կայացումը: 1973թ. կոմիտեն եզրահանգեց այն կարծիքին, որ իրավական տեսակետից չկա հատուկ անհրաժեշտություն ազգային փոքրամասնությունների իրավունքները «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության առարկա դարձնելու համար: Այնուամենայնիվ, փորձագետները գտնում էին, որ իրավական առումով չկան մեծ խոչընդոտներ այդպիսի արձանագրության ընդունման համար, եթե դրա ընդունումը այլ պատճառներով կհամարվի նպատակահարմար:

3. Այնուհետև խորհրդարանական Վեհաժողովը Նախարարների Կոմիտեին առաջարկեց մի շարք քաղաքական և իրավական միջոցառումներ, մասնավորապես, ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին արձանագրություն կամ կոնվենցիա կազմելու համար: 1134 հանձնարարականը /1990թ./ ներառում է այն սկզբունքները, որոնք Վեհաժողովի կողմից համարվել են անհրաժեշտ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար: 1991թ. հոկտեմբերին Մարդու իրավունքների Կոմիտեին հանձնարարվեց, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության խորհրդաժողովի /ԵԱՀԽ/ և Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից իրականացված աշխատանքները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդում առկա մտորումները հաշվի առնելու պայմանները, իրավական և քաղաքական առումներով, որոշել, այն պայմանները, համաձայն որի Եվրոպայի խորհուրդը կարող է գործունեություն ծավալել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար:

4. 1992թ. մայիսին Նախարարների Կոմիտեն լիազորեց Մարդու իրավունքների Կոմիտեին՝ ուսումնասիրել ազգային փոքրամաս-

նությունների իրավունքների պաշտպանությանը վերաբերող առանձնահատուկ իրավական նորմերի ձևակերպման հնարավորությունները: Այդ նպատակի համար, Մարդու իրավունքների Կոմիտեն ստեղծեց փորձագետների կոմիտե /DH-MIN/, որին 1993թ. մարտին տրված նոր մանդատի ներքո, հանձնարարվեց առաջարկել այս բնագավառում հատուկ իրավական նորմեր՝ Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԽ միջև իրականացված աշխատանքը լրացնելու սկզբունքով: Մարդու իրավունքների Կոմիտեն և DH-MIN-ը, հաշվի առան բազմաթիվ տեքստեր, մասնավորապես, Ժողովրդավարություն իրավունքի Միջոցով Հանձնաժողովի /այսպես կոչված՝ Վենետիկի հանձնաժողով/ կողմից կազմված «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի մասին առաջարկը, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության մասին ավստրիական առաջարկը, Վեհաժողովի 1201 /1993թ./ հանձնարարականում ընդգրկված «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության նախագիծը և այլ առաջարկներ: Այս ուսումնասիրությունները հանգեցրին 1993թ. սեպտեմբերի 8-ին Նախարարների Կոմիտեին ուղղված Մարդու իրավունքների Կոմիտեի զեկույցի պատրաստմանը, որն ընդգրկում էր բազմաթիվ իրավական նորմեր, որոնք կարող են ընդունվել այդ բնագավառում, ինչպես նաև իրավական փաստաթղթեր, որոնցում այդ նորմերը կարող են շարադրվել: Այդ առիթով, Մարդու իրավունքների Կոմիտեն նշեց, որ «ազգային փոքրամասնություններ» տերմինի մեկնաբանության հարցում չի հաջողվել համաձայնություն ձեռք բերել /հանգել կոնսենսուսի/:

5. Որոշիչ քայլը կատարվեց 1993թ. հոկտեմբերի 8-ի և 9-ի Եվրոպայի խորհրդի անդամ-երկրների Պետությունների և Կառավարությունների Ղեկավարների Վիեննայի Գագաթաժողովում: Այդտեղ համաձայնություն ձեռք բերվեց, որ Եվրոպայի պատմության մեջ եղած ցնցումների արդյունքում առաջացած ազգային փոքրամասնությունների իրավունքները պետք է պաշտպանվեն և հարգվեն՝ հօգուտ խաղաղության և կայունության: Մասնավորապես, Պետությունների և Կառավարությունների Ղեկավարները որոշեցին ձեռնամուխ լինել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար իրավական ձեռնարկումների: Վիեննայի հռչակագրի II Հավելվածը Նախարարների Կոմիտեին հանձնարարում էր.

-Առանց հապաղելու մշակել շրջանակային կոնվենցիա, որը

պետք է սահմանի այն սկզբունքները, որոնք Պայմանավորվող պետությունները կպարտավորվեն հարգել՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Այս փաստաթուղթը բաց կլինի նաև անդամ չհանդիսացող պետությունների ստորագրման համար;

- Աշխատանքներ սկսել «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան մշակույթի բնագավառում լրացնող արձանագրություն մշակելու համար, որը կներառի անհատական իրավունքները, մասնավորապես, ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքները, երաշխավորող դրույթներ:

6. 1993թ. նոյեմբերի 4-ին Նախարարների Կոմիտեն ստեղծեց Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտե: Կոմիտեին տրված մանդատը արտացոլում էր Վիեննայում ընդունված որոշումները: Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրներից բաղկացած սույն Կոմիտեն՝ Մարդու Իրավունքների Կոմիտեի, Մշակութային Համագործակցության Խորհրդի, Ջանգվածային Լրատվական Միջոցների Կոմիտեի և Ժողովրդավարություն Իրավունքի միջոցով Հանձնաժողովի ներկայացուցիչների մասնակցությամբ, սկսեց իր աշխատանքները 1994թ. հունվարի վերջերին: Դիտորդի կարգավիճակող մասնակցում էին նաև ԵԱՀԽ Ազգային Փոքրամասնությունների Հարցերով Գերագույն Հանձնակատարը և Եվրոպական Համայնքների Հանձնաժողովը:

7. 1994թ. ապրիլի 15-ին Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեն Նախարարների Կոմիտեին ներկայացրեց ժամանակավոր զեկույց, որը հետագայում փոխանցվեց Խորհրդարանական Վեհաժողովին /փաստաթուղթ 7109/: Նախարարների Կոմիտեն 1994թ. մայիսին, 94-րդ նստաշրջանի ընթացքում, իր գոհունակությունը հայտնեց Վիեննայի հռչակագրից բխող մանդատի ներքո ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ:

8. Շրջանակային Կոնվենցիայի որոշ դրույթներ, որոնք պահանջում են քաղաքական իրավարարություն /արբիտրաժ/, ինչպես նաև այն դրույթները որոնք վերաբերում են Կոնվենցիայի իրագործման վերահսկմանը, մշակվել են Նախարարների Կոմիտեի կողմից /1994թ. հոկտեմբերի 7-ի Նախարարների Պատվիրակների 517bis հանդիպում/:

9. Ազգային Փոքրամասնությունների Իրավունքների Պաշտպանության Հատուկ Կոմիտեն 1994թ. հոկտեմբերի 10-ից 14-ը տեղի ու-

նեցած հանդիպման ժամանակ, որոշեց Նախարարների Կոմիտեին ներկայացնել շրջանակային կոնվենցիայի նախագիծը: Նախարարների Կոմիտեն ընդունեց ներկայացված նախագիծը 1994թ. նոյեմբերի 10-ին 95-րդ նստաշրջանի ընթացքում:

1995թ. փետրվարի 1-ին Շրջանակային Կոնվենցիան բաց էր Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Շրջանակային Կոնվենցիայի նպատակները

10. Շրջանակային Կոնվենցիան հանդիսանում է առաջին իրավաբանորեն պարտավորեցնող բազմակողմ փաստաթուղթը, որն ընդհանուր առմամբ նվիրված է ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Կոնվենցիայի նպատակն է սահմանել այն իրավական սկզբունքները, որ պետությունները կպարտավորվեն հարգել՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու համար: Սույնով Եվրոպայի Խորհրդը կյանքի կոչեց Վիեննայի հռչակագրի կոչը /Հավելված II/՝ Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդաժողովի /ԵԱՀԽ/ կողմից ընդունված քաղաքական սկզբունքները, առավել հնարավոր չափով, իրավական պարտավորությունների վերափոխելու մասին:

Մոտեցումներ և հիմնական կոնցեպցիաներ

11. Լուծում պահանջող տարբեր իրավիճակներն ու խնդիրները դասակարգելու համար, որոշվեց, որ Շրջանակային Կոնվենցիան հիմնականում պետք է ներառի ծրագրային բնույթի դրույթներ, որոնք պետք է սահմանեն այն նպատակները, որ պետք է երաշխավորեն Կողմերը: Այս դրույթները, որոնք ենթակա չեն ուղղակի կիրառման, համապատասխան պետությունների հայեցողությանն են թողնում իրենց առջև դրված նպատակների իրագործումը, դրանով նրանց հնարավորություն տալով հաշվի առնել իրենց յուրահատուկ հանգամանքները:

12. Պետք է նշել նաև, որ Շրջանակային Կոնվենցիան չի ներառում «ազգային փոքրամասնություն» հասկացության բնորոշումը: Որոշվել էր գործնական /պրագմատիկ/ մոտեցում ցուցաբերել, որը հիմնված էր այն համոզման վրա, որ այդ փուլում անհնար է սահմանել Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ-երկրների առաջարկությունները համախմբող բնորոշում:

13. Շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքների կիրառումը պետք է իրականացվի ազգային օրենսդրության և համապատասխան պետական քաղաքականության միջոցով: Դա չի առնչվում կոլեկտիվ իրավունքների ճանաչմանը: Շեշտը դրված է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների պաշտպանության վրա, ովքեր կարող են անհատապես կամ խմբերով իրականացնել իրենց իրավունքները /տես, 3-րդ հոդված 3, կետ 2/: Այդ առումով Շրջանակային Կոնվենցիան հետևում է այլ միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված փաստաթղթերի մոտեցմանը:

Շրջանակային Կոնվենցիայի կառուցվածքը

14. Նախաբանից բացի, Շրջանակային Կոնվենցիան բաղկացած է հինգ մասերի բաժանված գործուն մասից:

15. I Բաժինը, ընհանուր ձևով, ներառում է որոշ հիմնական սկզբունքներ սահմանող դրույթներ, որոնք կարող են նպաստել Շրջանակային Կոնվենցիայի մյուս անկախ դրույթների մեկնաբանմանը:

16. II Բաժինը ներառում է առանձնահատուկ սկզբունքներ:

17. III Բաժինը ընդգրկում է Շրջանակային Կոնվենցիայի մեկնաբանմանն ու իրագործմանն առնչվող մի շարք դրույթներ:

18. IV Բաժինը ներառում է Շրջանակային Կոնվենցիայի իրագործման վերահսկմանը վերաբերող դրույթներ:

19. V Բաժինը ընդգրկում է Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված կոնվենցիաների և համաձայնագրերի տիպային եզրափակիչ դրույթների վրա հիմնված վերջնադրույթներ:

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

20. Նախաբանում շարադրված են Շրջանակային Կոնվենցիան կազմելու պատճառները և բացատրված են Կոնվենցիան մշակողների մտահոգությունները: Բացման խոսքերն արդեն մատնանշում են, որ սույն փաստաթուղթը կարող են ստորագրել և վավերացնել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունները /տես, 27-րդ և 29-րդ հոդվածները/:

21. Նախաբանը հղում է կատարում Եվրոպայի խորհրդի Կանոնադրության նպատակի և այդ նպատակը երաշխավորելու միջոցներ

րից մեկի՝ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պահպանման և հետագա իրագործման վրա:

22. Հղում է կատարվում նաև Եվրոպայի խորհրդի անդամ-երկրների Պետությունների և Կառավարությունների Ղեկավարների Վիեննայի հռչակագրի վրա, մի փաստաթղթի, որը հանդիսացել է սույն Շրջանակային Կոնվենցիայի հիմքը /տես նաև, վերևից հինգերորդ պարբերությունը/: Փաստորեն, Նախաբանի տեքստը մեծապես ոգեշնչված է այդ հռչակագրով, մասնավորապես, հռչակագրի 3-րդ կետով II-ով: Սույնը վերաբերում է նաև Շրջանակային Կոնվենցիայի I և II Բաժիններում ընդգրկված ձեռնարկումների ընտրությանը:

23. Նախաբանը, ոչ սպառնիչ կերպով, նշում է Շրջանակային Կոնվենցիայի բովանդակության ոգեշնչման երեք այլ աղբյուրները. «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ պարտականություններ ներառող ՄԱԿ-ի և ԵԱՀԽ փաստաթղթերը:

24. Նախաբանն արտացոլում է Եվրոպայի խորհրդի և նրա անդամ-երկրների մտահոգությունը՝ ազգային փոքրամասնություններին սպառնացող վտանգի վերաբերյալ: Նախաբանը ոգեշնչված է ՄԱԿ-ի «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ /1992թ. դեկտեմբերի 18-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված 47/135 Բանաձև/:

25. Ելնելով այն հանգամանքից, որ Շրջանակային Կոնվենցիան բաց է նաև Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետությունների ստորագրման համար և, առավել սպառնիչ մոտեցում ցուցաբերելու նպատակով, որոշվել էր ներառել որոշ սկզբունքներ, որոնցից բխող իրավունքներն ու ազատությունները արդեն իսկ երաշխավորված են «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայում և դրա Արձանագրություններում /այդ կապակցությամբ, տես Շրջանակային Կոնվենցիայի 23-րդ հոդվածը/:

26. ՄԱԿ-ի կոնվենցիաներին և հռչակագրերին կատարված հղումը հիշեցնում է համաշխարհային մակարդակով կատարված աշխատանք, ինչպես օրինակ՝ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային պայմանագրում /հոդված 27/ և «Ազգային կամ էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները մասին» հռչակագրում: Այնուամենայնիվ, այս հղումը չի տարածվում ազգային

փոքրամասնության որևէ բնորոշման վրա, որը կարող է ներառված լինել այդ տեքստերում:

27. ԵԱՀԽ համապատասխան սկզբունքների վրա կատարված հղումը արտացոլում է Վիեննայի Հռչակագրի II Հավելվածում արտահայտված ձգտումն այն մասին, որ Եվրոպայի Խորհուրդը, հնարավորությունների սահմաններում, պետք է ձեռնամուխ լինի այդ քաղաքական սկզբունքները իրավական պարտավորությունների վերափոխմանը:

28. Նախաբանի նախավերջին պարբերությունը սահմանում է Շրջանակային Կոնվենցիայի հիմնական նպատակը, այն է՝ երաշխավորել ազգային փոքրամասնությունների և այդ փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը: Միաժամանակ Նախաբանում ընդգծվում է, որ այդ արդյունավետ պաշտպանությունը պետք է երաշխավորվի օրենքի գերակայության շրջանակներում և պետությունների տարածքային ամբողջականությունը և ինքնիշխանությունը հարգելու պայմանով:

29. Վերջին տողի նպատակն է նշել, որ Շրջանակային Կոնվենցիայի դրույթները չեն կարող ուղղակիորեն կիրառվել: Խոսքը չի վերաբերվում միջազգային պայմանագրերը ներպետական իրավական համակարգում ընդգրկելու Կողմերի օրենքներին ու պրակտիկային:

ԲԱԺԻՆ I

Հոդված 1

30. Հոդված 1-ի հիմնական նպատակն է նշել, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը, որը հանդիսանում է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասը, չի ներառվում պետությունների սահմանափակ իշխանության մեջ: Այն փաստը, որ այդ պաշտպանությունը «կազմում է մարդու իրավունքների պաշտպանության անբաժան մասը», «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով ստեղծված մարմիններին, սույն Շրջանակային Կոնվենցիայի մեկնաբանման իրավունք, չի վերապահում:

31. Հոդվածը հղում է կատարում ազգային փոքրամասնությունների, որպես այդպիսին, և այդ փոքրամասնությունների պատկանող

անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այս տարբերակումը և ձևակերպման տարբերությունը պարզ է դարձնում, որ չեն շոշափվում ազգային փոքրամասնությունների կոլեկտիվ իրավունքները /տես նաև 3-րդ հոդվածի մեկնաբանությունը/: Կողմերն, այնուամենայնիվ, ճանաչում են, որ ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանությունը կարող է ձեռք բերվել այդ փոքրամասնությունների պատկանող անհատների իրավունքների պաշտպանությամբ:

Հոդված 2

32. Սույն հոդվածը ներառում է Շրջանակային Կոնվենցիայի կիրառումը կարգավորող սկզբունքների ամբողջությունը: Այն համաշունչ և ոգեշնչված է ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն ընդունված, ՄԱԿ-ի Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրով /Գլխավոր Ասամբլեա, 2625 (XXV) բանաձև, 24 հոկտեմբերի 1970թ./: Սույն դրույթում նշված սկզբունքները ընդհանուր բնույթ ունեն, սակայն հատուկ կարևորություն են ներկայացնում Շրջանակային Կոնվենցիայով կարգավորվող բնագավառի համար:

Հոդված 3

33. Սույն հոդվածը ներառում է երկու տարբեր, սակայն փոխկապակցված սկզբունքներ, որոնք շարադրված են երկու առանձին կետերով:

Կետ 1

34. Կետ 1-ը նախառաջ երաշխավորում է ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի, այդպիսին համարվելու կամ չհամարվելու, ազատ ընտրությունը: Այս դրույթը այդ անձանց հայեցողությանն է թողնում այն հարցի որոշումը, թե տվյալ անձն արդյոք ցանկանում է կամ չի ցանկանում ընդունել Շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող պաշտպանությունը:

35. Սույն կետը չի վերաբերում ազգային փոքրամասնության պատկանելիությունը իրավարարությամբ /արբիտրաժով/ ընտրելու անհատի իրավունքին: Անհատի սուբյեկտիվ ընտրությունը անբաժան կերպով կապակցված է անձի ինքնությանն առնչվող օբյեկտիվ չափանիշի հետ:

36. Այնուհետև 1-ին կետը սահմանում է, որ իր կողմից երաշխա-

վորվող ազատ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որ կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում: Դրույթի այս մասը հաստատում է, որ այդ ընտրության ազատությունից օգտվումը, չի դառնա անուղղակի ոտնձգումների առարկա:

Կետ 2

37. Կետ 2-ը սահմանում է, որ Շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքներն ու ազատությունները կարող են իրականացվել անհատապես և մյուսների հետ խմբերով: Այդպիսով ճանաչվում է այդ իրավունքների և ազատությունների միացյալ իրականացման հնարավորությունը, որը տարբերվում է կոլեկտիվ իրավունքների հասկացությունից: «Մյուսների հետ» տերմինը պետք է մեկնաբանվի հնարավոր լայն իմաստով և պետք է ներառի միևնույն ազգային փոքրամասնությանը, այլ ազգային փոքրամասնությանը կամ բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց:

ԲԱԺԻՆ III

Յոդված 4

38. Սույն հոդվածի նպատակն է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար հավասարության և խտրականության արգելման սկզբունքների կիրառման ապահովումը: Այս հոդվածի դրույթները պետք է մեկնաբանվեն սույն Շրջանակային Կոնվենցիայի կոնտեքստում:

1-ին և 2-րդ կետեր

39. Կետ 1-ը դասական մոտեցում է ցուցաբերում այս սկզբունքների հանդեպ: 2-րդ կետը ընդգծում է, որ ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց լիակատար և արդյունավետ հավասարության երաշխավորումը, Կոդեքից պահանջում է ընդունել այդ անձանց առանձնահատկությունները հաշվի առնող հատուկ միջոցառումներ: Այդպիսի միջոցառումները պետք է «ադեկվատ» լինեն, այսինքն՝ համապատասխանեն համաչափության սկզբունքին, մյուսների իրավունքների ոտնահարումից, ինչպես նաև մյուսների նկատմամբ խտրականությունից խուսափելու համար: Սույն սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է որպեսզի այդպիսի միջոցառումները, ժամանակի կամ գործունեության շրջանակի առումով,

չանցնեն լիակատար և արդյունավետ հավասարության նպատակին հասնելու անհրաժեշտության սահմանները:

40. Շրջանակային Կոնվենցիայում ընդգրկված չէ հավասար հնարավորությունների սկզբունքին հատուկ կերպով առաջվող առանձին դրույթ: Դրա ընդգրկումը համարվել էր ավելորդ, քանի որ այդ սկզբունքն արդեն ընդգրկված էր սույն հոդվածի 2-րդ կետում: 1-ին կետում խտրականության արգելման մասին սկզբունքի շարադրման ժամանակ, նույնը որոշվեց նաև տեղաշարժի ազատության վերաբերյալ:

Կետ 3

41. 3-րդ կետի նպատակն է պարզաբանել, որ 2-րդ կետում նշված միջոցառումները չպետք է հակասեն հավասարության և խտրականության արգելման սկզբունքներին: Դրա նպատակն է ապահովել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց հետ միասին, արդյունավետ հավասարության երաշխավորումը:

Յոդված 5

42. Սույն հոդվածը նպատակաուղղված է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից իրենց մշակույթի պահպանման և զարգացման, ինչպես նաև իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի երաշխավորմանը:

Կետ 1

43. Կետ 1-ը ներառում է պարտավորություն, այդ առումով անհրաժեշտ պայմանների ստեղծման մասին: Այն թվարկում է ազգային փոքրամասնության ինքնության չորս կարևոր տարրերը: Սույն հոդվածը չի մեկնաբանվում այնպես, որ բոլոր էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական տարբերությունները անհրաժեշտաբար հանգեցնում են ազգային փոքրամասնությունների ստեղծմանը /այս կապակցությամբ, տես 1991թ. Ժնևում տեղի ունեցած ԵԱՅԽ փորձագետների հանդիպման զեկույցը,

Բաժին II, կետ 4/:

44. «Ավանդույթներին» կատարված հղումը չի հանդիսանում ազգային օրենքի կամ միջազգային չափանիշներին հակասող պրակտիկաների հաստատում կամ ընդունում: Ավանդույթների պրակտի-

կան հանդիսանում է հասարակական կարգի պահանջներից բխող սահմանափակումների առարկա:

Կետ 2

45. 2-րդ կետի նպատակն է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց պաշտպանել, հակառակ նրանց կամքի, միաձուլումից: Դրանով չի արգելվում կամավոր միաձուլումը:

46. 2-րդ կետը չի արգելում Կողմերին ձեռնարկել միջոցառումներ իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականությունը իրականացնելու համար: Դրանով ճանաչվում է սոցիալական համախմբվածության կարևորությունը և արտացոլվում է Նախաբանում արտահայտված ձգտումը, համաձայն որի մշակութային բազմազանությունը պետք է լինի յուրաքանչյուր հասարակության հրաստացման և ոչ թե պառակտման աղբյուր և գործոն:

Յոթված 6

47. Սույն հոդվածը հանդիսանում է Վիեննայի Յոչակագրի III Հավելվածում շարադրված մտահոգությունների արտահայտությունը /«Ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի մասին» հռչակագիր և գործողության ծրագիր/:

Կետ 1

48. 1-ին կետը հատուկ նշանակություն է տալիս հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսության մթնոլորտին և նշում է Կողմերի տարածքում բնակվող բոլոր անձանց միջև փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման և համագործակցության խրախուսման կարևորությունը: Կրթության, մշակույթի և լրատվական միջոցների բնագավառները նշված են առանձնահատուկ ձևով, որովհետև դրանք համարվում են չափազանց կարևոր այդ նպատակներին հասնելու համար:

49. Սոցիալական համախմբվածությունն ուժեղացնելու համար, սույն կետի խրախուսում է հանդուրժողականության և մշակույթների միջև երկխոսությունը, էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական խմբերին պատկանող անձանց միջև վերացնելով անջրպետները՝ փոխադարձ հարգանք և փոխըմբռնում խրախուսող, ինչպես նաև այդ անձանց, նրանց ինքնությունը պահպանելով, հասարակությունում ինտեգրացնելու նպատակ հետապնդող միջմշակութային կազմակերպությունների և շարժումների միջոցով:

Կետ 2

50. Սույն դրույթը ոգեշնչված է ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթղթի 40.2 կետով: Սույն պարտավորության նպատակն է բոլոր այն անձանց պաշտպանությունը, ովքեր կարող են դառնալ սպառնալիքների կամ խտրականության գործողությունների, թշնամության կամ բռնի գործողությունների զոհ՝ անկախ այդպիսի սպառնալիքների կամ գործողությունների սկզբնապատճառներից:

Յոթված 7

51. Սույն հոդվածի նպատակն է երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի, հոդվածում նշված, հիմնական ազատությունների և իրավունքների հարգումը: Այդ ազատություններն, իհարկե, ընդհանուր բնույթ ունեն, այդ իսկ պատճառով կիրառվում են բոլորի նկատմամբ, անկախ նրանց ազգային փոքրամասնության պատկանելու կամ չպատկանելու հանգամանքից /օրինակի համար, տես «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 9, 10 և 11 հոդվածները/, և դրանից բացի հատկապես կարևոր են ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար: Նախաբանի վերը նշված մեկնաբանության մեջ սահմանված նպատակների համար որոշվել էր ընդգրկել «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում արդեն ընդգրկված որոշ ձեռնարկումներ:

52. Սույն հոդվածը կարող է Կողմերի համար կիրառվել որպես որոշակի պոզիտիվ պարտավորություն, նշված ազատությունները այն բռնի գործողություններից պաշտպանելու համար, որոնց համար պետությունը պատասխանատվություն չի կրում: «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով, այդպիսի պոզիտիվ պարտավորությունների հնարավորությունը, ճանաչվել է Մարդու իրավունքների եվրոպական Դատարանի կողմից:

53. 7-րդ հոդվածում շարադրված որոշ ազատություններ զարգացվել են 8-րդ և 9-րդ հոդվածներում:

Յոթված 8

54. Սույն հոդվածում շարադրված են կրոնի ազատության պաշտպանության առավել մանրամասն կանոններ, քան 7-րդ հոդվածում: Այն համախմբում է ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթղթի

32.2, 32.3 և 32.6 կետերի մի շարք տարրերը մեկ դրույթի մեջ: Այս ազատությունները հիարկե վերաբերում են բոլորին, ինչպես նաև, համաձայն 4-րդ հոդվածի՝ նաև ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց: Սույն կոնտեքստում, այս ազատությանը տրված կարևորությունը պայմանավորված է նրանով, որ դրան հատուկ ուշադրություն դարձնելը համարվել է հատկապես կարևոր:

Յոթերորդ 9

55. Սույն հոդվածում ընդգրկված են կարծիք արտահայտելու ազատությունը պաշտպանելու մասին առավել մանրամասն կանոններ, քան 7-րդ հոդվածում:

Կետ 1

56. Սույն կետի առաջին նախադասությունը կազմվել է համաձայն «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության մոդելի: Թեև նախադասությունը անդրադառնում է հատկապես փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությանը, այն նաև վերաբերում է բնակչության մեծամասնության լեզվով կամ այլ լեզուներով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու իրավունքին:

57. Սույն կետի երկրորդ նախադասությունը նախատեսում է ձեռնարկումներ, որոնք երաշխավորում են լրատվական միջոցների մատչելիությունը՝ առանց որևէ խտրականության: «Իրենց իրավական համակարգի շրջանակներում» բառերը զետեղված են Կողմերի այն սահմանադրական դրույթները հարգելու նպատակով, որոնք կարող են սահմանափակել լրատվական միջոցների մատչելիության աստիճանը՝ այն կարգավորելու նպատակով:

Կետ 2

58. Սույն կետը կազմվել է «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի օրինակով:

59. Հնչուն ռադիոյի, հեռուստահեռարձակման ու կինեմատոգրաֆի ձեռնարկությունների արտոնագրումը պետք է իրականացվի առանց որևէ խտրականության և օբյեկտիվ չափանիշների հիման վրա: Այս պահանջները, որոնք առանձնահատուկ կերպով չեն նշված «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների

պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ նախադասությունում, համարվել են կարևոր ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց իրավունքների պաշտպանության համար կազմված փաստաթղթի համար:

60. «Հնչուն ռադիո» բառը, որն ընդգրկված է սույն հոդվածի 3-րդ կետում, ներառված չէ «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի համապատասխան նախադասության մեջ: Այն կիրառվում է ժամանակակից տեղեկատվություն արտացոլելու համար և իմաստային առումով չունի ոչ մի էական տարբերություն «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածից:

Կետ 3

61. Սույն կետի առաջին նախադասությունը, որը վերաբերում է տպագիր մամուլի միջոցների ստեղծմանն ու օգտագործմանը, պարունակում է էապես նեգատիվ ձեռնարկում, միջոց առավել ճկուն կերպով ձևակերպված երկրորդ նախադասությունը ընդգծում է ռադիոյի և հեռուստահեռարձակման բնագավառում դրական պարտավորություն /օրինակ՝ հաճախականությունների բաշխումը/: Այս տարբերակումը արտացոլում է հաճախականությունների սակավությունը և այդ ոլորտում կարգավորումների անհրաժեշտությունը: Ոչ մի հատուկ հղում չի կատարվել ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց կողմից լրատվական միջոցների ստեղծման համար ֆոնդեր որոնելու իրավունքին, քանի որ այդ իրավունքն ինքնին համարվել է ակներև:

Կետ 4

62. Սույն կետը շեշտում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար լրատվության միջոցների մատչելիությունը դյուրացնելու և հանդուրժողականության ու մշակութային բազմակարծությունը խրախուսելու համար երկակի նպատակ հետապնդող միջոցառումների անհրաժեշտությունը: «Համապատասխան միջոցներ» արտահայտությունը կիրառված է 4-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանությունում տրված նպատակների համար /տես 39-րդ կետը/, որտեղ օգտագործված են միևնույն բառերը: Սույն կետը լրացնում է 9-րդ Յոթերորդի 1-ին կետում շարադրված միջոցառումները: Սույն կետով նախատեսված միջոցառումները, օրինակի համար, կարող են բաղկացած լինել ֆոնդերից, որոնք անհրաժեշտ

են փոքրամասնության ռադիոհաղորդման կամ փոքրամասնությունների հարցերով ծրագրերի պատրաստման և/կամ խմբերի միջև երկխոսությունն աջակցելու համար, կամ խմբագիրներին և հաղորդավարներին խրախուսելու համար, խմբագրական անկախության առումով, թույլատրելու ազգային փոքրամասնություններին իրենց լրատվական միջոցներից օգտվումը:

Յոթված 10

Կետ 1

63. Ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձի կողմից իր փոքրամասնության լեզուն ազատ և անարգել գործածելու իրավունքի ճանաչումը առանձնապես կարևոր է: Փոքրամասնության լեզվի օգտագործումը ներկայանում է այդ անձանց կողմից իրենց ինքնությունը պահպանելու և պաշտպանելու սկզբունքային միջոցներից մեկը: Այն նաև հնարավորություն է ընձեռնում նրանց իրականացնել կարծիք արտահայտելու ազատությունը: «Հասարակական վայր»-ը նշանակում է հասարակական վայրերում, դրսում, այլ մարդկանց ներկայությամբ, սակայն ոչ մի կերպ չի առնչվում հասարակական իշխանությունների հետ հարաբերություններին, ինչը հանդիսանում է սույն հոդվածի 2-րդ կետի առարկան:

Կետ 2

64. Սույն դրույթը չի անդրադառնում ազգային փոքրամասնությունների պատկանող անհատների և հասարակական իշխանությունների միջև բոլոր հարաբերություններին: Այն առնչվում է միայն վարչական իշխանություններին: Սակայն վերջինս պետք է մեկնաբանվի լայն առումով, որպեսզի, օրինակի համար, ընդգրկի նաև մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը /Օմբուդսմենը/: Հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց և վարչական իշխանությունների հարաբերություններում հնարավոր ֆինանսական, վարչական, հատկապես զինվորական և տեխնիկական դժվարությունները՝ կապված փոքրամասնության լեզվի օգտագործման հետ, սույն դրույթը ձևակերպվել է շատ ճկուն ձևով՝ Կողմերին թողնելով գործողությունների ազատության լայն հնարավորություն:

65. 2-րդ կետում նշված երկու պայմանների բավարարման դեպքում, Կողմերը, հնարավորությունների սահմաններում, պետք է ապահովեն վարչական իշխանությունների հետ հարաբերությունները:

րում փոքրամասնության լեզվի օգտագործումը: «Իրական կարիքի» գոյությունը պետք է որոշվի Պետության կողմից օբյեկտիվ չափանիշի հիման վրա: Այնուամենայնիվ, Պայմանավորվող Պետությունները պետք է ամեն ջանք գործադրեն սույն սկզբունքը կիսաբերելու համար: «Հնարավորությունների սահմաններում» ձևակերպումը մատնանշում է, որ պետք է հաշվի առնվեն բազմաթիվ գործոններ, մասնավորապես, տվյալ պետության ֆինանսական ռեսուրսները:

66. Փոքրամասնության լեզվի օգտագործման վերաբերյալ Կողմերի պարտավորությունը ոչ մի կերպ չի առնչվում համապատասխան երկրի պաշտոնական լեզվի կամ լեզուների կարգավիճակին: Դեռ ավելին, Շրջանակային Կոնվենցիան, մտադրված կեպով, ձեռնպահ է մնում «ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից բնակեցված վայրերի» սահմանումից: Նախընտրելի է համարվել ընդունել ճկուն ձևակերպում, որը հնարավորություն կընձեռնի հաշվի առնել յուրաքանչյուր Կողմի առանձնահատուկ պայմանները: «Ավանդապես—բնակեցված» տերմինը չի վերաբերում պատմական փոքրամասնություններին, այլ միայն նրանց, ովքեր դեռևս բնակվում են միևնույն աշխարհագրական շրջաններում /տես նաև 11-րդ հոդվածի 3-րդ կետը և 14-րդ հոդվածի 2-րդ կետը/:

Կետ 3

67. Սույն կետը հիմնվում է «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կողմվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածներում ընդգրկված որոշ դրույթների վրա: Դա չի անցնում այդ հոդվածներում ներառված երաշխիքների սահմաններից:

Յոթված 11

Կետ 1

68. Սույն պարտավորության գործնական կիրառման առումով, դրույթը ձևակերպվել է այնպես, որպեսզի հնարավորություն ընձեռնի Կողմերին կիրառել այն՝ իրենց առանձնահատուկ պայմանների համաձայն: Օրինակ՝ Կողմերը կարող են օգտագործել իրենց պաշտոնական լեզվի այբուբենը, ազգային փոքրամասնության պատկանող անձանց անուն/ներ/ը իր/իրենց հնչունաբանական ձևով գրելու համար: Անձիք, որոնց հարկադրել են հրաժարվել իրենց իսկական անունից կամ որոնց անուն/ներ/ը փոխվել են ուժի գործադրմամբ, պետք է իրենց անուն/ներ/ը վերականգնելու իրավունք ունենան,

բացառությամբ, խարդախությամբ իրավունքների չարաշահման և անվան/անունների փոխման դեպքերի: Սույնով ենթադրվում է, որ Կողմերի իրավական համակարգերը, այդ իմաստով, պետք է համապատասխանեցվեն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային սկզբունքներին:

Կետ 2

69. Սույն կետում առկա պարտավորությունները վերաբերում են անհատի «իր փոքրամասնության լեզվով հասարակության համար տեսանելի, մասնավոր բնույթի նշումների, գրությունների և այլ տեղեկատվություն» տեղադրելու իրավունքին: Դրանով ի հարկ է չի բացառվում այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցից, ի լրումն վերոհիշյալի, կարող է պահանջվել օգտագործել պաշտոնական և/կամ այլ փոքրամասնությունների լեզուները: «Մասնավոր բնույթի» արտահայտությունը վերաբերում է այն անձին, ինչը պաշտոնական չէ:

Կետ 3

70. Սույն հոդվածը խրախուսում է տեղական անվանումները, փողոցների անվանումները և հասարակության համար նախատեսված այլ տեղագրական նշումները փոքրամասնության լեզվով ունենալու հնարավորությունները: Սույն սկզբունքը կիրառելու համար, պետությունները լիազորված են հաշվի առնելու առանձնահատուկ պայմանները և իրենց իրավական համակարգերի շրջանակը, ներառյալ, որտեղ անհրաժեշտ է, այլ պետությունների հետ համաձայնագրերը: Սույն դրույթի շրջանակներում պետությունները չեն ստանձնում այլ պետությունների հետ համաձայնագրեր կնքելու որևէ պարտավորություն: Սակայն այդպիսի համաձայնագրերի կնքման հնարավորությունը չի բացառվում: Միաժամանակ սույն դրույթը չի առնչվում գոյություն ունեցող համաձայնագրերի իրավաբանորեն պարտավորեցնող բնույթին: Սույն դրույթից չի հետևում փոքրամասնության լեզվով գրված տեղական անվանումների պաշտոնական ճանաչում:

Հոդված 12

71. Սույն հոդվածով խրախուսվում են մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ, ինչպես ազգային փոքրամասնությունների, այնպես էլ բնակչության մեծամասնության գիտելիքները՝ միջմշակութային հեռանկարով /տես Հոդված 6-ի 1-ի կետը/: Նպա-

տակը հանդիսանում է Շրջանակային Կոնվենցիայի Նախաբանում և Պետությունների և Կառավարությունների Ղեկավարների Վիեննայի հռչակագրի II Հավելվածում նշված հանդուրժողականության և երկխոսության մթնոլորտի ստեղծումը: 2-րդ կետի ցանկը սպառնիչ չէ, քանի դեռ «դասագրքերով ապահովման» բառերը չեն մեկնաբանվի այնպես, որպեսզի ներառեն նաև դասագրքերի հրատարակումը և այլ երկրներից դրանց գնումը: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կրթության մատչելիությունը բոլոր մակարդակներով ապահովելու համար հավասար պայմաններ խրախուսող պարտավորությունները արտացոլում են Վիեննայի հռչակագրում արտահայտված մտահոգությունը:

Հոդված 13

Կետ 1

72. Կողմերի պարտավորությունը ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող անձիք իրավունք ունեն ստեղծել և ղեկավարել իրենց սեփական մասնավոր կրթական և վերապատրաստման հաստատությունները, ենթակա է պետությունների կրթական համակարգի, մասնավորապես, պարտադիր ուսուցմանը վերաբերող, կարգավորումների պահանջներին: Սույն կետով նախատեսվող հաստատությունները, այլ հաստատությունների օրինակով, կարող են ենթարկվել ղեկավարման միևնույն ձևերին, մասնավորապես, ուսուցման չափանիշների հարցում: Պահանջվող չափանիշներին համապատասխանելու դեպքում, անհրաժեշտ է, որպեսզի ցանկացած շնորհվող որակավորում ճանաչվի պաշտոնապես: Համապատասխան ազգային օրենսդրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշի վրա և համապատասխանի խտրականության արգելման սկզբունքին:

Կետ 2

73. Կետ 1-ում նշված իրավունքների իրականացումը, համապատասխան Կողմի վրա չի դնում որևէ ֆինանսական պարտավորություն, բայց և չի բացառում նման օժանդակության հնարավորությունը:

Հոդված 14

Կետ 1

74. Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի կողմից, իր փոքրամասնության լեզուն սովորելու իրավունքի ճա-

նաչման պարտավորությունը, հանդիսանում է անձի կողմից իր ինքնությունը պահպանելու հիմնական միջոցներից մեկը: Այստեղ չեն կարող լինել որևէ բացառություններ: Չհակասելով 2-րդ կետում նշված սկզբունքին, սույն կետը չի հանգեցնում Պետության կողմից նշանակալից ֆինանսական բնույթի պոզիտիվ գործողություն:

Կետ 2

75. Սույն դրույթն առնչվում է փոքրամասնության լեզվի ուսումնասիրման և այդ լեզվով կրթություն ստանալուն: Հաշվի առնելով փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու դեպքում հնարավոր ֆինանսական, վարչական և տեխնիկական դժվարությունները՝ սույն դրույթը ձևակերպվել է շատ ճկուն կերպով՝ Պետություններին տալով գործողությունների լայն հնարավորություններ: Փոքրամասնության լեզվով կրթության ստացումը երաշխավորող պարտավորությունը ենթակա է մի շարք պայմանների, մասնավորապես, համապատասխան ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց կողմից «զգալի կարիքի» առկայության պայմանին: «Հնարավորությունների սահմաններում» ձևակերպումը ընդգծում է, որ կրթության ստացումը կախված է համապատասխան Կողմի առկա ռեսուրսներից:

76. Տեքստը, մտադրված կերպով, ձեռնպահ է մնում «զգալի կարիք» արտահայտության բնորոշումից, տալով ձևակերպման ճկուն մի ձև, որը հանարավորություն է տալիս Կողմերին հաշվի առնել իրենց պետությունների առանձնահատուկ պայմանները: Կողմերը, կրթության ստացումը երաշխավորելու հարցում, ունեն միջոցների և կարգավորումների ընտրություն: իրենց յուրահատուկ կրթական համակարգը հաշվի առնելու պայմանով:

77. Սույն կետում նշված փոքրամասնության լեզուն ուսումնասիրելու և փոքրամասնության լեզվով կրթություն ստանալու երկընտրանքները, միմյանց չեն բացառում, և նույնիսկ եթե, 14-րդ Հոդվածի 2-րդ կետով Պետությունների վրա երկուսը կատարելու հարցում ոչ մի պարտավորություն չի դրվում, այդ ձևակերպումը միևնույն ժամանակ չի խոչընդոտում Պետության կողմից լեզվի ուսումնասիրման, ինչպես նաև այդ լեզվով կրթության ստացման իրավունքների կիրառումը: Երկլեզվյա ուսուցումը կարող է հանդիսանալ սույն դրույթի նպատակների ձեռք բերման միջոցներից մեկը: Սույն կետից բխող պարտավորությունը կարող է տարածվել նախադպրոցական կրթության վրա:

Կետ 3

78. Փոքրամասնության լեզուն ուսումնասիրելու և այդ լեզվով կրթություն ստանալու հնարավորությունները չպետք է վնաս պատճառեն պաշտոնական լեզվի ուսուցմանն ու դասավանդմանը: Պաշտոնական լեզվի իմացությունը իսկապես հանդիսանում է սոցիալական համախմբվածության և ինտեգրացման գործոն:

79. Մեկից ավելի պաշտոնական լեզու ունեցող պետությունները պետք է կարգավորեն առաձևահատուկ հարցեր՝ սույն դրույթի կիրառումն ապահովելու համար:

Հոդված 15

80. Սույն Հոդվածը Կողմերից պահանջում է ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը մշակութային, սոցիալական և տնտեսական կյանքում, ինչպես նաև պետական գործունեության մեջ, մասնավորապես, նրանց առնչվող հարցերում, ապահովելու համար: Սույն դրույթի նպատակն է, ապահովել իրական հավասարություն ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջև: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, այդպիսի մասնակցության անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար, Կողմերը, իրենց սահմանադրական համակարգերի շրջանակներում, կարող են խրախուսել հետևյալ միջոցառումները.

- Համապատասխան ընթացակարգերի միջոցով այդ անձանց հետ խորհրդատվությունների անցկացում, երբ Կողմերը մտադիր են ձեռնարկել փոքրամասնություններին ուղղակիորեն առնչվող օրենսդրական կամ վարչական միջոցառումներ;

- Փոքրամասնություններին ուղղակիորեն առնչվող ազգային և ռեզիդնալ զարգացման ծրագրերի պատրաստման, կիրառման և գնահատման հարցերում այդ անձանց ներգրավում;

- Փոքրամասնությունների հետ կապված ուսումնասիրություններ ձեռնարկելիս, գնահատել ծրագրավորված զարգացման գործունեությունների հնարավոր ազդեցությունը փոքրամասնությունների վրա;

- Ապահովել Ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց արդյունավետ մասնակցությունը, ազգային կամ տեղական մակարդակներով, օրենսդրական գործընթացներին և ընտրովի մարմիններում;

- Ապակենտրոնացված կամ տեղական կառավարման ձևեր:

Յոդված 16

81. Սույն հոդվածի նպատակն է ձեռնպահ մնալ այնպիսի միջոցների կիրառումից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով բնակեցված շրջաններում և նպատակ ունեն սահմանափակել սույն Շրջանակային Կոնվենցիայից բխող իրավունքներն ու ազատությունները: Որպես այդպիսի միջոցների օրինակ կարող է ծառայել այդ իրավունքների և ազատությունների սահմանափակման նպատակով իրականացվող սեփականագրկումը, վտարումը և վարչական սահմանների վերացումն ու վերագծումը /«խեղաթյուրում»/:

82. Սույն Յոդվածը արգելում է միայն Շրջանակային Կոնվենցիայից բխող իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու նպատակ հետապնդող միջոցները: Համարվել է անհնար ընդլայնել իրավունքների և ազատություններին առչվող այդպիսի միջոցներն արգելող հասկացությունը, քանզի այդպիսի միջոցները երբեմն կարող են ամբողջովին արդարեցված և օրինական լինել: Որպես օրինակ կարող է ծառայել գյուղի բնակիչների վերաբնակեցումը՝ ամբարտակ կառուցելու համար:

Յոդված 17

83. Սույն Յոդվածը ներառում է ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց մշակույթի պահպանման ու զարգացման, ինչպես նաև նրանց ինքնության պահպանման համար երկու կարևոր ձեռնարկում /տես նաև Յոդված 5-ի 1-ին կետը/: Առաջին կետն առնչվում է ազատ ու խաղաղ միջսահմանային շփումներ հաստատելու և պահպանելու իրավունքին, իսկ երկրորդ կետը՝ ոչ-կառավարական կազմակերպությունների գործունեությանը մասնակցելու իրավունքին /այս կապակցությամբ, տես 7-րդ հոդվածի՝ դրույթները հանրահավաքների և միությունների մեջ ընդգրկվելու ազատության մասին/:

84. Սույն Յոդվածի դրույթները մեծապես հիմնված են ԵԱՀԽ Կոպենհագենի փաստաթղթի 32.4 և 32.6 կետերի վրա: Համարվել է ավելորդ Պետության տարածքում շփումների հաստատման և պահպանման մասին առանձին դրույթի ընդգրկումը, քանզի դրանք համապատասխանաբար ընդգրկված են Շրջանակային Կոնվենցիայի այլ դրույթներում, անվանապես, 7-րդ Յոդվածում՝ հանրահավաքների և միությունների մեջ ընդգրկվելու ազատությունների առումով:

Յոդված 18

85. Սույն հոդվածը խրախուսում է Կողմերին, ի լրումն գոյություն ունեցող միջազգային փաստաթղթերի, երբ դա կարողացվի առանձնահատուկ պայմաններով, կնքել երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար: Այն նաև խրախուսում է միջսահմանային համագործակցությունը: Ինչպես նշված է Վիեննայի հռչակագրում և դրա II Հավելվածում, այդպիսի համաձայնագրերը և համագործակցությունը կարևոր են հանդուրժողականության, բարգավաճման, կայունության և խաղաղության աջակցման համար:

Կետ 1

86. Սույն կետով նախատեսվող երկկողմ և բազմակողմ համաձայնագրերը, օրինակի համար, կարող են կնքվել մշակութային, կրթության և տեղեկատվության բնագավառներում:

Կետ 2

87. Սույն կետը նշում է միջսահմանային համագործակցության կարևորությունը: Պետությունների միջև տեղեկատվության և փորձի փոխանակումը հանդիսանում է կարևոր միջոց փոխադարձ ընթրումը և վստահությունը աջակցելու հարցում: Մասնավորապես, միջսահմանային համագործակցությունը ունի այն առավելությունը, որ հանարավորություն է տալիս համապատասխան անձանց ցանկություններին և կարիքներին հատկապես համապատասխանող կարգավորումների իրականացումը:

Յոդված 19

88. Սույն հոդվածը սահմանում է սահմանափակումների կամ բացառությունների հնարավորություն: Այն դեպքում, երբ Շրջանակային Կոնվենցիայում ներառված ձեռնարկումները ունեն իրենց համարժեքները այլ միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում, ապա թույլատրվում են այդ փաստաթղթերում նախատեսված սահմանափակումներն ու բացառությունները: Այն դեպքում, երբ սույն Շրջանակային Կոնվենցիայում շարադրված ձեռնարկումները չունեն իրենց համարժեքները այլ միջազգային փաստաթղթերում, ապա թույլատրվում են այլ իրավական փաստաթղթերում ընդգրկված /ինչպիսին է «Մարդու իրավունքների և հիմնական ազատություններ»

րի պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան/ սահմանափակումներն ու բացառությունները այնքանով, որքանով դրանք վերաբերում են նշված ձեռնարկումների:

ԲԱԺԻՆ III

Յոդված 20

89. Ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք պետք է հարգեն ազգային սահմանադրությունը և ազգային օրենսդրությունը: Այնուամենայնիվ, ազգային օրենսդրությանը կատարված այս հղումը, Կողմերին իրավունք չի տալիս անտեսել Շրջանակային Կոնվենցիայի դրույթները: Ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք պետք է հարգեն նաև մյուսների իրավունքները: Այդ կապակցությամբ կարելի է հղում կատարել այն իրավիճակին, երբ Ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք ազգությամբ հանդիսանալով փոքրամասնություն, կազմում են Պետության մեկ շրջանի բնակչության մեծամասնությունը:

Յոդված 21

90. Սույն դրույթը ընդգծում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների կարևորությունը և նշում է, որ ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունը պետք է համապատասխանի այդ սկզբունքներին:

Յոդված 22

91. «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 60-րդ հոդվածի վրա հիմնված այս դրույթը, սահմանում է հանրաճանաչ մի սկզբունք: Նպատակը հանդիսանում է երաշխավորել, որպեսզի ազգային փոքրամասնությունների պատկանող անձիք օգտվեն, իրենց համար առավել նպաստավոր, մարդու իրավունքների բնագավառին վերաբերող, ազգային կամ միջազգային, համապատասխան օրենսդրությունից:

Յոդված 23

92. Սույն դրույթն առնչվում է Շրջանակային Կոնվենցիայի և «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի հարաբերակցմանը, որի վրա հղում է

կատարվում Նախաբանում: Ոչ մի հանգամանքերում, Շրջանակային Կոնվենցիան նպատակ չի հետապնդում ձևափոխել «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Ընդհակառակը, Շրջանակային Կոնվենցիայում նշված իրավունքներն ու ազատությունները, որոնք հանդիսանում են նաև «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի համապատասխան դրույթների առարկա, պետք է մեկնաբանվեն վերջիններիս համաձայն:

ԲԱԺԻՆ IV

24-ից 26-րդ Յոդվածներ

93. Շրջանակային Կոնվենցիայի կիրառման վերահսկումն ապահովելու համար, Նախարարների Կոմիտեն լիազորվել է հետևել Պայմանավորվող Կողմերի Կոնվենցիայի իրագործմանը: Նախարարների Կոմիտեն պետք է սահմանի, Եվրոպայի Խորհրդի անդամ չհանդիսացող Կողմերի, Կոնվենցիայի կիրառման մեխանիզմին մասնակցելու պայմանները:

94. Յուրաքանչյուր Կողմ, պարբերաբար և Նախարարների Կոմիտեի պահանջի դեպքում, Գլխավոր քարտուղարին պետք է ներկայացնի սույն Շրջանակային Կոնվենցիայի իրագործման մասին տեղեկատվություն: Գլխավոր քարտուղարը պետք է փոխանցի այդ տեղեկատվությունը Նախարարների Կոմիտեին: Այնուամենայնիվ, առաջին զեկույցը, որի նպատակը Կողմի ձեռնարկած օրենսդրական և այլ միջոցառումների մասին տեղեկատվության տրամադրումն է, պետք է ներկայացվի տվյալ Կողմի համար, սույն Շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում: Յետագա զեկույցների նպատակը կհանդիսանա լրացնել առաջին զեկույցում ընդգրկված տեղեկատվությունը:

95. Շրջանակային Կոնվենցիայի իրագործման վերահսկման արդյունավետությունը ապահովելու համար, Կոնվենցիան նախատեսում է Խորհրդակցական Կոմիտեի ստեղծում: Խորհրդակցական Կոմիտեի նպատակը պետք է լինի սույն Շրջանակային Կոնվենցիայում շարադրված սկզբունքների իրականացման համար, Կողմի ընդունած միջոցառումների նույնականության գնահատման ժամանակ, Նախարարների Կոմիտեին օժանդակության ցուցաբերումը:

96. Խորհրդակցական Կոմիտեի կազմավորման կարգը և աշխա-

տանքային ընթացակարգը, որի անդամները պետք է ճանաչված իրազեկություն ունենան ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության բնագավառում, պետք է սահմանվի Նախարարների Կոմիտեի կողմից սույն Շրջանակային Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, մեկ տարվա ընթացքում:

97. Շրջանակային Կոնվենցիայի իրագործման վերահսկումը, հնարավորության սահմաններում, պետք է թափանցիկ լինի: Այդ առումով նապատակահարմար կլինի հրապարակել զեկույցները և վերահսկման արդյունքում կազմված այլ փաստաթղթերը:

ԲԱԺԻՆ V

98. 27-ից 32-րդ հոդվածներում ընդգրկված վերջնադրույթները հիմնված են Եվրոպայի Խորհրդի շրջանակներում կնքված համաձայնագրերի և կոնվենցիաների եզրափակիչ դրույթների մոդելի վրա: Վերապահումների մասին ոչ մի դրույթ չի ընդգրկված: Վերապահումներ թույլատրվում են այնքանով, որքանով դրանք թույլատրվում են միջազգային իրավունքով: Սույն Բաժնում, 27 և 29 Հոդվածներից բացի, առանձնահատուկ մեկնաբանություն չի պահանջվում:

27 և 29 Հոդվածներ

99. Շրջանակային Կոնվենցիան բաց է Եվրոպայի Խորհրդի անդամ-երկրների ստորագրման համար, ինչպես նաև, Նախարարների Կոմիտեի առաջարկությամբ՝ այլ պետությունների ստորագրման համար: «Այլ պետություններ» հասկացության տակ նկատի են առնվում ԵԱՀԽ նասնակից պետությունները: Սույն դրույթները հաշվի են առնում Վիեննայի հռչակագիրը, համաձայն որի Շրջանակային Կոնվենցիան պետք է բաց լինի նաև անդամ չհանդիսացող պետությունների ստորագրման համար /տես Եվրոպայի Խորհրդի Վիեննայի Գազաթաժողովի Հռչակագրի II Հավելվածը/:

Մինչ սույն կոնվենցիայի քննությանն անցնելը՝ նշենք, որ այն այնքան էլ չի վերաբերում ջավախահայությանն՝ այն իմաստով, որ վերջինս բնավ էլ չի հանդիսանում ազգային փոքրամասնություն: Ջավախահայությունն իր պատմական տարածքում ապրող բնիկ ժողովուրդ է, և վերջինիս վրա կարող է տարածվել միայն ՄԱԿ-ի՝

2007թ. սեպտեմբերի 13-ին ընդունած «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հայտնի դեկլարացիան (United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples) և նրան կից հավելվածը (Annex - United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples): Սակայն հաշվի առնելով այն փաստը, որ Վրաստանն ու բազմաթիվ այլ շրջանակներ ջավախահայությանն բնորոշում են որպես «ազգային փոքրամասնություն» կամ «Վրաստանի հայկական համայնք», հարկ ենք համարում քննել «Ազգային փոքրամասնությունների մասին շրջանակային կոնվենցիան» և տեսնել, թե այն ինչպիսի խախտումների է արժանանում Վրաստանի կողմից:

Ջավախքի խնդրին ծանոթ մարդու համար, ընթերցելով սույն կոնվենցիան, դժվար չէ միանգամից նկատել բոլոր այն իրավախախտումները, որոնք թույլ է տալիս Վրաստանը: Չխորանալով յուրաքանչյուր հոդվածի մեջ՝ նշենք առավել կարևորները, որոնք ունեն իրավախախտումների մեջ առավել աղաղակող հնչեղություն: Դրանցից են՝ հոդված 9, կետ 1, 3, հոդված 10, կետ 1, 2, հոդված 11, կետ 2, 3, հոդված 12, հոդված 14, կետ 2, հոդված 16, հոդված 17, հոդված 18, կետ 1: Օրինակ հոդված 12-ում տեղ գտած պահանջները այն է՝ «...կրթության և գիտական ուսումնասիրությունների բնագավառում, պետք է միջոցներ ձեռնարկեն իրենց ազգային փոքրամասնությունների և բնակչության մեծամասնության մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու համար», կատարվում են խիստ միակողմանի. ջավախահայությանը տարիներ շարունակ պարտադրվել են ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, վրաց լեզուն, Վրաստանի աշխարհագրությունը և այլն, իսկ հայոց պատմության, Հայաստանի աշխարհագրության և այլնի ուսուցումը դուրս է մնում պետական ծրագրերից և թողնված է բախտի քմահաճույքին: Կամ՝ նույն հոդվածի 3-րդ կետը, այն է՝ «Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար, բոլոր մակարդակներով, ապահովել կրթության մատչելիության հավասար հնարավորություններ»: Գաղտնիք չէ, որ Ջավախքում մեկը մյուսի հետևից բոլորովին անտեղի բացվում են վրացական կրթական հաստատություններ, իսկ հայկական պետական բուհեր, որոնց կարիքը տարածաշրջանի երիտասարդությունն այնքան ունի, այդպես էլ չեն երևում: Ավելին՝ Վրաստանը տարիներ շարունակ մերժել է հայկական պետական բուհերի ստեղծման ուղղությամբ ՀՀ-ի կողմից ձեռնարկվող քայլերը: Սա խոսում է Ջավախքը կրթամշակութային մեկուսացման տանելու Վրաստանի ծրագրված քաղա-

քականության մասին: Այս թեմայով հոդվածների շաքին կարելի է ավելացնել նաև 14-րդ հոդվածի 2-րդ կետը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ջավախքի դպրոցներում անընդհատ փորձ է արվում ուսուցման լեզուն դարձնել վրացերենը, ապա հստակ է այն հանգամանքը, որ նշված դրույթը ևս ենթարկվում է կոպիտ խախտման: Այս առթիվ դիպուկ են հնչում հետևյալ տողերը. «**Մարդու իրավունքների հիմնախնդրում մշակութային հարաբերականություն ասելով են հասկանում են, որ այդ հարցը պետք է մշտապես մի կողմ դնել: Իրականում, մարդու իրավունքների չարաշահումները՝ մշակութային հիմքերի վրա, պետք է համարել ոճրագործություն մարդկության հանդեպ» (Ուոլե Սոյինկա, Գրականության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր):**

Առավել կոպիտ խախտման օրինակ է հոդված 17-ով նախատեսված պարտավորությունների իրականացման կետերը. կետ 1. «**Կողմերը պարտավորվում են չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքը՝ հաստատել և պահպանել ազատ և խաղաղ միջսահմանային շփումներ այլ պետություններում օրինական կերպով գտնվող անձանց հետ, մասնավորապես նրանց հետ, ովքեր ունեն ընդհանուր էթնիկական ինքնություն, լեզվական, կրոնական կամ մշակութային ընդհանուր ժառանգություն»:** Գաղտնիք չէ, որ Ջավախքից ՀՀ անցակետերը զնալով դառնում են «անանց արգելապատնեշներ», որտեղից անհնար է այլևս անցկացնել հատկապես մշակութային արգասիքներ (գիրք, գրականություն և այլն): Նույնկերպ խախտվում են նաև 17-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները, երբ հասարակական ակտիվ կյանք վարող անձինք անընդհատ հետապնդվում և շատ անգամներ ձերբակալվում են Վրացական ՆԳՆ մարմինների կողմից:

Իր բնույթով հետաքրքրական է նաև հոդված 18-ի 1-ին կետը.

Հոդված 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ, երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

Սույն կետի վերաբերյալ նշենք հետևյալը. ի պաշտպանություն ջավախահայության իրավունքների՝ Վրաստանը ոչ մի ջանք չի գործադրում հարևան (ՀՀ) և այլ պետությունների հետ կնքելու պայմա-

նագրեր, միաժամանակ նաև՝ երկկողմ (ՀՀ-Վրաստան) հետխորհրդային ոչ մի պայմանագիր ուղղակիորեն չի առնչվել Ջավախքին:

Վրաստանի խորհրդարանը, նախքան 2005թ. դեկտեմբերի 22-ի՝ ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի վավերացումը, 2005թ. հոկտեմբերի 13-ին ընդունում է նույն կոնվենցիայի վավերացման վերաբերյալ բանաձև¹¹.

Վրաստանի խորհրդարանի բանաձևը ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի վավերացման վերաբերյալ¹²

Վրաստանի խորհրդարանը որոշում է

1. Վավերացնել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին Ստրասբուրգյան շրջանակային կոնվենցիան 1995 թվականի փետրվարի 1-ից:

2. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի վավերացման հետ հաշվի առնել հետևյալը՝

a. Վրաստանը «ազգային փոքրամասնություն» տերմինի մեկնաբանումը հիմնավորում է ներքոբերյալ չափանիշներով և ենթադրում է, որ «ազգային փոքրամասնություն» կարգավիճակը կարող է տրամադրվել անհատների մի խմբի այն դեպքում, եթե նրանք պատկանեն հետևյալ խմբերի.

- Վրաստանի քաղաքացիներ
- Բնակչության գերակա մասից լեզվի, մշակույթի և ազգային նույնության պլանում տարբերություններ
- Երկար ժամանակ Վրաստանի տարածքում բնակվող
- Կոմպակտ ձևով Վրաստանի տարածքում ապրող

Հոդված 10

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ, անձնական կյանքում և հասարակական վայրերում, իր փոքրամասնության լեզվից, բանավոր և գրավոր, անարգել օգտվելու իրավունք ունի:

2. Ավանդապես կամ զգալի քանակությամբ ազգային փոքրա-

11 Նշված բանաձևում որպես փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին ստրասբուրգյան շրջանակային կոնվենցիայի վավերացման ամսաթիվ նշվում է 1995 թվականի փետրվարի 1-ը:

12 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերեն՝ դարձյալ ոչ պաշտոնական թարգմանություն համարվող տեքստից:

մասնությունների պատկանող անձանցով բնակեցված վայրերում, եթե այդ անձինք խնդրել են, և այնտեղ, որտեղ այդպիսի խնդրանքը համապատասխանում է իրական կարիքների, Կողմերը, որքանով որ հնարավոր է, պետք է ձգտեն ապահովել այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան այդ անձանց և վարչական իշխանությունների միջև հարաբերություններում օգտագործել փոքրամասնության լեզուն:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի իրավունքը, ամենակարճ ժամկետներում, իրեն հասկանալի լեզվով, տեղեկություն ստանալ իր ձերբակալության պատճառների, իր դեմ հարուցված մեղադրանքների բնույթի և պատճառների մասին, ինչպես նաև իր պաշտպանությունը իրականացնել այդ լեզվով, դրա համար անհրաժեշտության դեպքում ստանալով թարգմանչի անվճար ծառայություն:

b. Համաձայն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի՝ Վրաստանը պարտավորվում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց երաշխավորել վարչական մարմինների հետ շփվելիս և դատական գործընթացների ժամանակ թարգմանության աջակցություն՝ դրանով իսկ նրանց սեփական փոքրամասնության լեզվի տիրապետման իրավունքի հնարավորություն տալով: Վրաստանը նաև պարտավորվում է հնարավորության սահմաններում պայմաններ ապահովել, որոնք ազգային փոքրամասնության պատկանող անձանց թույլ կտան ուսանել պետական լեզուն:

Հոդված 11

1. Կողմերը պարտավորվում են ճանաչել, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ ունի իր անունը, ազգանունը և հայրանունը փոքրամասնության լեզվով օգտագործելու, ինչպես նաև դրանց պաշտոնական ճանաչման իրավունք՝ տվյալ երկրի իրավական պահանջներին համապատասխան:

c. Համաձայն Կոնվենցիայի 11.1 հոդվածի՝ ազգային փոքրամասնության պատկանող անձանց պաշտոնական փաստաթղթերը վրացերենով գրելիս պարտավորվում են անել հնարավոր ամեն ինչ՝ որպեսզի պահպանվի նրանց փոքրամասնության լեզվով արտասանությունը՝ համաձայն ներքին կանոնադրության:

Հոդված 11

3. Ազգային փոքրամասնության պատկանող անձանց զգալի թվաքանակով ավանդապես բնակեցված տարածքներում, Կողմերը, իրենց իրավական համակարգերի շրջանակներում, անհրաժեշտության դեպքում նաև ներառյալ այլ պետությունների հետ կնքված համաձայնագրերը, ինչպես նաև հաշվի առնելով կոնկրետ պայմանները, պետք է ապահովեն ավանդական տեղական անվանումների, փողոցների անվանումների, ինչպես նաև բնակչության համար նախատեսված տեղագրական այլ նշումների, փոքրամասնության լեզվով, ցուցանակների տեղադրումը, երբ այդպիսի նշումների բավարար կարիք կա::

d. Համաձայն Կոնվենցիայի 11.3 հոդվածի՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեծ թվաքանակի ավանդական բնակության շրջաններում վրացերենով կամ փոքրամասնության լեզվով փողոցների անվանումների և տեղանվանական այլ ցուցանակների կիրառման վերաբերյալ դրույթները կարգավորվում են ներքին օրենսդրությամբ: Վրաստանը չի կարծում, որ ազգային փոքրամասնություններին տրված իրավունքը պարտավորեցնում է պետությանը փոխել տարածքային միավորների գոյություն ունեցող անվանումները և անպատակահարմար է գտնում վերոնշյալ հարցի վերաբերյալ հետագա միջազգային համաձայնագրերի ստորագրումը:

Հոդված 16

Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով և նպատակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքները և ազատությունները:

e. Վրաստանը կիսում և համաձայնվում է Կոնվենցիայի 16-րդ հոդվածի նպատակների և ոգու հետ: Միևնույն ժամանակ սույն հոդվածը չպետք է վերաբերվի բնակեցման գործընթացներին, որոնք կարող են տեղ ունենալ երկրի տարածքում էկոլոգիական և տեխնածին աղետներից հետո գոհերի վերաբնակեցումից հետո, ինչպես նաև այն անձանց, ովքեր բնակվում են կյանքի և առողջության համար վնասակար տարածքներում: Դրան զուգընթաց սույն հոդվածը չպետք է վերաբերվի փախստականների և բռնի բնակեցված անձանց մշտական կամ ժամանակավոր բնակության վայրերում:

Յոդված 18

1. Համապատասխան ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պաշտպանությունն ապահովելու համար, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է ջանք գործադրեն, այլ պետությունների, մասնավորապես, հարևան երկրների հետ, երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կնքելու համար:

2. Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է միջոցներ ձեռնարկեն միջսահմանային համագործակցությունը խրախուսելու համար:

գ. Կոնվենցիայի 18-րդ հոդվածի վերաբերյալ Վրաստանը հայտարարում է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը ընդունվում է Սահմանադրությամբ, Վրաստանի օրենսդրությամբ, կոնվենցիաներով, պայմանագրերով, որոնց միացել է Վրաստանը և որոնք ընդունում և պաշտպանում են ազգային փոքրամասնությունների իրավունքները: Ասպիսով, Վրաստանն ընդունում է Կոնվենցիայով նախատեսված պահանջները և աննպատակահարմար է գտնում վերոնշյալ հարցի կապակցությամբ միջազգային համաձայնագրերի հետագա ստորագրումը:

Յոդված 30

1. Յուրաքանչյուր պետություն ստորագրման կամ վավերացման պահին, ինչպես նաև ընդունման և միանալու փաստաթուղթը ի պահ հանձնելու ժամանակ, կարող է նշել տարածքը կամ տարածքները, որոնց սահմաններում նա պատասխանատվություն է կրում միջազգային հարաբերությունների և սույն Կոնվենցիայի կիրառման համար:

2. Յուրաքանչյուր պետություն կարող է հետագայում ցանկացած պահի Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տարածել սույն շրջանակային Կոնվենցիայի կիրառումը որևէ ուրիշ, հայտարարության մեջ նշված, տարածքի վրա: Այս տարածքների վերաբերյալ սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ հայտարարությունը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերի դրույթների հիման վրա արված ցանկացած հայտարարություն կարող է հետ վերցվել, Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցագրի միջոցով, այդպիսի հայտարարության մեջ նշված ցանկացած տարածքի վերաբերյալ: Այդպիսի հետ կանչումը ուժի մեջ կմտնի Գլխավոր քարտուղարի կողմից ծա-

նուցագիրը ստանալու օրից եռամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

գ. Կոնվենցիայի 30-րդ հոդվածի վերաբերյալ Վրաստանը հայտարարում է, որ կարող է ամբողջապես ապահովել և երաշխավորել Կոնվենցիայի բոլոր դրույթների կատարումը՝ երկրի ամբողջ տարածքում միայն պետության տարածքային ամբողջականության վերականգնման և Աբխազիայի ու Մախկին Հարավ-Օսական ինքնավար տարածաշրջանի կոնֆլիկտների լուծումից հետո: Վրաստանը խնդրում է Եվրոպայի Խորհրդի և նրա անդամ-պետությունների աջակցությունը Կոնվենցիայի ոգու և դրույթների լիակատար զիջողականության լուծման հարցում՝ Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նախկին ինքնավար տարածաշրջանի բնակչության վերաբերյալ:

3. Այն պահանջները, որոնք նախատեսված են սույն Բանաձևի 2-րդ կետով, ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Շրջանակային Կոնվենցիայի վավերացման վերաբերյալ որոշման հիմնական մասը տրամադրում են Վրաստանի Խորհրդարանին:

***Խորհրդարանի նախագահ՝
Նինո Բուրջանաձե
Թբիլիսի
13 հոկտեմբեր 2005 թ.***

Ինչպես տեսնում ենք, դեռ կոնվենցիայի վավերացման նախաշեմին վրացական իշխանությունները ձեռնամուխ են եղել տվյալ իրավական փաստաթղթից իրենց համար ոչ ձեռնտու մասերի նենգափոխմանը կամ իբր «հարմարեցմանը վրացական օրենսդրությանը»: Օրինակ՝ հոդված 16-ում տեղ գտած հանձնարարականների այն է՝ «Կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի միջոցներից, որոնք փոխում են բնակչության կառուցվածքային կազմը այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանցով և նպատակ ունեն սահմանափակել սույն շրջանակային Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունք-

Ներքև և ազատությունները:» Ենթադրյալ կերպ ձևախեղման, այն է՝ «սույն հոդվածը չպետք է վերաբերվի բնակեցման գործընթացներին, որոնք կարող են տեղ ունենալ երկրի տարածքում էկոլոգիական և տեխնաժին աղետներից հետո զոհերի վերաբնակեցումից հետո, ինչպես նաև այն անձանց, ովքեր բնակվում են կյանքի և առողջության համար վնասակար տարածքներում: Դրան զուգընթաց սույն հոդվածը չպետք է վերաբերվի փախստականների և բռնի բնակեցված անձանց մշտական կամ ժամանակավոր բնակության վայրերում» Ենթադրյալ է ձգտել ամեն կերպ արդարացնել և ինչ-որ կերպ «բացատրել» Ջավախքը և ոչ վրացի տարրերով բնակեցված այլ տարածքներ վրացացնելուն ուղղված վարվող քաղաքականությունը»: Միևնույն ժամանակ՝ Կոնվենցիայի իրագործումը կապելով Վրաստանի Սահմանադրության և օրենսդրության հետ և այդպիսով ազատելով իրեն հոդված 18-ով նախատեսված պարտավորությունների ստանձնումից, Վրաստանը դրանով ազատում է իրեն նաև Ջավախքի մասով ԳԳ-ի հետ որևիցե պայմանագիր կնքելու պարտականությունից:

Ջավախքի հիմնահարցի հետ սերտորեն առնչվող Վրաստանի ընդունած հաջորդ հիմնարար փաստաթուղթը, ստորագրված Եվրոպայի Խորհրդի առջև, դա «Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիան» է (European Charter of Local Self-Government), որը, ինչպես տեսանք, Վրաստանը վավերացրել է 2004թ., ուժի մեջ մտցրել՝ 2005թ. ապրիլի 1-ին.

Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիա¹³

(Европейская хартия местного самоуправления)

Ստրասբուրգ, 15 հոկտեմբերի, 1985 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Եվրոպայի Խորհրդի անդամ երկրները, ստորագրելով սույն Խարտիան,

համարելով, որ Եվրոպայի Խորհրդի նպատակն է հասնել առավել սերտ միասնության իր անդամների միջև հանուն ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալների ու սկզբունքների պաշտպանության և իրագործման,

համարելով, որ վարչական ոլորտում համաձայնագրերի կնքումն այդ նպատակին հասնելու միջոցներից մեկն է,

համարելով, որ տեղական ինքնակառավարման մարմինները ցանկացած ժողովրդավարական ռեժիմի հիմնական հիմքերից մեկն են,

համարելով, որ պետական գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ պետությունների ժողովրդավարական սկզբունքներից է,

համարելով, որ այդ իրավունքը կարող է առավել ուղղակիորեն իրականացվել հատկապես տեղական մակարդակով,

համոզված լինելով, որ իրական պատասխանատվությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինների գոյությունը կարող է ապահովել արդյունավետ և, միաժամանակ, քաղաքացուն մերձեցած կառավարում,

գիտակցելով, որ Եվրոպական տարբեր երկրներում տեղական ինքնակառավարման պաշտպանությունն ու ամրապնդումն զգալիորեն աջակցում են ժողովրդավարական սկզբունքների և ապակենտրոնացված իշխանության վրա հիմնված Եվրոպայի կառուցման գործին,

հաստատելով, որ դա ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների առկայություն, որոնք օժտված են ժողովրդավարական ճանապարհով ստեղծված որոշումներ կայացնելու լիազորություններ ունեցող մարմիններով, և որոնք լայն ինքնավարություն ունեն իրենց պարտավորությունների, դրանց իրականացման կար-

13 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

զի և մեթոդների, դրանց իրականացման համար անհրաժեշտ միջոցների առումով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Յոդված 1

Կողմերը պարտավորվում են պահպանել հետևյալ հոդվածները այն ձևով և ծավալով, ինչպես նախատեսված է սույն Խարտիայի 12-րդ հոդվածում:

ՄԱՍ 1

Յոդված 2. Տեղական ինքնակառավարման սահմանադրական և իրավական հիմքերը

Տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ճանաչված լինի ներպետական օրենսդրությունում և, հնարավորինս, երկրի Սահմանադրությունում:

Յոդված 3. Տեղական ինքնակառավարում հասկացությունը

1. Տեղական ինքնակառավարում հասկացությունը նշանակում է՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով:

2. Այդ իրավունքը իրականացվում է խորհուրդների կամ ժողովների կողմից, որոնց անդամները ընտրված են ազատ, փակ գաղտնի, հավասար, ուղղակի և համընդհանուր քվեարկության ճանապարհով: Խորհուրդները կամ ժողովները կարող են ունենալ հաշվետու գործադիր մարմիններ: Այս դրույթը չի բացառում քաղաքացիների՝ ժողովին, հանրաքվեին կամ քաղաքացիների ուղղակի մասնակցության ցանկացած այլ ձևի դիմելը այնտեղ, որտեղ դա թույլատրվում է օրենքով:

Յոդված 4. Տեղական ինքնակառավարման իրավասության ուղորդը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ կամ օրենքով: Սակայն այդ դրույթը չի խանգարում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին, օրենքին համապատասխան, որոշակի նպատակներով որոշակի լիազորություններ տրվեն:

2. Տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով սահմանված շրջանակներում, գործողությունների լիակատար ազատություն ունեն՝ իրականացնելու իրենց նախաձեռնությունները ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ իրենց իրավասություններից և վերապահված չէ իշխանության այլ մարմնի:

3. Պետական լիազորությունների իրականացումը, որպես կանոն, պետք է առավելապես դրվի քաղաքացիներին ամենից մոտ կանգնած իշխանության մարմինների վրա: Որևէ այլ մարմնի լիազորություն ընձեռելու դեպքում պետք է հաշվի առնվեն առաջադրված խնդրի ծավալն ու բնույթը, ինչպես նաև՝ խնայողության ու արդյունավետության պահանջները:

4. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող լիազորությունները պետք է լիակատար և բացառիկ լինեն: Դրանք չեն կարող վերացվել կամ սահմանափակվել իշխանության այլ (կենտրոնական կամ տարածաշրջանային) մարմնի կողմից, բացառությամբ օրենքով սահմանված շրջանակների:

5. Կենտրոնական կամ տարածաշրջանային մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորությունների պատվիրակման դեպքում նրանք պետք է, հնարավորության սահմաններում, ազատություն ունենան դրանց իրականացումը հարմարեցնելու տեղական պայմաններին:

6. Պլանավորման և որոշում կայացնելու գործընթացներում, որոնք անմիջականորեն առնչվում են տեղական ինքնակառավարման մարմիններին, անհրաժեշտ է, հնարավորության դեպքում, ժամանակին և համապատասխան ձևով խորհրդակցել այդ մարմինների հետ:

Յոդված 5. Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների պահպանումը

Տեղական ինքնակառավարման մարմինների տարածքային սահմանազատումների ցանկացած փոփոխություն չպետք է կատարվի առանց նախապես խորհրդակցելու տեղական շահագրգիռ համայնքների հետ, հնարավորության դեպքում, նաև հանրաքվե անցկացնելու միջոցով (եթե թույլատրված է օրենքով):

Յոդված 6. Համապատասխան վարչական կառուցվածքներ և ռեսուրսներ տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների համար

1. Հիսախտելով առավել ընդհանուր օրենսդրական դրույթները՝

տեղական ինքնակառավարման մարմինները պետք է կարողանան որոշել իրենց ներպետական վարչական կառուցվածքները՝ դրանք տեղական պահանջներին հարմարեցնելու և արդյունավետ կառավարում երաշխավորելու համար:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների աշխատանքային պայմանները պետք է հնարավորություն տան՝ հավաքագրելու փորձի և բանիմացության սկզբունքների վրա հիմնված բարձր որակավորում ունեցող կադրերի: Այդ նպատակով պետք է ապահովվեն համապատասխան ուսուցման հնարավորություններ, վարձատրություն և ծառայողական առաջխաղացում:

Ֆոդված 7. Լիազորությունների իրականացման պայմանները տեղական մակարդակում

1. Տեղական մարմինների ընտրված ներկայացուցիչների կարգավիճակը պետք է ապահովի նրանց գործառույթների ազատ իրականացումը:

2. Տեղական մարմիններում ընտրված անձանց կարգավիճակը պետք է թույլ տա՝ ստանալու իրենց լիազորությունների իրականացման ժամանակ արվող ծախսերին համապատասխան դրամական փոխհատուցում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, փոխհատուցում՝ չստացված վաստակի դիմաց կամ վճարում՝ կատարված աշխատանքի դիմաց, և համապատասխան սոցիալական պաշտպանություն:

3. Տեղական մարմիններում ընտրված անձի կարգավիճակին անհամատեղելի գործառնություններն ու գործունեությունը կարող են սահմանվել օրենքով կամ հիմնարար իրավական սկզբունքներով:

Ֆոդված 8. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական վերահսկողությունը

1. Տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության ցանկացած վարչական վերահսկողություն պետք է ծառայի միայն օրինականությանը և սահմանադրական սկզբունքների ապահովմանը: Այդուհանդերձ, վարչական վերահսկողությունը կարող է ներառել նաև վերադաս մարմինների կողմից տեղական ինքնակառա-

վարման մարմիններին պատվիրակված լիազորությունների կատարման հսկողությունը:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների վարչական վերահսկողությունը պետք է իրականացվի այնպես, որ վերահսկող մարմնի միջամտության աստիճանը համաչափ լինի այն շահերի կարևորության աստիճանին, որոնք նա նպատակ ունի պաշտպանելու:

Ֆոդված 9. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորման աղբյուրները

1. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում տնօրինելու համապատասխան սեփական ֆինանսավորման միջոցներ, որոնք նրանք ազատորեն կարող են օգտագործել իրենց լիազորությունների շրջանակում:

2. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցները պետք է համաչափ լինեն Սահմանադրությամբ կամ օրենքով նրանց տրված լիազորություններին:

3. Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական միջոցների առնվազն մի մասը պետք է գոյանա տեղական տուրքերի և վճարների հաշվին, որոնց դրույքաչափերը տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն սահմանել օրենքի շրջանակներին համապատասխան:

4. Այն ֆինանսական համակարգերը, որոնց վրա հիմնվում են տեղական ինքնակառավարման մարմինների միջոցները, պետք է բավականին բազմազան և ճկուն լինեն, որպեսզի, որքանով դա գործնականում հնարավոր է, համաքայլ ընթանան ծախսերի փոփոխություններին, որոնք ծագում են տեղական ինքնակառավարումից ծագող խնդիրները իրականացնելիս:

5. Ֆինանսական առումով առավել թույլ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտպանությունը պահանջում է ֆինանսական համահարթեցման ընթացակարգերի հաստատում կամ հավասարազոր միջոցառումներ, որոնք ուղղված են տեղական մարմինների պոտենցիալ ֆինանսական աղբյուրների անհամաչափ բաշխման արդյունքների և նրանց ֆինանսական վերադիր ծախսերի ճշգրտմանը: Այդպիսի ընթացակարգերը կամ միջոցառումները չպետք է սահմանափակեն տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների ազատությունը, որոնք նրանք կարող են իրականացնել իրենց լիազորությունների շրջանակում:

6. Տեղական ինքնակառավարման մարմինների հետ պատշաճ կերպով պետք է խորհրդատվություններ անցկացվեն վերաբաշխվող միջոցները նրանց հատկացնելու կարգի վերաբերյալ:

7. Տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող դոտացիաները հնարավորին չափով չպետք է նախատեսվեն որոշակի ծրագրերի ֆինանսավորման համար: Դոտացիաների տրամադրումը չպետք է վնասի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում վարվող քաղաքականությանը:

8. Կապիտալ ներդրումներ ձեռք բերելու նպատակով, օրենքի շրջանակներում, տեղական ինքնակառավարման մարմիններին պետք է մատչելի լինի կապիտալի ազգային շուկան:

Հոդված 10. Տեղական ինքնակառավարման մարմինների միավորվելու իրավունքը

1. Տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն իրենց լիազորությունները իրականացնելիս համագործակցել և, օրենքի շրջանակներում, միավորվել տեղական ինքնակառավարման այլ մարմինների հետ՝ ընդհանուր հետաքրքրություններ կայացնող խնդիրների լուծման համար:

2. Յուրաքանչյուր պետությունում պետք է ճանաչվի տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը՝ մտնելու միավորումների մեջ՝ ընդհանուր շահերը պաշտպանելու և առաջ տանելու համար, ինչպես նաև՝ մտնելու տեղական ինքնակառավարման մարմինների միջազգային միավորման մեջ:

3. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրավունք ունեն օրենքով սահմանված պայմաններում համագործակցել այլ պետությունների համանման մարմինների հետ:

Հոդված 11. Տեղական ինքնակառավարման իրավական պաշտպանությունը

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների ազատ իրականացման ապահովման և Սահմանադրությամբ կամ ներպետական օրենսդրությամբ ամրագրված տեղական ինքնակառավարման սկզբունքների պահպանման համար պետք է ունենան դատարանով պաշտպանվելու իրավունք:

ՄԱՍ 2. Այլ դրույթներ

Հոդված 12. Պարտավորություններ

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հետևել խարտիայի առաջին մասի առնվազն 20 կետերի, որոնցից առնվազն տասը պետք է ընտրված լինեն հետևյալ կետերից. հոդված 2

հոդված 3, 1-ին և 2-րդ կետեր

հոդված 4, 1-ին, 2-րդ և 4-րդ կետեր

հոդված 5

հոդված 7, կետ 1

հոդված 8, կետ 2

հոդված 9, 1-ին, 2-րդ և 3-րդ կետեր

հոդված 10, կետ 1

հոդված 11

2. Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերը ի պահ տալու պահին յուրաքանչյուր պայմանավորվող պետություն ծանուցում է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ընտրված կետերի մասին:

3. Հետագայում ցանկացած Կողմը կարող է ցանկացած ժամանակ ծանուցել գլխավոր քարտուղարին, որ ինքը պարտավորվում է հետևել սույն խարտիայի այլ կետերի, որոնք դեռ չեն ընդունվել սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան: Հետագայում տրված նման պարտավորությունները դիտվում են որպես ծանուցող Կողմի՝ վավերացման, ընդունման կամ հավանության բաղկացուցիչ մաս և ուժի մեջ են մտնում այն ամսվա առաջին օրվանից, որը հաջորդում է ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալուց հետո եռամսյա ժամկետին:

Հոդված 13. Տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց վրա տարածվում է խարտիայի ազդեցությունը

Սույն խարտիայում պարունակվող տեղական ինքնակառավարման սկզբունքները տարածվում են Կողմի տարածքում գոյություն ունեցող բոլոր կատեգորիաների տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Սակայն վավերագիրը, ընդունման կամ հավանություն տալու մասին փաստաթուղթը ի պահ տալու պահին յուրաքանչյուր Կողմ կարող է նշել տեղական կամ տարածաշրջանային մարմինների այն կատեգորիաները, որոնց նկատմամբ մտադիր է սահմանափակել խարտիայի կիրառումը կամ որոնց մտադիր է

դուրս թողնել դրա կիրառման ոլորտից: Կողմը կարող է նաև Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հետագայում տրվող ծանուցման միջոցով տարածել խարտիայի ազդեցությունը իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների այլ կատեգորիաների վրա:

Ֆոդված 14. Տեղեկության տրամադրումը

Յուրաքանչյուր Կողմ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին տրամադրում է ամբողջ անհրաժեշտ տեղեկությունը օրենսդրական դրույթների և իր կողմից ձեռնարկված այլ միջոցառումների մասին՝ սույն խարտիայի պայմաններին համապատասխանություն և պահովելու նպատակով:

ՄԱՍ 3

Ֆոդված 15. Ստորագրումը, վավերացումը և ուժի մեջ մտնելը

1. Սույն խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Խարտիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերը ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Սույն խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի 4 անդամ պետությունների կողմից, նախորդ կետի դրույթների համաձայն, խարտիային հետևելու մասին համաձայնություն տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

3. Զանկացած անդամ պետության համար, որը համաձայնություն է տվել միանալու խարտիային հետագայում, խարտիան ուժի մեջ է մտնում վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը ի պահ տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Ֆոդված 16. Տարածքային կիրառելիություն

1. Ստորագրման կամ վավերագիրը, ընդունման կամ հաստատման և միանալու մասին փաստաթղթերը ի պահ տալու պահին յուրաքանչյուր պետություն կարող է նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն խարտիան:

2. Հետագայում յուրաքանչյուր պետություն կարող է Եվրոպայի

խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությամբ տարածել սույն խարտիայի կիրառումը հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի վրա: Այդ տարածքի նկատմամբ խարտիան ուժի մեջ է մտնում ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

3. Նախորդ երկու կետերի համաձայն արված ցանկացած հայտարարություն, որը առնչվում է այդ հայտարարության մեջ նշված որևէ տարածքի, կարող է հետ վերցվել գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Յուրաքանչյուր հրաժարում ուժի մեջ կմտնի նման ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեց ամիս ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Ֆոդված 17. Չեղյալ հայտարարելը

1. Յուրաքանչյուր Կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն խարտիան տվյալ Կողմի համար ուժի մեջ մտնելու պահից հնգամյա ժամկետը անցնելուց հետո ցանկացած ժամանակ: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին 6 ամիս առաջ հղվում է ծանուցագիր: Նման չեղյալ հայտարարման հետևանքով խարտիան չի կորցնում իր ուժը այլ Կողմերի նկատմամբ՝ պայմանով, որ նման Կողմերի թիվը երբևէ չպետք է 4-ից պակաս լինի:

2. Նախորդ կետի դրույթների համաձայն՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է չեղյալ հայտարարել խարտիայի առաջին մասի՝ իր կողմից ընդունված ցանկացած կետ՝ պայմանով, որ այդ Կողմը պարտավորված է մնում 12-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կետերին և նրանց քանակին: Որևէ կետի չեղյալ հայտարարման դեպքում ցանկացած Կողմ, որը չի պահպանի 12-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, պետք է համարվի որպես ամբողջ խարտիան չեղյալ հայտարարած:

Ֆոդված 18. Ծանուցագրերը

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցում է խորհրդի անդամ պետություններին.

- ա) ցանկացած ստորագրության մասին,
- բ) ցանկացած վավերագրի, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթ ի պահ տալու մասին,
- գ) 15-րդ հոդվածին համապատասխան՝ սույն խարտիայի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին,

դ) 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին համապատասխան ստացված ցանկացած ծանուցագրի մասին,

ե) 13-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ստացված ցանկացած ծանուցագրի մասին,

զ) ցանկացած այլ ակտի, ծանուցագրի կամ հաղորդագրության մասին, որն առնչվում է սույն խարտիային:

Ի վկայումս վերոնշյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն խարտիան:

Կատարված է 1985 թվականի հոկտեմբերի 15-ին՝ Ստրասբուրգում, մեկ օրինակով, ֆրանսերեն և անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ կտրվեն Եվրոպայի խորհրդի արխիվներին:

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները կուղարկի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության:

2006թ. Վրաստանում տեղի ունեցած Տեղական Ինքնակառավարման Մարմինների (ՏԻՄ) ընտրությունները տեղի ունեցան Վրաստանի փոփոխված և սույն կոնվենցիայի դրույթներին համահունչ ՏԻՄ օրենքի հիման վրա: Ինչպես տեսնում ենք Կոնվենցիայի դրույթներից, և դա առկա է այսօր Վրաստանի ՏԻՄ համակարգում, տեղական ինքնակառավարումն օժտված է չափազանց լայն ինքնուրույնությամբ: Սակայն Վրաստանի ՏԻՄ օրենքի առանձնահատկությունները, որոնք ամենանուրբ ձևերով փոքրացնում են ոչ վրացի մարդկանց թվաքանակը ՏԻ մարմիններում, լիարժեքորեն ապահովում են ոչ վրացիներով կոմպակտ բնակեցված մարզերում վրացական ղեկավար կազմի ձևավորումը, ինչը հեշտացնում է այդ տարածքներում, ինչպես վրացական պաշտոնյաներն են հաճախ շեշտում՝ «վերահսկողության լիարժեք ապահովմանը»:

Իր նշանակությամբ կարևորություն ներկայացնող և Վրաստանի ստորագրած հաջորդ միջազգային փաստաթուղթը դա «Եվրոպական մշակութային կոնվենցիան» է (European Cultural Convention), որը Վրաստանը վավերացրել է 1997թ. ապրիլի 25-ին, ուժի մեջ մտցրել նույն օրը.

Եվրոպական մշակութային կոնվենցիա¹⁴

Европейская культурная конвенция

Փարիզ, 19 դեկտեմբեր, 1954 թվական

Սույն Կոնվենցիան ստորագրած կառավարությունները, հանդիսանալով Եվրոպայի խորհրդի անդամներ,

նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել իր անդամների միջև ավելի սերտ միասնության՝ նրանց ընդհանուր ժառանգությունը հանդիսացող իդեալների և սկզբունքների պաշտպանության և իրականացման նպատակով,

նկատի ունենալով, որ այս նպատակի իրականացումը կամրապնդվի Եվրոպայի ժողովուրդների միջև ավելի խոր փոխըմբռնումով,

նկատի ունենալով, որ այս նպատակների համար ցանկալի է ոչ միայն կնքել երկկողմ մշակութային պայմանագրեր խորհրդի անդամների միջև, այլև վարել ընդհանուր գործողության քաղաքականություն՝ նպատակաուղղված Եվրոպական մշակույթի պաշտպանությանն ու զարգացմանը,

որոշելով կնքել ընդհանուր Եվրոպական մշակութային կոնվենցիա, որը կոչված է բոլոր անդամ պետությունների, ինչպես նաև այլ Եվրոպական պետությունների, որոնք կարող են դրան միանալ հետագայում, քաղաքացիների մոտ խթանելու լեզուների, պատմության, քաղաքակրթության, ինչպես նաև իրենց բոլորի համար ընդհանուր քաղաքակրթության ուսումնասիրությունը, համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Ֆոդված 1

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձեռնարկում է պատշաճ միջոցներ Եվրոպայի ընդհանուր մշակութային ժառանգության մեջ իր ազգային ներդրման զարգացումը պաշտպանելու և խրախուսելու համար:

Ֆոդված 2

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ըստ հնարավորին.

ա) խրախուսում է իր քաղաքացիների կողմից մյուս Պայմանավորվող կողմերի լեզուների, պատմության և մշակույթի ուսումնասի-

14 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

րությունը, և այդ Կողմերին համապատասխան միջոցներ է տրամադրում իր տարածքում այդպիսի ուսումնասիրությանը նպաստելու համար, և

բ) ձգտում է խրախուսել իր լեզվի կամ լեզուների, պատմության և մշակույթի ուսումնասիրությունը մյուս Պայմանավորվող կողմերի տարածքներում, և այդ Կողմերի քաղաքացիներին համապատասխան միջոցներ է տրամադրում իր տարածքում այդպիսի ուսումնասիրություն կատարելու համար:

Ֆոդված 3

Պայմանավորվող կողմերը միմյանց հետ խորհրդակցություններ են անցկացնում Եվրոպայի խորհրդի շրջանակներում՝ Եվրոպայի համար հետաքրքրություն ներկայացնող մշակութային միջոցառումների խրախուսմանն ուղղված համատեղ գործողությունների համար:

Ֆոդված 4

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, ըստ հնարավորին, նպաստում է անձանց, ինչպես նաև մշակութային արժեք ունեցող առարկաների տեղաշարժմանն ու փոխանակմանը՝ հանուն 2 և 3-րդ հոդվածների դրույթների իրականացման:

Ֆոդված 5

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր հսկողության տակ գտնվող Եվրոպական մշակութային արժեք ունեցող առարկաներին վերաբերվում է որպես Եվրոպայի ընդհանուր ժառանգության անբաժանելի մասի, համապատասխան միջոցներ է ձեռնարկում դրանց պահպանության համար և ապահովում է դրանց ողջամիտ մատչելիությունը:

Ֆոդված 6

1. Սույն Կոնվենցիայի դրույթների կիրառման վերաբերյալ առաջարկները և դրանց մեկնաբանության վերաբերյալ հարցերը քննարկվում են Եվրոպայի խորհրդի Մշակույթի փորձագետների կոմիտեի հանդիպումների ընթացքում:

2. Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող յուրաքանչյուր պետություն, որը միացել է սույն Կոնվենցիային՝ 9-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթների համաձայն, կարող է նշանակել ներկայացուցիչ կամ ներկայացուցիչներ՝ վերոհիշյալ հանդիպումներին մասնակցելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հանդիպումներում ձեռք բերված եզրահանգումները հանձնարարականների ձևով ներկայացվում են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին, եթե միայն դրանք Մշակույթի փորձագետների կոմիտեի իրավասության որոշումներ չեն, ինչպես վարչական բնույթ ունեցող գործերը, որոնք չեն հանգեցնում լրացուցիչ ծախսերի:

4. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը խորհրդի անդամներին և սույն Կոնվենցիային միացած ցանկացած պետության կառավարությանն է փոխանցում բոլոր համապատասխան որոշումները, որոնք կարող են ընդունվել Նախարարների կոմիտեի կամ Մշակույթի փորձագետների կոմիտեի կողմից:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում է Նախարարների կոմիտեի կամ Մշակույթի փորձագետների կոմիտեի որոշումներից բխող սույն Կոնվենցիայի դրույթների կատարման համար իր ձեռնարկած գործողությունների ընթացքի մասին:

6. Այն դեպքում, երբ սույն Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ որոշակի առաջարկներ հետաքրքրություն են առաջացնում սահմանափակ թվով Պայմանավորվող կողմերի մոտ, ապա այդպիսի առաջարկները հետազայում կարող են քննարկվել 7-րդ հոդվածի դրույթների համաձայն, պայմանով, որ դրանց իրագործումը չի հանգեցնի Եվրոպայի խորհրդի համար որևէ ծախսի:

Ֆոդված 7

Եթե սույն Կոնվենցիայի նպատակներն ամրապնդելու համար երկու կամ ավելի Պայմանավորվող կողմեր ցանկանում են անց կացնել հանդիպումներ Եվրոպայի խորհրդի նստավայրում, բացի 6-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերից, խորհրդի Գլխավոր քարտուղարը նրանց պետք է ապահովի այնպիսի վարչական օգնություն, ինչպիսին որ նրանք կպահանջեն:

Ֆոդված 8

Սույն Կոնվենցիայում ոչինչ չպետք է դիտվի որպես ազդեցություն ունեցող.

ա) որևէ երկկողմ մշակութային պայմանագրի դրույթների վրա, որի ստորագրողը կարող է լինել Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, և չպետք է պակաս ցանկալի դարձնի յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար հետագա նմանօրինակ կոնվենցիայի ստորագրումը, կամ

b) ցանկացած Պայմանավորվող կողմի տարածքում գործող՝ օտարերկրացիների նուտքի, բնակության և երկրից հեռանալու վերաբերյալ օրենքներին և ենթաօրենսդրական ակտերին ենթարկվելու՝ անձանց պարտավորության վրա:

Յոթված 9

1. Սույն Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամների կողմից ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, և վավերագրերն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում երրորդ ստորագրող կառավարության կողմից վավերագիրն ի պահ հանձնելուն պես:

3. Հետագայում վավերացրած յուրաքանչյուր ստորագրող կառավարության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտնում նրա վավերագիրն ի պահ հանձնելու օրը:

4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է միաձայն քվեարկությամբ որոշել հրավիրելու ցանկացած եվրոպական պետության, որը խորհրդի անդամ չէ, միանալու սույն Կոնվենցիային՝ այնպիսի պայմաններով, որոնք նպատակահարմար կգտնի: Այդ կերպ հրավիրված յուրաքանչյուր պետություն սարող է միանալ՝ միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով: Միանալն ուժի մեջ է մտնում նշված փաստաթուղթն ստանալու օրվանից:

5. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը խորհրդի բոլոր անդամներին և յուրաքանչյուր միացող պետության ծանուցում է բոլոր վավերագրերը և միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու մասին:

Յոթված 10

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է մատնանշել այն տարածքը, որի վրա տարածվում են սույն Կոնվենցիայի դրույթները, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրելով իր հայտարարությունը, որը վերջինս հաղորդում է մյուս բոլոր Պայմանավորվող կողմերին:

Յոթված 11

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան, երբ այն ուժի մեջ է եղել հինգ տարի, գրավոր ծանուցելով այդ մասին Եվրոպայի

խորհրդի Գլխավոր քարտուղարին, որն այդ մասին հաղորդում է մյուս Պայմանավորվող կողմերին:

2. Չեղյալ հայտարարելը Պայմանավորվող կողմի համար ուժի մեջ է մտնում վեց ամիս անց այն ամսաթվից, երբ այն կընդունվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից:

Ի վկայումս վերը շարադրվածի՝ ներքոստորագրյալները պատշաճ կերպով լիազորված իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան: Կատարված է Փարիզում, 1954թ. դեկտեմբերի 19-ին, անգլերեն և ֆրանսերեն, երկու տեքստերն էլ հավասարազոր են, եզակի օրինակով, որը Ոչ պաշտոնական թարգմանություն պահվում է Եվրոպայի խորհրդի արխիվում: Գլխավոր քարտուղարը վավերացված պատճենները պետք է փոխանցի բոլոր ստորագրող և միացող կառավարություններին:

Վերոնշյալ փաստաթղթի հիման վրա ստեղծված եվրոպական հաջորդ փաստաթուղթը դա «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանման մասին» կոնվենցիան է (Convention for the Protection of the Architectural Heritage of Europe), (Конвенция об охране архитектурного наследия Европы), (Գրանադա, 3 հոկտեմբերի, 1985թ.), որը Վրաստանը վավերացրել է 2000թ. ապրիլի 13-ին, ուժի մեջ մտցրել՝ նույն թվականի օգոստոսի մեկին: Ավելի քան յոթ տարի անց՝ 1992թ. հունվարի 16-ին, Եվրոպայի խորհուրդը, ի նկատի ունենալով 1985թ. հոկտեմբերի 3-ին Գրանադայում ստորագրված «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պահպանման մասին» կոնվենցիան, ինչպես նաև նշվախ ոլորտին առնչվող մի շարք կոնվենցիաներ և հանձնարարականներ, ընդունեցին նոր՝ «Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին» վերանայված կոնվենցիան (European Convention on the Protection of the Archaeological Heritage (Revised)), որը Վրաստանը վավերացրել է 2000թ. ապրիլի 13-ին, ուժի մեջ մտցրել 2000թ. հոկտեմբերի 14-ին:

**Հնագիտական ժառանգության պաշտպանության
մասին եվրոպական կոնվենցիա
(վերանայված)¹⁵**

Վալետտա, 16.1.1992թ.

Նախաբան

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններն ու Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ այլ պետությունները, որոնք ստորագրել են սույն կոնվենցիան,

Համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է առավել սերտ միասնություն հաստատել իր անդամ պետությունների միջև՝ հատկապես, իրենց միասնական ժառանգությունը հանդիսացող գաղափարներն ու սկզբունքները պահպանելու և կյանքի կոչելու նպատակով,

Ի նկատի ունենալով Փարիզում 1954թ. դեկտեմբերի 19-ին ստորագրված Եվրոպական մշակութային կոնվենցիան, հատկապես դրա 3-րդ և 5-րդ,

Ի նկատի ունենալով Գրանադայում 1985թ. հոկտեմբերի 3-ին ստորագրված Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան,

Ի նկատի ունենալով Դելֆիում 1985թ. հունիսի 23-ին ստորագրված Մշակութային սեփականության դեմ հանցագործությունների մասին եվրոպական կոնվենցիան,

Ի նկատի ունենալով հնագիտությանը վերաբերող խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները, մասնավորապես Թիվ 848 (1978), 921 (1981) և 1072 (1988) հանձնարարականները,

Ի նկատի ունենալով Թիվ (89) 5 հանձնարարականը, որը վերաբերում է քաղաքային և գյուղական շրջանների պլանավորման համատեքստում հնագիտական ժառանգության պահպանմանն ու խթանմանը,

Վերհիշելով, որ հնագիտական ժառանգությունն էական մշակութային ու նի մարդկության պատմության մասին գիտելիքների համար,

Ճանաչելով, որ Եվրոպական հնագիտական ժառանգությունը, որը հնագույն պատմության մասին վկայություններ է պարունակում, լուրջ վատթարացման վտանգի տակ է աճող բազմաթիվ պլանավոր-

ման աշխատանքների, բնական վտանգների, ծածուկ կամ ոչ գիտական պեղումների կամ անբավարար հանրային իրազեկության պատճառով,

Հաստատելով, որ կարևոր է ստեղծել, այնտեղ, ուր դրանք գոյություն չունեն, համապատասխան վարչական և գիտական վերահսկողության մեխանիզմներ, և որ հնագիտական ժառանգության պաշտպանության անհրաժեշտությունը պետք է արտացոլված լինի քաղաքային և գյուղական շրջանների պլանավորման և մշակութային զարգացման քաղաքականությունում,

Շեշտելով, որ հնագիտական ժառանգության պաշտպանությունը պետք է անմիջապես լինի ոչ միայն համապատասխան պետության, բայցև բոլոր Եվրոպական երկրների պատասխանատվությունը՝ դրանց վատթարացման վտանգի նվազեցման և պահպանման խթանման նպատակով՝ փորձագետների փոխանակման և փորձի համեմատման քաջալերման եղանակով,

Հաշվի առնելով 1969թ. մայիսի 6-ին Լոնդոնում ստորագրված Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի դրույթները Եվրոպական երկրների պլանավորման քաղաքականության զարգացման հետևանքով համալրելու անհրաժեշտությունը,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հնագիտական ժառանգության սահմանումը

Յոդված 1

1. Սույն (վերանայված) կոնվենցիայի նպատակն է պաշտպանել հնագիտական ժառանգությունը որպես Եվրոպական ընդհանուր հիշողության աղբյուր և որպես պատմական ու գիտական ուսումնասիրության գործիք:

2. Այս նպատակով հնագիտական ժառանգության տարրեր են համարվում անցյալ պատմական շրջաններից մարդկության բոլոր մնացորդները, առարկաները և նրանց կողմից թողնված ցանկացած այլ հետքերը,

i. որոնց պահպանությունը և ուսումնասիրությունն օգնում են վերհանել մարդկության պատմությունը և իր կապը բնական միջավայրի հետ,

ii. որոնց համար պեղումները կամ բացահայտումները և մարդկության ու իր միջավայրի հետազոտության այլ մեթոդները տեղեկատվության հիմնական աղբյուրներն են, և

¹⁵ Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

iii. որոնք տեղակայված են Կողմերի իրավասության տակ գտնվող ցանկացած տարածքում:

3. Հնագիտական ժառանգությունը ներառում է կառույցներ, շինություններ, շենքերի խմբեր, կառուցապատված վայրեր, շարժական օբյեկտներ, այլ տիպերի հուշարձաններ, ինչպես նաև դրանց շրջակայքը՝ ցամաքում և ջրի տակ:

Ժառանգության բնորոշումն ու պաշտպանության միջոցները

Յոդված 2

Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է ստեղծել, տվյալ պետությանը համապատասխան միջոցներով, հնագիտական ժառանգության պաշտպանության իրավական համակարգ՝ հետևյալ դրույթներով.

i. հնագիտական ժառանգության վայրերի ցուցակի պահպանում և պաշտպանության տակ գտնվող հուշարձանների և վայրերի թվարկում,

ii. հնագիտական արգելոցների ստեղծում, նույնիսկ եթե առերևույթ գոյություն չունեն որևէ հետքեր ցամաքում կամ ջրի տակ հետագա սերունդների ուսումնասիրության համար նյութական փաստերի պահպանման համար,

iii. հնագիտական ժառանգության տարրերի պատահական հայտնաբերման դեպքում դրանց մասին համապատասխան մարմիններին պարտադիր զեկուցման կարգ և դրանց ուսումնասիրություն:

Յոդված 3

Հնագիտական ժառանգությունը պահպանելու և հնագիտական հետազոտության գիտական նշանակությունն ապահովելու համար յուրաքանչյուր կողմ պարտավորվում է.

i. պեղումների և այլ հնագիտական գործունեության թույլատրման և վերահսկման ընթացակարգերը կիրառել այնպես, որ

ա. կանխարգելվեն անօրինական պեղումները կամ հնագիտական ժառանգության տարրերի տեղահանումը,

բ. երաշխավորվի հնագիտական պեղումների և պրոսպեկտավորման կատարումը գիտական եղանակով, և որպեսզի.

– հնարավորինս կիրառվեն հետազոտմանը վնաս չպատճառող մեթոդներ,

– հնագիտական ժառանգության տարրերը չհայտնաբերվեն կամ բաց պահվեն պեղումների ընթացքում կամ դրանցից հետո՝ առանց

դրանց համապատասխան պահպանման և կառավարման համար միջոցներ ձեռնարկելու:

ii. ապահովել, որ պեղումներն ու այլ հնարավոր քայքայիչ ազդեցություն ունեցող մեթոդները կիրառվեն միայն որակավորում և հատուկ լիազորություն ունեցող անձանց կողմից,

iii. հատուկ նախնական թույլտվության ենթարկել, Պետության ներպետական իրավունքի շրջանակներում, մետաղ բացահայտող սարքերի և այլ որոնողական տեխնիկական միջոցների կամ հնագիտական հետազոտման ընթացակարգի կիրառումը:

Յոդված 4

Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է միջոցներ կիրառել հնագիտական ժառանգության ֆիզիկական պաշտպանության համար՝ ըստ հանգամանքների միջոցներ ձեռնարկելով՝

i. իշխանությունների կողմից հնագիտական արգելոցների վերածվելու ենթակա վայրերի, համապատասխան այլ միջոցների համաձայն, ձեռք բերման ու պաշտպանության համար,

ii. հնագիտական ժառանգության պահպանման և կառավարման համար, նախապատվորեն՝ *in situ*;

iii. իրենց սկզբնական վայրից տեղափոխված հնագիտական մնացորդների համապատասխան պահպանման վայրերի համար:

Հնագիտական ժառանգության ինտեգրված կոնսերվացիա

Յոդված 5

Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է.

i. հետամուտ լինել հաշտեցնելու և համատեղելու հնագիտության և զարգացման նախագծերի համապատասխան պահանջները՝ երաշխավորելով, որ հնագետները մասնակցեն.

ա. պլանավորման այն աշխատանքներում, որոնք ուղղված են ապահովելու հնագիտական նշանակություն ունեցող վայրերի պաշտպանման, կոնսերվացիայի խթանման հավասարակշիռ ռազմավարություններ,

բ. զարգացման նախագծերի տարբեր փուլերում,

ii. ապահովել, որ հնագետները, քաղաքային և տարածաշրջանային նախագծողները պարբերաբար խորհրդակցեն, որպեսզի հնարավոր լինի.

ա. զարգացման նախագծերի փոփոխությունը, որոնք հնարավոր է բացասաբար ազդեն հնագիտական ժառանգության վրա,

բ. վայրի համապատասխան գիտական ուսումնասիրության և գտածոների հրապարակման համար բավարար ժամանակի և ռեսուրսների տրամադրում,

iii. ապահովել, որ բնապահպանական ազդեցության գնահատումներն ու դրանց հետևող որոշումները լիովին ի նկատի ունենան հնագիտական վայրերն ու դրանց շրջակայքը,

iv. պայմաններ ստեղծել, զարգացման աշխատանքների ընթացքում հնագիտական ժառանգության տարրերի բացահայտման դեպքում, դրանց հնարավորության դեպքում *in situ* կոնսերվացիայի համար,

v. ապահովել, որ հնագիտական վայրերի հասարակությանը համար բաց անելու դեպքում, հատկապես ցանկացած կառուցապատում ենթադրող միջոցառումները, որոնք անհրաժեշտ են մեծաքանակ այցելուներ ընդունելու համար, բացասաբար չի ազդում այդ վայրերի և դրանց շրջակայքի հնագիտական և գիտական բնութագրի վրա:

Հնագիտական հետազոտության և կոնսերվացիայի ֆինանսավորումը

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

i. ազգային, տարածաշրջանային և տեղական իշխանություններից պետական ֆինանսական օժանդակություն կազմակերպել հնագիտական հետազոտության համար՝ ըստ իրենց համապատասխան լիազորությունների,

ii. ավելացնել հնագիտության օժանդակությանն ուղղված նյութական ռեսուրսները.

ա. համապատասխան միջոցներ ձեռնարկելով երաժխավորելու համար, որ մեծ պետական և մասնավոր զարգացման նախագծերում, պետական կամ մասնավոր սեկտորի ռեսուրսներից համապատասխանաբար վճարվեն ցանկացած անհրաժեշտ հարակից հնագիտական միջոցառումների ամբողջ ծախսերը,

բ. այս ծրագրերի համար բյուջեում նախատեսել, նույն կերպ ինչ բնապահպանական և տարածքային պլանավորմամբ պայմանավորված ազդեցության մասին կատարվող ուսումնասիրությունների դեպքում, նախնական հնագիտական ուսումնասիրությունների և պրոսպեկտավորման, գիտական ամփոփագրի, ինչպես նաև գտածոների ամբողջական հրապարակման և հաշվարկման համար:

Գիտական տեղեկատվության հավաքումն ու տարածումը

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

Հնագիտական գտածոների մասին ուսումնասիրության և դրանց վերաբերյալ գիտելիքների տարածմանը նպաստելու համար յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

i. ստեղծել կամ թարմացնել իրենց իրավասության տակ գտնվող հնագիտական վայրերի մասին ուսումնասիրությունները, ցուցակները և քարտեզները,

ii. ձեռնարկել բոլոր պրակտիկ միջոցները հնագիտական գործողություններից հետո ապահովելու համար հրապարակման ենթակա գիտական ամփոփումների նախագծումը՝ մինչև մասնագիտացված ուսումնասիրությունների անհրաժեշտ համապարփակ հրապարակումը:

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

i. նպաստել մասնագիտական գիտական նպատակներով հնագիտական ժառանգության տարրերի ազգային և միջազգային փոխանակմանը՝ ձեռնարկելով համապատասխան միջոցներ ահապովելու, որ նման փոխանակումը ոչ մի կերպ չի վտանգում այդ տարրերի մշակութային և գիտական արժեքը,

ii. խթանել հնագիտական հետազոտության և ընթացքում գտնվող պեղումների վերաբերյալ տեղեկատվության ամփոփումը և նպաստել միջազգային հետազոտական ծրագրերի կազմակերպմանը:

Հանրային իրազեկության խթանումը

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է.

i. իրականացնել կրթական միջոցառումներ նպատակ հետապնդելով արթնացնել և զարգացնել հանրության իրազեկումը հնագիտական ժառանգության արժեքի մասին անցյալը և իր ժառանգությանը ուղղված վտանգները հասկանալու համար,

ii. խթանել հնագիտական ժառանգության կարևոր տարրերի, հատկապես վայրերի, հանրային մատչելիությունը, և խրախուսել հնագիտական օբյեկտների համապատասխան հավաքածոների հանրային ցուցադրությունները,

Հնագիտական ժառանգության տարրերի անօրինական տարածման կանխարգելումը

Յոթերորդ 10

Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է.

i. կազմակերպել, որ համապատասխան պետական մարմինները և գիտական հաստատությունները հայտնաբերված ցանկացած անօրինական պեղումների վերաբերյալ տեղեկատվություն հավաքեն,

ii. տեղեկացնել ծագման երկրի համապատասխան իշխանություններին, որոնք սույն Կոնվենցիայի կողմ են հանդիսանում, ցանկացած առաջարկի մասին, որը կասկածվում է, որ կամ անօրինական պեղումների, կամ անօրինական պաշտոնական պեղումների արդյունք է, և դրա մասին տրամադրել անհրաժեշտ մանրամասներով,

iii. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներն ապահովելու, որ թանգարաններն ու նմանատիպ հաստատությունները, որոնց գտածոների ձեռքբերման քաղաքականությունը գտնվում է պետության վերահսկողության տակ, ձեռք չբերեն հնագիտական ժառանգության տարրեր, որոնք կասկածվում են, որ ի հայտ են եկել չվերահսկվող որոնումներից կամ անօրինական պեղումներից կամ անօրինական պաշտոնական պեղումներից,

iv. ինչ վերաբերում է այն թանգարաններին և նմանատիպ հաստատություններին, որոնք տեղակայված են կոնվենցիայի Կողմ պետության տարածքում, սակայն որոնց ձեռքբերման քաղաքականությունը պետության վերահսկողության տակ չէ.

ա. նրանց փոխանցել սույն (վերանայված) Կոնվենցիայի տեքստը,

բ. ջանք չխնայել ապահովելու, որ այդ թանգարաններն ու հաստատությունները հարգեն վերոնշյալ երրորդ պարբերության սկզբունքները,

v. որքան հնարավոր է կրթության, տեղեկատվության, վերահսկողության և համագործակցության միջոցով, սահմանափակել չվերահսկվող որոնումներից կամ անօրինական պեղումներից կամ անօրինական պաշտոնական պեղումներից ստացված հնագիտական ժառանգության տարրերի տեղափոխումը:

Յոթերորդ 11

Սույն (վերանայված) Կոնվենցիայում ոչինչ չպետք է բացասաբար ազդի Կողմերի միջև ներկա և ապագա երկկողմանի կամ բազմ-

մակողմանի պայմանագրերին, որոնք վերաբերում են հնագիտական ժառանգության տարրերի անօրինական տարածմանը կամ դրանց իրենց օրինական տիրոջը վերադարձնելուն:

Երկկողմանի տեխնիկական և գիտական օժանդակությունը

Յոթերորդ 12

Կողմերը պարտավորվում են.

i. իրականացնել փոխադարձ տեխնիկական և գիտական օժանդակություն՝ հնագիտական ժառանգության հարցերի վերաբերյալ փորձի կուտակման և փորձագետների փոխանակումների եղանակով,

ii. խրախուսել, համապատասխան ներպետական օրենսդրության կամ միջազգային պայմանագրերի ներքո, հնագիտական ժառանգության պահպանման հարցերով մասնագետների, ներառյալ ուսուցման համար պատասխանատուների, փոխանակումը:

(Վերանայված) Կոնվենցիայի կիրառման վերասկողությունը

Յոթերորդ 13

Սույն (վերանայված) Կոնվենցիայի նպատակներից ելնելով՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Յոթերորդ 17-ի համաձայն նշանակված փորձագետների կոմիտեն վերահսկում է (վերանայված) Կոնվենցիայի կիրառումը և մասնավորապես.

i. պարբերաբար Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին կզեկուցի (վերանայված) Կոնվենցիայի անդամ հանդիսացող Պետություններում հնագիտական ժառանգության պաշտպանության քաղաքականության դրության և (վերանայված) Կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ,

ii. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին միջոցներ կառաջարկի (վերանայված) Կոնվենցիայի դրույթների կատարման, ներառյալ բազմակողմանի միջոցառումները, (վերանայված) Կոնվենցիայի վերանայման կամ լրացման, և (վերանայված) Կոնվենցիայի նպատակի մասին հանրության իրազեկման համար,

iii. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին առաջարկություններ կանի Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետություններին (վերանայված) Կոնվենցիային միանալու հրավերների վերաբերյալ,

Եզրափակիչ դրույթներ

Յոդված 14

1. Սույն (վերանայված) Կոնվենցիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և Եվրոպական մշակութային կոնվենցիայի անդամ այլ պետությունների ստորագրության համար:

Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթերն ի պահ են տրվում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Ոչ մի պետություն, որը միացել է 1969թ. մայիսի 6-ին Լոնդոնում ստորագրված Յնագիտական ժառանգության պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային, չի կարող ի պահ տալ վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթուղթը մինչև այն արդեն չի հրաժարվել վերոհիշյալ կոնվենցիայից կամ չի անում դա միաժամանակ:

3. Սույն (վերանայված) Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վեց ամիս անց այն օրից, երբ չորս Պետություններ, ներառյալ առնվազն երեք Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող պետություն, արտահայտեն (վերանայված) Կոնվենցիայի դրույթներով պարտավորված լինելու իրենց համաձայնությունը՝ ըստ նախորդ պարբերությունների դրույթների:

4. Երբ, նախորդ երկու պարբերությունների կիրառման ժամանակ, 1969թ. մայիսի 6-ի Կոնվենցիայից հրաժարումն ուժի մեջ չի մտնում սույն (վերանայված) Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու հետ միաժամանակ, պայմանագրի կողմ պետությունը կարող է վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթուղթն ի պահ հանձնելու ժամանակ հայտարարել, որ այն կշարունակի կիրառել 1969թ. մայիսի 6-ի Կոնվենցիան մինչև սույն (վերանայված) Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը:

5. Կոնվենցիան ստորագրած ցանկացած Պետության նկատմամբ, որն այնուհետև իր համաձայնությունն է հայտնում դրա դրույթներով պարտավորված լինել, (վերանայված) Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման փաստաթղթի ի պահ հանձնելու օրվանից վեց ամիս անց:

Յոդված 15

1. Սույն (վերանայված) Կոնվենցիանյի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ և Եվրոպական տնտեսական համայնքի

անդամ չհանդիսացող ցանկացած այլ պետության միանալ սույն (վերանայված) Կոնվենցիային մեծամասնությամբ ընդունված որոշմամբ՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Կանոնադրության Յոդված 20.դ-ի և Կոմիտեում ներկա լինելու իրավունք ունեցող պայմանագրի կողմ հանդիսացող Պետությունների ներկայացուցիչների միաձայն որոշմամբ:

2. Կոնվենցիային միացող ցանկացած պետության նկատմամբ կամ, եթե այն միանա, Եվրոպական տնտեսական համայնքի դեպքում, (վերանայված) Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին միացման մասին փաստաթղթի ի պահ հանձնելու օրից վեց ամիս հետո:

Յոդված 16

1. Ցանկացած Պետություն կարող է ստորագրման կամ վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու փաստաթուղթն ի պահ հանձնելու պահին մանրամասնել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կկիրառվի սույն (վերանայված) Կոնվենցիան:

2. Ցանկացած պետություն կարող է հետագայում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ տարածել սույն (վերանայված) Կոնվենցիայի կիրառումը հայտարարությունում նշված ցանկացած այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի նկատմամբ սույն (վերանայված) Կոնվենցիան ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման հայտարարության ստացման օրվանից վեց ամիս անց:

3. Նախորդ երկու պարբերությունների ներքո արված ցանկացած հայտարարություն դրանում նշված ցանկացած տարածքի նկատմամբ կարող է հետ կանչվել Գլխավոր քարտուղարին ուղղված ծանուցմամբ: Յետկանչումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից նման ծանուցման ստացման օրից վեց ամիս անց:

Յոդված 17

1. Ցանկացած Կողմ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ կարող է հրաժարվել սույն (վերանայված) Կոնվենցիայից:

2. Նման հրաժարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումը ստանալու օրից վեց ամիս անց:

Յոդված 18

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը ծանուցում է է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին, Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ այլ պետություններին և ցանկացած այն պետությանը կամ Եվրոպական տնտեսական համայնքին, որը միացել է կամ հրավիրվել է միանալ սույն (վերանայված) Կոնվենցիային.

- i. յուրաքանչյուր ստորագրման մասին,
 - ii. վավերացման, ընդունման, հաստատման կամ միացման յուրաքանչյուր փաստաթղթի ի պահ հանձնելու մասին,
 - iii. Յոդվածներ 14-ի, 15-ի և 16-ի համաձայն սույն (վերանայված) Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր օրվա մասին,
 - iv. սույն (վերանայված) Կոնվենցիային վերաբերող յուրաքանչյուր այլ գործողության, ծանուցման կամ հաղորդակցության մասին:
- Ի հաստատումն վերը նշվածի՝ ներքոստորագրյալները, համապատասխան իրավասություններով օժտված, ստորագրել են սույն վերանայված Կոնվենցիան:

Ստորագրված է Վալետտայում, 1992թ. հունվարի 16-ին, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, մեկ բնօրինակով, պահպանվում են Եվրոպայի խորհրդի արխիվներում: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը վավերացված օրինակները փոխանցում է Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետությանը, Եվրոպական մշակութային կոնվենցիայի կողմ այլ պետություններին, և ցանկացած անդամ չհանդիսացող պետությանը կամ Եվրոպական տնտեսական համայնքին, որը կհրավիրվի միանալ սույն (վերանայված) Կոնվենցիային:

Այստեղ հարկ է նշել, որ հիմնվելով այս կոնվենցիաների և իր ներքին օրենսդրության վրա, Վրաստանն իր վերահսկողության տակ գտնվող տարածքներում պատմաճարտարապետական և մշակութային արժեքների նկատմամբ ունի հատուկ դրսևորում, որն իրենից ներկայացնում է այլ ժողովուրդների արժեքները սեփականաշնորհելու, վերանորոգման քողի տակ վերջիններս անխնայորեն վրացական հայտարարելու քաղաքականություն: Ջավախքը ևս այդ իմաստով բացառություն չէ, և այստեղ ևս այդ քաղաքականությունն իրեն ցայտուն է դրսևորում. բռնազավթված, որպես վրացական եկեղծի-

ներ վերանորոգված և այս կամ այն կերպ վիճելի են հայտարարված Ախալցխայի, Աբասթուանի, Գումբուրդոյի, Գանձայի, Փոկայի, Սաղամոյի, Սամսարի և մի շարք այլ բնակավայրերի հայկական առաքելական կամ քաղկեդոնական դավանանքի եկեղեցիները և ճարտարապետական համալիրները:

Նշենք նաև, որ Վրաստանը դեռևս չի վավերացրել «Մշակութային արժեքների նկատմամբ իրավախախտումների մասին Եվրոպական կոնվենցիան» (European Convention on Offences relating to Cultural Property), որը վերջինիս հնարավորություն է տալիս գործելու և իր վերոնշյալ զավթողական քաղաքականությունն իրականացնելու ավելի ազատ և անկաշկանդ:

Շարունակելով քննել Վրաստանի իրավական առնչությունները Եվրոպայի խորհրդի հետ՝ ստորև անդրադառնալու ենք մի չափազանց կարևոր փաստաթղթի, որը որոշիչ, ճակատագրական, եթե չասենք՝ անփոխարինելի նշանակություն կարող է ունենալ խնդրո առարկա տարածաշրջանի՝ Ջավախքի հետագա ճակատագրում: Դա «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիան» է (European Charter for Regional or Minority Languages), որը, սակայն, Վրաստանը խուսափում է վավերացնել մինչ օրս¹⁶: Մինչ նշված կոնվենցիայի ամբողջովին մեջբերելը՝ առանց չափազանցնելու ավելացնենք, որ վերջինիս ընդունումը շրջադարձային նշանակություն կարող է ունենալ Ջավախքի բոլոր՝ սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, հոգևոր և ամենակարևոր՝ քաղաքական կյանքում: Ելնելով ստեղծված ներկա անելանելի իրավիճակից, երբ Վրաստանի վարած քաղաքականության արդյունքում գնալով մեծանում է լարվածությունը տարածաշրջանում, խնդիրները գնալով ստանում են առավել սուր բնույթ՝ եզրակացությունը հստակ է. սույն Կոնվենցիան Ջավախքի փրկության երաշխիքն է, որից այդքան վախենում է Վրաստանը: Սույն Կոնվենցիայի ուշա-

16 Հայաստանի Հանրապետությունն այն վավերացրել է 2001 թվականի դեկտեմբերի 28-ին, որն ուժի մեջ է 2002 թվականի մայիսի 1-ից: Հայաստանը նախկին ԽՍՀՄ պետություններից առաջինն էր, որ ընդունեց ու վավերացրեց խարտիան և շարունակում է որոշակի քայլեր կատարել այն իրացնելու դժվարին ճանապարհին: Այս ընթացքում ՀՀ-ն պատրաստել է խարտիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ երկու զեկույցներ: Հայաստանի Հանրապետությունում, ըստ խարտիայի 1-ին հոդվածի ա. Կետի սահմանման, չկան տարածաշրջանային կամ ոչ տարածքային լեզուներ, բայց կան փոքրամասնությունների լեզուներ (որոնք վերջին հաշվով բոլորն էլ ներգաղթողների լեզուներ են):

դիր զննումը տալիս է շատ հարցերի պատասխաններ, մասնավորաբար՝ հորս և ցնդեցնում կարճամիտների այն «մտքերը», որ ջավախահայությունը պարտավոր է սովորել վրացերեն, դրանով ինտեգրվել Վրաստանին: Այստեղ այդ ամենը շրջվում են ուղիղ 180 աստիճան. տարածաշրջանը հայկական է, ուստի այնտեղի բոլոր ոլորտներում գործածական է լինելու ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ, որպես այդ տարածաշրջանի հոգևոր, հետևաբար նաև՝ ֆիզիկական անվտանգության միակ երաշխիք: Եվ ընդհակառակը՝ տարածաշրջան ներխուժած վրացական զանգվածը, որը դրսևորվում է վարչական, մշակութային, հասարակական և այլ ոլորտների աշխատակիցների տեսքով, ինքն է պարտավոր սովորել հայերենը՝ որպես այդ տարածաշրջանի բնիկների կողմից գործածվող ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵԶՈՒ:

Այսպիսով՝ նշված Կոնվենցիան հանդիսանում է ստեղծված վիճակի ելքը, այն վերջ է դնում տարբեր շրջանակների մոլորություններին ու կարճամիտ հայտարարություններին: Սա չի ասվում մարդկանց կողմից, որոնց կարող են առանձին տգետներ կայցնել շովինիստի պիտակ, այս ամենը պարտադրում է ժողովրդավար Եվրոպան, որի դավանած արժեքների կրողն է իրեն համարում Վրաստանը.

Դրանք են ասորերենը, հունարենը, ռուսերենը, քրդերենը, որոնք ըստ էության ազգային փոքրամասնությունների լեզուներ են. միայն համապատասխան ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն են, որ ավանդականորեն խոսել են այդ լեզուներով: Այդ ազգային փոքրամասնություններից ոչ մեկը ՀՀ-ում բնիկ (ավտոխտոն) չէ և ավանդականորեն չի կապվում որևէ տարածքի հետ, թեև կան առանձին ոչ մեծ բնակավայրեր (գյուղեր), որոնք առավելապես համալրված են այդ փոքրամասնություններով: Այս առումով պետք է նշել, որ Հայաստանը խարտիային միացած այն փոքրաթիվ երկրներից մեկն է, որն ունենալով ազգային փոքրամասնությունների խիստ փոքրաթիվ համայնքներ, ճանաչել է երկրում գործածվող փոքրամասնության 5 լեզուների հատուկ կարգավիճակը:

**ՏԵՂԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՍ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԽԱՐՏԻՍ
(Европейская хартия региональных языков или языков
меньшинств)
Ստրասբուրգ, 05.11.1992**

Ներածություն

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները, ստորագրելով սույն խարտիան,

համարելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել առավել սերտ միասնության իր անդամների միջև, հատկապես ընդհանուր ժառանգություն հանդիսացող իդեալների և սկզբունքների գիտակցման և պահպանման նպատակով,

համարելով, որ Եվրոպայի պատմական տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանումը, որոնցից մի քանիսը վերջնական ոչնչացման վտանգի տակ են, նպաստում է Եվրոպայի մշակութային հարստության և ավանդույթների պահպանմանը և զարգացմանը,

համարելով, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածումը անձնական և հասարակական կյանքում մարդու անօտարելի իրավունքն է, համաձայն քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դաշնագրում ամրագրված սկզբունքներին և համաձայն Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիայի ոգուն,

հաշվի առնելով ԵԱՀԽ շրջանակներում իրականացված աշխատանքը, մասնավորապես 1975 թվականի Հելսինկիի Վերջնական ակտն ու 1990 թվականին Կոպենհագենի հանդիպման փաստաթուղթը,

շեշտելով մշակութային կապերի, ինչպես նաև բազմալեզվության կարևորությունը և համարելով, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանումն ու նրանց ցուցաբերվող աջակցությունը պետք է չվնասեն պաշտոնական լեզուներին և չխոչընդոտեն դրանք սովորելու անհրաժեշտությանը, գիտակցելով, որ Եվրոպայի տարբեր երկրներում և շրջաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պահպանումն ու

զարգացումը կարևոր ավանդ են հանդիսանում Եվրոպայի կառուցման գործում, որն իր հերթին հիմնված է ժողովրդավարության սկզբունքների և մշակութային բազմազանության վրա՝ ազգային ինքնիշխանության և տարածքային ամբողջականության շրջանակներում,

հաշվի առնելով Եվրոպական պետությունների տարբեր շրջաններում առկա առանձնահատուկ պայմանները և համապատասխան սովորույթները, համաձայնեցին հետևյալի մասին.

Մաս I. Ընդհանուր դրույթներ

Ֆոդված 1. Սահմանումներ

Սույն Խարտիայի նպատակների համար՝

ա/ «տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ» հասկացությունը վերաբերում է այն լեզուներին, որոնք՝

i. ավանդական ձևով գործածվում են պետության տվյալ տարածքում այդ պետության քաղաքացիների կողմից, որոնք քանակապես ավելի փոքր խումբ են կազմում, քան տվյալ պետության բնակչության մնացած մասը, և

ii. տարբերվում են այդ պետության պաշտոնական լեզվից (լեզուներից) և չեն ընդգրկում ո՛չ պետության պաշտոնական լեզվի (լեզուների) բարբառները, ո՛չ էլ՝ միգրանտների լեզուները,

բ/ «տարածք, որտեղ գործածվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն» նշանակում է՝ այն աշխարհագրական շրջանը, որտեղ տվյալ լեզուն հանդես է գալիս իբրև արտահայտման միջոց մի շարք անձանց այնպիսի քանակի համար, որն արդարացնում է սույն Խարտիայում նախատեսված տարբեր պաշտպանողական և աջակցող միջոցների ընդունումը,

գ/ «ոչ տարածքային լեզուներ» նշանակում է՝ այն լեզուները, որոնք գործածվում են պետության քաղաքացիների կողմից և տարբերվում են տվյալ պետության բնակչության մնացած մասի կողմից գործածվող լեզվից կամ լեզուներից, բայց որոնք, չնայած գործածվում են այդ պետության տարածքում ավանդականորեն, չեն կարող նույնացվել այդ երկրի որևէ տարածքի հետ:

Ֆոդված 2. Պարտավորություններ

1. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կիրառել 2-րդ մասի կետերը իր տարածքում գործող բոլոր տարածաշրջանային կամ

փոքրամասնությունների լեզուների նկատմամբ, որոնք համապատասխանում են 1-ին հոդվածի սահմանմանը:

2. 3-րդ հոդվածի համաձայն վավերացման, ընդունման կամ հաստատման ժամանակ սահմանված յուրաքանչյուր լեզվի առնչությամբ յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է կիրառել Խարտիայի III մասի կետերից ընտրված ամենաքիչը 35 կետեր կամ ենթակետեր՝ ներառյալ առնվազն 3-ը, ընտրված 8-րդ և 12-րդ հոդվածներից, և 1-ական՝ յուրաքանչյուր 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ հոդվածներից:

Ֆոդված 3. Գործնական պայմանավորվածություններ

1. Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթղթում նշում է յուրաքանչյուր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն, կամ պաշտոնական լեզուն, որն ավելի քիչ է գործածվում իր տարածքի ամբողջ կամ որևէ մի մասում, որի նկատմամբ կկիրառվեն 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ընտրված կետերը:

2. Ցանկացած Կողմ հետագայում կարող է ծանուցել զխավոր քարտուղարին, որ ինքը ընդունում է Խարտիայի որևէ այլ կետի դրույթներից բխող պարտավորությունները, որոնք դեռ նշված չեն վավերացման, ընդունման կամ հաստատման իր փաստաթղթում, կամ՝ որ ինքը կկիրառի սույն հոդվածի 1-ին կետը այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կամ այլ պաշտոնական լեզուների նկատմամբ, որոնք ավելի քիչ են գործածվում իր տարածքի ամբողջ կամ որևէ մի մասում:

3. Վերոհիշյալ կետում սահմանված պարտավորությունները կկազմեն վավերացման, ընդունման կամ հաստատման անբաժանելի մասը և, ծանուցման ժամկետից սկսած, կունենան միևնույն ուժը:

Ֆոդված 4. Պահպանության գոյություն ունեցող ռեժիմները

1. Սույն Խարտիայում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի կողմից երաշխավորված որևէ իրավունքի սահմանափակում կամ ոտնահարում:

2. Սույն Խարտիայի կետերը չպետք է վնասեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կարգավիճակին վերաբերող ավելի բարենպաստ կետերին կամ փոքրամասնությունների պատկանող անձանց իրավական ռեժիմին, որը կարող է գոյություն ունենալ Կողմերից որևէ մեկում կամ էլ առկա է երկկողմանի կամ բազմակողմանի միջազգային համաձայնագրերով:

Ֆոդված 5. Առկա պարտավորություններ

Սույն խարտիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես այնպիսի գործունեությամբ զբաղվելու կամ այնպիսի գործունեություն ծավալելու իրավունք, որը հակասում է ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին կամ, միջազգային իրավունքի համաձայն, այլ պարտավորություններին՝ ներառյալ պետությունների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության սկզբունքը:

Ֆոդված 6. Տեղեկատվություն

Կողմերը պարտավորվում են հետևել, որ շահագրգիռ մարմինները, կազմակերպությունները և անձինք տեղեկացվեն խարտիայով սահմանված իրավունքների և պարտավորությունների մասին:

Մաս II. 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հետապնդվող նպատակներն ու սկզբունքները

Ֆոդված 7. Նպատակներ և սկզբունքներ

1. Որոշակի տարածքներում գործածվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների առնչությամբ և յուրաքանչյուր լեզվի կարգավիճակին համաձայն՝ Կողմերը կհիմնեն իրենց քաղաքականությունը, օրենսդրությունը և փորձառությունը հետևյալ նպատակների և սկզբունքների վրա.

ա/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն,

բ/ տարածաշրջանային կամ փոքրամասնության յուրաքանչյուր լեզվի աշխարհագրական տարածքի ընդունումը՝ երաշխավորելու համար, որ առկա կամ նոր վարչական բաժանումները չեն խոչընդոտում տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի զարգացմանը,

գ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին աջակցելու համար վճռական գործողություններին դիմելու անհրաժեշտությունը՝ դրանք պաշտպանելու համար,

դ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածման հեշտացումը և/կամ խրախուսումը բանավոր և գրավոր խոսքի մեջ, հասարակական կամ անձնական կյանքում,

ե/ սույն խարտիայում ընդգրկված բնագավառներում կապերի պահպանումն ու զարգացումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածող խմբերի և միանման կամ նույ-

նանման ձևով լեզուն գործածող պետության այլ խմբերի միջև, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը այդ պետության մյուս խմբերի միջև, որոնք գործածում են տարբեր լեզուներ,

զ/ համապատասխան մեթոդների և միջոցների ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդման և ուսուցման համար՝ բոլոր համապատասխան փուլերում,

է/ պայմանների ապահովում, որոնք հնարավորություն կտան տվյալ տարածքում ապրող՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով չխոսողներին (որտեղ այդ լեզուն գործածվում է) ցանկության դեպքում սովորել այն,

ը/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսումնասիրման և հետազոտման խթանումը համալսարաններում կամ համարժեք ուսումնական հաստատություններում,

թ/ սույն խարտիայում ընդգրկված բնագավառներում ազգամիջյան համապատասխան ձևերի

փոխանակման խթանում՝ երկու կամ ավելի պետություններում միանման կամ նույնանման ձևով գործածվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների համար:

2. Կողմերը պարտավորվում են վերացնել (եթե դեռ չի արվել) ցանկացած չարդարացված տարբերություն, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք վերաբերում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածմանը և ուղղված են տվյալ լեզվի պահպանումն ու զարգացումը վնասելուն կամ վտանգելուն: Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների առնչությամբ հատուկ միջոցառումների ընդունումը, որը նպատակաուղղված է՝ աջակցելու իրավահավասարությանը այս լեզուները գործածողների և մնացած բնակչության միջև, կամ որը պատշաճորեն հաշվի է առնում նրանց հատուկ պայմանները, չի համարվի խտրականության ակտ ավելի լայնորեն գործածվող լեզուներ գործածողների նկատմամբ:

3. Կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներով աջակցել փոխադարձ ըմբռնմանը երկրի բոլոր լեզվական խմբերի միջև և, մասնավորապես, իրենց երկրներում կրթության և ուսուցման նպատակների մեջ ներառել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ հարգանքը, փոխըմբռնումը և հանդուրժողականությունը, ինչպես նաև խրախուսել զանգվածային լրատվամիջոցներին՝ հետապնդելու միևնույն նպատակները:

4. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների

նկատմամբ իրենց քաղաքականությունը որոշելիս Կողմերը պետք է հաշվի առնեն այդ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները: Անհրաժեշտության դեպքում նրանք խրախուսվում են՝ ստեղծելու նարմիներ՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին առնչվող բոլոր խնդիրների մասին իշխանություններին խորհուրդ տալու նպատակով:

5. Կողմերը պարտավորվում են, «*mutatis mutandis*», կիրառել վերոհիշյալ 1-4-րդ կետերում թվարկված սկզբունքները ոչ տարածքային լեզուների նկատմամբ: Սակայն, քանի որ խոսքը այս լեզուների մասին է, սույն հարտիան ուժի մեջ մտցնելու համար ձեռնարկվող միջոցառումների բնույթն ու գործունեության շրջանակը պետք է որոշվի ճկուն ձևով՝ հաշվի առնելով նաև տվյալ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները և հարգելով նրանց սովորություններն ու առանձնահատկությունները:

Մաս III. Հասարակական կյանքում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածմանը ուղղված միջոցառումները՝ համաձայն 2-րդ հոդվածի 2-րդ կետում ընդգրկված պարտավորությունների

Հոդված 8. Կրթություն

1. Կրթության կապակցությամբ այն տարածքներում, որտեղ այսպիսի լեզուները գործածվում են՝ համաձայն յուրաքանչյուր լեզվի կարգավիճակին և առանց վնասելու պետության պաշտոնական լեզվի կամ լեզուների ուսուցմանը, Կողմերը պարտավորվում են.

ա/ i. մատչելի դարձնել նախադպրոցական կրթությունը՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուներով,

iii. կիրառել վերոհիշյալ i և ii կետերում նշված նախաձեռնված միջոցառումներից որևէ մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքները այդպիսի խնդրանք են ներկայացրել, և որոնց քանակը համարվում է բավարար, կամ

iv. եթե պետական նարմիները նախադպրոցական կրթության բնագավառում չունեն անմիջական իրավասություն՝ աջակցելու i-iii

կետերում նշված միջոցառումների կիրառմանը և/կամ խրախուսելու այն,

բ/ i. մատչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ii. մատչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

iii. տարրական կրթության շրջանակներում ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքները այդպիսի խնդրանք են ներկայացրել, և որոնց քանակը համարվում է բավարար,

գ/ i. մատչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. միջնակարգ կրթության շրջանակներում ապահովել համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք (կամ, հնարավորության դեպքում, որոնց ընտանիքները) այդպես են ցանկանում, և որոնց թիվը համարվում է բավարար,

դ/ i. մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տեխնիկական և մասնագիտական կրթության շրջանակներում ապահովել համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք (կամ, հնարավորության դեպքում, որոնց ընտանիքները) այդպես են ցանկանում, և որոնց թիվը համարվում է բավարար,

ե/ i. մատչելի դարձնել համալսարանական կամ այլ բարձրագույն կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. ստեղծել հնարավորություններ՝ ուսուցանելու այդ լեզուները որպես համալսարանական և այլ բարձրագույն կրթական հաստատությունների ուսուցանվող առարկաներ, կամ

iii. բարձրագույն կրթական հաստատությունների կապակցությամբ, եթե պետության ստանձնած դերի պատճառով i և ii ենթակետերը չեն կարող կիրառվել, ապա աջակցել և/կամ թույլ տալ համալսարանի կամ բարձրագույն կրթական այլ ձևերի տրամադրումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ հնարավորությունների տրամադրումը այս լեզուների ուսուցման համար՝ որպես համալսարանական կամ բարձրագույն կրթական հաստատությունների առարկաներ,

զ/ i. կազմակերպել չափահասների կամ շարունակական կրթության դասընթացներ, որոնք հիմնականում կամ ամբողջովին ուսուցանվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. առաջարկել նման լեզուներ՝ որպես չափահասների կամ շարունակական կրթության առարկաներ, կամ

iii. եթե պետական մարմինները չունենան անմիջական իրավասություն չափահասների կրթության ոլորտում, ապա աջակցել նշված լեզուների առաջարկմանը կամ խրախուսել դրանց՝ որպես շարունակական կրթության առարկաների,

ե/ ձեռնարկել միջոցառումներ՝ երաշխավորելու համար պատմության և մշակույթի ուսուցումը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուներով,

ը/ ապահովել ուսուցիչների հիմնական և հետագա վերապատրաստումը՝ Կողմի կողմից ընդունված «ա»-ից մինչև «է» կետերը իրականացնելու նպատակով,

i. հիմնել վերահսկող մարմին կամ մարմիններ, որոնք պատասխանատու կլինեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ուսուցման հաստատմանը կամ զարգացմանը ուղղված՝ ձեռնարկված միջոցների և ձեռք բերված առաջընթացի վերահսկման համար և իրենց հայտնաբերումների մասին պարբերա-

կան հաշվետվությունների պատրաստման համար, որոնք կներկայացվեն հասարակությանը:

2. Կրթության կապակցությամբ և տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները ավանդաբար օգտագործող տարածքներից բացի այլ տարածքների առնչությամբ Կողմերը պարտավորվում են (եթե տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների թիվը արդարացված է) թույլ տալ, աջակցել կամ ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի կամ լեզվով ուսուցանումը կրթության բոլոր համապատասխան փուլերում:

Ֆոդված 9. Դատական մարմիններ

1. Այն դատական տարածքների առնչությամբ, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակիչների թիվը համապատասխանում է ներքոնշյալ միջոցառումներին՝ համաձայն այս լեզուներից յուրաքանչյուրի դերի, և այն պայմանով, որ սույն կետով տրամադրված հնարավորությունների օգտագործումը դատավորի կողմից չի համարվում պատշաճ արդարադատության իրականացմանը խոչընդոտող, Կողմերը պարտավորվում են՝

ա/ քրեական գործերում՝

i. ապահովել, որ Կողմերից մեկի հարցման դեպքում դատարանները վարեն գործը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, և/կամ

ii. երաշխավորել մեղադրյալին, որ նա իրավունք կունենա գործածելու իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն, և/կամ

iii. ապահովել, որ հարցումները և ապացույցները (զրավոր թե բանավոր) չպետք է բացառապես անընդունելի համարվեն, որովհետև դրանք ձևակերպվել են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, և/կամ

iv. հարցման հիման վրա՝ իրավական գործերի հետ կապված փաստաթղթեր տրամադրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, եթե անհրաժեշտ է, թարգմանիչների և թարգմանությունների միջոցով՝ չներառելով լրացուցիչ ծախսեր շահագրգիռ անձանց համար,

բ/ քաղաքացիական գործերում՝

i. ապահովել, որ Կողմերից մեկի հարցման դեպքում դատարանները գործը վարեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, կամ

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում կողմը խոսի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, և/կամ iii. թույլատրել, որ փաստաթղթերը և վկայությունները տպվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչների և թարգմանությունների օգնությամբ,

գ/ դատարաններում վարչական գործերի վերաբերյալ դատական գործերում՝

i. ապահովել, որ Կողմերից մեկի հարցման դեպքում դատավորները դատը վարեն տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով,

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում կողմը խոսի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, և/կամ

iii. թույլատրել, որ փաստաթղթերը և վկայությունները տրամադրվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչների և թարգմանությունների օգնությամբ,

դ/ քայլեր ձեռնարկել՝ երաշխավորելու, որ վերոհիշյալ «գ» և «գ» կետերի i և iii ենթակետերի կիրառումը և անհրաժեշտության դեպքում թարգմանությունների ու թարգմանիչների օգնության դիմելը չի ներառի հավելյալ ծախսեր շահագրգիռ անձանց համար:

2. Կողմերը պարտավորվում են՝

ա/ չմերժել իրավական փաստաթղթերի վավերականությունը (որոնք կազմվել են տվյալ երկրում) միայն այն պատճառով, որ դրանք կազմված են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով,

բ/ չմերժել կողմերի միջև իրավական փաստաթղթերի վավերականությունը (որոնք կազմվել են տվյալ երկրում) միայն այն պատճառով, որ դրանք կազմված են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, և ապահովել, որ նրանք ի վիճակի լինեն շահագրգիռ 3-րդ կողմերի օգնությամբ դիմելու, որոնք չեն հանդիսանում տվյալ լեզուն օգտագործողներ, այն պայմանով, որ փաստաթղթերի բովանդակությունը նրանց կմեկնաբանվի դրանք վկայակոչող անձի (անձանց) կողմից, կամ

գ/ չմերժել կողմերի միջև իրավական փաստաթղթերի վավերականությունը (որոնք կազմվել են տվյալ երկրում) միայն այն պատճառով, որ դրանք կազմված են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

3. Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով մատչելի դարձնել ազգային օրենքով սահմանված ամենակարևոր տեքստերը. հատկապես այն տեքստերը, որոնք վերաբերում են այս լեզուներով խոսողներին (եթե նրանք այլ կերպ չեն սահմանում):

Ֆոդված 10. Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ

1. Պետության վարչական տարածքների ներսում, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակը արդարացնում է ներքոնշյալ միջոցները, և, համաձայն յուրաքանչյուր լեզվի վիճակի, Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են.

ա/ i. երաշխավորել, որ վարչական մարմինները կգործածեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, կամ

ii. երաշխավորել, որ հասարակության հետ հարաբերություն ունեցող պետական ծառայողները, իրենց դիմող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց հետ փոխհարաբերության մեջ մտնելով, կխոսեն նույն լեզվով, կամ

iii. երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները կկարողանան բանավոր կամ գրավոր հայտեր ներկայացնել և ստանալ պատասխանը այդ լեզուներով, կամ

iv. երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները կկարողանան գրավոր կամ բանավոր հայտեր ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները իրավասու կլինեն փաստաթղթեր ներկայացնել այդ լեզուներով,

բ/ լայնորեն կիրառվող վարչական տեքստերը և ձևերը մատչելի դարձնել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության համար կամ ներկայացնել դրանք երկլեզու տարբերակներով,

գ/ թույլատրել վարչական մարմիններին՝ փաստաթղթեր կազմել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

2. Տեղական և մարզային մարմինների առնչությամբ, որոնց տարածքում բնակվող՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակը արդարացնում է ներքոնշյալ միջոցները, Կողմերը պարտավորվում են թույլատրել և/կամ խրախուսել.

ա/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը մարզային կամ տեղական իշխանությունների սահմաններում,

բ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին հնարավորություն տալ գրավոր կամ բանավոր կերպով հայտ ներկայացնել այդ լեզուներով, գ/ մարզային իշխանությունների կողմից իրենց պաշտոնական փաստաթղթերի հրատարակումը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

դ/ տեղական իշխանությունների կողմից իրենց պաշտոնական փաստաթղթերի հրատարակումը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ե/ մարզային իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը իրենց ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ), սակայն առանց բացառելու պետության պաշտոնապես ընդունված լեզվի (լեզուների) գործածումը,

զ/ տեղական իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը իրենց ժողովների ընթացքում (քննարկումների ժամանակ), սակայն առանց բացառելու պետության պաշտոնապես ընդունված լեզվի (լեզուների) գործածումը,

է/ անհրաժեշտության դեպքում՝ տեղանունների ճշգրիտ կամ ավանդական ձևերի կիրառումը կամ ընդունումը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուներով՝ պաշտոնական լեզվով (լեզուներով) ընդունված անունների հետ միասին:

3. Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց պետական ծառայությունների առնչությամբ այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները և համաձայն յուրաքանչյուր լեզվի դիրքի, Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են.

ա/ երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները կօգտագործվեն ծառայությունների մատուցման ժամանակ, կամ

բ/ թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին՝ հարցում ներկայացնել և ստանալ պատասխանը այդ լեզուներով, կամ

գ/ թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնություններ-

րի լեզուներով խոսողներին հարցում ներկայացնել այդ լեզուներով:

4. Կողմերի կողմից ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներն ուժի մեջ մտցնելու համար նրանք պարտավորվում են ձեռնարկել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

ա/ գրավոր կամ բանավոր թարգմանություններ՝ ըստ պահանջի, բ/ հավաքագրել և անհրաժեշտության դեպքում ուսուցանել պահանջվող պաշտոնյաներին և այլ պետական ծառայողներին,

գ/ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող պետական ծառայողների կողմից հնարավորության սահմաններում բավարարել հարցումներն այն տարածքում, որտեղ տվյալ լեզուն գործածվում է:

5. Համապատասխան հարցում ստանալու դեպքում Կողմերը պարտավորվում են թույլ տալ ազգանունների ընդունումը կամ օգտագործումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

Ֆոդված 11. Լրատվամիջոցներ

1. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների համար այն տարածքում, որտեղ տվյալ լեզուները գործածվում են, յուրաքանչյուր լեզվի դիրքին համաձայն և այնքանով, որքանով պետական մարմինները ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրավասու են, լիազորություն ունեն կամ որևէ դեր են խաղում այս ոլորտում, և հարգելով լրատվամիջոցների անկախության և ինքնավարության սկզբունքը, Կողմերը պարտավորվում են՝

ա/ այնքանով, որքանով ռադիոն և հեռուստատեսությունը կատարում են հասարակական ծառայության առաքելություն՝

i. երաշխավորել ամենաքիչը մեկ ռադիոկայանի և մեկ հեռուստալիքի ստեղծումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ ռադիոկայանի և մեկ հեռուստալիքի ստեղծումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. ապահովել համապատասխան որոշումներ, որպեսզի հաղորդավարները առաջարկեն ծրագրեր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

բ/ i. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ ռադիոկայանի ստեղծումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել ռադիոծրագրերի կանոնավոր հե-

ռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

գ/ i. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ հեռուստաալիքի ստեղծումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել կանոնավոր հեռուստածրագրերի հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

դ/ աջակցել և/կամ հեշտացնել տեսողական և տեսալսողական աշխատանքների արտադրությունը և տարածումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ե/ i. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ թերթի ստեղծումը և/կամ պահպանումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. աջակցել և/կամ հեշտացնել թերթերի հոդվածների կանոնավոր հրատարակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

զ/ i. ծածկել այն լրատվամիջոցների հավելյալ ծախսերը, որոնք օգտագործում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն, չնայած որ օրենքը սովորաբար ապահովում է ֆինանսական աջակցություն տվյալ լրատվամիջոցներին, կամ

ii. կիրառել գոյություն ունեցող միջոցները տեսալսողական արտադրանքների ֆինանսական աջակցության համար տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով.

է/ աջակցել այն լրագրողների և լրատվամիջոցների այլ անձնակազմերի ուսուցմանը, որոնք գործածում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները:

2. Կողմերը պարտավորվում են երաշխավորել ռադիոյի և հեռուստատեսության հեռարձակումների անմիջական ստացման ազատությունը հարևան երկրներից այն լեզվով, որը օգտագործվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվին համարժեք կամ նույնական լեզվով, և չհակառակվել տվյալ լեզվով ռադիո և հեռուստատեսային հաղորդումների վերահաղորդումներին հարևան երկրներից: Այսուհետև նրանք պարտավորվում են երաշխավորել, որ ոչ մի սահմանափակում չի լինի գրավոր մամուլում խոսքի ազատության և տեղեկատվության ազատ շրջանառության հետ կապված՝ այն լեզվով, որը գործածվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվին համարժեք կամ նույնական ձևով: Վերոհիշյալ ազատությունների իրականացումը (երբ այն իրա-

կանացվում է պատասխանատվությամբ և պարտավորություններով) կարող է ենթակա լինել նման ծնականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության և բարքերի պաշտպանության, այլոց համբավի կամ իրավունքների պաշտպանության, գաղտնի տեղեկության արտահոսքի կանխման կամ դատավորների հեղինակության և անկողմնակալության պահպանման նպատակով:

3. Կողմերը պարտավորվում են երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացված են կամ հաշվի են առնվում օրենքի համաձայն ստեղծված մարմինների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում լրատվամիջոցների ազատության և բազմակարծության երաշխավորման համար:

Ֆոդված 12. Մշակութային գործունեություն և հնարավորություններ

1. Այն տարածքում, որտեղ նման լեզուները գործածվում են, և այնքանով, որքանով պետական մարմինները իրավասու են, լիազորություն ունեն կամ որևէ դեր են խաղում այդ բնագավառում, հատկապես գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների և կինոթատրոնների, ինչպես նաև գրական աշխատությունների և կինոնկարների արտադրության, մայրենի լեզվով մշակութային գործունեության, փառատոների և մշակութային արդյունաբերությունների, ներառյալ, *inter alia*, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, Կողմերը պարտավորվում են՝

ա/ խրախուսել արտահայտման ձևերին և նախաձեռնություններին, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաև զարգացնել տարբեր միջոցներ՝ այդ լեզուներով արտադրվող աշխատանքները մատչելի դարձնելու համար,

բ/ զարգացնել այլ լեզուներով տարբեր միջոցներ՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ստեղծագործությունները մատչելի դարձնելու համար՝ աջակցելով և զարգացնելով թարգմանչական գործը, ֆիլմերի կրկնօրինակումը, հետհա-

մաժամանակացումը և ենթավերնագրերի հետ կապված գործունեությունը,

զ/ խթանել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ստեղծագործությունների մատչելիությունը՝ աջակցելով և զարգացնելով թարգմանչական գործը, ֆիլմերի կրկնօրինակումները, հետհամաժամանակացումը և ենթավերնագրերի հետ կապված գործունեությունը,

դ/ երաշխավորել, որ տարբեր տեսակի մշակութային գործունեության կազմակերպման և աջակցման համար պատասխանատու մարմինները համապատասխան թույլտվություն կտան, որպեսզի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների և մշակույթի գիտեցալը և գործածումը միավորվեն այն նախաձեռնություններին, որոնք ձեռնարկվում են նրանց կողմից, կամ որոնց համար նրանք աջակցություն են տրամադրում,

ե/ ձեռնարկել միջոցներ՝ երաշխավորելու, որ մշակութային գործունեությունների կազմակերպման համար պատասխանատու կամ նրանց աջակցող մարմինները իրենց տրամադրության տակ կունենան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաև մնացած բնակչության լեզվին (լեզուներին) տիրապետող անձնակազմ,

զ/ աջակցել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն գործածողների ներկայացուցիչների ուղղակի մասնակցությունը մշակութային գործունեության իրականացման և պլանավորման գործում,

է/ խթանել և/կամ հեշտացնել այն մարմնի կամ մարմինների ստեղծումը, որոնք պատասխանատու կլինեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով արտադրված աշխատանքների հավաքման, կրկնօրինակման, ներկայացման կամ հրապարակման համար,

ը/ անհրաժեշտության դեպքում ստեղծել և/կամ խթանել ու ֆինանսավորել թարգմանչական և տերմինաբանական հետազոտական ծառայությունները, մասնավորապես, յուրաքանչյուր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվում վարչական, առևտրական, տնտեսական, հասարակական, տեխնիկական կամ իրավական տերմինաբանության պահպանման և զարգացման նկատառումով:

2. Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները ավանդականորեն գործածող տարածքներից տարբեր տարածքների առնչությամբ Կողմերը պարտավորվում են թույլ տալ, աջակցել և/կամ ապահովել համապատասխան մշակութային գործունեություն և հնա-

րավորություններ, նախորդ կետի համաձայն, եթե տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն գործածողների թիվը բավարար է:

3. Իրենց մշակութային քաղաքականությունը արտասահմանում վարելու նպատակով Կողմերը պարտավորվում են ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները և նրանցով արտահայտված մշակույթները:

Ֆողված 13 . Տնտեսական և հասարակական կյանք

1. Տնտեսական և հասարակական գործունեության բնագավառում ամբողջ երկրի տարածքում Կողմերը պարտավորվում են.

ա/ իրենց օրենսդրությունից հանել որևէ կետ, որն առանց արդարացվող պատճառների արգելում կամ սահմանափակում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի օգտագործումը տնտեսական կամ հասարակական կյանքին վերաբերող փաստաթղթերում, մասնավորապես՝ աշխատանքի ընդունման պայմանագրերում և տեխնիկական փաստաթղթերում, ինչպիսիք են հրահանգները ապրանքների կամ սարքավորումների օգտագործման համար,

բ/ արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում և մասնավոր փաստաթղթերում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը (առնվազն նույն լեզուն գործածողների մոտ) չընդունող կամ սահմանափակող որևէ կետ մտցնելը,

գ/ ընդդիմանալ տնտեսական կամ հասարակական գործունեության հետ կապված՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործմանը խոչընդոտող պրակտիկային,

դ/ հեշտացնել և/կամ աջակցել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործմանը վերոնշյալ ենթակետերում սահմանված միջոցներից բացի այլ միջոցներով:

2. Տնտեսական և հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմինները իրավասու են, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները օգտագործող տարածքում հնարավորության դեպքում Կողմերը պարտավորվում են.

ա/ իրենց ֆինանսական և բանկային կանոնակարգերում ներառել այնպիսի դրույթներ, որոնք առևտրական աշխատանքի հետ համատեղելի ընթացակարգային մեթոդներով թույլ են տալիս տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը վճարման ձևերի (չեկեր) կամ այլ ֆինանսական փաստաթղթերի կազմման ժամանակ, կամ, հնարավորության դեպքում, երաշխավորել նման դրույթների իրականացումը,

բ/ տնտեսական և հասարակական հատվածներում իրենց անմիջական (պետական հատված) հսկողության տակ կազմակերպել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը խթանող գործունեությունները,

գ/ երաշխավորել, որ հասարակական խնամքի հիմնարկությունները (ինչպիսիք են հիվանդանոցները, ծերանոցները, հանրակացարանները) հնարավորություն կտան ընդունել և խնամել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց, որոնք խնամքի կարիք ունեն վատառողջության, ծերության կամ այլ պատճառներով,

դ/ համապատասխան միջոցներով երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով նույնպես կկազմվեն անվտանգության հրահանգներ,

ե/ մատչելի դարձնել իրավասու պետական մարմինների կողմից սպառողների իրավունքն երի վերաբերյալ տրված տեղեկությունը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

Ֆոդված 14 . Միջսահմանային փոխանակումներ

Կողմերը պարտավորվում են՝

ա/ կիրառել գոյություն ունեցող երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր, որոնք իրենց կկապեն այն պետությունների հետ, որտեղ այդ լեզուն գործածվում է նույնատիպ և նույնական ձևով, կամ, եթե անհրաժեշտ է, կնքել նման համաձայնագրեր՝ այդ պետություններում միևնույն լեզվով խոսողների միջև կապերի հաստատմանը նպաստելու նպատակով՝ մշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման և մշտական կրթության բնագավառներում,

բ/ ի շահ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ հեշտացնել և/կամ խթանել միջսահմանային համագործակցությունը, մասնավորապես, մարզային կամ տեղական իշխանությունների միջև, որոնց տարածքում գործում է միևնույն լեզուն նմանատիպ կամ նույնական ձևով:

Մաս IV. Խարտիայի կիրառությունը

Ֆոդված 15. Պարբերական զեկույցներ

1. Կողմերը պետք է Նախարարների կոմիտեի կողմից սահմանված կարգով Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին պարբե-

րաբար զեկույցներ ներկայացնեն սույն Խարտիայի II մասի համաձայն իրենց վարած քաղաքականության և այն միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են նրանց կողմից ընդունված III մասի դրույթների կիրառման համար: Առաջին զեկույցը պետք է ներկայացվի շահագրգիռ Կողմի նկատմամբ Խարտիայի ուժի մեջ մտնելուց

հետո մեկ տարվա ընթացքում, մյուս զեկույցները՝ առաջին զեկույցից հետո՝ 3 տարին մեկ:

2. Կողմերը պետք է հրապարակեն իրենց զեկույցները:

Ֆոդված 16. Ձեկույցների քննում

1. 15-րդ հոդվածի համաձայն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ներկայացված զեկույցները պետք է քննվեն 17-րդ հոդվածի համաձայն հաստատված փորձագետների կոմիտեի կողմից:

2. Որևէ Կողմում օրինականորեն հաստատված մարմինները կամ ընկերակցությունները կարող են փորձագետների կոմիտեի ուշադրությունը հրավիրել սույն Խարտիայի III մասի համաձայն տվյալ Կողմի նախաձեռնած պարտավորությունների հետ կապված հարցերի վրա: Շահագրգիռ Կողմի հետ խորհրդակցելուց հետո փորձագետների կոմիտեն կարող է ներքոնշյալ երրորդ կետում սահմանված զեկույցը կազմելիս հաշվի առնել այդ տեղեկությունները: Այս մարմինները կամ ընկերակցությունները կարող են հաշվետվություններ ներկայացնել II մասի համաձայն Կողմի վարած քաղաքականության վերաբերյալ:

3. Առաջին կետում նշված զեկույցների և 2-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա փորձագետների կոմիտեն պետք է պատրաստի հաշվետվություն Նախարարների կոմիտեի համար: Ձեկույցը կուղեկցվի մեկնաբանություններով, որոնք պետք է կատարեն Կողմերը, և որոնք կարող են հրապարակվել Նախարարների կոմիտեի կողմից:

4. 3-րդ կետում նշված զեկույցը պետք է մանրամասնորեն պարունակի փորձագետների կոմիտեի կողմից Նախարարների կոմիտեին ուղղված առաջարկությունները՝ վերջինիս կողմից մեկ կամ մի քանի Կողմերին տրվող հանձնարարականների պատրաստման համար:

5. Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը երկամյա մանրամասն հաշվետվություն պետք է ներկայացնի խորհրդարանական ասամբլեային Խարտիայի կիրառման վերաբերյալ:

Յոդված 17. Փորձագետների կոմիտե

1. Փորձագետների կոմիտեն պետք է ընդգրկի յուրաքանչյուր Կողմից մեկ անդամ, որը պետք է նշանակվի Նախարարների կոմիտեի կողմից, Խարտիայի հետ կապված գործերում նկատելի իրազեկություն և զերազանց ազնվություն ունեցող անդամների ցանկից, որոնց առաջադրում է շահագրգիռ Կողմը:

2. Կոմիտեի անդամները պետք է նշանակվեն վեց տարի ժամկետով և պետք է ունենան վերանշանակվելու իրավունք: Այն անդամը, որն ի վիճակի չէ աշխատելու մինչև իր պաշտոնի ժամկետի ավարտը, կփոխարինվի առաջին կետում նշված ընթացակարգին համապատասխան, իսկ փոխարինող անդամը պետք է ավարտի իր նախորդի պաշտոնի սահմանված ժամկետը:

3. Փորձագետների կոմիտեն պետք է ընդունի ընթացակարգային կանոններ: Կոմիտեի քարտուղարությունը պետք է ապահովվի Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարի կողմից:

Մաս V. Եզրափակիչ դրույթներ

Յոդված 18.

Խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների ստորագրման համար: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագրերը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերը պետք է ի պահ տրվեն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

Յոդված 19

1. Սույն Խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի հինգ անդամ պետությունների՝ 18-րդ հոդվածի դրույթների համաձայն Խարտիային հետևելու մասին համաձայնություն տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

2. Ցանկացած անդամ պետության համար, որը համաձայնություն է տվել միանալու Խարտիային հետագայում, Խարտիան ուժի մեջ է մտնում վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթը ի պահ տալուց հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Յոդված 20

1. Սույն Խարտիայի ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհր-

դի Նախարարների կոմիտեն կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի ցանկացած ոչ անդամ պետության միանալու սույն Խարտիային:

2. Յուրաքանչյուր միացող պետության նկատմամբ Խարտիան ուժի մեջ է մտնում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին միանալու մասին փաստաթուղթը ի պահ տալու օրվանից հետո եռամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրվանից:

Յոդված 21

1. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ տալու ժամանակ կատարել մեկ կամ ավել վերապահում սույն Խարտիայի 7-րդ հոդվածի 2-ից 5-րդ կետերի կապակցությամբ: Այլ վերապահումներ չեն կարող կատարվել:

2. Նախորդ կետի համաձայն վերապահում կատարած յուրաքանչյուր պայմանավորվող պետություն կարող է ամբողջովին կամ մասամբ հետ վերցնել այն Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով: Հետ վերցնելը ուժի մեջ է մտնում նման ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից:

Յոդված 22

1. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած ժամանակ կարող է չեղյալ համարել սույն Խարտիան Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցման միջոցով:

2. Նման չեղյալ հայտարարումը ուժի մեջ կմտնի ծանուցումը գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեցամսյա ժամկետին հաջորդող ամսվա առաջին օրը:

Յոդված 23

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցում է Խորհրդի անդամ պետություններին և Խարտիային միացած յուրաքանչյուր պետության՝

ա/ ցանկացած ստորագրության մասին,
բ/ վավերագրի, ընդունման, հաստատման կամ միացման մասին փաստաթուղթը ի պահ տալու մասին,

գ/ 19-րդ և 20-րդ հոդվածների համաձայն սույն Խարտիան ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ամսաթվի մասին,

դ/ 3-րդ հոդվածի, 2-րդ կետի դրույթների համաձայն յուրաքանչյուր ծանուցման մասին,

ե/ սույն խարտիային առնչվող այլ ակտի, ժամուցման կամ հաղորդման մասին: Ի վկայումս վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն խարտիան:

Կատարված է 1992 թ. նոյեմբերի 5-ին՝ Ստրասբուրգում, մեկ օրինակով, անգլերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ կտրվեն Եվրոպայի խորհրդի արխիվներից: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված պատճենները ուղարկում է Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության և յուրաքանչյուր պետության, որը հրավիրվել է միանալու սույն խարտիային:

*
* * *

Յ աջորդ միջազգային խոշոր կառույցը, որին անդամակցում է Վրաստանը, դա Միավորված Ազգերի Կազմակերպությունն է (ՄԱԿ): «Միավորված ազգեր» անվանումն առաջարկել է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: Այն առաջին անգամ կիրառվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1942թ. հունվարի 1-ի «Միավորված ազգերի հռչակագրում», երբ 26 պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին շարունակել համատեղ պայքարը ֆաշիստական դաշինքի երկրների դեմ:

Անցյալում էլ պետությունները հիմնում էին հատուկ բնագավառներում համագործակցելուն ուղղված միջազգային կազմակերպություններ: Հեռահաղորդակցության միջազգային կազմակերպությունն ստեղծվել է 1865թ.՝ «Միջազգային հեռագրային կազմակերպություն» անվանումով, իսկ 1874թ. ստեղծվել է Փոստային միջազգային կազմակերպություն: Երկուսն էլ այսօր ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն են:

1889թ. Հաագայում անցակցվեց առաջին խաղաղարար համաժողովը, որի նպատակն էր ճգնաժամերի խաղաղ կարգավորման, պատերազմների կանխման և պատերազմական օրենքների կարգավորման փաստաթղթեր մշակել: Այն ընդունեց Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման կոնվենցիան և հիմնեց միջազգային արբիտրաժի դատարանը, որն սկսեց գործել 1902 թվականից:

ՄԱԿ-ին նախորդել է Ազգերի լիգան, որն ստեղծվել է համանման պայմաններում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, 1919թ. Վերսալի պայմանագրով: Նրա նպատակն էր «խթանել միջազգային համագործակցությունը և հասնել խաղաղության ու անվտանգության»: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը՝ որպես Լիգայի գործընկեր գործակալություն, նույնպես ստեղծվել է Վերսալի պայմանագրով: Ազգերի լիգան դադարեց գործելուց, երբ նրան չհաջողվեց կանխել երկրորդ համաշխարհային պատերազմը:

1945թ. 50 պետությունների ներկայացուցիչներ հավաքվեցին Սան Ֆրանցիսկոյում՝ միջազգային կազմակերպությանը նվիրված Միավորված ազգերի համաժողովում մշակելու Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը: Պատվիրակները քննարկում էին այն առաջարկները, որոնք 1944թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ԱՄՆ Դամբրթըն Օուքսում ներկայացվել էին Չինաստանի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների կողմից: Կանոնադրությունը 50 պետությունների ներկայացուցիչների կողմից ստորագրվեց 1945թ. հուլիսի 26-ին: Լեհաստանը, որ ներկա չէր համաժողովին, Կանոնադրությունն ստորագրեց ավելի ուշ՝ դառնալով 51 պետություններից մեկը:

Միավորված ազգերի կազմակերպությունը պաշտոնապես հանդես եկավ 1945թ. հոկտեմբերի 24-ին, երբ Չինաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, ԽՍՀՄ-ը և ստորագրող մյուս պետությունների մեծ մասը վավերացրեցին Կանոնադրությունը: Ամեն տարի հոկտեմբերի 24-ին նշվում է ՄԱԿ-ի օրը¹⁷:

Եվ այսպես՝ 1992թ. հուլիսի 31-ին Վրաստանը դարձավ Միավորված Ազգերի Կազմակերպության 179-րդ անդամը¹⁸: Այդ մեծ ընտանիքին անդամակցումից ի վեր՝ Վրաստանը ստորագրել, միացել կամ վավերացրել մի շարք համաձայնագրեր, կոնվենցիաներ, հանձնարարականներ և այլն: Այդ փաստաթղթերի մեջ մեզ հետաքրքրող՝ ազգային փոքրամասնություններին վերաբերող խմբաքանակն այնքան էլ փոքր չէ: Ավելին, եթե Եվրոպայի խորհրդի պարագայում մենք

17 Հիմնական փաստեր Միավորված Ազգերի Կազմակերպության մասին, Միավորված Ազգերի Կազմակերպություն, Հանրային տեղեկատվության վարչություն, Երևան, 2002:

18 Տես՝ Միավորված Ազգերի Կազմակերպության պաշտոնական կայքէջը՝ <http://www.un.org/ru/members/index.shtml>, հմնտ՝ “Свободная Грузия”, 01.08.1992:

ստիպված գործ ունեինք «ազգային փոքրամասնություններ» տերմինի հետ, ապա ՄԱԿ-ի պարագայում մեզ ընձեռվում է ճշմարտությանն ավելի մոտենալու հնարավորությունը. ՄԱԿ-ը, տեղաբնիկ ժողովուրդներին համարելով աշխարհի ամենամեծ բարենպաստ պայմաններում գտնվող եթնիկ խմբեր, գնալով ավելի մեծ տեղ է հատկացնում վերջիններիս խնդիրների արժարժանը: Տեղաբնիկ ժողովուրդները, ըստ ՄԱԿ-ի տվյալների (2002թ.), մոտ 300 մլն են և ապրում են ավելի քան 70 երկրներում¹⁹: 2000թ. ՄԱԿ- Տնտսոցխորիլը²⁰ հիմնեց Տեղաբնիկների հարցերով մշտական ֆորումը՝ որպես օժանդակ մարմին: 16 փորձագետից բաղկացած ֆորումը, որի կազմում հավասար չափով փորձագետներ են ընդգրկված կառավարություններից բնիկներից, խորհուրդներ է տալիս Տնտսոցխորիլին, օգնում համակարգելու ՄԱԿ-ի գործունեությունը և քննարկելու տեղաբնիկներին հուզող հարցերը, որոնք առնչվում են զարգացմանը, մշակույթին, շրջակա միջավայրին, առողջապահական խնդիրներին ու մարդու իրավունքներին:

Աշխարհի տեղաբնակ ժողովուրդների միջազգային տարվա վերջում (1993թ.) Գլխավոր ասամբլեան հռչակեց Աշխարհի տեղաբնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակը (1995-2004թթ.), որը նպատակ ուներ խթանելու բնիկ ժողովուրդների՝ մարդու իրավունքների, մշակույթի, կրթության, շրջակա միջավայրի, կենսապայմանների և առողջապահության բնագավառների բարելավմանն ուղղված համագործակցությունը²¹:

1982թ. Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովը հիմնեց Տեղաբնիկ ժողովուրդների հարցերով աշխատանքային խումբ: Խումբը, ուսումնասիրելով տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներին վերաբերող զարգացումները, մշակեց Տեղաբնիկ ժո-

19 Հիմնական փաստեր Միավորված Ազգերի Կազմակերպության մասին, էջ՝ 252, հմմտ.՝ ՄԱԿ-ի և մարդու իրավունքների նյութերի ժողովածու (Compilation of the UN and Human Righ), Երևան, 2002, էջ՝ 62:

20 ՄԱԿ-ի կանոնադրությամբ Տնտեսական և սոցիալական խորհուրդն ստեղծվել է ՄԱԿ-ի և մասնագիտացված գործակալությունների ու հաստատությունների տնտեսական, սոցիալական և համանման գործունեությունը համակարգելու համար: Խորհուրդն ունի 54 անդամ, որոնք ընտրվում են երեք տարի ժամկետով: Խորհրդի որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ, յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

21 Первое Международное десятилетие коренных народов мира (1995—2004 гг.), Брошюра №7, <http://www.un.org/russian/hr/indigenous/guide/brosh7.html>:

ղովուրդների իրավունքների մասին հռչակագրի նախագիծը, որի հիման վրա էլ ընդունվեց ՄԱԿ-ի ամենամշակակար փաստաթղթերից մեկը, որը լիովին տարածվում է Ջավախք տարածաշրջանի վրա. դա «**Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին**» 61/295 դեկլարացիան է (Декларация Организации Объединенных Наций о правах коренных народов), United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples), ընդունված՝ 2007թ. սեպտեմբերի 13-ին, 107-րդ պլենար նիստով.

Միավորված Ազգերի Կազմակերպություն A/RES/61/295* Գլխավոր Ասամբլեա

17 մարտի 2008

Վաթսուն մեկերորդ նստաշրջան
Օրակարգի 68-րդ կետ

Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված Բանաձև
[առանց գլխավոր կոմիտեներ փոխանցելու (A/61L.67 և Add.1)]

61/295. Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության Հռչակագիր²². (61/295. United Nations Declaration on the Rights of Indigenous Peoples) (61/295. Декларация Организации Объединенных Наций о правах коренных народов)

Գլխավոր Ասամբլեան,

նկատի ունենալով Մարդու իրավունքների խորհրդի հանձնարարագիրը, որը շարադրված է նրա 2006 թվականի հունիսի 29-ի 1/2 բանաձևում [1], որով խորհուրդն ընդունել է Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության հռչակագիրը, հղում անելով 2006 թվականի դեկտեմբերի 20-ի իր 61/178 բանաձևին, որով սահմանել է հետաձգել Հռչակագրի քննարկումը և դրա վերաբերյալ որոշման ընդունումը, որպեսզի ժամանակ տա

22 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

դրա վերաբերյալ հետագա խորհրդակցություններ անցկացնելու համար, նաև որոշել է ավարտել դրա քննարկումը մինչև Գլխավոր Ասամբլեայի վաթսուներեկերորդ նստաշրջանի ավարտը,

ընդունում է Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության հռչակագիրը, որը շարադրված է սույն բանաձևի հավելվածում:

**107-րդ լիակազմ նիստ
13 սեպտեմբերի 2007 թվական**

Չավելված

Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության հռչակագիր

Գլխավոր Ասամբլեան՝

առաջնորդվելով Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության նպատակներով և սկզբունքներով և պետությունների կողմից իրենց վրա վերցված պարտավորությունները Կանոնադրությանը համապատասխան բարեխիղճ կատարելու սկզբունքով,

հաստատելով, որ բնիկ ժողովուրդները հավասար են մյուս բոլոր ժողովուրդներին և միաժամանակ ճանաչելով բոլոր ժողովուրդների իրավունքը տարբերվել միմյանցից, համարել իրենց մյուսներից տարբերվող և իր այդպիսի կարգավիճակով հարգանք ձեռք բերել,

հաստատելով նաև, որ բոլոր ժողովուրդները իրենց ավանդն են ներդնում քաղաքակրթության և մարդկության ընդհանուր ժառանգությունը հանդիսացող մշակույթների զանազանության և հարստության մեջ,

հաստատելով նաև, որ ցանկացած դոկտրինաներ, քաղաքականություն և պրակտիկա, որոնք հիմնված են ժողովուրդների գերակայության կամ մարդկանց ազգային ծագման նշաններով կամ ռասայական, կրոնական և մշակութային տարբերությունների վրա կամ որոնք հաստատում են նման գերակայությունը, համարվում են ռասիստական, գիտականորեն չկայացած, իրավաբանականորեն առոչինչ, բարոյապես դատապարտելի և սոցիալապես անարդար,

հաստատելով, որ բնիկ ժողովուրդներն իրենց իրավունքների իրականացման ժամանակ պետք է ազատ լինեն որևէ խտրականությունից,

անհանգստացած լինելով այն բանից, որ բնիկ ժողովուրդները, մնացածի հետ մեկտեղ նաև նրանց գաղութացման և սեփական հողերից, տարածքներից և ռեսուրսներից զրկելու արդյունքում դարձել են

պատմական անարդարությունների զոհ, ինչը արգելք է հանդիսանում իրենց պահանջներին և շահերին համապատասխան նրանց կողմից իրենց զարգացման իրավունքի իրականացմանը,

ճանաչելով կենսական անհրաժեշտությունը հարգել և խրախուսել բնիկ ժողովուրդների անբաժանելի իրավունքները, որոնք հիմնված են նրանց քաղաքական, տնտեսական և սոցիալական կառույցների, ինչպես նաև նրանց մշակույթի, հոգևոր ավանդույթների, պատմության և փիլիսոփայության, հատկապես իրենց հողերի, տարածքների և ռեսուրսների վրա ունեցած իրավունքների վրա,

ճանաչելով նաև կենսական անհրաժեշտությունը հարգել և խրախուսել բնիկ ժողովուրդների իրավունքները, որոնք ամրագրված են պետությունների պայմանագրերում, համաձայնագրերում և այլ կառուցողական պայմանավորվածություններում,

բավարարվածությամբ նշելով այն փաստը, որ բնիկ ժողովուրդները միավորում են իրենց ուժերը քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման համար և նպատակ ունենալով վերջ դնել խտրականության և ճնշման բոլոր ձևերին, որտեղ էլ որ լինի,

վստահ լինելով, որ բնիկ ժողովուրդների կողմից իրենց և իրենց հողերին, տարածքներին և ռեսուրսներին առնչվող իրադարձությունների հսկողությունը, թույլ կտա նրանց պահպանել և ամրապնդել իրենց ինստիտուտները, մշակույթը և ավանդույթները, ինչպես նաև աջակցել իրենց զարգացմանը իրենց ձգտումներին և պահանջներին համապատասխան,

ընդունելով, որ բնիկ ժողովուրդների գիտելիքների, մշակույթի և ավանդական պրակտիկայի հարգանքը նպաստում է կայուն և արդար զարգացմանը և շրջակա միջավայրի պատշաճ պաշտպանության,

ընդգծելով աշխարհի ազգերի և ժողովուրդների միջև խաղաղության, տնտեսական և սոցիալական առաջընթացի և զարգացման, փոխըմբռնման և բարեկամական հարաբերությունների հաստատման գործում բնիկ ժողովուրդների հողերի և տարածքների ապառազմականացման ներդրումը,

մասնավորապես գիտակցելով բնիկ ժողովուրդների ընտանիքների և համայնքների՝ երեխաների իրավունքներին համապատասխան իրենց երեխաների դաստիարակությունը, կրթությունը և բարեկեցությունը ապահովելու համատեղ պատասխանատվության իրավունքը,

համարելով, որ պետությունների և բնիկ ժողովուրդների միջև կնքված պայմանագրերում, համաձայնագրերում և կառուցողական այլ պայմանավորվածություններում ամրագրված իրավունքները որոշ դեպքերում հանդիսանում են միջազգային հանրության խնամքի,

հետաքրքրվածության և պատասխանատվության օբյեկտ և միջազգային բնույթ են կրում,

համարելով նաև, որ պայմանագրերը, համաձայնագրերը և կառուցողական այլ պայմանավորվածությունները և հարաբերությունները, որոնք դրանք արտացոլում են, հիմք են ծառայում բնիկ ժողովուրդների և պետությունների միջև ավելի ամուր գործընկերության համար,

ընդունելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտը [2] և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը, ինչպես նաև Վիեննայի հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը [3] հաստատում են ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիմնարար մշակութային-ընդհանուր, որի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն իրականացնում են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը,

հիշելով այն մասին, որ սույն սույն ՅՈՒՆԵՍԿՈՒՆ-ի կարող արգելք ծառայել որևէ ժողովրդի ինքնորոշման իրավունքին, որն իրականացվում է միջազգային իրավունքին համապատասխան,

վստահ լինելով, որ բնիկ ժողովուրդների իրավունքների ճանաչումը սույն ՅՈՒՆԵՍԿՈՒՆ-ի համապատասխան կնպաստի ներդաշնակ և պետությունների ու բնիկ ժողովուրդների միջև հարաբերությունների համագործակցության վրա հիմնված զարգացմանը, որոնք հիմնված են արդարության, ժողովրդավարության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, անխտրականության և բարեխղճության սկզբունքների վրա,

դրդելով պետություններին պահպանել և արդյունավետ իրականացնել միջազգային պայմանագրերով, մասնավորապես այն պայմանագրերով, որոնք առնչվում են մարդու իրավունքներին, իրենց բոլոր պարտավորությունները բնիկ ժողովուրդների նկատմամբ, համապատասխան ժողովուրդների հետ խորհրդակցությունների և համագործակցության միջոցով,

ընդգծելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը կոչված է կարևոր և հետևողական դեր խաղալ բնիկ ժողովուրդների իրավունքների խրախուսման և պաշտպանության մեջ,

ենթադրելով, որ սույն ՅՈՒՆԵՍԿՈՒՆ-ի կարևոր քայլ է հանդիսանում բնիկ ժողովուրդների իրավունքների իրավունքների և ազատությունների ճանաչման, խրախուսման և պաշտպանության ճանապարհին և այս ոլորտում Միավորված Ազգերի Կազմակերպության գործունեության համապատասխան համակարգի զարգացման մեջ,

ընդունելով և հաստատելով, որ բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք իրավունք ունեն առանց որևէ խտրականության օգտվել միջազգային իրավունքով ճանաչված մարդու բոլոր իրավունքներից և որ բնիկ ժողովուրդներն ունեն կոլեկտիվ իրավունքներ, որոնք բացառապես անհրաժեշտ են նրանց որպես ժողովուրդ գոյության, բարեկեցության և բազմակողմանի զարգացման համար,

ընդունելով, որ տարբեր տարածաշրջաններում և տարբեր երկրներում բնիկ ժողովուրդների կարգավիճակը տարբեր է և որ անհրաժեշտ է նկատի ունենալ ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունների ու տարբեր մշակութային և պատմական ավանդույթների կարևորությունը,

հանդիսավոր հայտարարում է Միավորված Ազգերի Կազմակերպության ներքոնշյալ բնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագիրը որպես չափանիշ, որին պետք է հետևել փոխադարձ հարգանքի և գործընկերության ոգով.

Յոդված 1

Բնիկ ժողովուրդները Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությամբ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի [4] և մարդու իրավունքներին առնչվող միջազգային իրավունքի նորմերով ճանաչված մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների լրիվ իրականացման իրավունք ունեն՝ կոլեկտիվ և անհատապես:

Յոդված 2

Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք և բնիկ ժողովուրդներն ազատ են և հավասար են մյուս բոլոր ժողովուրդներին և նրանց պատկանող առանձին անձանց և իրավունք ունեն ազատ լինել որևէ խտրականությունից, հատկապես իրենց ծագման կամ ինքնատիպության վրա հիմնված խտրականությունից, իրենց իրավունքների իրականացման ժամանակ:

Յոդված 3

Բնիկ ժողովուրդները ունեն ինքնորոշման իրավունք: Այս իրավունքի ուժով նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն իրականացնում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը:

Յոդված 4

Բնիկ ժողովուրդներն ինքնորոշման իրենց իրավունքը իրականացնելու ժամանակ ինքնավարության կամ ինքնակառավարման իրավունք ունեն այն հարցերում, որոնք վերաբերվում են իրենց ներքին և տեղական գործերին, ինչպես նաև նրանց ինքնավար ֆունկցիաների ֆինանսավորման ուղիներին և միջոցներին:

Յոդված 5

Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն պահպանել և ամրապնդել իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ինստիտուտները, դրա հետ մեկտեղ պահպանելով իրենց լրիվ մասնակցությունը պետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին, եթե նրանք դա ցանկանում են:

Յոդված 6

Բնիկ ժողովրդին պատկանող ցանկացած մարդ ունի քաղաքացիության իրավունք:

Յոդված 7

1. Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք ունեն կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, ազատության և անձնական անվտանգության իրավունք:

2. Բնիկ ժողովուրդները ունեն ազատության, խաղաղության և անվտանգության պայմաններում կյանքի կոլեկտիվ իրավունք որպես ինքնատիպ ժողովուրդներ և չպետք է ենթարկվեն ցեղասպանության ոչ մի ակտի կամ որևէ այլ բռնության, ներառյալ մի խմբին պատկանող երեխաների բռնի կերպով մեկ այլ խումբ տեղափոխելը:

Յոդված 8

1. Բնիկ ժողովուրդները և նրանց պատկանող անձինք իրավունք ունեն չենթարկվել բռնի ասիմիլյացիայի կամ ազդեցության նրանց մշակույթի ոչնչացման նպատակով:

2. Պետությունները ապահովում են նախազգուշացման և իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ`

a) ցանկացած գործողության նկատմամբ, որը նպատակն է կամ արդյունքը զրկել նրանց, որպես ինքնատիպ ժողովուրդներ, իրենց ամբողջականությունից կամ մշակութային արժեքներից կամ էթնիկ պատկանելությունից,

b) ցանկացած գործողության նկատմամբ, որի նպատակն է կամ

արդյունքը զրկել նրանց իրենց հողերից, տարածքներից կամ ռեսուրսներից,

c) ցանկացած ձևով բնակչության բռնի տեղափոխման նկատմամբ, որի նպատակն է կամ արդյունքը նրանց ցանկացած իրավունքի խախտման կամ վնասման,

d) ցանկացած ձևով բռնի ասիմիլյացիայի կամ ինտեգրման նկատմամբ,

e) ցանկացած ձևի քարոզչության նկատմամբ, որը նպատակ ունի խրախուսել կամ հրահրել ռասայական կամ էթնիկ խտրականություն, որն ուղղված է նրանց դեմ:

Յոդված 9

Բնիկ ժողովուրդները կամ նրանց պատկանող անձինք իրավունք ունեն պատկանել արմատական համայնքին կամ ժողովրդին տվյալ համայնքի կամ ժողովրդի ավանդույթներին և սովորություններին համապատասխան: Նման իրավունքի կիրառումը չի կարող առաջացնել ոչ մի տեսակի խտրականություն:

Յոդված 10

Բնիկ ժողովուրդները ենթակա չեն բռնի տեղափոխման իրենց հողերից կամ տարածքներից: Ոչ մի տեղափոխում չի իրականացվում առանց համապատասխան բնիկ ժողովուրդների հետ ազատ, նախնական և գիտակցված համաձայնության գալու և իրականացվում է արդար և ազնիվ փոխհատուցում և, որտեղ դա հնարավոր է, վերադարձի հնարավորություն նախատեսող համաձայնության կնքումից հետո:

Յոդված 11

1. Բնիկ ժողովուրդները իրենց մշակութային ավանդույթների ու սովորույթների պահպանման և վերածննդի իրավունք ունեն: Սա իր մեջ ներառում է նրանց մշակույթի արտահայտման անցյալ, ներկա և ապագա բոլոր ձևերի, այնպիսին, ինչպիսիք են հնագիտական և պատմական օբյեկտները, նյութական մշակույթի հուշարձանները, նկարները, ծեսերը, տեխնոլոգիաները, զեղարվեստական և կատարողական արվեստը և գրականությունը, պահպանման, պաշտպանության և զարգացման իրավունքը:

2. Պետությունները արդյունավետ մեխանիզմների միջոցով ապահովում են առանց նրանց ազատ, նախնական և գիտակցված համաձայնության կամ ի խախտումն նրանց օրենքների, ավանդույթների և սովորույթների իրենց մշակութային, ինտելեկտուալ, կրոնական և

պաշտամունքային սեփականության նկատմամբ իրավական պաշտպանության միջոցները, որոնք կարող են իրենց մեջ ներառել իրավունքների վերականգնում (ռեստիտուցիա), որոնք մշակվել են բնիկ ժողովուրդների հետ համատեղ:

Յոթված 12

1. Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն հետևել, ուղարկել, զարգացնել և փոխանցել իրենց հոգևոր և կրոնական ավանդույթները, սովորույթները և ծեսերը; առանց օտար ներկայության պահպանել, պաշտպանել և այցելել իրենց կրոնական և մշակութային նշանակություն ունեցող վայրեր; օգտագործել և տնօրինել իրենց ծիսական առարկաները և իրավունք ունեն հայրենքիում հուղարկավորել իրենց մահացածների աճյունները:

2. Պետությունները ձգտում են ապահովել իրենց մոտ գտնվող ծիսական առարկաներին և մահացածների աճյուններին հասանելիությունը և/կամ դրանց վերադարձը հայրենիք համապատասխան բնիկ ժողովուրդների հետ համատեղ մշակված արդարացի, տրանսպարենտ և արդյունավետ մեխանիզմների սահմաններում:

Յոթված 13

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն վերածնել, օգտագործել, զարգացնել և հաջորդ սերունդներին փոխանցել իրենց պատմությունը, լեզուն, բանավոր բանահյուսության ավանդույթները, փիլիսոփայությունը, գիրն ու գրականությունը, ինչպես նաև իրենց սեփական անվանումներն ու անունները տալ համայնքներին, վայրերին և անձանց ու պահպանել դրանք:

2. Պետությունները գործնական միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի պաշտպանության համար, ինչպես նաև ապահովելու համար այն, որ բնիկ ժողովուրդները կարողանան հասկանալ տեղի ունեցածը և հասկանալի լինել քաղաքական, դատական և վարչական գործընթացներում, անհրաժեշտության դեպքում թարգմանության ապահովման կամ այլ օժանդակ միջոցների օգնությամբ:

Յոթված 14

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն ստեղծել և հսկել կրթական իրենց կրթական համակարգերը և ուսումնական հաստատությունները, որոնք ապահովում են կրթությունը իրենց մայրենի լեզուներով, այնպես, որպեսզի դա համապատասխանի նրանց մշակութային բնորոշ դասավանդության և ուսուցման մեթոդներին:

2. Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք, հատկապես երեխաները, իրավունք ունեն ստանալ բոլոր մակարդակների և բոլոր ծանրի պետական կրթություն՝ առանց որևէ խտրականության:

3. Պետությունները բնիկ ժողովուրդների հետ համատեղ գործնական միջոցառումներ են ձեռնարկում, որպեսզի բնիկ ժողովուրդներին պատկանող անձանց, մասնավորապես երեխաներին, այդ թվում նաև իրենց համայնքներից դուրս բնակվողներին, հնարավորության դեպքում հասանելի լինի կրթությունը, հաշվի առնելով իրենց մշակութային ավանդույթները և իրենց լեզվով:

Յոթված 15

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն արժանապատվության և իրենց մշակույթի, ավանդույթների, պատմության և ակնկալիքների բազմազանության, որոնք պետք է համապատասխան կերպով արտացոլվեն կրթության և հասարակական տեղեկատվության ոլորտում:

2. Պետությունները համապատասխան բնիկ ժողովուրդների հետ համատեղ խորհրդակցության և համագործակցության մեջ գործնական միջոցներ են ձեռնարկում մախապաշարմունքների դեմ պայքարելու, խտրականությունը արմատախիլ անելու և բնիկ ժողովուրդների և հասարակության մյուս բոլոր շերտերի միջև հանդուրժողականությունը, փոխըմբռնումը և բարիդրացիական հարաբերությունները զարգացնելու համար:

Յոթված 16

1. Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն ստեղծել իրենց սեփական զանգվածային լրատվության միջոցները իրենց լեզուներով և առանց որևէ խտրականության հասանելիություն ունենալ բնիկ ժողովուրդներին չպատկանող զանգվածային լրատվության բոլոր միջոցներին:

2. Պետությունները գործնական միջոցներ են ձեռնարկում, որպեսզի պետական զանգվածային լրատվամիջոցներում ապահովվի բնիկ ժողովուրդների մշակութային բազմազանության պատշաճ արտացոլումը: Պետությունները, առանց կարծիքների արտահայտման լիակատար ազատությանը վնասելու, պետք է խթանեն մասնավոր լրատվամիջոցներին ադեկվատ ձևով ներկայացնել բնիկ ժողովուրդների մշակութային բազմազանությունը:

Յոթված 17

1. Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք և բնիկ ժողովուրդները իրավունք ունեն լիակատար կերպով իրականացնել բոլոր այն ի-

րավունքները, որոնք սահմանվել են կիրառվող միջազգային և ներպետական աշխատանքային իրավունքով:

2. Պետությունները, բնիկ ժողովուրդների հետ խորհրդակցելով և համագործակցելով, կոնկրետ միջոցներ են ձեռնարկում բնիկ ժողովուրդների երեխաներին պաշտպանելու համար տնտեսական շահագործումից և ցանկացած այնպիսի աշխատանք կատարելուց, որը կարող է վտանգավոր լինել կամ խանգարել երեխայի ուսմանը, կամ վնաս հասցնել երեխաների առողջությանը կամ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը, նկատի ունենալով նրանց առանձնահատուկ խոցելիությունը և նրանց հնարավորությունները ընդլայնելու համար կրթության անհրաժեշտությունը:

3. Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք իրավունք ունեն չենթարկվել խտրականության իրենց աշխատանքային պայմանների և մասնավորապես, զբաղվածության կամ աշխատավարձի հարցերում:

Ֆոդված 18

Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն մասնակցել իրենց իրավունքներին վերաբերվող հարցերով որոշումների ընդունմանը իրենց իսկ կողմից իրենց սեփական ընթացակարգերով ընտրված ներկայացուցիչների միջոցով, ինչպես նաև իրենց սեփական հրահանգչական հաստատությունների պահպանմանը և զարգացմանը:

Ֆոդված 19

Պետությունները բարեխղճորեն խորհրդակցում և համագործակցում են բնիկ ժողովուրդների հետ նրանց ներկայացուցչական ինստիտուտների միջոցով, նպատակ ունենալով նախապես ստանալ նրանց ազատ, նախնական և գիտակցված համաձայնությունը, նախքան նրանց առնչվող օրենսդրական կամ վարչական միջոցներ ձեռնարկելը:

Ֆոդված 20

1. Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն պահպանել և զարգացնել իրենց քաղաքական, տնտեսական կամ սոցիալական համակարգերը կամ ինստիտուտները, երաշխավորված կիրառել իրենց միջոցները, որոնք ապահովում են գոյությունը և զարգացումը և իրենց ավանդական և այլ տնտեսական գործունեությամբ ազատ զբաղմունքը:

2. Բնիկ ժողովուրդները, որոնք զրկված են գոյությունն ու զարգացումը ապահովող իրենց միջոցներից, վնասի արդարացի փոխհատուցման իրավունք ունեն:

Ֆոդված 21

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն առանց խտրականության իրենց կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու, այդ թվում նաև, մասնավորապես, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, զբաղվածությունը, մասնագիտական-տեխնիկական նախապատրաստումը և վերապատրաստումը, կացարանով ապահովումը, սանիտարիան, առողջապահությունը և սոցիալական ապահովումը:

2. Պետությունները միջոցներ են ձեռնարկում և, անհրաժեշտության դեպքում նաև հատուկ միջոցառումներ, նրանց կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները մշտապես բարելավելու ուղղությամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում բնիկ ժողովուրդների տարեցների, կանանց, երիտասարդության, երեխաների և հաշմանդամների իրավունքներին և հատուկ պահանջներին:

Ֆոդված 22

1. Սույն Ֆոդակագրի իրականացման ժամանակ կոնկրետ ուշադրություն է դարձվում բնիկ ժողովուրդներին պատկանող տարեցների, կանանց, երիտասարդության, երեխաների և հաշմանդամների իրավունքներին և հատուկ պահանջներին:

2. Պետությունները բնիկ ժողովուրդների հետ համատեղ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի ապահովվեն բնիկ ժողովուրդներին պատկանող կանայք և երեխաները օգտվեն բոլոր ձևերի բռնության և խտրականության լրիվ պաշտպանություն և երաշխիքներից:

Ֆոդված 23

Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն սահմանել առաջնայնություններ և ռազմավարություն զարգացման իրենց իրավունքը իրականացնելու նպատակով: Մասնավորապես, բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն ակտիվորեն մասնակցել առողջապահական, բնակարանային և այլ սոցիալ-տնտեսական ծրագրերին, որոնք առնչվում են նրանց և, որքան որ դա հնարավոր է, իրականացնել նման ծրագրերն իրենց սեփական ինստիտուտների միջոցով:

Ֆոդված 24

1. Բնիկ ժողովուրդները ունեն իրենց ավանդական բժշկությամբ և իրենց բուժման պրակտիկայի պահպանման իրավունքը, ներառյալ կարևորագույն դեղաբույսերի, կենդանիների և նյութերի պահպանումը: Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք նաև իրավունք ունեն

առանց որևէ խտրականության հասու լինել սոցիալական և բժշկական սպասարկման բոլոր ձևերին:

2. Բնիկ ժողովուրդներին պատկանող անձինք ամենաբարձր մակարդակի ֆիզիկական և հոգեկան առողջության հասանելիության իրավունք ունեն: Պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը այս իրավունքի ամբողջական իրականացման նպատակին աստիճանաբար հասնելու համար:

Յոթերորդ 25

Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն աջակցել և ամրապնդել իրենց հատուկ հոգևոր կապը ավանդաբար նրանց պատկանող կամ այլ ձևով զբաղեցրած կամ օգտագործվող հողերի, տարածքների, ջրերի և ծովային առափնյա ջրերի, ինչպես նաև այլ պաշարների հետ և պատասխանատվություն կրել ասպազա սերունդների առջև այդ կապակցությամբ:

Յոթերորդ 26

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն այն հողերի, տարածքների և պաշարների նկատմամբ, որոնք ավանդաբար նրանց են պատկանել, որոնք նրանք ավանդաբար զբաղեցրել են կամ էլ այս կամ այն կերպ ձեռք են բերել կամ օգտագործել:

2. Բնիկ ժողովուրդներն սեփականության, օգտագործման, տիրապետման կամ հսկման իրավունք ունեն այն հողերի, տարածքների և պաշարների նկատմամբ, որոնք նրանցն են ավանդական տիրապետության կամ ավանդական այլ զբաղմունքի կամ օգտագործման ուժով, ինչպես նաև նրանք, որոնք իրենք ձեռք են բերել այլ կերպ:

3. Պետություններն ապահովում են այդպիսի հողերի, տարածքների և պաշարների իրավաբանական ճանաչումը և պաշտպանությունը: Նման ճանաչումը իրականացվում է համապատասխան բնիկ ժողովուրդների ծեսերի, ավանդույթների և հողատիրության համակարգերի նկատմամբ համապատասխան հարգանքով:

Յոթերորդ 27

Պետությունները բնիկ ժողովուրդների օրենքների, ավանդույթների և հողատիրության համակարգերի հարիր ընդունմամբ համապատասխան բնիկ ժողովուրդների հետ միասին հաստատում և իրականացնում են բնիկ ժողովուրդների իրավունքների ճանաչման և իրավաբանական հաստատման արդար, անկախ, անկողմնակալ, բաց և տրանսպարենտ գործընթացը այդ հողերի, տարածքների և պաշարների

նկատմամբ, ներառյալ նրանք, որոնք ավանդաբար նրանց են պատկանել կամ նրանք դրանք այլ կերպ ե զբաղեցրել կամ օգտագործել: Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն մասնակցել այդ գործընթացին:

Յոթերորդ 28

1. Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն փոխհատուցում ստանալու այնպիսի միջոցների օգնությամբ, որոնք կարող են ներառել իրավունքների վերականգնում կամ, երբ դա հնարավոր չէ, այն հողերի, տարածքների և պաշարների համար արդարացի փոխհատուցման տեսքով, որոնց նրանք ավանդաբար տիրապետել են կամ որևէ այլ ձևով զբաղեցրել են կամ օգտագործել և որոնք բռնագանձվել, օտարվել, զբաղեցվել, օգտագործվել են կամ որոնց վնաս էր հասցվել առանց նրանց ազատ, նախնական և գիտակցված համաձայնության:

2. Եթե համապատասխան ժողովուրդների հետ չկա կամավոր պայմանավորվածություն որևէ այլ բանի մասին, նման փոխհատուցումը տրվում է այնպիսի հողերի, տարածքների ու պաշարների ձևով, որոնք իրենց որակով, չափով և իրավաբանական կարգավիճակով համարժեք են առաջիններին, կամ դրանական փոխհատուցման ձևով կամ որևէ այլ համապատասխան փոխհատուցմամբ:

Յոթերորդ 29

1. Բնիկ ժողովուրդները ունեն իրենց հողերի կամ տարածքների և պաշարների արտադրական կարողությունների և շրջակա միջավայրի պահպանության և պաշտպանության իրավունքը: Պետությունները ստեղծում և իրականացնում են բնիկ ժողովուրդներին օգնելու ծրագրեր այդպիսի պահպանության և պաշտպանության ապահովման նպատակով առանց որևէ խտրականության:

2. Պետությունները գործնական միջոցներ են ձեռնարկում բնիկ ժողովուրդների հողերում կամ տարածքներում վտանգավոր նյութերի պահելը թույլ չտալու կամ վտանգավոր նյութերի դուրսբերումը բնիկ ժողովուրդների տարածքներ առանց նրանց ազատ, նախնական և գիտակցված համաձայնության:

3. Պետությունները նաև գործնական միջոցառումներ են ձեռնարկում անհրաժեշտության դեպքում բնիկ ժողովուրդների մոնիտորինգի, պահպանման և առողջության պահպանման ծրագրերի պատշաճ իրականացման ապահովման համար այն տեսքով, որով որ դրանք մշակվում են և իրականացվում այն ժողովուրդների կողմից, որոնք ենթարկվել են նման նյութերի բացասական ազդեցությանը:

Յոդված 30

1. Բնիկ ժողովուրդների հողերում կամ տարածքներում չեն իրականացվում ռազմական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց անցկացումն արդարացված է համապատասխան պետական շահերի առկայությամբ կամ դրա նկատմամբ կա այլ կերպով ազատ արտահայտված համաձայնություն կամ խնդրանք համապատասխան բնիկ ժողովուրդների կողմից:

2. Բնիկ ժողովուրդների հողերը կամ տարածքները ռազմական գործողությունների համար օգտագործումից առաջ պետությունները անցկացնում են արդյունավետ խորհրդակցություններ շահագրգռված բնիկ ժողովուրդների հետ համապատասխան միջոցառումների միջոցով և, նասնավորապես, նրանց ներկայացուցչական ինստիտուտների միջոցով:

Յոդված 31

1. Բնիկ ժողովուրդներն իրավունք ունեն պահպանել, հսկել, պաշտպանել և զարգացնել իրենց մշակութային ժառանգությունը, ավանդական գիտելիքները և մշակութային դրսևորման ավանդական ձևերը, ինչպես նաև նրանց գիտական գիտելիքների, տեխնոլոգիաների և մշակույթի, ներառյալ մարդկային և գենետիկ ռեսուրսները, սերմերը, դեղերը, ֆլորայի և ֆաունայի նման գիտելիքները, բանահյուսության ավանդույթները, զրական ստեղծագործությունները, նկարները, սպորտը և ավանդական խաղերը և զեղարվեստական և կատարողական արվեստը: Նրանք նաև այդպիսի մշակութային ժառանգության, ավանդական գիտելիքների և մշակույթի դրսևորման ավանդական ձևերի նկատմամբ իրենց մտավոր սեփականությունը պահպանելու, հսկելու, պաշտպանելու և զարգացնելու իրավունք ունեն:

2. Բնիկ ժողովուրդների հետ համատեղ պետությունները գործնական միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքների կիրառումը ընդունելու և պաշտպանելու նպատակով:

Յոդված 32

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն առաջնայնություններ սահմանել և ռազմավարություններ մշակել իրենց հողերի ու տարածքների և այլ պաշարների օգտագործման համար:

2. Պետությունները պարտաճանաչ խորհրդակցում և համագործակցում են համապատասխան բնիկ ժողովուրդների հետ նրանց ներկայացուցչական ինստիտուտների միջոցով, նպատակ ունենալով նա-

խապես ձեռք բերել նրանց ազատ և գիտակցված համաձայնությունը նախքան որևէ այնպիսի նախագծի հաստատումը, որն առնչվում է նրանց հողերին կամ տարածքներին և այլ պաշարներին, հատկապես օգտակար հանածոների, ջրային կամ այլ պաշարների յուրացման, օգտագործման կամ մշակման հետ կապված:

3. Պետությունները արդյունավետ մեխանիզմներ են ապահովում նման ցանկացած գործողության հետ կապված արդար և ազնիվ փոխհատուցման համար, և ձեռնարկվում են համապատասխան միջոցներ՝ շրջակա միջավայրի, տնտեսության, հասարակության, մշակույթի և հոգևոր զարգացման վրա ունեցած նրա անբարենպաստ հետևանքները մեղմելու համար:

Յոդված 33

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն որոշել իրենք իրենց կամ իրենց էթնիկ պատկանելությունը իրենց սովորույթներին և ավանդույթներին համապատասխան: Դա վնաս չի հասցնում բնիկ ժողովուրդներին պատկանող անձանց քաղաքացիություն ստանալու իրավունքին այն պետությունում, որտեղ նրանք բնակվում են:

2. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն որոշել իրենց ինստիտուտների կառուցվածքը և ընտրել դրանց անդամներին իրենց սեփական գործընթացներին համապատասխան:

Յոդված 34

Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն խրախուսել, զարգացնել և պահպանել իրենց ինստիտուցիոնալ կառույցները և իրենց հատուկ սովորույթները, հոգևորությունը, ավանդույթները, գործընթացները, պրակտիկան և, այն դեպքերում, երբ դրանք գոյություն ունեն, նաև իրավական համակարգերը կամ սովորույթները մարդու իրավունքների ոլորտում միջազգային չափանիշներին համապատասխան:

Յոդված 35

Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն սահմանել իրենց համայնքների նկատմամբ առանձին անհատների պարտականությունները:

Յոդված 36

1. Բնիկ ժողովուրդները, նասնավորապես այն ժողովուրդները, որոնք բաժանված են միջազգային սահմաններով, իրավունք ունեն պահպանել և զարգացնել կապերը, հարաբերությունները և համագործակցությունը, այդ թվում նաև հոգևոր, մշակութային, քաղաքական,

տնտեսական և սոցիալական ուղղվածության կապակցությամբ, նրանց հետ, ով մտնում է իրենց կազմի մեջ, ինչպես նաև այլ ժողովուրդների հետ սահմանների վրայով:

2. Պետությունները բնիկ ժողովուրդների հետ խորհրդակցելով և համագործակցելով, գործնական միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի օգտագործման դյուրացման և նրա իրագործման ապահովման համար:

Յոթերորդ 37

1. Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն պետությունների կամ նրանց իրավահաջորդների հետ կնքած պայմանագրերի, համաձայնագրերի և կառուցողական այլ պայմանավորվածությունների ընդունման, հսկման և կատարման ապահովման և պետությունների կողմից նման պայմանագրերի, համաձայնագրերի և կառուցողական այլ պայմանավորվածությունների պահպանման ու հարգելուն:

2. Սույն Յոթերորդում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես միջազգային պայմանագրերում, համաձայնագրերում և այլ կառուցողական պայմանավորվածություններում պարունակվող բնիկ ժողովուրդների իրավունքները նվազեցնող կամ բացառող:

Յոթերորդ 38

Պետությունները բնիկ ժողովուրդների հետ խորհրդակցելով և համագործակցելով գործնական միջոցներ են ձեռնարկում, այդ թվում նաև օրենսդրական միջոցներ, սույն Յոթերորդի նպատակներին հասնելու համար:

Յոթերորդ 39

Բնիկ ժողովուրդները իրավունք ունեն հասու լինել պետությունների կողմից և միջազգային համագործակցությունների միջոցով ֆինանսական և տեխնիկական օգնությանը սույն Յոթերորդում պարունակվող իրավունքները իրականացնելու նպատակով:

Յոթերորդ 40

Բնիկ ժողովուրդները կարգավորման արդար ընթացակարգերի շրջանակներում պետությունների կամ այլ կողմերի հետ կոնֆլիկտների կամ վեճերի հասու լինել և արագ լուծման իրավունք ունեն, ինչպես նաև նրանց անհատական կամ կոլեկտիվ իրավունքների ցանկացած խախտման դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների: Ենթադրվում է որոշումներում պատշաճ ձևով

հաշվի են առնվում բնիկ ժողովուրդների սովորույթները, ավանդույթները, նորմերն ու իրավական համակարգերը և մարդու միջազգային իրավունքները:

Յոթերորդ 41

Միավորված Ազգերի Կազմակերպության համակարգի մարմինները և մասնագիտացված հաստատությունները և այլ միջկառավարական կազմակերպությունները նպաստում են սույն Յոթերորդի լիակատար իրականացմանը, մասնավորապես, համագործակցության հաստատման միջոցով ֆինանսական և տեխնիկական օգնություն ցույց տալու նպատակով: Պետք է որոշվեն բնիկ ժողովուրդների մասնակցության ապահովման միջոցները և ուղիները իրենց առնչվող հարցերի լուծմանը:

Յոթերորդ 42

Միավորված Ազգերի Կազմակերպությունը, նրա մարմինները, ներառյալ Բնիկ ժողովուրդների հարցերով մշտական ֆորումը, և մասնագիտացված հաստատությունները, այդ թվում նաև երկրների մակարդակով, և պետությունները նպաստում են սույն Յոթերորդի դրույթների պահպանմանը և լիակատար իրականացմանը և ընդունում են հետագա միջոցառումները սույն Յոթերորդի արդյունավետ իրականացման համար:

Յոթերորդ 43

Սույն Յոթերորդով ճանաչված իրավունքները իրենցից ներկայացնում են այն նվազագույն չափանիշները աշխարհի բնիկ ժողովուրդների ապրելու, արժանապատվությունը հարգելու և բարեկեցության համար:

Յոթերորդ 44

Սույն Յոթերորդով ճանաչված բոլոր իրավունքներն ու ազատությունները հավասար չափով երաշխավորվում են բնիկ ժողովուրդներին պատկանող տղամարդկանց և կանանց համար:

Յոթերորդ 45

Սույն Յոթերորդում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես բնիկ ժողովուրդների տվյալ պահին կամ հետագայում ձեռք բերվելիք իրավունքները նվազեցնող կամ դադարեցնող:

Յոդված 46

1. Սույն Յոդվածը ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, ժողովրդի, անձանց խմբի կամ անհատ անձի իրավունք՝ ցանկացած գործունեությանը զբաղվելու կամ ցանկացած գործողություն կատարելու Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության խախտմանը կամ դիտարկվել որպես հաստատող կամ խրախուսող ցանկացած գործողություն, որոնք կհանգեցնեն սուվերեն և անկախ պետությունների տարածքային ամբողջականության և քաղաքական միասնության մասնատմանը կամ մասնակի կամ լրիվ խաթարմանը:

2. Սույն Յոդվածը հայտարարված իրավունքների իրականացման ժամանակ հարգվում են բոլորի մարդու իրավունքները և հիմնական ազատությունները: Սույն Յոդվածը շարադրված իրավունքների իրականացման վրա տարածվում են միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք սահմանվում են օրենքով և մարդու իրավունքների ոլորտում միջազգային պարտավորություններին համապատասխան: Նման ցանկացած սահմանափակում հանդիսանում է ոչխտրական և խիստ անհրաժեշտ բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչման և հարգման ապահովման նպատակներով և ժողովրդավարական հասարակության առավել էական ու արդարացի պահանջումների բավարարման համար:

3. Սույն Յոդվածը շարադրված դրույթները մեկնաբանվում են արդարության, ժողովրդավարության, մարդու իրավունքները հարգելու, հավասարության, ոչ խտրականության, լավ կառավարման և բարեխղճության սկզբունքներին համապատասխան:

-
- * Վերահրատարակված է տեխնիկական պատճառներով:
 [1] Տես. Գլխավոր ասամբլեայի պաշտոնական գեկույցները, վաթսուներորդ նստաշրջան. Լրացում թիվ 53 (A/61/53), մաս առաջին, գլուխ II, բաժին A.
 [2] Տես՝ 2200 A (XXI) բանաձևը, հավելված:
 [3] A/CONF.157/24(Part I), գլուխ III:
 [4] 217 A(III) բանաձև.:

Այն իրողությունը, որ ջավախահայությունն իր հայրենիքում (Ջավախքում) բնիկ ազգություն է, ապացուցման կամ լրացուցիչ քննարկման կարիք չունի. այն մի աքսիոմա է: Այս հենքի վրա՝ վերոբերյալ հռչակագիրը իր գրեթե բոլոր կետերով ամբողջովին տարածվում է ջա-

վախահայության վրա: Այս հռչակագիրն է իրավամբ հանդիսանում ջավախահայության՝ միջազգային բեմահարթակներում տարվող պայքարի դրոշակը, այն բոլոր փաստաթղթերի մեջ առանձնահատուկ է, քանի որ չի այն չափով չի վերաբերում բոլոր ժողովուրդներին, հատկապես նրանց, ովքեր գտնվում են օտար պետության կազմում: Սույն հռչակագիրը չեն կարող օգտագործել ոչ Կոստովոյի ալբանացիները, ոչ Գերմանիայի թուրքերը կամ Կրասնոդարի հայերը, ոչ էլ, առավել ևս, ջավախահայության ճակատագիրն առաջին հայացքից կիսող «Բորչալուի» (Յուսիսային Լոռու) թաթարները («ադրբեջանցիները»): Ինչքան էլ հատկապես վերջիններիս հետ համընկնեն ջավախահայության շահերը, հարկ է ընդգծել, որ դրանք քաղաքական են և չեն առնչվում շատ իրողությունների, այդ թվում՝ ջավախահայության բնիկ լինելու և, այդպիսով, Ջավախքը հայոց պատմական հայրենիքը հանդիսանալու սրբազան ճշմարտության հետ: Այսպիսով՝ **«Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության Հռչակագիրը»** ջավախահայության սրբազան իրավունքների մասին՝ իրավականներեն ձևակերպված և միջազգային իրավունքով ամրագրված եզակի փաստաթղթերից է: Հարկ չհամարելով մեկնաբանել վերոբերյալ հռչակագրի առանձին դրույթներ, նշենք, որ այն ամբողջովին անտեսված է Վրաստանի կողմից, իսկ հայկական շրջանակների՝ սույն հռչակագրի մասին իրազեկվածության պակասն էլ ավելի է ազատել Վրաստանի ձեռքերը:

Այնուամենայնիվ, ինչպես Եվրոպայի Խորհրդի պարագայում, այնպես էլ ՄԱԿ-ի, Վրաստանի և մի շարք այլ շրջանակների կողմից ջավախահայությունը դիտարկվելով որպես «ազգային ազգափոքրամասնություն», ստիպված ենք քննել նաև այն փաստաթղթերը, որոնցով ՄԱԿ-ը երաշխավորում է ինչպես մարդու, այնպես էլ՝ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Իհարկե, դրանցից առաջինը 1948թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է» (Universal Declaration of Human Rights)²³.

23 Մանրակրկիտ ուսումնասիրություններից ու համարյա յուրաքանչյուր բառի ու խոսքի համար 1400 անգամ քվեարկություն անցկացնելուց հետո Գլխավոր ասամբլեան ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը Փարիզի մոտակառույց Պալե Դը Շալոյի շենքում: Հռչակագիրն առ այսօր մնում է XX դարի մարդու իրավունքների «իրավունքի» որպես գիտության, առաջին սյունը և մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր շարժման անկյունաքարը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր²⁴
(10 դեկտեմբերի, 1948թ.)

ՆԱԽԱԲԱՆ

Քանզի մարդկության ընտանիքի բոլոր անդամներին հատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհի ազատության, արդարության և խաղաղության հիմքն է,

քանզի մարդու իրավունքների նկատմամբ քամահրանքն ու արհամարհանքը հանգեցրել են մարդկության խիղճը վրոդվող բարբարոսական գործողությունների, և քանի որ իբրև մարդկության վեհ նպատակ է հռչակված այնպիսի աշխարհի ստեղծումը, որտեղ մարդիկ կվայելեն խոսքի ու համոզմունքների ազատություն և զերծ կլինեն վախից ու կարիքից,

քանզի անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները, որպեսզի նա, որպես վերջին միջոց, հարկադրված չընդվզի բռնակալության ու ճնշման դեմ,

քանզի անրաժեշտ է նպաստել ազգերի բարեկամական հարաբերությունների զարգացմանը,

քանզի Միավորված ազգերի ժողովուրդները Կանոնադրության մեջ վերահաստատել են իրենց հավատը մարդու հիմնական իրավունքների, մարդ անհատի արժանապատվության ու արժեքի, տղամարդու ու կնոջ իրավահավասարության նկատմամբ և վճռել սոցիալական առաջադիմությանն ու կենսապայմանների բարելավմանն աջակցել առավել ազատության պայմաններում,

քանզի անդամ պետությունները պարտավորվել են, Միավորված ազգերի հետ համագործակցելով, հասնել մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքի ու դրանց պահպանման,

քանզի այս իրավունքների ու ազատությունների համընդհանուր ընթրնումը վիթխարի նշանակություն ունի այս պարտավորության լիակատար իրականացման համար.

ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ

հրապարակում է սույն

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՔՆԵՐԻ
ՀԱՍՆԴՅԱՆՈՒՐ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

որպես առաջադրանք բոլոր ժողովուրդներին ու ազգերին, որպեսզի յուրաքանչյուր անհատ և հասարակության յուրաքանչյուր մարմին, մշտապես նկատի ունենալով այս Հռչակագիրը, ձգտի ուսուցման ու կրթության միջոցով նպաստելու այս իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքին և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումներով ապահովելու դրանց համընդհանուր արդյունավետ ճանաչումն ու պահպանումը թե՛ անդամ պետությունների ժողովուրդների, և թե՛ դրանց իրավասության տակ գտնվող տարածքների ժողովուրդների կողմից:

Ֆոդված 1

Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով, և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրության ոգով:

Ֆոդված 2

Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում նշված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ անկախ որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման:

Ավելին, որևէ տարբերակում չպետք է դրվի՝ ելնելով անհատի երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, լինի դա անկախ, խնամարկյալ, ոչ ինքնավար կամ որևէ այլ սահմանափակումով պետական կազմավորում:

Ֆոդված 3

Յուրաքանչյուր ոք կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք ունի:

24 Հռչակագրի հայերեն թարգմանությունը՝ ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակի:

Յոդված 4

Ոչ ոք չպետք է մնա ստրկության կամ անազատ վիճակում. ստրկությունը և ստրկավաճառությունը՝ իրենց բոլոր տարատեսակներով, արգելվում են:

Յոդված 5

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նսենացնող վերաբերմունքի ու պատժի:

Յոդված 6

Ամեն ոք, ուր էլ որ լինի, իրավասություն կտ ճանաչվելու իրավունք ունի:

Յոդված 7

Օրենքի առաջ բոլոր մարդիկ հավասար են և, առանց որևէ խտրության, օրենքի հավասար պաշտպանության իրավունք ունեն: Բոլոր մարդիկ սույն Յոդվածով հաստատված հավասարությունը խախտող որևէ խտրականությունից, սադրանքից պաշտպանվելու հավասար իրավունք ունեն:

Յոդված 8

Յուրաքանչյուր ոք սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարվելու դեպքում այդ իրավունքները իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ կերպով վերականգնելու իրավունք ունի:

Յոդված 9

Ոչ ոք չի կարող ենթարկվել կանայական կալանքի, ձերբակալման կամ արտաքսման:

Յոդված 10

Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիման վրա իրավունք ունի պահանջելու, որ իր գործը հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից:

Յոդված 11

1. Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվել, քանի դեռ իր մեղքը օրինական կարգով չի հաստատվել հրապարակային դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները:

2. Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղադրվել որևէ արարք կատարելու կամ անգործության համար, որը կատարելու պահին ազգային օրենքներով կամ միջազգային իրավունքով հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև ծանր պատիժ տրվել, քան այն, որը կարող էր սահմանվել հանցանքը կատարելու ժամանակ:

Յոդված 12

Ոչ ոք չպետք է իր անձնական ու ընտանեկան կյանքի, տան կամ նամակագրության նկատմամբ կանայական միջամտության ենթարկվի, ոչ էլ որևէ ոտնձգության՝ պատվի ու հեղինակության նկատմամբ: Յուրաքանչյուր ոք նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք ունի:

Յոդված 13

1. Յուրաքանչյուր ոք ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և ցանկացած պետության սահմաններում բնակավայր ընտրելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը, և վերադառնալու իր երկիրը:

Յոդված 14

1. Յուրաքանչյուր ոք հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունք ունի:

2. Այդ իրավունքը չի կարող կիրառվել այնպիսի ոչ քաղաքական հանցագործությունների կամ արարքների համար հարուցված հետապնդումների դեպքում, որոնք հակասում են Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Յոդված 15

1. Յուրաքանչյուր ոք քաղաքացիության իրավունք ունի:

2. Ոչ ոք չի կարող կանայականորեն զրկվել իր քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից:

Յոդված 16

1. Չափահաս տղամարդիկ և կանայք, առանց որևէ ցեղային, ազգային կամ կրոնական սահմանափակման, ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն։ Նրանք հավասար իրավունքներ ունեն ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության ժամանակ։

2. Ամուսնությունը կարող է կայանալ միայն ամուսնացող կողմերի լիարժեք ու ազատ համաձայնության դեպքում։

3. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնական բջիջն է և հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք ունի։

Յոդված 17

1. Յուրաքանչյուր ոք սեփականություն ունենալու իրավունք ունի՝ ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ։

2. Ոչ ոք կանայականորեն չպետք է զրկվի իր սեփականությունից։

Յոդված 18

Յուրաքանչյուր ոք մտքի, խղճի ու դավանանքի ազատության իրավունք ունի. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները մեծակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակավ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի և ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն։

Յոդված 19

Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից։

Յոդված 20

1. Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք ունի։

2. Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության։

Յոդված 21

1. Յուրաքանչյուր ոք անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք ունի։

2. Յուրաքանչյուր ոք իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք ունի։

3. Ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը. այդ կամքն իր արտահայտությունը պիտի գտնի պարբերական և անեղծ ընտրություններում, որոնք պետք է անցկացվեն համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի պայմաններում, գաղտնի կամ քվեարկության ազատությունն ապահովող այլ հավասարաբեք ձևերի միջոցով։

Յոդված 22

Յուրաքանչյուր ոք, որպես հասարակության անդամ, սոցիալական ապահովության իրավունք ունի և ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով, յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան, օգտվում է իր արժանապատվության և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից։

Յոդված 23

1. Յուրաքանչյուր ոք աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, արդարացի ու նպաստավոր աշխատանքային պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք ունի։

2. Յուրաքանչյուր ոք, առանց որևէ խտրականության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության իրավունք ունի։

3. Յուրաքանչյուր աշխատող իր և իր ընտանիքի մարդավայել գոյությունն ապահովող արդար ու գոհացուցիչ վարձատրության իրավունք ունի, որն անրաժեշտության դեպքում պետք է լրացվի սոցիալական ապահովության այլ միջոցներով։

4. Յուրաքանչյուր ոք արհեստակցական միություններ ստեղծելու և իր շահերը պաշտպանելու համար արհեստակցական միություններին անդամակցելու իրավունք ունի։

Յոդված 24

Յուրաքանչյուր ոք հանգստի ու ժամանցի, այդ թվում՝ աշխատանքային ժամերի խելամիտ սահմանափակման և պարբերաբար վճարովի արձակուրդների իրավունք ունի։

Յոդված 25

1. Յուրաքանչյուր ոք այնպիսի կենսամակարդակի իրավունք ունի, որը պատշաճ է իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահությունը և անհրաժեշտ սոցիալական ծառայությունները, ինչպես նաև ունի ապահովության իրավունք գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ գոյության այլ միջոցների անհրաժեշտության դեպքում:

2. Մայրությունն ու մանկությունը հատուկ հոգածության և օժանդակության իրավունք ունեն: Ամուսնությունից կամ արտամուսնական կապից ծնված բոլոր երեխաները պետք է օգտվեն միևնույն սոցիալական պաշտպանությունից:

Յոդված 26

1. Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է անվճար լինի: Տարրական կրթությունը պետք է պարտադիր լինի: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններից համապատասխան, հավասարապես մատչելի բոլորի համար:

2. Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, է՛լ ավելի նպաստի Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահական գործունեությանը:

3. Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք ունեն:

Յոդված 27

1. Յուրաքանչյուր ոք հասարակության մշակութային կյանքին ազատորեն մասնակցելու, արվեստներից բավականություն ստանալու, գիտական առաջընթացին մասնակցելու և դրա բարիքներից օգտվելու իրավունք ունի:

2. Յուրաքանչյուր ոք իր հեղինակած գիտական, գրական կամ զեղարվեստական աշխատանքի բարոյական և նյութական շահերի պաշտպանության իրավունք ունի:

Յոդված 28

Յուրաքանչյուր ոք սոցիալական ու միջազգային այնպիսի կարգուկանոնի իրավունք ունի, որի առկայությամբ սույն Յոդվածներում շարադրված իրավունքներն ու ազատությունները լիովին իրագործելի են:

Յոդված 29

1. Յուրաքանչյուր ոք համայնքի առաջ պարտականություններ ունի, որտեղ և հնարավոր է նրա անհատականության ազատ ու լիարժեք զարգացումը:

2. Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պետք է ենթակա լինի միմյան այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով:

3. Այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը ոչ մի դեպքում չպետք է հակասի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին:

Յոդված 30

Սույն Յոդվածներում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես որևէ պետության, մարդկանց խմբի կամ առանձին անհատների ընծեծված իրավունք՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի արարք, որոնք նպատակաուղղված լինեն սույն Յոդվածներում շարադրված իրավունքներն ու ազատություններն ի չիք դարձնելուն:

Վերոնշյալ հոչակագիրը չնայած դաշնագրին հավասարազոր պարտադրանք չունի, արժանացել է համընդհանուր հավանության: 1948թ. մինչ օրս մարու իրավունքների հետ առնչվող բազմաթիվ պարտավորագրեր, կոնվենցիաներ և դաշնագրեր հիմնված են հոչակագրի հոդվածների վրա: Ստորև ներկայացնում ենք Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրի բոլոր 30 հոդվածների առարկայական ցանկը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 30 հոդվածների առարկայական ցանկ

Ազատ արտահայտվելու, խոսքի և մամուլի ազատություն 18, 19, 20, 21
Անապաստանություն, ապաստան և ունեցվածք 17, 22, 25, 27
Աշխատանքի և աշխատատեղի իրավունքներ 4, 13, 20, 23, 24
Առողջություն 25
Գաղտնիություն 12
Երեխայի իրավունք 1, 4, 16, 24
Զարգացում 17, 22, 25, 28
Ընտանիք 12, 16
Իրավական օրենք և հավասարություն օրենքի առաջ 6, 7, 8, 9, 10, 11, 21
Խաղաղություն 3, 12, 28
Խտրականություն 1, 2, 7
Կանանց իրավունքներ 1, 2, 4, 6, 7, 20, 21, 24
Կտտանք և ստորացուցիչ պատիժ 5, 6
Կրթություն 18, 19, 20, 26, 27, 28
Կրոնի ազատություն 2, 7, 18, 19
Մամուլի և խոսքի ազատություն 18, 19
Մշակույթ և ժառանգություն 18
Ներգաղթ 6, 13, 14
Սոցիալական ապահովություն 3, 22, 25
Ստրկություն և ստրկացում 4, 6, 24
Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներ 1, 2, 6, 7
Տնտեսական և սոցիալական իրավունք 4, 6, 8, 22, 23, 24, 25, 26, 27, 28
Փախստականներ, ազգային պատկանելություն, պետականության բացակայություն և ապաստան 2, 6, 7, 13, 14, 15
Փոքրամասնությունների իրավունքներ 2, 4, 6, 7
Քաղաքական բանտարկյալներ 5, 6, 7, 8, 9, 10, 11
Քաղաքական իրավունք, քվեարկություն և մասնակցություն 10, 20, 21
Քաղաքացիական իրավունք 2, 3, 6, 7, 9, 10, 11, 18, 19, 20, 21

Մարդու իրավունքները պարտավորեցնող իրավական փաստաթղթերի շարքում են **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (International Covenant on Civil and Political Rights)** և **Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների դաշնագիրը (International Covenant on Economic, Social and Cultural Rights)** (վերջիններս ընդունվել են 1966թ., ուժի մեջ մտել՝ 1976թ.): Վերջիններիս

շնորհիվ վերոնշյալ հռչակագիրը մեկ քայլ առաջ կատարեց, վերջիններիս դրույթները դարձան իրավականորեն պարտադիր: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հետ միասին այս երկու դաշնագրերը ներկայացնում են **մարդու իրավունքների միջազգային բիլլը**:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ²⁵
(16 դեկտեմբերի 1966թ.)**

ՆԱԽԱՐԱՆ

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները՝ հաշվի առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության եւ նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ծանաչումը աշխարհում ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից,

ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, քաղաքացիական եւ քաղաքական ազատությունից օգտվող եւ վախից ու կարիքից ձեռքազատված մարդկային ազատ անհատի հղեալը կարող է միայն իրականանալ, եթե ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, ինչպես նաեւ՝ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից,

հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ պետությունների ստանձնած պարտավորությունը՝ խրախուսելու մարդու իրավունքների եւ ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

գիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով

25 Պաշտոնական հայերեն թարգմանությունը տրամադրել է **Միջազգային իրավունքի հայկական ընկերակցությունը**:

այլ անձանց եւ այն հանրության հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը,

համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

ՄԱՍ I

Հոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստություններն ու ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից բխող որեւէ պարտավորության եւ միջազգային իրավունքին: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության սեփական միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից բոլոր պետությունները, այդ թվում եւ նրանք, ովքեր պատասխանատու են ինքնակառավարում չունեցող եւ խնամարկյալ տարածքների կառավարման համար, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսում են ինքնորոշման իրավունքի իրականացումը եւ հարգում այդ իրավունքը:

ՄԱՍ II

Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում եւ իր իրավագործության տակ գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները, եւ ապահովել դրանք առանց որեւէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրույթներից:

2. Եթե դա դեռեւս նախատեսված չէ գոյություն ունեցող օրենսդրական կամ այլ միջոցներով, սույն Դաշնագրի մասնակից յուրա-

քանչյուր պետություն պարտավորվում է իր սահմանադրական ընթացակարգերին եւ սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել այնպիսի օրենքներ կամ այլ միջոցներ ընդունելու համար, որոնք կարող են անհրաժեշտ լինել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

a) ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, անգամ եթե այդ խախտումը կատարած լինեն պաշտոնապես գործող անձինք,

b) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, եւ զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

c) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը՝ դրանք տրամադրելու դեպքում:

Հոդված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց ու կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

Հոդված 4

1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը եւ որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ եւ չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին եւ 2-րդ կետեր), 11, 15, 16 եւ 18-րդ հոդվածներից որեւէ շեղում կատարելու համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն Դաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, եւ այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաեւ այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

Ֆոդված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այն նշանակությամբ, թե որեւէ պետություն, խումբ կամ անձ իրավունք ունի զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որը ուղղված լինի սույն Դաշնագրով ճանաչված ցանկացած իրավունքի կամ ազատության վերացմանը կամ սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է սույն Դաշնագրով:

2. Սույն Դաշնագրի մասնակից որեւէ պետությունում չի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթօրենսդրական ակտերի կամ սովորույթների համաձայն ճանաչվող կամ գոյություն ունեցող որեւէ հիմնարար իրավունքի ոչ մի սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագրում նման իրավունք չի ճանաչվում կամ ճանաչվում է նվազ ծավալով:

ՄԱՍ III

Ֆոդված 6

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից:

2. Այն երկրներում, որոնք չեն վերացրել մահապատիժը, մահվան դատավճիռները կարող են կայացվել միայն ամենաձանր հանցագործությունների համար, հանցագործության կատարման պահին գործող օրենքին համապատասխան, որը չի հակասում սույն Դաշնագրի եւ Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա

համար պատժի մասին կոնվենցիայի դրույթներին: Այդ պատիժը կարող է իրականացվել միայն ի կատարումն իրավասու դատարանի կայացրած վերջնական դատավճռի:

3. Այն դեպքում, երբ կյանքից զրկելը ցեղասպանության հանցագործություն է, պետք է նկատի ունենալ, որ սույն Դաշնագրի մասնակից պետություններին սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս որեւէ կերպ շեղվել Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթների համաձայն ստանձնած ցանկացած պարտավորությունից:

4. Մահապատժի դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի հայցելու ներում կամ դատավճռի մեղմացում: Համաներումը, ներումը կամ դատավճռի մեղմացումը կարող են շնորհվել բոլոր դեպքերում:

5. Մահապատիժ չի նշանակվում տասնութ տարեկանից ցածր անձանց կատարած հանցագործությունների համար եւ ի կատար չի ածվում հղի կանանց նկատմամբ:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող հիմք ծառայել սույն Դաշնագրի մասնակից որեւէ պետության կողմից մահապատժի վերացումը հետաձգելու կամ թույլ չտալու համար:

Ֆոդված 7

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես, ոչ ոք չի կարող առանց իր ազատ արտահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փորձերի:

Ֆոդված 8

1. Ոչ ոք չպետք է պահվի ստրկության մեջ. ստրկությունը եւ ստրկավաճառությունը արգելվում են բոլոր դրսեւորումներով:

2. Ոչ ոք չպետք է պահվի անազատ վիճակում:

3. a) Մարդուն չի կարելի պարտադրել կատարելու ստիպողական կամ հարկադիր աշխատանք.

b) այն երկրներում, ուր հանցագործության համար որպես պատիժ կարող է նշանակվել ազատազրկում՝ զուգակցված տաժանակիր աշխատանքի հետ, 3 կետի (a) ենթակետը խոչընդոտ չի հանդիսանում իրավասու դատարանի կողմից նման պատիժ սահմանող դատավճռի հիման վրա տաժանակիր աշխատանքի իրականացմանը,

c) սույն կետի նպատակի համար «ստիպողական կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում.

(i) (b) ենթակետում չհիշատակված ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը, որպես կանոն, պետք է կատարի դատարանի օրինական կարգադրության հիման վրա կալանքի տակ գտնվող անձը կամ այդպիսի կալանքից պայմանական ազատված անձը,

(ii) ռազմական բնույթի ցանկացած ծառայություն եւ, այն երկրներում, որտեղ ճանաչվում է զինվորական ծառայությունից քաղաքական ու կրոնական շարժառիթներով հրաժարումը, զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց համար օրենքով նախատեսված ցանկացած ծառայություն,

(iii) ցանկացած ծառայություն, որը պարտադիր է բնակչության կյանքին կամ բարեկեցությանն սպառնացող արտակարգ դրության կամ աղետի դեպքում,

(iv) ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը սովորական քաղաքացիական պարտականությունների մաս է կազմում:

Ֆոդված 9

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման կամ կալանավորման: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով եւ այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:

2. Յուրաքանչյուր անձի ձերբակալման ժամանակ նրան հայտնում են ձերբակալման պատճառները եւ շտապ կարգով հաղորդում նրան ներկայացվող ամեն մի մեղադրանք:

3. Քրեական մեղադրանքով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձ շտապ կարգով հասցվում է դատավորի կամ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է դատական իշխանություն իրականացնելու եւ ունի ողջամիտ ժամկետում դատական քննության կամ ազատ արձակվելու իրավունք: Դատական քննության սպասող անձին կալանքի տակ պահելը ընդհանուր կանոն չպետք է լինի, բայց ազատ արձակվելը կարող է կախման մեջ դրվել դատարան ներկայանալու, ցանկացած փուլում դատական քննության եւ, անհրաժեշտության դեպքում, դատավճիռն ի կատար ածելու համար ներկայանալու երաշխիքներ տալուց:

4. Ձերբակալման կամ կալանքի տակ պահվելու հետեւանքով իր ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք ունի դատարանում իր գործի քննության իրավունք, որպեսզի դատարանն անհապաղ կարողանա որոշել կալանավորման օրինականությունը եւ կարգադրել նրան ազատ արձակելու, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման կամ կալանավորման զոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման:

Ֆոդված 10

1. Ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի եւ մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք:

2. a) Այն դեպքերում, երբ չկան բացառիկ հանգամանքներ, մեղադրյալները տեղավորվում են դատապարտյալներից առանձին, եւ նրանց առանձին ռեժիմը համապատասխանում է չդատապարտված անձի կարգավիճակին,

b) անչափահաս մեղադրյալներն առանձնացվում են չափահասներից եւ հնարավորինս կարճ ժամկետում հասցվում դատարան՝ որոշում կայացնելու համար:

3. Պատժի համակարգով բանտարկյալների համար նախատեսվում է այնպիսի ռեժիմ, որի էական նպատակը նրանց բարեփոխումն է եւ սոցիալական վերականգնումը: Անչափահաս օրինախախտներն առանձնացվում են չափահասներից, եւ նրանց ռեժիմը համապատասխանում է իրենց տարիքին ու իրավական կարգավիճակին:

Ֆոդված 11

Ոչ ոք չի կարող ազատագրվել միայն այն հիմքով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորություն:

Ֆոդված 12

1. Որեւէ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու իրավունք եւ բնակության վայր ընտրելու ազատություն:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած, ներառյալ իր սեփական երկրից, մեկնելու իրավունք:

3. Վերը նշված իրավունքները չեն կարող ենթարկվել որեւէ սահմանափակման, բացի օրենքով նախատեսված այն սահմանափակումներից, որոնք անհրաժեշտ են պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության կամ էլ այլոց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար, եւ համատեղելի են սույն Դաշնագրով ճանաչվող այլ իրավունքների հետ:

4. Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել իր սեփական երկիրը մուտք գործելու իրավունքից:

Յոդված 13

Սույն Դաշնագրի մասնակից որեւէ պետության տարածքում օրինականորեն գտնվող օտարերկրացին կարող է արտաքսվել միայն ի կատարումն օրենքին համապատասխան կայացված որոշման եւ, եթե պետական անվտանգության հրամայական նկատառումները չեն պահանջում այլ բան, ունի իր արտաքսման դեմ փաստարկներ ներկայացնելու, իրավասու իշխանության կամ իրավասու իշխանության նշանակած անձի կամ անձանց կողմից իր գործը վերանայելու իրավունք, եւ այդ նպատակով այդ իշխանության, անձի կամ անձանց առջեւ ներկայացվելու իրավունք:

Յոդված 14

1. Բոլոր անձինք հավասար են դատարանների եւ տրիբունալների առջեւ: Յուրաքանչյուր ոք իր դեմ ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության կամ որեւէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքների ու պարտականությունների որոշման ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակային քննության իրավունք: Մամուլին ու հասարակայնությանը կարող է արգելվել մասնակցելու ողջ դատաքննությանը կամ նրա որեւէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը, կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտի արդարադատության շահերը. նման արգելումը կատարվում է այն չափով, որչափ, դատարանի կարծիքով, այն խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ դատական ցանկացած որոշում պետք է լինի հրապարակային, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան կամ գործը վերաբերում է անուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը:

2. Քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական

մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետեւյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա.

a) շտապ կարգով եւ մանրամասն, այն լեզվով, որը նա հասկանում է, տեղեկացվել իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի ու հիմքի մասին,

b) բավարար ժամանակ ու հնարավորություններ ունենալ իր պաշտպանությունը նախապատրաստելու եւ իր ընտրած պաշտպանի հետ հաղորդակցվելու համար,

c) դատվել առանց չարդարացված հապաղման,

d) դատվել իր ներկայությամբ եւ իրեն պաշտպանել անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով. պաշտպան չունենալու դեպքում տեղեկացվել այդ իրավունքի մասին եւ, ցանկացած դեպքում, էլնելով արդարադատության շահերից, ունենալ իր համար նշանակված պաշտպան՝ նրա համար անվճար բոլոր այն դեպքերում, եթե նա բավարար միջոցներ չունի դրա դիմաց վճարելու,

e) հարցաքննել կամ հարցաքննել տալ իր դեմ ցուցմունք տվող վկաներին, եւ ապահովել իր օգտին ցուցմունք տվող վկաների ներկայանալը եւ հարցաքննումը՝ նույն պայմաններով, ինչով եւ իր դեմ ցուցմունք տվող վկաներինը,

f) օգտվել թարգմանչի անվճար օգնությունից, եթե նա չի հասկանում դատարանում օգտագործվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով,

g) պարտադրված չլինել իր դեմ ցուցմունքներ տալու կամ իրեն մեղավոր ճանաչելու:

4. Անչափահասների դեպքում դատավարությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի հաշվի առնվի նրանց տարիքը եւ նպաստի նրանց վերականգնմանը:

5. Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը եւ դատավճիռը վերանայվեն վերադաս դատական ատյանի կողմից, օրենքի համաձայն:

6. Եթե որեւէ անձ վերջնական որոշմամբ դատապարտվել է քրեական հանցագործության համար եւ եթե նրա նկատմամբ կայացված դատավճիռը հետագայում բրեկանվել է կամ նրան ներում է շնորհվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որեւէ փաստ անվիճելիորեն ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետեւանքով պատիժ կրած անձն օրենքի համաձայն ստանում է փոխհատուցում, եթե չապացուցվի, որ հիշյալ անհայտ հանգամանքը ժամանակին չի բացահայտվել բացառապես կամ մասամբ նրա մեղքով:

7. Ոչ որ չպետք է կրկին անգամ դատվի կամ պատժվի այն հանցագործության համար, որի համար նա արդեն վերջնականապես դատապարտվել է կամ արդարացվել՝ յուրաքանչյուր երկրի օրենքին եւ քրեական դատավարությանը համապատասխան:

Յոդված 15

1. Ոչ որ չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, եթե գործողության կամ անգործության պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն դա հանցագործություն չի համարվել: Նմանապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն եւ պատժելուն ցանկացած գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել է քրեական հանցագործություն:

Յոդված 16

Յուրաքանչյուր ոք, որտեղ էլ գտնվելիս լինի, ունի իր իրավասուբյեկտության ճանաչման իրավունք:

Յոդված 17

1. Արգելվում է կանայական կամ անօրինական միջամտությունն անձի անձնական, ընտանեկան կյանքին, բնակարանի կամ նամակագրության անձեռնմխելիությանը, ինչպես նաեւ անօրինական ոտնձգությունը նրա պատվի ու հեղինակության դեմ:

2. Յուրաքանչյուր ոք ունի նման միջամտությունից կամ ոտնձգություններից օրենքով պաշտպանվածության իրավունք:

Յոդված 18

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը եւ միանձնյա կամ այլոց, հետ համատեղ եւ հրապարակավ կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի եւ քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Ոչ որ չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:

3. Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված եւ հասարակական անվտանգության, կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես եւ այլ անձանց հիմնարար իրավունքների ու ազատությունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների եւ, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

Յոդված 19

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առանց միջամտության սեփական կարծիքներ ունենալ:

2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն եւ գաղափարներ փնտրելու, ստանալու եւ տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր թե տպագիր, լինի արվեստի, թե իր ընտրած ցանկացած այլ միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների եւ պատասխանատվության: Ուստի, այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է միայն սահմանվեն օրենքով եւ լինեն անհրաժեշտ.

a) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

b) պետական անվտանգության, կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

Յոդված 20

1. Պատերազմի ցանկացած քարոզչություն արգելվում է օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով:

Ֆոդված 21

Ճանաչվում է խաղաղ հավաքների իրավունքը: Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան եւ որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության:

Ֆոդված 22

1. Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու ազատության իրավունք, ներառյալ՝ արհմիություններ ստեղծելու եւ իր շահերի պաշտպանության նպատակով դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այդ իրավունքի իրականացումը ենթակա չէ ոչ մի սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով եւ որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական կամ հանրային անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանության կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության: Սույն հոդվածը չի խոչընդոտում այդ իրավունքի իրականացման օրինական սահմանափակումների կիրառումն այն անձանց համար, ովքեր մտնում են զինված ուժերի եւ ոստիկանության կազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս միավորումներ կազմելու ազատության եւ կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ Աշխատանքի միջազգային կազմակերպության 1948 թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վնաս օրենսդրական ակտեր, կամ օրենքը կիրառելու ի վնաս այդ երաշխիքներին:

Ֆոդված 23

1. Ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար խմբային միավորն է եւ ունի հասարակության ու պետության կողմից պաշտպանվելու իրավունք:

2. Ամուսնության տարիքի հասած տղամարդկանց եւ կանանց համար ճանաչվում է ամուսնանալու եւ ընտանիք կազմելու իրավունքը:

3. Ոչ մի ամուսնություն չի կարող կայանալ առանց ամուսնացողների ազատ ու լիակատար համաձայնության:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ձեռնարկում են պատշաճ միջոցներ՝ ապահովելու ամուսինների իրավունքների եւ պարտականությունների հավասարությունը ամուսնության պահին, ամուսնության ընթացքում եւ ամուսնալուծության դեպքում: Ամուսնալուծության դեպքում պետք է նախատեսվի երեխայի անհրաժեշտ պաշտպանություն:

Ֆոդված 24

1. Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ ծննդի հատկանիշով որեւէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության եւ պետության կողմից պաշտպանվածության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես անչափահասի:

2. Յուրաքանչյուր երեխա ծնվելուց անմիջապես հետո պետք է գրանցվի եւ ունենա անուն:

3. Յուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

Ֆոդված 25

Յուրաքանչյուր քաղաքացի, առանց 2-րդ հոդվածում հիշատակվող որեւէ խտրականության ու անհիմն սահմանափակումների, իրավունք եւ հնարավորություն ունի.

a) մասնակցելու պետական գործերը վարելուն՝ ինչպես անմիջականորեն, այնպես էլ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով,

b) ընտրելու եւ ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, եւ երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը,

c) իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով մտնելու պետական ծառայության:

Ֆոդված 26

Բոլորը հավասար են օրենքի առջեւ եւ, առանց որեւէ խտրականության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած

խտրականությունն եւ բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանությունն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծննդը կամ այլ կարգավիճակը:

Ֆոդված 27

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակութային օգտվելու, իրենց կրոնը դավանելու եւ դրա ծեսերը կատարելու, ինչպես նաեւ մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը:

ՄԱՍ IV

Ֆոդված 28

1. Ստեղծվում է Մարդու իրավունքների կոմիտե (այսուհետ սույն Դաշնագրում անվանվում է Կոմիտե): Այն կազմված է տասնութ անդամներից եւ կատարում է ստորեւ նախատեսվող գործառույթները:

2. Կոմիտեի կազմի մեջ մտնում են այն անձինք, ովքեր սույն Դաշնագրի մասնակից պետությունների քաղաքացիներ են եւ օժտված են բարոյական բարձր հատկանիշներով ու մարդու իրավունքների բնագավառում ունեն ճանաչված իրազեկություն, ընդ որում նկատի է առնվում իրավաբանական փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության օգտակարությունը:

3. Կոմիտեի անդամներն ընտրվում եւ աշխատում են անձնապես:

Ֆոդված 29

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ այն անձանց ցուցակից, ովքեր բավարարում են 28-րդ հոդվածում նախատեսված պահանջները եւ այդ նպատակով առաջադրվել են սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից:

2. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջադրել երկու թեկնածուներից ոչ ավելի: Այդ անձինք պետք է լինեն իրենց առաջադրող պետության քաղաքացիներ:

3. Յուրաքանչյուր անձ ունի կրկնակի առաջադրման իրավունք:

Ֆոդված 30

1. Նախնական ընտրություններն անցկացվում են սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս անց:

2. Կոմիտեի յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն չորս ամիս առաջ, բացի 34-րդ հոդվածին համապատասխան թափուր հայտարարված տեղերի համալրման ընտրություններից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գրավոր հրավերով դիմում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ երեք ամսվա ընթացքում ներկայացնելու Կոմիտեի անդամության թեկնածուներ:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն կազմում է նման ձեւով առաջադրված բոլոր անձանց այբբենական ցուցակ՝ նշելով սույն Դաշնագրի մասնակից այն պետությունները, որոնք առաջադրել են այդ անձանց, եւ հիշյալ ցուցակը ներկայացնում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին ոչ ուշ, քան յուրաքանչյուր ընտրության անցկացման օրվանից մեկ ամիս առաջ:

4. Կոմիտեի անդամների ընտրությունն անցկացվում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների միատում, որը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում: Այդ միատում, որի համար քվորում է կազմում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի կազմում ընտրված են համարվում այն անձինք, որոնց թեկնածուներն ստանում են առավելագույն թվով ձայներ եւ մասնակից պետությունների՝ ներկա գտնվող ու քվեարկող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

Ֆոդված 31

1. Կոմիտեի կազմի մեջ չի կարող ընդգրկվել նույն պետության մեկից ավելի քաղաքացի:

2. Կոմիտեի ընտրությունների ժամանակ հաշվի է առնվում անդամության աշխարհագրական հավասար բաշխումը եւ քաղաքակրթության տարբեր ձեւերի ու իրավական հիմնական համակարգերի ներկայացուցչությունը:

Ֆոդված 32

1. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորսամյա ժամկետով: Նրանք իրավունք ունեն վերընտրվելու իրենց թեկնածուներին:

կրկնակի առաջադրման դեպքում: Սակայն, առաջին ընտրություններում ընտրված անդամներից իննի լիազորության ժամկետն ավարտվում է երկամյա ժամանակահատվածի վերջում. առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշվում են վիճակահանությամբ՝ 30-րդ հոդվածի 4-րդ կետում հիշատակված նիստի նախագահողի կողմից:

2. Լիազորությունների լրանալուց հետո ընտրություններն անց են կացվում սույն Դաշնագրի սույն մասի նախորդ հոդվածներին համապատասխան:

Հոդված 33

1. Եթե Կոմիտեի որեւէ անդամի լիազորությունները դադարեցվել են մյուս անդամների միաձայն կարծիքով, ժամանակավոր բնույթի բացակայությունից բացի, որեւէ այլ պատճառով, Կոմիտեի նախագահը տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այնուհետեւ այդ անդամի տեղը հայտարարում է թափուր:

2. Կոմիտեի որեւէ անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում նախագահն անհապաղ տեղյակ է պահում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ տեղը հայտարարում է թափուր մահվան կամ այն օրվանից, երբ պաշտոնաթողությունն ուժի մեջ է մտնում:

Հոդված 34

1. Եթե, 33-րդ հոդվածին համապատասխան տեղը թափուր է հայտարարվում եւ եթե փոխարինման ենթակա անդամի լիազորությունների ժամկետը չի լրանում տեղը թափուր հայտարարելուց հետո վեց ամսվա ընթացքում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը տեղյակ է պահում սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետությանը, որը կարող է երկու ամսվա ընթացքում, 29-րդ հոդվածին համապատասխան, թեկնածություն ներկայացնել այդ թափուր տեղի համար:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը կազմում է նման ձեւով առաջադրված անձանց այբբենական ցուցակ եւ ներկայացնում սույն Դաշնագրի մասնակից պետություններին: Թափուր տեղի համար ընտրություններն այնուհետեւ անցկացվում են սույն Դաշնագրի սույն մասի համապատասխան դրույթների համաձայն:

3. Կոմիտեի այն անդամը, որն ընտրվում է 33-րդ հոդվածին հա-

մապատասխան հայտարարված թափուր տեղի համար, պաշտոնն զբաղեցնում է այն անդամի լիազորությունների ժամկետի մնացյալ մասի ընթացքում, որի տեղը Կոմիտեում ազատվել է հիշյալ հոդվածի դրույթների համաձայն:

Հոդված 35

Կոմիտեի անդամներն ստանում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվող վարձատրություն՝ Միավորված ազգերի կազմակերպության միջոցներից, Գլխավոր ասամբլեայի կողմից սահմանվող կարգով ու պայմաններով՝ հաշվի առնելով Կոմիտեի պարտականությունների կարեւորությունը:

Հոդված 36

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը անհրաժեշտ անձնակազմ ու նյութական միջոցներ է տրամադրում Կոմիտեի կողմից իր գործառույթներն արդյունավետ, սույն Դաշնագրին համապատասխան իրականացնելու համար:

Հոդված 37

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Կոմիտեի առաջին նիստը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում:

2. Իր առաջին նիստից հետո Կոմիտեն հավաքվում է սեփական Ընթացակարգի կանոններով նախատեսված ժամանակ:

3. Կոմիտեն, սովորաբար, հավաքվում է Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում կամ Միավորված ազգերի կազմակերպության՝ ժնեւի գրասենյակում:

Հոդված 38

Կոմիտեի յուրաքանչյուր անդամ, նախքան իր պարտականություններն ստանձնելը, Կոմիտեի դռնբաց նիստում հանդիսավոր հայտարարություն է անում իր գործառույթներն անաչառ ու բարեխիղճ կատարելու վերաբերյալ:

Հոդված 39

1. Կոմիտեն իր պաշտոնատար անձանց ընտրում է երկամյա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:

2. Կոմիտեն ընդունում է իր Ընթացակարգի կանոնները, սակայն դրանք պետք է, մասնավորապես, նախատեսեն, որ.

- a) քվորում կազմում են Կոմիտեի տասներկու անդամները,
- b) Կոմիտեի որոշումներն ընդունվում են ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Յոթված 40

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են զեկույցներ ներկայացնել սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած միջոցների եւ այդ իրավունքների օգտագործման ասպարեզում ձեռք բերած առաջընթացի մասին:

a) համապատասխան մասնակից պետության համար սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընացքում,

b) դրանից հետո՝ բոլոր այն դեպքերում, երբ դա կպահանջի Կոմիտեն:

2. Բոլոր զեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանք ուղարկում է Կոմիտեին՝ քննության առնելու համար: Ջեկույցներում նշվում են, եթե կան, այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրի կենսագործման վրա:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը, Կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, կարող է շահագրգիռ մասնագիտացված հաստատություններին ուղարկել զեկույցների այն հատվածների պատճենները, որոնք կարող են վերաբերել նրանց իրավասության ոլորտին:

4. Կոմիտեն ուսումնասիրում է սույն Դաշնագրի մասնակից պետությունների ներկայացրած զեկույցները: Նա մասնակից պետություններին է ուղարկում իր զեկույցները եւ ընդհանուր կարգի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կհամարի: Կոմիտեն կարող է նաեւ այդ դիտողությունները, սույն Դաշնագրի մասնակից պետություններից ստացված զեկույցների պատճենների հետ միասին, ուղարկել Տնտեսական եւ սոցիալական խորհրդին:

5. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են Կոմիտեին ներկայացնել իրենց նկատառումները բոլոր այն դիտողությունների վերաբերյալ, որոնք կարող են արվել սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

Յոթված 41

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունը, սույն հոդվածին համապատասխան, կարող է ցանկացած ժամանակ հայտարարել,

թե ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ստանալու եւ քննարկելու հաղորդումներ այն մասին, որ որեւէ մասնակից պետություն հաստատում է, թե մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Դաշնագրով նախատեսված իր պարտավորությունները: Սույն հոդվածով նախատեսվող հաղորդումները կարող են ընդունվել եւ քննարկվել միայն այն դեպքում, եթե դրանք ներկայացրել է այն մասնակից պետությունը, որը հայտարարություն է արել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի այդ իրավասությունը: Կոմիտեն չի ընդունում ոչ մի հաղորդում, եթե այն պատկանում է նման հայտարարություն չարած մասնակից պետությանը: Սույն հոդվածին համապատասխան ստացված հաղորդումները քննության են առնվում հետեւյալ ընթացակարգով:

a) եթե սույն Դաշնագրի մասնակից որեւէ պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կենսագործում սույն Դաշնագրի դրույթները, ապա նա կարող է գրավոր հաղորդմամբ այդ հարցի մասին տեղեկացնել հիշյալ մասնակից պետությանը: Այդ հաղորդումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հաղորդումն ստացած պետությունը նման հաղորդում հղած պետությանը ներկայացնում է հիշյալ հարցը պարզաբանող գրավոր բացատրություն կամ ցանկացած այլ հայտարարություն, որը պետք է բովանդակի, որքանով դա հնարավոր ու նպատակահարմար է, ներպետական այն ընթացակարգերն ու պաշտպանության միջոցները, որոնք կիրառվել են, կիրառվելու են կամ կարող են կիրառվել տվյալ հարցի առնչությամբ,

b) եթե ստացող պետության կողմից նախնական հաղորդումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում հարցը չի լուծվում ի բավարարումն երկու շահագրգիռ մասնակից պետությունների, այդ պետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի հարցը հանձնել Կոմիտեին՝ այդ մասին տեղեկացնելով Կոմիտեին եւ մյուս պետությանը,

c) Կոմիտեն իրեն հանձնված հարցը քննության է առնում միայն այն բանից հետո, երբ հավաստիանում է, որ տվյալ դեպքում միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան օգտագործվել եւ սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր մատչելի միջոցները: Տվյալ կանոնը չի գործում, երբ այդ միջոցների կիրառումը չարդարացված կերպով ձգձգվում է,

d) սույն հոդվածում նախատեսվող հաղորդումները քննության առնելիս Կոմիտեն անցկացնում է դեմփակ միստեր,

ե) Կոմիտեն, (c) ենթակետի դրույթները պահպանելով, իր բարի ծառայություններն է մատուցում շահագրգիռ մասնակից պետություններին՝ սույն Դաշնագրով ճանաչվող մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի հիման վրա հարցը բարեկամաբար լուծելու նպատակով,

բ) իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցով Կոմիտեն կարող է դիմել (b) ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններին՝ գործին վերաբերող ցանկացած տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով,

գ) (b) ենթակետում հիշատակված շահագրգիռ մասնակից պետություններն իրավունք ունեն ներկա գտնվել Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ եւ առաջարկություններ անել բանավոր եւ (կամ) գրավոր,

դ) Կոմիտեն (b) ենթակետին համապատասխան ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում ներկայացնում է զեկույց՝

(i) եթե (e) ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում է ձեռք բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերն ու ձեռք բերված կարգավորումը հակիրճ շարադրելով,

(ii) եթե (e) ենթակետի դրույթների շրջանակներում կարգավորում ձեռք չի բերվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի հակիրճ շարադրանքով. շահագրգիռ մասնակից պետությունների գրավոր միջնորդությունները եւ բանավոր միջնորդությունների գրառումը կցվում են զեկույցին: Յուրաքանչյուր հարցի կապակցությամբ զեկույցն ուղարկվում է շահագրգիռ մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ սույն Դաշնագրի տասը մասնակից պետություններ հանդես են գալիս հայտարարությամբ սույն հոդվածի առաջին կետին համապատասխան: Այդ հայտարարությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մնացած մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Նման գործողությունը չի խոչընդոտում ցանկացած հարցի քննարկմանը, որը, սույն հոդվածին համապատասխան, արդեն ուղարկված հաղորդման առարկա է. այն բանից հետո, երբ Գլխավոր քարտուղարը ծանուցում է ստացել հայտարարությունը հետ վերցնելու մասին, ցանկացած մասնակից պետության հետագա ոչ մի

հաղորդում չի ընդունվում եթե շահագրգիռ մասնակից պետությունը հանդես չի եկել նոր հայտարարությամբ:

Յոդված 42

1. a) Եթե 41-րդ հոդվածին համապատասխան Կոմիտեին հանձնված որեւէ հարց չի լուծվել ի բավարարումն շահագրգիռ մասնակից պետությունների, Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետությունների նախնական համաձայնությամբ նշանակել հատուկ հաշտարար հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի բարի ծառայությունները շահագրգիռ մասնակից պետություններին են մատուցվում սույն Դաշնագրի դրույթների պահպանման հիման վրա, սվյալ հարցի փոխհամաձայնեցված լուծման նպատակով:

b) Հանձնաժողովը կազմվում է շահագրգիռ մասնակից պետությունների համար ընդունելի հինգ անդամից: Եթե շահագրգիռ մասնակից պետությունները երեք ամսվա ընթացքում համաձայնության չեն գալիս Հանձնաժողովի ամբողջ կազմի կամ նրա մի մասի վերաբերյալ, ապա Հանձնաժողովի՝ նշանակման հարցում ընդհանուր համաձայնության չարժանացած, անդամներն ընտրվում են Կոմիտեի կազմից, գաղտնի քվեարկությամբ, Կոմիտեի ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն շահագրգիռ մասնակից պետությունների կամ սույն Դաշնագրի ոչ մասնակից պետության կամ այն մասնակից պետության քաղաքացիներ, որը հանդես չի եկել 41-րդ հոդվածին համապատասխան հայտարարությամբ:

3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին եւ ընդունում իր ընթացակարգի կանոնները:

4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար գումարվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում կամ Միավորված ազգերի կազմակերպության ժնեի գրասենյակում: Սակայն Հանձնաժողովն, իր որոշմամբ, խորհրդակցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի եւ շահագրգիռ մասնակից պետությունների հետ, դրանք կարող է գումարել այլ հարմար վայրերում:

5. Քարտուղարությունը 36-րդ հոդվածին համապատասխան սպասարկում է նաեւ սույն հոդվածի հիման վրա նշանակված հանձնաժողովներին:

6. Կոմիտեի ստացած եւ ուսումնասիրած տեղեկատվությունը հանձնվում է հանձնաժողովի տնօրինությանը, եւ վերջինս շահագրգիռ մասնակից պետություններին կարող է դիմել գործին առնչվող ցանկացած այլ տեղեկատվություն ներկայացնելու խնդրանքով:

7. Հանձնաժողովի կողմից հարցի ամբողջական քննարկումից հետո, սակայն, համենայն դեպս ոչ ուշ, քան տվյալ հարցը հանձնաժողովին հանձնելուց 12 ամիս անց, այն Կոմիտեի նախագահին ներկայացնում է զեկույց՝ շահագրգիռ մասնակից պետություններին ուղարկելու համար՝

a) եթե հանձնաժողովը չի կարող տվյալ հարցի քննարկումն ավարտել տասներկու ամսվա ընթացքում, ապա այն իր զեկույցը սահմանափակում է իր կողմից տվյալ հարցի քննարկման վիճակի հակիրճ շարադրանքով,

b) եթե տվյալ հարցի փոխհամաձայնեցված կարգավորում ձեռք է բերվում սույն Դաշնագրով ծանաչվող մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի հիման վրա, Հանձնաժողովն իր զեկույցը սահմանափակում է փաստերի ու ձեռք բերված կարգավորման հակիրճ շարադրանքով,

c) եթե (b) ենթակետի դրույթների շրջանակում կարգավորում ձեռք չի բերվում, հանձնաժողովի զեկույցը պարունակում է նրա փաստացի եզրակացությունները շահագրգիռ մասնակից պետությունների վեճին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ եւ հանձնաժողովի նկատառումներն այդ հարցի փոխհամաձայնեցված կարգավորման հնարավորությունների մասին: Այդ զեկույցը պարունակում է նաեւ շահագրգիռ մասնակից պետությունների ներկայացրած գրավոր միջնորդությունները եւ բանավոր միջնորդությունների գրառումը,

d) եթե հանձնաժողովի զեկույցը ներկայացվում է (c) ենթակետի համաձայն, ապա շահագրգիռ մասնակից պետություններն այդ զեկույցն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Կոմիտեի նախագահին տեղեկացնում են այն մասին, թե իրենք համաձայն են արդյոք Հանձնաժողովի զեկույցի բովանդակությանը:

8. Սույն հոդվածի դրույթները չեն նվազեցնում Կոմիտեի՝ 41-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

9. Շահագրգիռ մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների բոլոր ծախսերը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:

10. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտու-

ղարը կարող է, անհրաժեշտության դեպքում, վճարել հանձնաժողովի անդամների ծախսերը՝ մինչեւ, սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան, դրանց հատուցումը շահագրգիռ մասնակից պետությունների կողմից:

Ֆոդված 43

Կոմիտեի եւ հատուկ հաշտարար հանձնաժողովների անդամները, որոնք կարող են նշանակվել 42-րդ հոդվածի համաձայն, օժտված են Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունների փորձագետների այն արտոնություններով, առավելություններով եւ անձեռնմխելիությամբ, որոնք նախատեսված են Միավորված ազգերի կազմակերպության Արտոնությունների եւ անձեռնմխելիության մասին Կոնվենցիայի համապատասխան բաժիններով:

Ֆոդված 44

Սույն Դաշնագրի իրականացմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց վնասելու մարդու իրավունքների ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության եւ դրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստաթղթերով ու կոնվենցիաներով սահմանված կամ դրանց համաձայն գործող ընթացակարգերին, եւ սույն Դաշնագրի մասնակից պետություններին չեն խոչընդոտում օգտագործելու վեճերի լուծման այլ ընթացակարգեր՝ իրենց միջեւ գործող ընդհանուր կամ հատուկ միջազգային համաձայնագրերի հիման վրա:

Ֆոդված 45

Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային Տնտեսական եւ սոցիալական խորհրդի միջոցով ներկայացնում է ամենամյա զեկույց իր գործունեության մասին:

ՄԱՍ V

Ֆոդված 46

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Միավորված ազգերի կազմակերպության եւ նրա մասնագիտացված հաստատությունների կանոնադրությունների այն դրույթների նշանակության նվազեցում, որոնք սահմանում են Միավորված ազգերի կազմակերպության եւ մասնագիտացված հաստատությունների

տարբեր մարմինների համապատասխան պարտականությունները այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագիրը:

Յոթերորդ 47

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես իրենց բնական հարստությունից ու ռեսուրսներից լիարժեքորեն եւ ազատորեն օգտվելու եւ դրանք օգտագործելու՝ բոլոր ժողովուրդների անկապտելի իրավունքի սահմանափակում:

ՄԱՍ VI

Յոթերորդ 48

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ նրա ցանկացած մասնագիտացված հաստատությունների անդամի, Միջազգային դատարանի Ստատուտի մասնակից ցանկացած պետության եւ սույն Դաշնագրին մասնակցելու նպատակով Միավորված

ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հրավիրած ցանկացած այլ պետության համար:

2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Դաշնագիրը միանալու համար բաց է սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:

4. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագիրն ստորագրած կամ Դաշնագրին միացած բոլոր պետություններին տեղեկացնում է յուրաքանչյուր վավերագիրը կամ միանալու վերաբերյալ փաստաթուղթն ի պահ հանձնելու մասին:

Յոթերորդ 49

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում երեսուներեքերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն Դաշնագիրը կամ միանում նրան երեսուներեքերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

Յոթերորդ 50

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որեւէ սահմանափակման կամ բացառության:

Յոթերորդ 51

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ եւ դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն, այնուհետեւ, առաջարկված ցանկացած լրացում ու փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, թե իրենք համաձայն են արդյոք հրավիրելու մասնակից պետությունների խորհրդաժողով՝ այդ առաջարկությունները քննարկելու եւ դրանց վերաբերյալ քվեարկություն անցկացնելու նպատակով: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է խորհրդաժողովի անցկացման օգտին, Գլխավոր քարտուղարը հրավիրում է այն Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Խորհրդաժողովին ներկա գտնված եւ քվեարկությանը մասնակցած մասնակից պետությունների մեծամասնության ընդունած ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում, երբ հաստատվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից եւ ընդունվում սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու-երրորդի մեծամասնությամբ իրենց սահմանադրական գործընթացների համաձայն:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները պարտադիր են դառնում այն մասնակից պետությունների համար, որոնք ընդունել են դրանք, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները եւ նրանց

կողմից նախկինում ընդունված ցանկացած լրացում ու փոփոխություն:

Յոթված 52

48-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նույն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին ծանուցում է հետևյալի մասին՝

a) 48-րդ հոդվածի համաձայն կատարված ստորագրումների, վավերացումների եւ միանալու մասին,

b) 49-րդ հոդվածի համաձայն՝ սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի եւ 51-րդ հոդվածի համաձայն կատարված ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Յոթված 53

1. Սույն Դաշնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի վավերացված պատճեններն ուղարկում է 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻՆ ԿԻՑ ԿԱՄԸՆՏԻՐ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ²⁶ (16 դեկտեմբերի 1966 թ.)

Սույն Արձանագրության մասնակից պետությունները՝ նկատի ունենալով, որ Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին Դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) հետագա նպատակների իրագործման եւ նրա դրույթների կատարման համար նպատակահարմար է Դաշնագրի IV մասի համաձայն հիմնադրված Մարդու իրավունքների կոմիտեին (այսուհետ՝ Կոմիտե) հնարավորություն ընձեռել ընդունելու եւ քննության առնելու, ինչպես նախատեսված է սույն Արձանագրությամբ, հաղորդումներ առանձին անձանցից, ովքեր հայտարարում են, թե իրենք զոհ են Դաշնագրում շարադրված որեւէ իրավունքի խախտման,

համաձայնել են ներքոհիշյալի շուրջ.

Յոթված 1

Դաշնագրի մասնակից այն պետությունը, որը դառնում է սույն Արձանագրության մասնակից, ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ ընդունելու եւ քննության առնելու առանձին անձանց՝ իր իրավազորությանը ենթակա հաղորդումներ, ովքեր հայտարարում են, թե տվյալ մասնակից պետության կողմից՝ Դաշնագրում շարադրված որեւէ իրավունքի խախտման զոհ են դարձել: Կոմիտեն չի ընդունում որեւէ հաղորդում, եթե այն վերաբերում է Դաշնագրի մասնակից պետության, որը, սակայն, մասնակից չէ սույն Արձանագրությանը:

Յոթված 2

Յոթված 1-ի դրույթներին համապատասխան, անձինք, ովքեր հայտարարում են, թե խախտվել է Դաշնագրում ամրագրված իրենց այս կամ այն իրավունքը, եւ ովքեր սպառել են իրավական պաշտպանության ներպետական բոլոր միջոցները, կարող են զրավոր հաղորդում ներկայացնել Կոմիտեի քննարկմանը:

²⁶ Պաշտոնական հայերեն թարգմանությունը տրամադրել է Միջազգային իրավունքի հայկական ընկերակցությունը:

Յոդված 3

Կոմիտեն կարող է անընդունելի համարել սույն Արձանագրության համաձայն ներկայացվող, բայց անստորագիր կամ, Կոմիտեի կարծիքով, հաղորդումներ ներկայացնելու իրավունքը չարաշահող եւ կամ Դաշնագրի դրույթներին անհամատեղելի ցանկացած հաղորդում:

Յոդված 4

1. Կոմիտեն, 3-րդ հոդվածի դրույթներին համապատասխան, սույն Արձանագրության համաձայն ներկայացվող ցանկացած հաղորդման մասին ծանուցում է սույն Արձանագրության մասնակից այն պետությանը, որը, ինչպես պնդում են, խախտում է Դաշնագրի որեւէ դրույթ:

2. Ծանուցում ստացած պետությունը վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ՝ պարզաբանելով քննության առարկա խնդիրը եւ, եթե դրանք կան, պաշտպանության այն միջոցները, որոնք կարող էին կիրառվել այդ պետության կողմից:

Յոդված 5

1. Կոմիտեն քննության է առնում սույն Արձանագրության համաձայն ստացված հաղորդումները՝ հաշվի առնելով առանձին անձանց եւ շահագրգիռ մասնակից պետության ներկայացրած ողջ գրավոր տեղեկատվությունը:

2. Կոմիտեն չի քննում անձանցից ստացված ոչ մի հաղորդում, քանի դեռ չի համոզվել, որ.

a) այդ նույն հարցը չի քննարկվում միջազգային քննության կամ կարգավորման այլ ընթացակարգի համաձայն,

b) տվյալ անձն սպառել է իրավական պաշտպանության բոլոր մատչելի ներպետական միջոցները: Այս դրույթը չի գործում, եթե նման միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:

3. Սույն Արձանագրությամբ նախատեսված հաղորդումները քննելիս Կոմիտեն զուեարում է փակ նիստեր:

4. Իր նկատառումները Կոմիտեն հայտնում է համապատասխան մասնակից պետությանը եւ անձին:

Յոդված 6

Կոմիտեն Դաշնագրի 45-րդ հոդվածով նախատեսված իր ամենամյա զեկուցման մեջ ամփոփ շարադրում է սույն Արձանագրությանը համապատասխան իրականացրած իր գործունեությունը:

Յոդված 7

Մինչեւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1960 թ. դեկտեմբերի 14-ին ընդունած Գաղութային երկրներին եւ ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի վերաբերյալ 1514 (XV) բանաձեւի նպատակների իրագործումը՝ սույն Արձանագրության դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ եւ Միավորված ազգերի կազմակերպության ու նրա մասնագիտացված հաստատությունների միջազգային այլ համաձայնագրերով ու փաստաթղթերով այդ ժողովուրդներին ընձեռված հանրագիր ներկայացնելու իրավունքը:

Յոդված 8

1. Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման Դաշնագիրը ստորագրած ցանկացած պետության կողմից:

2. Սույն Արձանագրությունը ենթակա է վավերացման Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության կողմից: Վավերագրերն ի պահ են տրվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Արձանագրությունը միանալու համար բաց է Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած ցանկացած պետության համար:

4. Միանալն ուժի մեջ մտնում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հանձնելով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրությունը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին հայտնում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ հանձնելու մասին:

Յոդված 9

1. Դաշնագրի ուժի մեջ մտնելու դեպքում սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

2. Տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Արձանագրությունը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ

միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անց:

Յոթված 10

Սույն Արձանագրության դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որեւէ սահմանափակման կամ բացառության:

Յոթված 11

1. Սույն Արձանագրության մասնակից յուրաքանչյուր պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ եւ դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Այնուհետեւ Գլխավոր քարտուղարը առաջարկված յուրաքանչյուր լրացում ու փոփոխություն փոխանցում է սույն Արձանագրության մասնակից պետություններին, խնդրելով հայտնել, համաձայն են արդյոք հրավիրելու մասնակից պետությունների խորհրդաժողով՝ այդ առաջարկությունները քննարկելու եւ քվեարկելու նպատակով: Եթե խորհրդաժողով հրավիրելու օգտին արտահայտվում է մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդը, ապա Գլխավոր քարտուղարը հրավիրում է խորհրդաժողովը Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Խորհրդաժողովին ներկա եւ քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ամեն մի լրացում եւ փոփոխություն հաստատման է ներկայացվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայում հաստատվելուց եւ սույն Արձանագրության մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ այդ պետությունների սահմանադրական ընթացակարգի համաձայն ընդունվելուց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դառնում են պարտադիր՝ դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Արձանագրության դրույթները եւ նախկինում նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

Յոթված 12

1. Մասնակից յուրաքանչյուր պետություն ցանկացած ժամանակ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին

ուղղված գրավոր ծանուցումով կարող է չեղյալ հայտարարել սույն Արձանագրությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում նշված ծանուցումը Գլխավոր քարտուղարի կողմից ստանալուց երեք ամիս անց:

2. Չեղյալ հայտարարումը չի խոչընդոտում մինչեւ դրա ուժի մեջ մտնելը 2-րդ հոդվածի համաձայն ներկայացված հաղորդումների առնչությամբ սույն Արձանագրության դրույթների կիրառումը շարունակելուն:

Յոթված 13

Սույն Արձանագրության 8-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն արված ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Դաշնագրի 48-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին տեղեկացնում է՝

a) 8-րդ հոդվածի համաձայն ստորագրումների, վավերացումների եւ միանալու մասին,

b) 9-րդ հոդվածի համաձայն՝ սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու եւ 11-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ժամկետի մասին,

c) 12-րդ հոդվածի համաձայն՝ չեղյալ հայտարարելու մասին:

Յոթված 14

1. Սույն Արձանագրությունը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն եւ ֆրանսերեն բնագրերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Արձանագրության վավերացված պատճեններն ուղարկում է Դաշնագրի 48-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐ²⁷
(16 դեկտեմբերի 1966 թ.)**

ՆԱԽԱՐԱՆ

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները՝ ուշադրության առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան, մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության եւ նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից,

ընդունելով, որ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իդեալը կարող է իրականացվել, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքներից, այնպես էլ քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից,

ուշադրության առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ պետությունները պարտավոր են խրախուսել մարդու իրավունքների եւ ազատությունների հանդեպ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

գիտակցելով, որ անհատը, պարտավորություններ ունենալով այլ անձանց եւ այն համայնքի հանդեպ, որին ինքը պատկանում է, պետք է հետամուտ լինի սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների խրախուսմանն ու պահպանմանը, համաձայնում են ներքոհիշյալ հոդվածների շուրջ.

27 Պաշտոնական հայերեն թարգմանությունը տրամադրել է Միջազգային իրավունքի հայկական ընկերակցությունը:

ՄԱՍ I

Ֆոդված 1

1. Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը:

2. Բոլոր ժողովուրդներն իրենց նպատակներին հասնելու համար կարող են ազատորեն տնօրինել իրենց բնական հարստությունները եւ ռեսուրսները՝ առանց խոչընդոտելու որեւէ պարտավորության, որը բխում է փոխշահավետության սկզբունքի վրա հիմնված միջազգային տնտեսական համագործակցությունից եւ միջազգային իրավունքից: Ոչ մի ժողովուրդ ոչ մի դեպքում չի կարող զրկվել գոյության իրեն պատկանող միջոցներից:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, այդ թվում եւ նրանք, որոնք պատասխանատու են ինքնակառավարում չունեցող եւ խնամարկյալ տարածքների կառավարման համար, պետք է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը եւ հարգեն այդ իրավունքը:

ՄԱՍ II

Ֆոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես եւ միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական եւ տեխնիկական բնագավառներում, առաջադիմորեն հասնելու համար սույն Դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը բոլոր պատշաճ միջոցներով, ներառյալ, մասնավորապես օրենսդրական միջոցների ընդունմամբ:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ սույն Դաշնագրով հռչակված իրավունքները կիրականացվեն առանց որեւէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրույթներից:

3. Զարգացող երկրները, պատշաճ կերպով հաշվի առնելով մարդու իրավունքները եւ իրենց ազգային տնտեսությունը, կարող են որոշել, թե սույն Դաշնագրով ճանաչվող տնտեսական իրավունքներն իրենք ինչ ծավալով պետք է երաշխավորեն իրենց քաղաքացի չհանդիսացող անձանց համար:

Յոթված 3

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց եւ կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված բոլոր տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքներից օգտվելու հավասար իրավունք:

Յոթված 4

Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ պետությունը կարող է սույն Դաշնագրին համապատասխան իր սահմանած իրավունքների իրականացումն ենթարկել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանվում են օրենքով եւ միայն այնքանով, որքանով դա համատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ, եւ բացառապես ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով:

Յոթված 5

1. Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել այնպես, որ ենթադրվի որեւէ պետության, խմբի կամ անձի իրավունքը՝ զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է սույն Դաշնագրով ճանաչված իրավունքների կամ ազատությունների վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ ծավալով, քան նախատեսվում է սույն Դաշնագրով:

2. Հի թույլատրվում մարդու՝ օրենքի, կոնվենցիաների, ենթաօրենսդրական ակտերի կամ սովորույթների հիման վրա ցանկացած երկրում ճանաչված կամ գոյություն ունեցող հիմնարար իրավունքների որեւէ սահմանափակում կամ նվազեցում այն հիմնավորմամբ, թե սույն Դաշնագիրը նման իրավունքներ չի ճանաչում կամ ճանաչում է նվազ ծավալով:

ՄԱՍ III

Յոթված 6

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որը ներառում է յուրաքանչյուրի՝ իր ապրուստն այնպիսի աշխատանքով վաստակելու հնարավորության իրավունքը, որը նա ազատորեն ընտրում է կամ որին նա ազատորեն համաձայնում է, եւ կծեռնարկեն այդ իրավունքի ապահովմանն ուղղված համապատասխան քայլեր:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետության կողմից այս իրավունքի լիարժեք իրականացմանը հասնելու նպատակով ձեռնարկվող քայլերն ընդգրկում են տեխնիկական եւ մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ծրագրեր, տնտեսական, սոցիալական ու մշակութային անշեղ զարգացման եւ արտադրական լրիվ զբաղվածության ձեռքբերման ուղիներ ու մեթոդներ այնպիսի պայմաններում, որոնք երաշխավորում են մարդու քաղաքական եւ տնտեսական հիմնարար ազատությունները:

Յոթված 7

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ աշխատանքի արդարացի եւ բարենպաստ պայմաններից օգտվելու իրավունքը, մասնավորապես,

a) վարձատրություն, որը բոլոր աշխատավորների համար նվազագույնն ապահովում է.

(i) արդար աշխատավարձ եւ հավասարաբեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն՝ առանց որեւէ տարբերակման, մասնավորապես, կանանց համար պետք է երաշխավորվեն աշխատանքի այնպիսի պայմաններ, որոնցից օգտվում են տղամարդիկ՝ հավասար աշխատանքի դիմաց հավասար վճարում,

(ii) իրենց եւ իրենց ընտանիքների համար բավարար ապրուստ՝ սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան,

b) անվտանգ եւ հիգիենիկ աշխատանքային պայմաններ,

c) յուրաքանչյուրի համար իր աշխատանքում համապատասխան ավելի բարձր աստիճանով առաջխաղացման հավասար հնարավորություն՝ պայմանավորված բացառապես աշխատանքային ստաժով եւ որակավորումով,

d) հանգստի, ժամանցի հնարավորություն եւ աշխատանքային ժամանակի ողջամիտ սահմանափակում ու վճարովի պարբերական արձակուրդ, ինչպես նաեւ՝ վարձատրություն տոնական օրերի դիմաց:

Յոդված 8

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են ապահովել՝

a) յուրաքանչյուրի՝ իր տնտեսական և սոցիալական շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը՝ համապատասխան կազմակերպության կանոնների պահպանման միակ պայմանով: Նշված իրավունքի իրականացումը ենթակա չէ որեւէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության,

b) արհեստակցական միությունների՝ ազգային դաշնություններ կամ համադաշնություններ կազմելու իրավունքը և վերջիններիս՝ միջազգային արհեստակցական կազմակերպություններ ստեղծելու ու կամ դրանց միանալու իրավունքը,

c) արհեստակցական միությունների ազատորեն գործելու իրավունքը՝ առանց որեւէ սահմանափակման, բացի այն սահմանափակումներից, որոնք նախատեսվում են օրենքով և որոնք անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության կամ հասարակական կարգի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության,

d) գործադուլի իրավունքը՝ այն տվյալ երկրի օրենքներին համապատասխան իրականացնելու պայմանով:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում այս իրավունքներն իրականացնելու օրինական սահմանափակումների նախատեսում այն անձանց համար, ովքեր մտնում են պետության զինված ուժերի, ոստիկանության կամ վարչակազմի մեջ:

3. Սույն հոդվածում ոչինչ իրավունք չի տալիս Աշխատանքի միջազգային կազմակերպության Միավորումներ կազմելու ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության վերաբերյալ 1948 թ. կոնվենցիայի մասնակից պետություններին՝ ընդունելու նշված Կոնվենցիայով նախատեսվող երաշխիքներին ի վնաս օրենսդրական ակտեր կամ օրենքը կիրառելու ի վնաս այդ երաշխիքներին:

Յոդված 9

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յու-

րաքանչյուրի՝ սոցիալական ապահովության, ներառյալ սոցիալական ապահովագրության, իրավունքը:

Յոդված 10

Սույն Դաշնագրի մասնակից պետություններն ընդունում են, որ.

1. Ընտանիքին, որը հասարակության բնական ու հիմնական խմբային միավորն է, պետք է ըստ հնարավորին տրամադրվեն ամենալայն պաշտպանություն և աջակցություն, մասնավորապես, ընտանիքի կազմավորման ժամանակ և քանի դեռ ընտանիքը պատասխանատու է ոչ ինքնուրույն երեխաների խնամքի ու կրթության համար: Ամուսնությունը պետք է կայանա ամուսնացողների ազատ համաձայնությամբ:

2. Հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի հղի կանանց մինչև ծննդաբերությունը և դրանից հետո ընկած ողջամիտ ժամանակաշրջանի ընթացքում: Այդ ժամանակաշրջանի ընթացքում աշխատող մայրերին պետք է տրամադրվի վճարովի արձակուրդ կամ արձակուրդ՝ սոցիալական ապահովության բավարար նպաստներով:

3. Պաշտպանության և օգնության հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն բոլոր երեխաների ու դեռահասների համար՝ առանց որեւէ խտրականության ընտանեկան ծագման կամ այլ հատկանիշով: Երեխաներն ու դեռահասները պետք է պաշտպանված լինեն տնտեսական և սոցիալական շահագործումից: Նրանց բարոյականության կամ առողջության համար վնասակար, կամ կյանքի համար վտանգավոր, կամ բնականոն զարգացման համար հնարավոր վնասակար բնագավառում նրանց աշխատանքի օգտագործումը պետք է պատժելի լինի օրենքով: Պետությունները պետք է նաև սահմանեն տարիքային սահմանափակումներ, որից ցածր տարիքի երեխայի վճարովի աշխատանքն արգելվում է և պատժվում օրենքով:

Յոդված 11

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ իր ու իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բավարար սննդի, հագուստի ու բնակարանի, և կենսապայմանների շարունակական բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները կձեռնարկեն պատշաճ միջոցներ այդ իրավունքի իրականացումն ապահովելու համար՝ այս կապակցությամբ ընդունելով ազատ կամքի արտահայտության վրա հիմնված միջազգային համագործակցության կարելուր նշանակությունը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները, ճանաչելով յուրաքանչյուրի՝ սովի չմատնվելու հիմնարար իրավունքը, ամհատապես եւ միջազգային համագործակցությամբ ձեռնարկում են միջոցներ, ներառյալ՝ հատուկ ծրագրերը, որոնք նպատակ ունեն.

ա) բարելավելու սննդամթերքի արտադրության, պահպանման եւ բաշխման մեթոդները՝ տեխնիկական եւ գիտական գիտելիքի սպառիչ օգտագործման, սնման սկզբունքների մասին գիտելիքի տարածման եւ ազրարային համակարգերի զարգացման կամ բարեփոխման միջոցով այնպես, որպեսզի ապահովվեն բնական ռեսուրսների առավել արդյունավետ զարգացումն ու օգտագործումը,

բ) հաշվի առնելով ինչպես սննդամթերք ներմուծող, այնպես էլ արտահանող երկրների հիմնահարցերը՝ ապահովելու պարենի համաշխարհային պաշարների արդարացի բաշխումը՝ պահանջմունքի հարաբերությամբ:

Ֆոդված 12

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ ֆիզիկական եւ հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այս իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով ձեռնարկվող միջոցներն ընդգրկում են միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են.

ա) մեռելածնության ու մանկական մահացության կրճատման ապահովման եւ երեխայի առողջ զարգացման համար,

բ) շրջակա միջավայրի եւ արդյունաբերության մեջ աշխատանքի հիգիենայի բոլոր կողմերի բարելավման համար,

գ) համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական եւ այլ հիվանդությունների կանխարգելման, բուժման եւ վերահսկման համար,

դ) այնպիսի պայմանների ստեղծման համար, որոնք հիվանդության դեպքում բոլորի համար կապահովեն բժշկական օգնություն եւ բժշկական խնամք:

Ֆոդված 13

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի եւ նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը եւ

պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ: Մասնակից պետությունները, այնուհետեւ, համաձայնում են, որ կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալ ազատ հասարակությանը, նպաստելու բոլոր ազգերի եւ ռասայական, էթնիկական կամ կրոնական բոլոր խմբերի միջեւ փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը եւ աջակցելու խաղաղության պահպանման ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ընդունում են, որ այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով.

ա) տարրական կրթությունը պարտադիր է եւ անվճար բոլորի համար,

բ) միջնակարգ կրթությունն իր տարբեր ձեւերով, ներառյալ՝ միջնակարգ տեխնիկական եւ մասնագիտական

կրթությունը, բաց եւ մատչելի է բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով,

գ) բարձրագույն կրթությունը, ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների, հավասարապես մատչելի է բոլորի համար՝ բոլոր համապատասխան միջոցներով, մասնավորապես, առաջադիմական անվճար կրթություն մտցնելու միջոցով,

դ) հիմնական կրթությունը խրախուսվում կամ հնարավորինս ակտիվացվում է այն անձանց համար, ովքեր չեն անցել կամ չեն ավարտել իրենց տարրական կրթության լրիվ դասընթացը,

ե) պետք է ակտիվորեն իրականացնել բոլոր մակարդակների դպրոցների համակարգի զարգացումը, սահմանել կրթաթոշակների բավարար համակարգ եւ շարունակաբար կատարելագործել ուսուցչական կազմի նյութական պայմանները:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների եւ, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների՝ իրենց երեխաների համար, պետական իշխանության կողմից ստեղծված դպրոցներից բացի, այլ դպրոցների ընտրության ազատությունը, որոնք համապատասխանում են պետության կողմից սահմանվող կամ հաստատվող կրթական նվազագույն ստանդարտներին, ինչպես նաեւ իրենց երեխաների կրոնական եւ բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը:

4. Սույն հոդվածի ոչ մի մաս չպետք է մեկնաբանվի որպես առան-

ծին անծանց եւ մարմինների՝ ուսումնական հաստատություններ ստեղծելու եւ դրանք սույն հոդվածի 1-ին կետում շարադրված սկզբունքներին եւ նման հաստատություններում այնպիսի նվազագույն ստանդարտներին համապատասխան ղեկավարելու ազատության սահմանափակում, որոնք կարող են սահմանվել պետության կողմից:

Ֆոդված 14

Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն, որը մասնակից դառնալու ժամանակ իր մետրոպոլիայի տարածքում կամ իր իրավագործության տակ գտնվող մյուս տարածքներում չի կարողացել ապահովել պարտադիր անվճար տարրական կրթություն, պարտավորվում է երկու տարվա ընթացքում մշակել եւ ընդունել միջոցառումների մանրամասն ծրագիր պարտադիր անվճար տարրական կրթության սկզբունքը ողջամիտ ժամկետում, որը պետք է նշված լինի այդ ծրագրում, աստիճանաբար կենսագործելու համար:

Ֆոդված 15

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի իրավունքը՝

- a) մասնակցելու մշակութային կյանքին,
- b) օգտվելու գիտական առաջընթացի եւ դրա կիրառման բարիքներից,
- c) օգտվելու այն բարոյական եւ նյութական շահերի պաշտպանությունից, որոնք առաջանում են իր հեղինակած գիտական, գրական կամ գեղարվեստական ցանկացած երկի կապակցությամբ:

2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքի լիարժեք իրականացման նպատակով ձեռնարկվող միջոցներին դասվում են նրանք, որոնք անհրաժեշտ են կրթության ու մշակույթի նվաճումների պահպանման, զարգացման եւ տարածման համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել գիտական հետազոտությունների եւ ստեղծագործական գործունեության համար անհրաժեշտ ազատությունը:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են գիտական ու մշակութային բնագավառներում միջազգային կապերի եւ համագործակցության խրախուսումից ու զարգացումից բխող օգուտը:

ՄԱՍ IV

Ֆոդված 16

1. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են այս Դաշնագրի 2-րդ մասին համապատասխան ներկայացնել զեկույցներ իրենց ձեռնարկած միջոցառումների եւ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների պահպանման ասպարեզում ձեռք բերված առաջընթացի մասին:

2. a) Բոլոր զեկույցները ներկայացվում են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է Տնտեսական եւ սոցիալական խորհրդի քննությանը՝ սույն Դաշնագրի դրույթներին համապատասխան:

b) Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նաեւ մասնագիտացված հաստատություններին է ուղարկում սույն Դաշնագրի մասնակից եւ միաժամանակ այդ հաստատությունների անդամ պետությունների զեկույցների կամ դրանց ցանկացած համապատասխան հատվածների պատճենները, այնքանով, որքանով նման զեկույցները կամ այդ զեկույցների հատվածները վերաբերում են բոլոր այն հարցերին, որոնք մտնում են վերը նշված հաստատությունների պարտականությունների շրջանակների մեջ՝ նրանց հիմնադիր ակտերին համապատասխան:

Ֆոդված 17

1. Սույն Դաշնագրի մասնակից պետություններն իրենց զեկույցները ներկայացնում են փուլ առ փուլ, այն ծրագրին համապատասխան, որը պետք է սահմանի Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը, սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ մասնակից պետությունների եւ շահագրգիռ մասնագիտացված հաստատությունների հետ խորհրդակցելուց հետո:

2. Ձեկույցները կարող են մատնանշել այն գործոններն ու դժվարությունները, որոնք ազդում են սույն Դաշնագրով ստանձնած պարտավորությունների կատարման աստիճանի վրա:

3. Եթե համապատասխան տեղեկատվությունը սույն Դաշնագրի որեւէ մասնակից պետություն ավելի վաղ է ներկայացրել Միավորված ազգերի կազմակերպությանը կամ որեւէ մասնագիտացված հաստատության, ապա այդ տեղեկատվությունը վերաշարադրելու անհրաժեշտություն չկա, եւ բավական կլինի ճշգրիտ հղումը ներկայացված տեղեկատվությանը:

Յոդված 18

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ասպարեզում Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված իր պարտականությունների համաձայն, կարող է համաձայնության գալ մասնագիտացված հաստատությունների հետ սույն Դաշնագրի՝ իրենց գործունեության ոլորտին վերաբերող դրույթների կատարման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացի մասին իրեն զեկույցներ ներկայացնելու վերաբերյալ: Այդ զեկույցները կարող են ներառել տվյալներ՝ հիշյալ դրույթների կատարման մասին իրենց իրավասու մարմինների ընդունած որոշումների եւ հանձնարարականների վերաբերյալ:

Յոդված 19

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը կարող է, քննության առնելու եւ ընդհանուր հանձնարարականներ տալու համար կամ, համապատասխան դեպքերում, որպես ի գիտություն, Մարդու իրավունքների հանձնաժողովին փոխանցել մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցներ, որոնք 16 եւ 17-րդ հոդվածներին համապատասխան ներկայացրել են պետությունները, եւ մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցներ, որոնք 18-րդ հոդվածին համապատասխան ներկայացրել են մասնագիտացված հաստատությունները:

Յոդված 20

Սույն Դաշնագրի մասնակից շահագրգիռ պետությունները եւ մասնագիտացված հաստատությունները կարող են Տնտեսական եւ սոցիալական խորհրդին ներկայացնել դիտողություններ 19-րդ հոդվածի համաձայն ընդունված ցանկացած ընդհանուր հանձնարարականի կամ նման ընդհանուր հանձնարարականի հղման կապակցությամբ, որը տեղ է գտնում Մարդու իրավունքների հանձնաժողովի ցանկացած զեկույցում կամ ցանկացած փաստաթղթում, որում առկա է այդ հղումը:

Յոդված 21

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը կարող է ժամանակ առ ժամանակ Գլխավոր ասամբլեային ներկայացնել զեկույցներ ընդհանուր բնույթի հանձնարարականներով եւ ձեռնարկված միջոցառումների ու սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների ընդհանուր պահպանման ապահովման բնագավառում ձեռք բերված առա-

ջընթացի մասին սույն Դաշնագրի մասնակից պետությունների եւ մասնագիտացված հաստատությունների ներկայացրած տեղեկատվության համառոտ շարադրանքով:

Յոդված 22

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը կարող է Միավորված ազգերի կազմակերպության մյուս մարմինների, նրանց օժանդակ մարմինների եւ տեխնիկական օգնության տրամադրման գործով զբաղվող մասնագիտացված հաստատությունների ուշադրությունը հրավիրել սույն Դաշնագրի այս մասում հիշատակված զեկույցների կապակցությամբ ծագող հիմնահարցերի վրա, որոնք կարող են այդ մարմինների համար օգտակար լինել իրենց իրավասությունների շրջանակներում միջազգային այն միջոցների նպատակահարմարությունը որոշելիս, որոնք կարող էին նպաստել սույն Դաշնագրի աստիճանական արդյունավետ կենսագործմանը:

Յոդված 23

Սույն Դաշնագրի մասնակից պետությունները համաձայնում են, որ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքների իրականացմանը նպաստող միջազգային միջոցառումները ներառում են այնպիսի մեթոդներ, ինչպիսին են կոնվենցիաների կնքումը, հանձնարարականների ընդունումը, տեխնիկական օգնության տրամադրումը եւ խորհրդատվության նպատակով տարածաշրջանային հանդիպումների ու տեխնիկական խորհրդակցությունների անցկացումը, ինչպես նաեւ շահագրգիռ կառավարությունների հետ համատեղ կազմակերպված հետազոտությունները:

Յոդված 24

Սույն Դաշնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության եւ մասնագիտացված հաստատությունների Կանոնադրությունների դրույթների նշանակության նվազեցում, որոնք սահմանում են Միավորված ազգերի կազմակերպության զանազան մարմինների եւ մասնագիտացված հաստատությունների համապատասխան պարտականություններն այն հարցերի կապակցությամբ, որոնց վերաբերում է սույն Դաշնագիրը:

Յոդված 25

Սույն Դաշնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես բոլոր

ժողովուրդների՝ իրենց բնական հարստություններից եւ ռեսուրսներից լիարժեքորեն ու ազատորեն օգտվելու եւ դրանք օգտագործելու անկապտելի իրավունքի նվազեցում:

ՄԱՍ V

Յոթերորդ 26

1. Սույն Դաշնագիրը բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետության կամ այդ կազմակերպության ցանկացած մասնագիտացված հաստատության անդամ պետության, Միջազգային դատարանի Ստատուտի ցանկացած անդամ պետության եւ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից սույն Դաշնագրին մասնակից դառնալու հրավիրված ցանկացած այլ պետության համար:

2. Սույն Դաշնագիրը ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

3. Սույն Դաշնագիրը բաց է միանալու սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:

4. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

5. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագիրը ստորագրած կամ դրան միացած բոլոր պետություններին ծանուցում է յուրաքանչյուր վավերագրի կամ միանալու վերաբերյալ փաստաթղթի ի պահ հանձնելու մասին:

Յոթերորդ 27

1. Սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին երեսունհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

2. Երեսունհինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Դաշնագիրը վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Դաշնագիրն ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս անց:

Յոթերորդ 28

Սույն Դաշնագրի դրույթները տարածվում են դաշնային պետությունների բոլոր մասերի վրա՝ առանց որեւէ սահմանափակման կամ բացառության:

Յոթերորդ 29

1. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել լրացումներ ու փոփոխություններ եւ դրանք ներկայացնել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարն, այնուհետեւ, առաջարկված ցանկացած լրացում կամ փոփոխություն ուղարկում է սույն Դաշնագրի մասնակից պետություններին՝ խնդրելով հայտնել, թե նրանք համաձայն են արդյոք այդ առաջարկությունները քննության առնելու եւ դրանց առթիվ քվեարկություն անցկացնելու նպատակով մասնակից պետությունների խորհրդաժողով հրավիրել: Եթե մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է նման խորհրդաժողովի օգտին, ապա Գլխավոր քարտուղարը խորհրդաժողովը հրավիրում է Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Խորհրդաժողովին ներկա եւ քվեարկությանը մասնակից պետությունների մեծամասնությամբ ընդունված ցանկացած լրացում կամ փոփոխություն ներկայացվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի հաստատմանը:

2. Լրացումներն ու փոփոխություններն ուժի մեջ են մտնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվելուց եւ սույն Դաշնագրի մասնակից պետությունների երկու երրորդի մեծամասնությամբ իրենց սահմանադրական ընթացակարգերին համապատասխան ընդունվելուց հետո:

3. Ուժի մեջ մտնելուց հետո լրացումներն ու փոփոխությունները դառնում են պարտադիր դրանք ընդունած մասնակից պետությունների համար, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Դաշնագրի դրույթները եւ նախկինում կատարված ու նրանց կողմից ընդունված լրացումներն ու փոփոխությունները:

Յոթերորդ 30

26-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն կատարվող ծանուցումներից անկախ՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը նույն հոդվածի 1-ին կետում նշված բոլոր պետություններին տեղեկացնում է ներքոհիշյալը:

ա) 26-րդ հոդվածի համաձայն, ստորագրումների, վավերացումների եւ միանալու մասին,

բ) 27-րդ հոդվածի համաձայն, սույն Դաշնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի, եւ 29-րդ հոդվածի համաձայն, ցանկացած լրացման ու փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Յոթերորդ Գլխավոր Կարգադրում 31

1. Սույն Դաշնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն եւ ֆրանսերեն տեքստերը հավասարապես նույնական են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Դաշնագրի հաստատված պատճեններն ուղարկում է 26-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին:

1948թ. ի վեր ավելի քան 90 դաշնագրեր ու հռչակագրեր են պատրաստվել ՄԱԿ-ի նախաձեռնությամբ: 1992թ. Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց «Ազգային կամ էթնիկ, կրոնական ու լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը: 1995թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը իր ենթահանձնաժողովի կողմից հաստատեց **Փոքրամասնությունների հարցերով աշխատանքային խմբի** ստեղծումը: Աշխատանքային խումբը գործնական քայլեր է հանձնարարում փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ավելի լավ առաջնորդման ու պաշտպանության համար²⁸: Ստորև բերում ենք ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված վերոնշյալ «Ազգային կամ էթնիկական, կրոնական ու լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին» հռչակագիրը և վերջինիս կից հավելվածի տեքստերը²⁹.

28 Հիմնական փաստեր Միավորված Ազգերի Կազմակերպության մասին, էջ՝ 252:

29 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

Ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին Հռչակագիրը (ДЕКЛАРАЦИЯ ООН О ПРАВАХ ЛИЦ, ПРИНАДЛЕЖАЩИХ К НАЦИОНАЛЬНЫМ ИЛИ ЭТНИЧЕСКИМ, РЕЛИГИОЗНЫМ И ЯЗЫКОВЫМ МЕНЬШИНСТВАМ)

Գլխավոր Ասամբլեան

Կրկին հաստատելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական նպատակներից մեկը, ինչպես դա հռչակված է Կանոնադրության մեջ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգանքի խթանումն ու զարգացումն է բոլոր համար՝ առանց ռասսայի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերության,

հաստատելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի առավել արդյունավետ իրականացման կարևորությունը, որոնք կիրառվում են այն անձանց իրավունքների վերաբերյալ, որոնք պատկանում են ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնության,

ողջունելով այն փաստը, որ մարդու իրավունքների ասպարեզում պայմանագրային մարմինները աճող ուշադրություն են ցուցաբերում փոքրամասնությունների պաշտպանության և ոչ խտրականության հարցերում,

հաշվի առնելով քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին Միջազգային Պակտի 27-րդ հոդվածի դրույթները, որոնք վերաբերվում են էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց,

կարծելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը կոչված է ավելի կարևոր դեր խաղալ փոքրամասնությունների պաշտպանության գործում,

ուշադրություն դարձնելով այն աշխատանքին, որը կատարվել է մինչ այս ժամանակը Միավորված Ազգերի Կազմակերպության համակարգի շրջանակներում, մասնավորապես, Հանձնաժողովի համապատասխան մեխանիզմների միջոցով մարդու իրավունքների Քարտուղարության և նրա ենթահանձնաժողովի կողմից կանխարգելելու խտրականությունը և պաշտպանելու ազգային կամ էթնի-

կական, կրոնական կամ լեզվական փոքրամասնությունների իրավունքները:

ընդգծելով բոլորի համար առանց որևէ խտրականության մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացման ու ապահովման անրաժեշտությունը և կարևորությունը՝ հիմնավորելով այն՝ ազգային և էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքներով,

հղում անելով 1991 թվականի դեկտեմբերի 17-ի իր 46/115 բանաձևին և հաշվի առնելով մարդու իրավունքների Յաննաթոլվի 1992/16 բանաձևը, որտեղ Յաննաթոլվը հավանություն է տվել ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՅՋԿԿ-ի տեքստի նախագծին և ՏՏԿԿ-ի սոցիալական խորհրդի 1992 թվականի հուլիսի 22-ի 1992/4 բանաձևին, որտեղ խորհրդը հանձնարարել էր իր Գլխավոր Ասսամբլեային Յլխավոր Քարտուղարի գրությունը քննարկելուց հետո հետագա միջոցների հաստատման և ձեռնարկման մասին:

1. ընդունում է ՅՋԿԿ-ի ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին, որի տեքստը կցվում է սույն բանաձևին

2. խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ ապահովել ՅՋԿԿ-ի հնարավորինս ավելի լայն տարածում և ՅՋԿԿ-ի տեքստը ներառել «Մարդու իրավունքները. Միջազգային պայմանագրերի ժողովածու» հրատարակության հաջորդ համարում

3. առաջարկում է Միավորված Ազգերի Կազմակերպության կազմակերպություններին և հաստատություններին, ինչպես նաև միջկառավարական և կառավարական կազմակերպություններին՝ ակտիվացնել իրենց ջանքերը՝ ՅՋԿԿ-ի մասին տեղեկատվության տարածման և այն ընթացում գործում

4. առաջարկում է Միավորված Ազգերի Կազմակերպության համապատասխան մարմիններին և ստորաբաժանումներին, այդ թվում նաև պայմանագրային մարմիններին, ինչպես նաև մարդու իրավունքների Յաննաթոլվի և ԵՆՔԿ-ի ներկայացուցիչներին՝ խտրականության և փոքրամասնությունների պաշտպանության կանխարգելման համար ՅՋԿԿ-ի հատկացնել հատուկ ուշադրություն իրենց մանդատների շրջանակներում

5. խնդրում է Գլխավոր քարտուղարին՝ քննարկել ՅՋԿԿ-ի

աջակցման ուղիներ և դրանց վերաբերյալ առաջարկություններ անել

6. Գլխավոր քարտուղարին խնդրում է նաև Գլխավոր Ասսամբլեայի 48-րդ նստաշրջանին ներկայացնել սույն բանաձևի իրականացման մասին զեկույցը «մարդու իրավունքների հարցեր» վերանգրով կետի համար:

92-րդ լիագումար նիստ, 18 դեկտեմբերի 1992 թվական

Չավելված

Ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՅՋԿԿ-ի

Կրկին հաստատելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական նպատակներից մեկը, ինչպես դա հռչակված է Կանոնադրության մեջ, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգանքի խթանումն ու զարգացումն է բոլորի համար՝ առանց ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերության,

կրկին հաստատելով մարդու իրավունքների, արժանապատվության, մարդկային արժանիքների, տղամարդկանց և կանանց իրավահավասարության և փոքր ու մեծ ազգերի վրա հիմնված հավատը,

ձգտելով նպաստել Կանոնադրության մեջ պարունակվող սկզբունքների իրականացմանը, մարդու իրավունքների Յաննաթոլվի ՅՋԿԿ-ի, Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին Կոնվենցիան, ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային Կոնվենցիան, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային Պակտը, կրոնի կամ հավատալիքների հիման վրա խտրականության կամ անհանդուրժողականության վերացման մասին ՅՋԿԿ-ի, երեխաների իրավունքների պաշտպանության մասին Կոնվենցիան, ինչպես նաև միջազգային այլ համապատասխան փաստաթղթերը, որոնք ընդունվել են համաշխարհային կամ տարածաշրջանային մակարդակում կամ միջազգային փաստաթղթերում, որոնք կնքվել են Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ-պետությունների միջև,

դեկլարվելով քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային պակտի 27-րդ հոդվածի դրույթներով, որոնք վերաբերվում են Ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց,

կարծելով, որ Ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվա-

կան փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանությունն ու խթանումը նպաստում են այն պետություններին, քաղաքական և սոցիալական կայունությանը, որտեղ նրանք բնակվում են,

ընդգծելով, որ ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց, որոնք հանդիսանում են հասարակության զարգացման անբախտելի մաս, իրավունքների մշտական խթանումն ու իրականացումը ժողովրդավարական շրջանակներում՝ օրենքի գերակայության հիման վրա կնպաստեն ժողովուրդների և պետությունների միջև բարեկամության և համագործակցության ամրապնդմանը,

կարծելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը կոչված է կարևոր դեր խաղալու փոքրամասնությունների պաշտպանության գործում,

ուշադրություն դարձնելով այն աշխատանքը, որը կատարվել է մինչ այս ժամանակաշրջանը Միավորված Ազգերի Կազմակերպության համակարգի շրջանակներում, մասնավորապես, Մարդու իրավունքների վերաբերյալ Հանձնաժողովի, խտրականության կանխարգելման ու փոքրամասնությունների պաշտպանության վերաբերյալ Ենթահանձնաժողովի և Մարդու իրավունքների վերաբերյալ Միջազգային Պակտի կատարման համար ստեղծված մարմինների և մարդու իրավունքների ոլորտում համապատասխան այլ միջազգային փաստաթղթերի կողմից ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների խթանման և պաշտպանության համար,

հաշվի առնելով այն զգալի աշխատանքը, որը կատարվել է միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից փոքրամասնությունների պաշտպանության համար, ինչպես նաև ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խթանման համար,

ընդունելով մարդու իրավունքների մասին միջազգային փաստաթղթերը ավելի արդյունավետ կյանքի կոչելու անհրաժեշտությունը ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց նկատմամբ,

հռչակում է սույն Հռչակագիրը ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների վերաբերյալ:

Յոդված 1

1. Պետությունները պաշտպանում են իրենց համապատասխան տարածքներում ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց գոյությունն ու ինքնակայությունը և խթանում են այդ ինքնակայության զարգացման համար պայմանների ստեղծումը

2. Այս նպատակներին հասնելու համար պետությունները ընդունում են համապատասխան օրենսդրական և այլ միջոցներ:

Յոդված 2

1. Ազգային կամ էթնիկական, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձինք (հետագայում՝ փոքրամասնությունների պատկանող անձինք) իրավունք ունեն օգտագործել իրենց մշակույթի ձեռքբերումները, դավանել իրենց կրոնը և իրականացնել կրոնական ծեսերը, ինչպես նաև մասնավոր և հասարակական կյանքում ազատ և առանց միջամտությունների և առանց խտրականության որևիցե ձևի օգտագործել իրենց լեզուն

2. Փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ակտիվորեն մասնակցել մշակութային, կրոնական, հասարակական, տնտեսական և պետական կյանքին

3. Փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ակտիվորեն մասնակցելու ազգային, և, եթե անհրաժեշտ է, տարածաշրջանային մակարդակի հարցերի լուծմանը, որոնք վերաբերվում են այն փոքրամասնություններին, որոնց նրանք պատկանում են, կամ այն շրջաններին, որտեղ նրանք բնակվում են՝ առանձն ազգային օրենսդրությանը հակասելու

4. Փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծել իրենց սեփական ասոցացիաները և ապահովել նրանց գործառնությունները

5. Փոքրամասնություններին պատկանող անձինք առանց որևէ խտրականության իրավունք ունեն հաստատել և պահպանել ազատ և խաղաղ հարաբերություններ իրենց խմբի այլ անձանց հետ և այլ փոքրամասնությունների պատկանող անձանց հետ, ինչպես նաև կապեր հաստատել սահմանից դուրս այլ պետությունների քաղաքացիների հետ, որոնց հետ նրանք կապված են ազգային, էթնիկական, կրոնական կամ լեզվական կապերով:

Յոդված 3

1. Փոքրամասնություններին պատկանող անձինք առանց որևէ խտրականության կարող են իրականացնել իրենց իրավունքները այդ թվում նաև այն իրավունքները, որոնք շարադրված են սույն Յոդվածագրում ինչպես անհատապես, այնպես էլ իրենց խմբի այլ անդամների հետ:

2. Սույն Յոդվածագրում շարադրված իրավունքների իրականացումը կամ չիրականացումը չեն հանգեցնում որևէ բացասական հետևանքների փոքրամասնություններին պատկանող ցանկացած անձի նկատմամբ:

Յոդված 4

1. Պետությունները անհրաժեշտության դեպքում միջոցներ են ձեռք առնում, որպեսզի փոքրամասնություններին պատկանող անձինք կարողանան ամբողջապես և արդյունավետ իրականացնել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները՝ առանց որևէ խտրականության և օրենքի առաջ լիակատար հավասարության հիման վրա:

2. Պետությունները միջոցներ են ձեռնարկում ստեղծելու բարենպաստ պայմաններ, որոնք փոքրամասնություններին պատկանող անձանց թույլ կտան արտահայտել իրենց հնարավորությունները և զարգացնել իրենց մշակույթը, լեզուն, կրոնը, ավանդույթները և սովորույթները, բացառությամբ այն դեպքերի, երբ կոնկրետ գործունեությունը իրականացվում է ազգային օրենսդրության խախտմամբ և հակասում է միջազգային նորմերին:

3. Պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում որպեսզի այնտեղ, որտեղ դա կարող է իրականացվել, փոքրամասնություններին պատկանող անձինք պատշաճ հնարավորություն ունենան իրենց սեփական լեզուն սովորելու և սեփական լեզվով ուսուցանելու համար:

4. Անհրաժեշտության դեպքում պետությունները միջոցներ են ձեռնարկում կրթության ասպարեզում՝ նպատակ ունենալով խթանել իրենց տարածքում բնակվող փոքրամասնության պատմության, ավանդույթների, լեզվի և մշակույթի ուսուցմանը:

5. Պետությունները դիտարկում են այն հարցի քննարկումը, որպեսզի փոքրամասնությանը պատկանող անձինք կարողանան լիակատար կերպով մասնակցել իրենց երկրի զարգացմանը և տնտեսական առաջընթացին:

Յոդված 5

1. Ազգային քաղաքականությունը և ծրագրերը նախագծվում և իրականացվում են՝ փոքրամասնություններին պատկանող անձանց շահերը պարտադիր կերպով հաշվի առնելով:

2. Համագործակցության և պետությունների միջև օգնության ծրագրերը նախագծվում և իրականացվում են փոքրամասնություններին պատկանող անձանց օրինական շահերը պարտադիր կերպով հաշվի առնելով:

Յոդված 6

Պետությունները պետք է համագործակցեն այն հարցերում, որոնք վերաբերվում են փոքրամասնություններին պատկանող անձանց, այդ թվում նաև փորձի և տեղեկատվության փոխանակման հարցում՝ նպատակ ունենալով զարգացնել փոխըմբռնումն ու վստահությունը:

Յոդված 7

Պետությունները պետք է համագործակցեն սույն Յոդվածագրում շարադրված իրավունքները հարգելու հարցում:

Յոդված 8

1. Սույն Յոդվածագրում ոչ մի բան չի կարող արգելք հանդիսանալ պետությունների համար միջազգային պարտականություններ կատարելու փոքրամասնություններին պատկանող անձանց վերաբերյալ: Մասնավորապես, պետությունները պետք է կամավոր կերպով կատարեն իրենց վրա վերցրած այն պարտավորություններն ու պարտականությունները, որոնց կրողն են դարձել միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումով՝ համարվելով վերջիններիս մասնակիցը:

2. Սույն Յոդվածագրում շարադրված իրավունքների իրականացումը չի վտանգում բոլորի կողմից ընդունված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները:

3. Պետությունների կողմից ձեռնարկված միջոցները, որոնք նպատակ ունեն ասպահովել սույն Յոդվածագրում շարադրված դրույթների իրականացումը, չեն համարվում *prima facie*, որը հակասում է մարդու իրավունքների Համընդհանուր Յոդվածագրով ամրագրված հավասարության սկզբունքին:

4. Սույն Յոդվածագրում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես Միավորված Ազգերի Կազմակերպության որևէ սկզբունքներ:

րին և նպատակներին հակասող գործունեություն՝ ներառյալ պետության սուվերենության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության սկզբունքների նկատմամբ հարգանքը:

Յոթերորդ 9

Միավորված Ազգերի Կազմակերպության և այլ կազմակերպությունների մասնագիտացված հաստատությունները գործակցում են սույն Ռեզոլյուցիայում շարադրված սկզբունքների և իրավունքների իրականացման համար՝ իրենց իրավասության համապատասխան ուղորտների շրջանակներում:

Միավորված Ազգերի Կազմակերպության ընդունած արժեքավոր և ջանախառնության շուրջ ստեղծված իրավիճակի հետ լայնորեն առնչվող կոնվենցիաների՝ ստորև ներկայացվող շարքը վերաբերում է ռասայական բոլոր տիպի խտրականության ձևերի վերացմանը: ՄԱԿ-ը պահանջում է առանց ռասայի, սեռի, լեզվի ու կրոնի հիմքով տարբերակման՝ խրախուսել և զարգացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը: Այդ հոդի վրա ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1963թ. նոյեմբերի 20-ին ընդունեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» հռչակագիրը:

Միավորված Ազգերի Կազմակերպության Ռեզոլյուցիայի Ռասայական խտրականության բոլոր ձևերի մասին³⁰ Ընդունված է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1904 (XVIII) բանաձևով՝ 1963 թվականի նոյեմբերի 20-ին (Декларация Организации Объединенных Наций о ликвидации всех форм расовой дискриминации Принята резолюцией 1904 (XVIII) Генеральной Ассамблеи ООН от 20 ноября 1963 года)

Գլխավոր Ասամբլեան

ուշադրություն դարձնելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը կազմված է բոլոր ժողովուրդների հավասարության և արժանապատվության հիման վրա, և, ի թիվս այլ հիմնական նպատակների՝ ուղղված է միջազգային համագործակցությանը՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգանքի զարգացմանը և խթանմանը՝ առանց ռասայի, լեզվի, սեռի կամ կրոնի տարբերությունների,

ուշադրություն դարձնելով, որ մարդու իրավունքների մասին համընդհանուր Ռեզոլյուցիայում հռչակված է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար արժանապատվությամբ ու իրավունքներով և որ ցանկացած մարդ պետք է տիրապետի բոլոր իրավունքներին և ազատություններին, որոնք հռչակված են Ռեզոլյուցիայում՝ առանց որևէ տարբերության, մասնավորապես, ռասայական, մաշկի գույնի կամ ազգային պատկանելության,

ուշադրություն դարձնելով, որ մարդու իրավունքների համընդհանուր Ռեզոլյուցիայում նաև հռչակվում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ և առանց որևէ տարբերության օրենքի հավասար պաշտպանության իրավունք ունեն, և, որ բոլոր մարդիկ առանց տարբերության իրավունք ունեն պաշտպանված լինել ցանկացած խտրականությունից և խտրականության ցանկացած հրահրումից,

ուշադրություն դարձնելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը դատապարտել է գաղութարարությունը և նրա հետ կապված սեզրեզագիայի և խտրականության ցանկացած գործողու-

30 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

թյուն, և, որ գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տրամադրելու մասին Հռչակագիրը հռչակում է գաղութարարությանը արագ և անառարկելիորեն վերջ դնելու մասին,

ուշադրություն դարձնելով, որ ռասսայական տարբերությունների կամ գերակայությունների մասին ցանկացած տեսություն գիտական առումով ստահող է, բարոյական առումով՝ դատապարտելի, սոցիալական առումով՝ անարդար և վտանգավոր, և, որ ոչ մի բան թույլ չի տալիս արդարացնել ռասսայական խտրականությունը ոչ տեսականորեն, ոչ գործնականորեն,

հաշվի առնելով այլ բանաձևեր, որոնք ընդունվել են Գլխավոր Ասամբլեայի կողմից և խտրականության ոլորտում միջազգային ակտերը, որոնք ընդունվել են մասնագիտացված հաստատությունների կողմից, մասնավորապես աշխատանքի միջազգային Կազմակերպության և կրթության, գիտության ու մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության կողմից,

հաշվի առնելով, որ, թեև միջազգային պլանում միջոցառումներն ու ջանքերը, որոնք ձեռնարկվում են մի շարք երկրների կողմից, թույլ են տվել հասնել առաջընթացի այս ուղղության մեջ, ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման վերաբերյալ խտրականությունը, այնուամենայնիվ, շարունակում է աշխարհի մի քանի շրջաններում լուրջ մտահոգություն առաջացնել,

անհանգստացած լինելով ռասսայական խտրականության դրսևորումներով, որոնք դեռևս առկա են աշխարհի մի քանի շրջաններում, որը որոշ դեպքերում արմատավորվում է մի քանի երկրների կառավարությունների կողմից օրենսդրական, վարչական և այլ միջոցների շնորհիվ, այդ թվում նաև ապարտեիդի, սեգրեգացիայի և որոշ շրջաններում ռասսայական գերակայության և զավթողականության դոկտրինների խթանման և տարածման միջոցով,

վստահ լինելով այն բանում, որ ռասսայական խտրականության բոլոր ձևերը և մասնավորապես դեկավարությունների քաղաքականությունը, որը հիմնված է ռասսայական գերակայության կամ ռասսայական ատելության վրա, ոչ միայն մարդու հիմնարար իրավունքների խախտում է, այլև կարող է վտանգի տակ դնել ժողովուրդների պետությունների միջև եղած հարաբերությունները, և համընդհանուր խաղաղությունն ու անվտանգությունը,

վստահ լինելով նաև այն բանում, որ ռասսայական խտրականությունը վնաս է հասցնում ոչ միայն նրանց, ովքեր ենթարկվում են դրան, այլև նրանց ովքեր իրականացնում են այն,

վստահ լինելով այն բանում, որ մարդկանց մեջ ատելություն և օ-

տարացում առաջացնող ռասսայական բոլոր տեսակի սեգրեգացիաներից և խտրականություններից զերծ համաշխարհային համայնքի ստեղծումը Միավորված Ազգերի Կազմակերպության հիմնական խնդիրներից մեկն է.

1. հանդիսավոր հայտարարում է աշխարհի բոլոր մասերում ռասսայական խտրականության արագ վերացման անհրաժեշտության մասին իր բոլոր ձևերով և դրսևորումներով, ինչպես և հասկացողության ապահովումն ու մարդկային անհատականության արժանապատվության հարգանքը

2. հանդիսավոր հայտարարում է այս նպատակով ներպետական և միջազգային բնույթի միջոցների ձեռնարկման անհրաժեշտության մասին՝ ներառելով միջոցները կրթության, լուսավորչության և տեղեկատվության ոլորտներում՝ ներքոշարադրյալ սկզբունքների համընդհանուր և արդյունավետ ընդունման և հետևողականության ապահովման համար

3. հռչակում է սույն Հռչակագիրը

Յոդված 1

Ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման նշաններով մարդկանց նկատմամբ խտրականությունը ոտնձգություն է մարդկային անհատականության արժանապատվության դեմ և դատապարտվում է որպես հերքում այն սկզբունքների, որոնք շարադրված են Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության մեջ՝ որպես մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, որպես պետությունների միջև բարեկամական և խաղաղ հարաբերությունների արգելք և որպես հանգամանք, որը կարող է խաթարել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

Յոդված 2

1. Ոչ մի պետություն, հաստատություն, խումբ կամ անհատ չեն կարող մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ոլորտներում առանձին անձանց, խմբերի կամ հաստատությունների նկատմամբ իրականացնել որևիցե խտրականություն՝ ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հատկանիշներով:

2. Ոչ մի պետություն չպետք է ոստիկանական կամ այլ միջոցներով խթանի, պաշտպանի կամ առաջ տանի որևիցե խտրականություն՝ ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հատկանիշ-

ներով, որոնք իրականացվում են ինչ-որ խմբերի, հաստատությունների կամ առանձին անհատների կողմից:

3. Հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն համապատասխան հանգամանքներում պատշաճ զարգացում և պաշտպանություն իրականացնելու այն անձանց նկատմամբ, որոնք պատկանում են առանձին ռասսայական խմբերին, նպատակ ունենալով ապահովել նման անձանց շրջանում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար իրականացումը: Նման միջոցները չպետք է հանգեցնեն ռասսայական տարբեր խմբերի անհավասար կամ հատուկ իրավունքների հաստատմանը:

Չորված 3

1. Հատուկ ջանքեր պետք է գործադրվեն ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման նշաններով խտրականության դեմ պայքարի համար, հատկապես քաղաքացիական իրավունքների, քաղաքացիություն տալու, կրթության, կրոնի, աշխատանքի կամ կազմարանի տրամադրման նկատմամբ:

2. Յուրաքանչյուր մարդ, անկախ իր ռասսայից, մաշկի գույնից կամ էթնիկական ծագումից, պետք է հավասար հասանելիություն ունենան հասարակական ցանկացած վայր և շինություն մուտք գործելու համար:

Չորված 4

Բոլոր պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն կառավարության և հասարակական այլ իշխանությունների քաղաքականությունների վերանայմանը և հասարակական այլ օրենքներին ու կանոններին, որոնք տանում են դեպի ռասսայական խտրականության ստեղծմանն ու արմատավորմանն՝ այն վայրերում, որտեղ նրանք դեռ չեն իրականացվել: Նրանք պետք է այնպիսի օրենքներ ստեղծեն, որոնք արգելում են նման խտրականությունը և ընդունեն համապատասխան միջոցներ՝ ռասսայական խտրականությանը հանգեցնող նախապաշարմունքների դեմ պայքարելու համար:

Չորված 5

Անհապաղ պետք է վերջ տրվի կառավարությունների և կառավարական այլ իշխանությունների կողմից ռասսայական սեգրեգացիայի իրականացմանը, մասնավորապես, ապարտեիդի քաղաքականությանը և պետք է վերացվեն ռասսայական խտրականության

ու վերաբերմունքի բոլոր ձևերը, որոնք նման քաղաքականության հետևանք են:

Չորված 6

Ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագմամբ անձի նկատմամբ ոչ մի խտրականություն չպետք է թույլատրվի իր երկրում՝ քաղաքական կամ քաղաքացիական պարտականությունները կատարելիս, մասնավորապես, համընդհանուր և հավասար ընտրական իրավունքով ընտրություններին և երկրի ղեկավարմանը մասնակցելու ժամանակ: Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի հավասար հասանելիություն ունենալ իր երկրում պետական ծառայությանը:

Չորված 7

1. Բոլոր մարդիկ հավասար են օրենքի և դատարանի առջև: Ամեն մարդ, անկախ ռասսայից, մաշկի գույնից և էթնիկ ծագումից, իրավունք ունի անձնական անվտանգության և պետության պաշտպանության՝ ինչպես կառավարական պաշտոնյաների, այնպես էլ ինչ-որ անհատների, խմբերի կամ հաստատությունների կողմից բռնություններ կամ մարմնական վնասվածքներ հասցվելու դեպքում:

2. Ցանկացած մարդ իրավունք ունի արդյունավետ պաշտպանել և վերականգնել իրավունքները անկախ ազգային դատարաններում, որոնք իրավասու են քննել նման հարցեր, որոնք առաջացել են ռասսայի, մաշկի գույնի կամ էթնիկ ծագման ցանկացած իրավունքների ու ազատությունների նկատմամբ խտրականության դեպքում:

Չորված 8

Անհապաղ պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկվեն ուսուցման, լուսավորության և տեղեկատվության ոլորտներում՝ նպատակ հետապնդելով վերացնել ռասսայական խտրականությունն ու ռասսայական նախապաշարմունքները և ժողովուրդների և ռասսայական խմբերի միջև զարգացնել փոխըմբռնումը, համբերատարությունը և բարեկամությունը, ինչպես նաև տարածել Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության և մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրի նպատակներն ու սկզբունքները, որը հավասար է գաղութային երկրներում ներկայացված անկախության հռչակագրին:

Յոդված 9

1. Խստորեն դատապարտվում են ամեն տեսակի պրոպագանդաները և բոլոր կազմակերպությունները, որոնք հիմնված են որևէ ռասայի կամ որոշակի մաշկի գույնով կամ էթնիկական ծագումով անձանց խմբի գերակայության գաղափարների կամ տեսությունների վրա, որի նպատակն է որևէ ձևով արդարացնել ռասայական խտրականությունը:

2. Հասարակության դեմ ոճիր են համարվում և օրենքով պատժվում բռնության կամ բռնության ակտերի ցանկացած հրահրում՝ ինչպես առանձին անհատների, այնպես էլ կազմակերպությունների կողմից, որոնք ուղղված են ցանկացած ռասայի կամ այլ մաշկի գույնով կամ էթնիկական ծագմամբ անհատների խմբի դեմ:

3. Որպեսզի կյանքի կոչվեն սույն Հռչակագրի նպատակներն ու սկզբունքները, բոլոր պետությունները պետք է անհապաղ և դրական միջոցներ ձեռնարկեն՝ ներառյալ օրենսդրական և այլ միջոցառումները, դատական կարգով հետևելու և/կամ ապօրինի ճանաչել այն կազմակերպություններին, որոնք խթանում և հրահրում են ռասայական խտրականությունը այն, հրահրում են բռնություն կամ բռնություն են գործադրում ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման նկատմամբ:

Յոդված 10

Միավորված Ազգերի Կազմակերպությունը, մասնագիտացված հաստատությունները, պետությունները և ոչ կառավարական կազմակերպությունները պետք է իրենցից կախված ամեն ինչ անեն, որպեսզի գործակցեն ակտիվ միջոցների ձեռնարկմանը, որոնք, համադրելով իրավաբանական և այլ գործնական միջոցների հետ, կվերացնեն ռասայական խտրականության բոլոր ձևերը: Մասնավորապես, նրանք պետք է ուսումնասիրեն նման խտրականության պատճառները, որպեսզի առաջարկեն արդյունավետ միջոցներ, որոնք անհրաժեշտ են դրա դեմ պայքարելու և այն վերացնելու համար:

Յոդված 11

Յուրաքանչյուր պետություն Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության համապատասխան պետք է նպաստի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ տածվող հարգանքին, պետք է հստակ և բարեխղճորեն հետևի սույն Հռչակագրի, մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրի և

գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին Հռչակագրի դրույթներին:

Աղբյուրը՝ (A/RES/1904 (XVIII) (PDF ֆորմատ))

Վերոբերյալ հռչակագրի հիման վրա, երկու տարի անց՝ 1965թ. դեկտեմբերի 21-ին ընդունվեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիան (դաշնագիրը)³¹.

31 Սույն կոնվենցիան (CERD) ամենալայն ճանաչում գտած դաշնագրերից մեկն է: Այն ուժի մեջ է մտել 1969 թվականից: Կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները ստանձնում են վերացնել խտրականությունը՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական և մշակութային իրավունքների իրագործման ոլորտում և ազգային դատարանների ու պետական հաստատությունների միջոցով արդյունավետ միջոցներ ձեռնարկել ռասայական խտրականության գործողությունների դեմ: Նրանք երաշխավորում են, որ հասարակական իշխանությունները և հաստատությունները նույնպես չեն օժանդակի, պաշտպանի կամ աջակցի առանձին անձանց կամ կազմակերպությունների կողմից իրականացվող ռասայական խտրականությանը, ինչպես նաև պարտավորվում են վերանայել կառավարական, ազգային և տեղական քաղաքականությունը և ուղղել կամ չեղյալ հայտարարել այն օրենքները, նորմերն ու դրույթները, որոնք հանգեցնում են ռասայական խտրականության: Կոնվենցիայի հոդված 8-ի համաձայն ստեղծվել է 18 անհատապես գործող փորձագետներից բաղկացած Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե, որը կոչված է վերահսկելու և օժանդակելու կոնվենցիայի դրույթների կենսագործմանը: Մասնակից պետությունները պարտավորվում են երկու տարին մեկ անգամ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտեի քննարկմանը ներկայացնել հերթական զեկույց, որտեղ շարադրված են Կոնվենցիայի դրույթների կենսագործման նպատակով ձեռնարկված օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցներ: Յուրաքանչյուր զեկույց արժանանում է երկրի զեկուցող անդամի ուշադրությանը և մանրամասն վերլուծությանը: Եթե 5 տարին լրանալուց հետո պետությունը զեկույց չի ներկայացնում, կոմիտեն իրավագործ է քննել երկրի իրավիճակն առանց զեկույցի: Տես՝ ՄԱԿ-ի և մարդու իրավունքների նյութերի ժողովածու (Compilation of the UN and Human Right), էջ՝ 109-110: Լրացուցիչ նշենք, որ Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 23-ից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱ
Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման
մասին
(21 դեկտեմբերի 1965թ.)

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը հիմնված է բոլոր մարդկանց ներհատուկ արժանապատվության և հավասարության սկզբունքների վրա և որ Կազմակերպության անդամ բոլոր պետությունները պարտավորվել են, համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության հետ, ձեռնարկել համատեղ և առանձին գործողություններ՝ իրականացնելու Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից մեկը, այն է՝ բոլորի համար, առանց ռասայի, սեռի, լեզվի ու կրոնի հիմքով տարբերակման խրախուսելու և զարգացնելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքն ու դրանց պահպանումը,

համարելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ազդարարում է, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով հավասար և որ յուրաքանչյուր մարդ օժտված է այդ հռչակագրում ամրագրված իրավունքներով ու ազատություններով՝ առանց որևէ տարբերակման, մասնավորապես, ռասայի, մաշկի գույնի կամ ազգային ծագման հիմքով,

համարելով, որ բոլորը հավասար են օրենքի առջև և ունեն ամեն խտրականությունից ու խտրականության հրահրումից օրենքով հավասարապես պաշտպանվելու իրավունք,

համարելով, որ Միավորված ազգերի կազմակերպությունը դատապարտել է զաղութատիրությունը և դրա հետ կապված սեգրեգացիայի ու խտրականության պրակտիկան, ինչ ձևով և որտեղ էլ այն դրսևորվելիս լինի, և որ Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին 1960թ. դեկտեմբերի 14-ի հռչակագիրը (Գլխավոր ասամբլեայի 1514 (15) բանաձև) հաստատել և հանդիսավոր կերպով ազդարարել է այդ պրակտիկային անհապաղ ու անվերապահորեն վերջ տալու անհրաժեշտությունը,

համարելով, որ Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին Միավորված ազգերի կազմակերպության 1963թ. նոյեմբերի 20-ի հռչակագիրը (Գլխավոր ասամբլեայի 1904 (18) բա-

նաձև) հաստատում է ողջ աշխարհում ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով շուտափույթ վերացնելու և մարդու անձի արժանապատվության գիտակցումն ու հարգանքն ապահովելու անհրաժեշտությունը,

համոզված լինելով, որ ռասայական տարբերության վրա հիմնված գերազանցության ցանկացած տեսություն գիտական առումով կեղծ է, բարոյականության տեսանկյունից՝ դատապարտելի, իսկ սոցիալական առումով՝ անարդարացի ու վտանգավոր, և որ ռասայական խտրականության համար արդարացում լինել չի կարող թե՛ տեսության մեջ, թե՛ պրակտիկայում,

հաստատելով, որ ռասայի, մաշկի գույնի կամ էթնիկական ծագման հատկանիշով մարդկանց միջև խտրականությունը խոչընդոտում է ազգերի միջև բարեկամական ու խաղաղ հարաբերություններին և կարող է հանգեցնել ժողովուրդների միջև խաղաղության ու անվտանգության, ինչպես նաև անգամ նույն պետության ներսում անձանց ներդաշնակ համագործակցության խախտմանը,

համոզված լինելով, որ ռասայական անջրպետների գոյությունը հակասում է մարդկային ցանկացած հասարակության իդեալներին, անհանգստացած լինելով աշխարհի որոշ շրջաններում դեռևս առկա ռասայական խտրականության դրսևորումներից և ռասայական գերազանցության կամ ատելության վրա հիմնված պետական այնպիսի քաղաքականությունից, ինչպիսին են ապարտեիդը, սեգրեգացիան կամ անջատողականությունը,

լի վճռականությամբ՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները շուտափույթ վերացնելու համար ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով և կանխարգելելու ու վերացնելու ռասիստական տեսություններն ու պրակտիկան՝ ռասաների միջև փոխընթերցմանը նպաստելու և ռասայական սեգրեգացիայի ու ռասայական խտրականության բոլոր ձևերից ազատ միջազգային հանրություն ստեղծելու նպատակով,

ուշադրության առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից 1958թ. ընդունված Ջբաղվածության և աշխատանքի բնագավառում խտրականության մասին կոնվենցիան և Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության կողմից 1960թ. ընդունված կրթության բնագավառում խտրականությունը վերացնելու մասին կոնվենցիան,

ցանկանալով իրականացնել Միավորված ազգերի կազմակերպության՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերը վերացնելու մասին հռչակագրում ամրագրված սկզբունքները և այդ նպատակով

ապահովել գործնական միջոցառումների շուտափույթ իրագործումը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Մաս 1

Յոդված 1

1. Սույն Կոնվենցիայում «նասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ծանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների:

2. Սույն Կոնվենցիան չի կիրառվում այն տարբերակումների, բացառությունների կամ նախապատվությունների նկատմամբ, որոնք սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները սահմանում են քաղաքացիների և քաղաքացի չհանդիսացող անձանց միջև:

3. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մասնակից պետությունների ազգային պատկանելությանը, քաղաքացիությանը կամ հպատակագրմանը վերաբերող օրենսդրության դրույթների վրա որևէ կերպ ազդեցություն ունեցող, պայմանով, որ նման դրույթները խտրական չեն որևէ որոշակի ազգության նկատմամբ:

4. Հատուկ միջոցառումները, որոնք կիրառվում են, բացառապես, ռասայական կամ էթնիկական այնպիսի որոշակի խմբերի կամ անհատների համապատասխան առաջընթացն ապահովելու նպատակով, որոնք կարիք ունեն նման խմբերի կամ անհատների կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հավասար օգտագործումն ու իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ պաշտպանության, չեն դիտվում որպես ռասայական խտրականություն, պայմանով, այնուամենայնիվ, որ այդ միջոցառումները չեն հանգեցնում ռասայական տարբեր խմբերի համար առանձին իրավունքների պահպանմանը և չեն շարունակվի այն նպատակներին հասնելուց հետո, հանում որոնց դրանք կիրառվել էին:

Յոդված 2

1. Մասնակից պետությունները դատապարտում են ռասայական խտրականությունն ու պարտավորվում են անհապաղ, բոլոր հնարավոր եղանակներով վարել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման քաղաքականություն և նպաստել բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը. այդ նպատակով՝

(ա) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չներգրավել ռասայական խտրականության որևէ գործողության կամ պրակտիկայի մեջ՝ ընդդեմ անձանց, անձանց խմբերի կամ հաստատությունների, և երաշխավորել, որ պետական բոլոր մարմիններն ու հաստատությունները, ինչպես ազգային, այնպես էլ տեղական, կգործեն այդ պարտավորությանը համապատասխան,

(բ) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չխրախուսել, չպաշտպանել և չաջակցել որևէ անձի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականության,

(գ) յուրաքանչյուր մասնակից պետություն ազգային ու տեղական մասշտաբով ձեռնարկում է արդյունավետ միջոցներ՝ կառավարության քաղաքականության վերանայման, ինչպես նաև խտրականության առաջացմանը կամ հավերժացմանը հանգեցնող ցանկացած օրենք և ենթաօրենսդրական ակտ փոփոխելու, վերացնելու կամ չեղյալ հայտարարելու համար,

(դ) յուրաքանչյուր մասնակից պետություն, օգտագործելով բոլոր համապատասխան, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, օրենսդրական, միջոցները, արգելում կամ վերացնում է ցանկացած անձի, խմբի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականությունը,

(ե) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է, համապատասխան դեպքերում, խրախուսել ինտեգրացիոն բազմառասայական կազմակերպություններն ու շարժումները և ռասաների միջև անջրպետների վերացմանն ուղղված այլ միջոցները, և չպաշտպանել ոչինչ, ինչը նպաստում է ռասայական բաժանման խորացմանը:

2. Մասնակից պետությունները սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում ձեռնարկում են, երբ հանգամանքները պահանջում են, հատուկ ու կոնկրետ միջոցներ՝ ապահովելու համար ռասայական որոշ խմբերի կամ այդ խմբերին պատկանող անձանց պատշաճ զարգացումն ու պաշտպանությունը՝ նրանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք ու հավասար օգտագործումը երաշխավորելու նպատա-

կով: Այդպիսի միջոցները ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն ռասայական տարբեր խմբերի համար անհավասար կամ հատուկ իրավունքների պահպանմանը այն նպատակների իրագործումից հետո, հանուն որոնց դրանք ձեռնարկված են եղել:

Յոթված 3

Մասնակից պետությունները, մասնավորապես, դատապարտում են ռասայական սեգրեգացիան ու ապարտեիդը և պարտավորվում են իրենց իրավագործության ներքո գտնվող տարածքներում կանխարգելել, արգելել ու վերացնել նման բնույթի ցանկացած պրակտիկա:

Յոթված 4

Մասնակից պետությունները դատապարտում են ցանկացած քարոզչություն և բռնություն այն կազմակերպություններին, որոնք հիմնված են մի ռասայի կամ մաշկի որոշակի գույն կամ էթնիկական ծագում ունեցող անձանց խմբի գերազանցության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ռասայական ատելությունն ու խտրականությունը, ինչ ձևով էլ որ դրանք դրսևորվելիս լինեն. նրանք պարտավորվում են ձեռնարկել անհապաղ ու դրական միջոցներ՝ ուղղված նման խտրականության ցանկացած հրահրում կամ իրականացում վերացնելուն և, այդ նպատակով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքների ու սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում շարադրված իրավունքներին համապատասխան, այլ միջոցների թվում՝

(ա) օրենքով պատժելի հանցանք են համարում ռասայական գերազանցության կամ ռասայական ատելության վրա հիմնված գաղափարների տարածումը, ռասայական խտրականության հրահրումը, ինչպես նաև ցանկացած ռասայի կամ մաշկի այլ գույն կամ էթնիկական այլ ծագում ունեցող անձանց խմբի դեմ ուղղված բռնության գործողությունները կամ դրանց հրահրումը, ինչպես նաև ռասիստական գործունեությանն օգնություն տրամադրելը, ներառյալ՝ նման գործունեության ֆինանսավորումը,

(բ) հակաօրինական են հայտարարում և արգելում են այն կազմակերպությունները, ինչպես նաև կազմակերպված ու ցանկացած այլ քարոզչական գործունեություն, որոնք խրախուսում ու հրահրում են ռասայական խտրականություն, և մասնակցությունը նման կազմակերպություններին կամ գործունեությանը համարում են օրենքով պատժելի հանցագործություն,

(գ) պետական իշխանության ազգային կամ տեղական մարմիններին կամ պետական հաստատություններին չեն թույլատրում խրախուսել կամ հրահրել ռասայական խտրականություն:

Յոթված 5

Սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում շարադրված պարտավորություններին համապատասխան, մասնակից պետությունները պարտավորվում են արգելել ու վերացնել ռասայական խտրականությունն իր բոլոր ձևերով և ապահովել յուրաքանչյուրի իրավահավասարությունն օրենքի առջև՝ առանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ էթնիկական ծագման տարբերակման, հատկապես, հետևյալ իրավունքների իրականացման կապակցությամբ.

(ա) դատարանի և արդարադատություն իրականացնող մյուս բոլոր մարմինների առջև հավասարության իրավունքի,

(բ) անձնական անվտանգության և բռնությունից կամ մարմնական վնասվածքներից պետության կողմից պաշտպանության իրավունքի՝ անկախ այն բանից, դրանք դրսևորվել են պետական պաշտոնյաների, թե առանձին անձանց կամ հաստատությունների կողմից,

(գ) քաղաքական իրավունքների կապակցությամբ, մասնավորապես, ընտրությունների մասնակցելու, ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա ընտրելու և ընտրվելու իրավունքի, երկրի կառավարմանը, ինչպես նաև հանրային գործերին ցանկացած մակարդակով մասնակցելու իրավունքի և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունքի,

(դ) քաղաքացիական այլ իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝

(i) պետության սահմանների ներսում տեղաշարժի և բնակության ազատության իրավունքի,

(ii) ցանկացած, ներառյալ իր սեփական, երկրից հեռանալու և իր սեփական

երկիրը վերադառնալու իրավունքի,

(iii) քաղաքացիության իրավունքի,

(iv) ամուսնանալու և ամուսին ընտրելու իրավունքի,

(v) ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականության իրավունքի,

(vi) ժառանգման իրավունքի,

(vii) մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի,

(viii) համոզմունքների ազատության և ազատ արտահայտվելու իրավունքի,

(ix) խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքի,

(ե) տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝

(i) աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար և նպաստավոր պայմանների, գործազրկությունից պաշտպանվածության, հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության, արդար և բավարար վարձատրության իրավունքի,

(ii) արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքի,

(iii) բնակարանի իրավունքի,

(iv) առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական սպասարկման իրավունքի,

(v) կրթության և մասնագիտական նախապատրաստման իրավունքի,

(vi) մշակութային կյանքին հավասար մասնակցության իրավունքի,

(գ) ցանկացած վայր կամ հասարակական սպասարկման համար նախատեսված ցանկացած օբյեկտ, ինչպես, օրինակ, տրանսպորտ, հյուրանոցներ, ռեստորաններ, սրճարաններ, թատրոններ ու զբոսայգիներ, մուտք գործելու իրավունքի:

Ֆոդված 6

Մասնակից պետություններն իրավասու ներպետական դատարանների և պետական այլ հաստատությունների միջոցով իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար երաշխավորում են արդյունավետ պաշտպանություն և խախտված իրավունքների վերականգնում ընդդեմ ռասայական խտրականության ցանկացած գործողության, որը սույն Կոնվենցիային հակառակ խախտում է սլոյալ անձի իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպես նաև՝ այդ ստյաններում նման խտրականության հետևանքով պատճառված ցանկացած վնասի արդար և համարժեք հատուցում կամ բավարարում ստանալու իրավունքը:

Ֆոդված 7

Մասնակից պետությունները պարտավորվում են անհապաղ ու արդյունավետ միջոցներ ձեռնարկել, մասնավորապես, դասավանդման, կրթության, մշակույթի և տեղեկատվության բնագավառներում ռասայական խտրականության հանգեցնող նախապաշարմունքներ-

րի դեմ պայքարի, ազգերի և ռասայական կամ էթնիկական խմբերի միջև փոխըմբռնման, հանդուրժողականության ու բարեկամության խրախուսման, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված ազգերի կազմակերպության հռչակագրի և սույն Կոնվենցիայի նպատակներն ու սկզբունքները հանրամատչելի դարձնելու նպատակով:

Մաս 2

Ֆոդված 8

1. Ստեղծվում է Ռասայական խտրականության վերացման կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ կազմված բարոյական բարձր նկարագիր ունեցող և ճանաչված անաչառությամբ օժտված փորձագետներից, որոնց ընտրում են մասնակից պետություններն իրենց քաղաքացիներից և որոնք իրենց պարտականություններն իրականացնում են անձնապես, ընդ որում հաշվի է առնվում արդարացի աշխարհագրական բաշխումն ու քաղաքակրթության տարբեր ձևերի, ինչպես նաև իրավական գլխավոր համակարգերի ներկայացուցչությունը:

2. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, մասնակից պետությունների առաջադրած անձանց ցուցակից: Յուրաքանչյուր մասնակից իր քաղաքացիներից կարող է առաջադրել մեկ թեկնածու:

3. Սկզբնական ընտրություններն անցկացվում են սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս անց: Յուրաքանչյուր ընտրության օրվանից առնվազն երեք ամիս առաջ Գլխավոր քարտուղարն անդամ պետություններին հասցեագրած նամակով նրանց հրավիրում է երկու ամսվա ընթացքում առաջադրելու իրենց թեկնածուներին: Գլխավոր քարտուղարը պատրաստում է այդ կարգով առաջադրված բոլոր անձանց այբբենական ցուցակը՝ նշելով նրանց առաջադրած մասնակից պետությունները, և այն ներկայացնում Կոնվենցիայի մասնակից պետություններին:

4. Կոմիտեի անդամների ընտրություններն անցկացվում են Կոնվենցիայի մասնակից պետությունների նիստում, որ հրավիրում է Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում: Այդ նիստում, որում քվորում ձևավորում է մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեի ընտրված

անդամներ են համարվում այն թեկնածուները, որոնք ստանում են ձայների առավելագույն քանակը և Կոնվենցիայի մասնակից պետությունների՝ ներկա ու քվեարկությանը մասնակցող ներկայացուցիչների ձայների բացարձակ մեծամասնությունը:

5. (ա) Կոմիտեի անդամներն ընտրվում են չորս տարով, սակայն առաջին ընտրություններում ընտրված ինն անդամների լիազորություններն ավարտվում են երկամյա ժամկետի ավարտին: Առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ ինն անդամների անունները որոշում է Կոմիտեի նախագահը՝ վիճակահանությամբ,

(բ) չնախատեսված թափուր տեղերը լրացնելու համար Կոնվենցիայի անդամ պետությունը, որի փորձագետն այլևս Կոմիտեի անդամ չէ, իր քաղաքացիներից նշանակում է այլ փորձագետի՝ Կոմիտեի հավանությունն ստանալու պայմանով:

6. Մասնակից պետությունները պատասխանատու են Կոմիտեի անդամների ծախսերը ծածկելու համար՝ Կոմիտեում նրանց պարտականությունների կատարման ժամանակահատվածում:

Ֆոդված 9

Մասնակից պետությունները պարտավորվում են Կոմիտեի կողմից քննարկման համար Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել զեկույց իրենց ընդունած օրենսդրական, դատական, վարչական կամ այլ միջոցների մասին, որոնց օգնությամբ կենսագործվում են սույն Կոնվենցիայի դրույթները՝

(ա) տվյալ պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, և

(բ) հետագայում յուրաքանչյուր երկու տարին մեկ և ամեն անգամ, երբ դա պահանջում է Կոմիտեն: Կոմիտեն կարող է Կոնվենցիայի մասնակից պետություններից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

2. Ամեն տարի Կոմիտեն Գլխավոր քարտուղարի միջոցով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային զեկույց է ներկայացնում իր գործունեության մասին և կարող է ներկայացնել առաջարկություններ ու ընդհանուր հանձնարարականներ՝ հիմնված մասնակից պետություններից ստացված զեկույցների ու տեղեկատվության ուսումնասիրման վրա: Նման առաջարկություններն ու ընդհանուր հանձնարարականները հաղորդվում են Գլխավոր ասամբլեային Կոնվենցիայի մասնակից պետությունների դիտողությունների հետ մեկտեղ, եթե այդպիսիները կան:

Ֆոդված 10

1. Կոմիտեն ընդունում է իր կանոնակարգը:

2. Կոմիտեն ընտրում է իր պաշտոնատար անձանց երկու տարի ժամկետով:

3. Կոմիտեի քարտուղարությունն ապահովվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից:

4. Կոմիտեի նիստերը, սովորաբար, անցկացվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում:

Ֆոդված 11

1. Եթե որևէ մասնակից պետություն գտնում է, որ մյուս մասնակից պետությունը չի կատարում սույն Կոնվենցիայի դրույթները, ապա այն կարող է այդ մասին տեղյակ պահել Կոմիտեին: Կոմիտեն այնուհետև այդ մասին հաղորդումը հանձնում է շահագրգիռ մասնակից պետությանը: Ծանուցում ստացած պետությունը երեք ամսվա ընթացքում Կոմիտեին է ներկայացնում տվյալ հարցը լուսաբանող գրավոր բացատրություններ կամ հայտարարություն և իր կողմից ձեռնարկվելիք միջոցները:

2. Եթե հարցը երկու կողմերին բավարարող կարգավորում չի ստանում ոչ երկկողմ բանակցությունների, ոչ նրանց համար մատչելի այլ ճանապարհով, ապա ծանուցումն ստացած պետության կողմից սկզբնական ծանուցումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում այդ երկու պետություններից ցանկացածն իրավունք ունի վերստին այդ հարցը հանձնել Կոմիտեի քննությանը՝ Կոմիտեին, ինչպես նաև մյուս պետությանը համապատասխան ծանուցում ներկայացնելու միջոցով:

3. Կոմիտեն սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան իրեն հանձնված հարցը քննարկում է այն բանից հետո, երբ հավաստիանում է, որ, միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներին համապատասխան, օգտագործվել և սպառվել են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Այս դրույթը չի կարող կիրառվել, եթե իրավական պաշտպանության տրամադրումն անհիմն կերպով ձգձգվում է:

4. Իր քննարկմանը հանձնված ցանկացած հարցի առթիվ Կոմիտեն կարող է շահագրգիռ մասնակից պետություններից պահանջել գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն:

5. Եթե Կոմիտեում քննարկվում է սույն հոդվածի դրույթներից բխող որևէ հարց, ապա շահագրգիռ մասնակից պետություններն իրավունք ունեն հարցի քննարկմանը մասնակցելու համար ուղարկել

իրենց ներկայացուցիչներին՝ առանց տվյալ հարցի քննարկման ընթացքում քվեարկելու իրավունք ունենալու:

Յոթերորդ 12

1. (ա) Այն բանից հետո, երբ Կոմիտեն ստանում և մանրամասնորեն ստուգում է իր կողմից անհրաժեշտ համարվող ողջ տեղեկատվությունը, նախագահը նշանակում է Հատուկ հաշտարար հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ կազմված 5 անդամից, որոնք կարող են լինել կամ չլինել Կոմիտեի անդամներ: Կոմիտեի անդամները նշանակվում են վեճին մասնակից կողմերի միաձայն համաձայնությամբ, և Հանձնաժողովը սույն Կոնվենցիայի դրույթների պահպանման հիման վրա տվյալ հարցի սիրահոժար կարգավորման նպատակով շահագրգիռ պետություններին է տրամադրում իր բարի ծառայությունները:

(բ) Եթե Կոմիտեի ողջ կազմի կամ նրա մի մասի կապակցությամբ վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունների միջև երեք ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չի բերվում, ապա Հանձնաժողովի այն անդամները, որոնց նշանակման վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվել վեճի մասնակից պետությունների միջև, ընտրվում են Կոմիտեի կողմից՝ նրա անդամներից, փակ քվեարկությամբ, ձայների երկու երրորդի մեծամասնությամբ:

2. Հանձնաժողովի անդամներն իրենց պարտականությունները կատարում են անձնապես: Նրանք չպետք է լինեն վեճի կողմ հանդիսացող մասնակից պետության կամ Կոնվենցիային չմասնակցող պետության քաղաքացիներ:

3. Հանձնաժողովն ընտրում է իր նախագահին և ընդունում է իր կանոնակարգը:

4. Հանձնաժողովի նիստերը սովորաբար անցկացվում են Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում և, Հանձնաժողովի որոշմամբ, ցանկացած այլ վայրում:

5. Քարտուղարությունը, որն ապահովում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, սպասարկում է նաև Հանձնաժողովին, եթե պետությունների միջև ծագած վեճը հանգեցնում է Հանձնաժողովի ստեղծման:

6. Վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունները հավասարապես կրում են Հանձնաժողովի անդամների ծախսերը՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի կողմից ներկայացվող նախահաշվին համապատասխան:

7. Գլխավոր քարտուղարն իրավունք ունի վճարել Հանձնաժողով-

վի անդամների ծախսերը, եթե դա անհրաժեշտ է, մինչև վեճի կողմեր հանդիսացող մասնակից պետությունների կողմից այդ ծախսերի փոխհատուցումը սույն հոդվածի 6-րդ կետին համապատասխան:

8. Կոմիտեի ստացած և ուսումնասիրած տեղեկատվությունը տրամադրվում է Հանձնաժողովին, և Հանձնաժողովը կարող է շահագրգիռ պետություններին առաջարկել ներկայացնելու գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն:

Յոթերորդ 13

1. Երբ Հանձնաժողովն ամբողջությամբ քննության է առել հարցը, այն նախապատրաստում և Կոմիտեի նախագահին է ներկայացնում կողմերի միջև վեճի փաստին վերաբերող բոլոր հարցերին առնչվող իր եզրակացությունները բովանդակող զեկույց և այնպիսի հանձնարարականներ, որոնք ինքն անհրաժեշտ է համարում վեճի լուծման համար:

2. Կոմիտեի նախագահը Հանձնաժողովի զեկույցն ուղարկում է վեճին մասնակից յուրաքանչյուր պետության: Երեք ամսվա ընթացքում այդ պետությունները Կոմիտեի նախագահին հայտնում են՝ համաձայն են արդյոք իրենք Հանձնաժողովի զեկույցում բովանդակված առաջարկություններին:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված ժամանակահատվածից հետո Հանձնաժողովի նախագահը Հանձնաժողովի զեկույցը և շահագրգիռ մասնակից պետությունների հայտարարություններն ուղարկում է Կոնվենցիային մասնակից մյուս պետություններին:

Յոթերորդ 14

1. Մասնակից պետությունը ցանկացած ժամանակ կարող է հայտարարել, որ ինքը ճանաչում է Կոմիտեի իրավասությունը՝ իր իրավազորության սահմաններում ընդունելու և քննության առնելու հաղորդումներ առանձին անձանցից կամ անձանց խմբերից, որոնք պնդում են, թե իրենք տվյալ մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայում ամրագրված որևէ իրավունքի խախտման գոյն են: Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե այն վերաբերում է Կոնվենցիայի՝ այդպիսի հայտարարություն չարած մասնակից պետությանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հայտարարություն արած ցանկացած մասնակից պետություն կարող է հիմնել կամ նշել իր ներպետական իրավական համակարգի շրջանակներում գործող մարմին, որն իրավասու կլինի ընդունելու և իր իրավազորության սահմաններում քննության առնելու այն առանձին անձանց

կամ անձանց խմբերի գանգատները, որոնք հայտարարում են, թե իրենք սույն Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից որևէ մեկի խախտման գոհ են, և որոնք սպառել են իրավական պաշտպանության տեղական մյուս մատչելի միջոցները:

3. Սույն հոդվածի առաջին կետին համապատասխան արված հայտարարությունը, ինչպես նաև սույն հոդվածի երկրորդ կետին համապատասխան հիմնված կամ նշված ցանկացած մարմնի անվանումը համապատասխան մասնակից պետության կողմից ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն առաքում է մյուս մասնակից պետություններին: Հայտարարությունը կարող է ցանկացած ժամանակ չեղյալ հայտարարվել այդ մասին Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով, սակայն այդ չեղյալ հայտարարումը չի անդրադառնում այն հաղորդումների վրա, որոնք քննության են առնվում Կոմիտեի կողմից:

4. Գանգատների ցուցակը կազմում է սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան հիմնված կամ նշված մարմինը, իսկ այդ ցուցակի հաստատված պատճեններն ամեն տարի համապատասխան ուղիներով հանձնվում են Գլխավոր քարտուղարին, ընդսին դրանց բովանդակությունը ենթակա չէ հրապարակման:

5. Այն դեպքում, երբ գանգատարկուն բավարարված չէ սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան հիմնված կամ նշված մարմնի գործողություններով, այն իրավունք ունի վեց ամսվա ընթացքում սովյալ հարցը հանձնել Կոմիտեին:

6. (ա) Կոմիտեն իրեն հանձնված ցանկացած հաղորդում խորհրդապահական կարգով ներկայացնում է Կոնվենցիայի որևէ դրույթի խախտման մեջ մեղադրվող մասնակից պետության ուշադրությանը, սակայն համապատասխան անձի կամ անձանց խմբի ինքնությունը չի բացահայտվում առանց նրա կամ նրանց համաձայնության: Կոմիտեն չի ընդունում անանուն հաղորդումներ:

(բ) Ստացած պետությունը երեք ամսվա ընթացքում Կոմիտե է ներկայացնում այդ հարցը լուսաբանող գրավոր բացատրություններ կամ հայտարարություններ և այն միջոցները, որոնք կարող էին կիրառվել այդ պետության կողմից:

7. (ա) Կոմիտեն հաղորդումները քննության է առնում՝ հաշվի առնելով շահագրգիռ մասնակից պետության և գանգատարկուի կողմից իրեն տրամադրված ողջ տեղեկատվությունը: Կոմիտեն քննության չի առնում որևէ գանգատարկուի հաղորդում, քանի դեռ չի հավաստիանում, որ գանգատարկուն սպառել է իրավական պաշտպա-

նության բոլոր ներպետական մատչելի միջոցները: Այդ կանոնը, սակայն, չի գործում այն դեպքում, երբ այդ միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է:

(բ) Կոմիտեն իր առաջարկություններն ու հանձնարարականները, եթե այդպիսիք կան, ուղարկում է շահագրգիռ մասնակից պետությանն ու գանգատարկուին:

8. Կոմիտեն իր ամենամյա զեկույցում ընդգրկում է այդ հաղորդումների ամփոփագիրը և, անհրաժեշտության դեպքում, շահագրգիռ մասնակից պետությունների բացատրությունների ու հայտարարությունների համառոտ շարադրանքը, ինչպես նաև իր իսկ առաջարկություններն ու հանձնարարականները:

9. Կոմիտեն իրավասու է սույն հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնելու միայն այն դեպքում, երբ Կոնվենցիայի առնվազն տասը մասնակից պետություններ սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան հայտարարություններ են արել:

Ֆոդված 15

1. Մինչև Գլխավոր ասամբլեայի 1960թ. դեկտեմբերի 14-ի 1514 (15) բանաձևում բովանդակվող Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախության շնորհելու մասին հռչակագրի նպատակների իրագործումը, սույն Կոնվենցիայի դրույթները ոչ մի կերպ չեն սահմանափակում գանգատներ ներկայացնելու՝ միջազգային այլ փաստաթղթերով կամ Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների կողմից այդ ժողովուրդներին տրամադրված իրավունքը:

2. (ա) Սույն Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան հիմնված Կոմիտեն գանգատների պատճեններն ստանում է Միավորված ազգերի կազմակերպության այն մարմիններից, որոնք զբաղվում են սույն Կոնվենցիայի սկզբունքներին ու նպատակներին անմիջականորեն առնչվող հարցերով, և նրանց է ներկայացնում այդ գանգատների վերաբերյալ իր կարծիքներն ու հանձնարարականները խնամարկյալ և ինքնակառավարում չունեցող տարածքների և բոլոր այն տարածքների բնակիչներից ստացված գանգատները քննության առնելիս, որոնց վերաբերյալ, սույն Կոնվենցիայով նախատեսված հարցերի առնչությամբ, կիրառվում է 1514 (15) բանաձևը և որոնք քննության են առնչվում այդ մարմինների կողմից:

(բ) Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններից ստանում է կառավարող տերությունների կողմից սույն կետի (ա) ենթակետում հիշատակված տարածքներում իրա-

գործվող օրենսդրական, դատական, վարչական և սույն Կոնվենցիայի սկզբունքներին ու նպատակներին անմիջականորեն առնչվող այլ միջոցառումների վերաբերող զեկույցների օրինակները, ինչպես նաև այդ առթիվ արտահայտում է իր կարծիքն ու հանձնարարականներ առաջարկում այդ մարմիններին:

3. Կոմիտեն Գլխավոր ասամբլեային ներկայացվող իր զեկույցում ընդգրկում է գանգատների ու Միավորված ազգերի կազմակերպության մարմիններից ստացված զեկույցների ամփոփումները, ինչպես նաև Կոմիտեի՝ նշված գանգատներին և զեկույցներին վերաբերող կարծիքն ու հանձնարարականները:

4. Կոմիտեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարից պահանջում է սույն Կոնվենցիայի 2-րդ կետի (ա) ենթակետում հիշատակված 12 տարածքների վերաբերյալ Կոնվենցիայի նպատակներին առնչվող և նրա տրամադրության ներքո գտնվող ողջ տեղեկատվությունը:

Ֆոդված 16

Սույն Կոնվենցիայի՝ վեճերի կարգավորմանը կամ բողոքների քննարկմանը վերաբերող դրույթները կիրառվում են՝ առանց խոչընդոտելու խտրականության բնագավառում վեճերի կարգավորման կամ բողոքների քննարկման այլ ընթացակարգերի, որոնք սահմանված են Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված հաստատությունների հիմնարար փաստաթղթերում կամ նրանց կողմից ընդունված կոնվենցիաներում, և մասնակից պետություններին չեն խանգարում օգտագործելու վեճերի կարգավորման այլ ընթացակարգեր՝ ընդհանուր կամ նրանց միջև գործող հատուկ միջազգային համաձայնագրերին համապատասխան:

Մաս 3

Ֆոդված 17

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ կազմակերպության մասնագիտացված հաստատությունների ցանկացած անդամի, Միջազգային դատարանի ստատուտի ցանկացած մասնակից պետության և ցանկացած այլ պետության համար, որը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից հրավիրվել է մասնակցելու սույն Կոնվենցիային:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Ֆոդված 18

1. Սույն Կոնվենցիան բաց է միանալու սույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած պետության համար:

2. Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

Ֆոդված 19

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քսանյոթերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

2. Քսանյոթերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո սույն Կոնվենցիան վավերացրած կամ դրան միացած յուրաքանչյուր պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Ֆոդված 20

1. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն ստանում և հանձնում է այն բոլոր պետություններին, որոնք են կամ կարող են դառնալ սույն Կոնվենցիայի մասնակիցներ, վավերացման կամ միանալու պահին արված վերապահումները: Վերապահման դեմ առարկող ցանկացած պետություն վերը նշված ծանուցման օրվանից սկսած իննսուներորդ օրվա ընթացքում Գլխավոր քարտուղարին տեղեկացնում է այն մասին, որ ինքը չի ընդունում տվյալ վերապահումը:

2. Սույն Կոնվենցիայի նպատակների և խնդիրների հետ անհամատեղելի վերապահումներն անթույլատրելի են, անթույլատրելի են նաև այն վերապահումները, որոնք կարող են խոչընդոտել սույն Կոնվենցիայի հիման վրա ստեղծված որևէ մարմնի գործունեությանը: Վերապահումն անհամատեղելի կամ գործունեությանը խոչընդոտող է համարվում, եթե Կոնվենցիայի մասնակից պետությունների առնվազն երկու երրորդն առարկում է դրա դեմ:

3. Վերապահումները կարող են չեղյալ հայտարարվել ցանկացած ժամանակ, Գլխավոր քարտուղարին հղված համապատասխան ծանուցման միջոցով:

Այդպիսի ծանուցումն ուժի մեջ է մտնում այն ստանալու օրը:

Ֆոդված 21

Յուրաքանչյուր մասնակից պետություն սույն Կոնվենցիան կարող է չեղյալ հայտարարել այդ մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում այդ մասին Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:

Ֆոդված 22

Սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ երկու կամ մի քանի մասնակիցների միջև ծագած ցանկացած վեճ, որը չի կարգավորվում բանակցությունների կամ սույն Կոնվենցիայում հատուկ նախատեսված ընթացակարգերի միջոցով, վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով հանձնվում է Միջազգային դատարանի լուծմանը, եթե վիճող կողմերը չեն պայմանավորվել կարգավորման այլ եղանակների շուրջ:

Ֆոդված 23

1. Սույն Կոնվենցիայի վերանայման մասին պահանջը կարող է ներկայացվել ցանկացած ժամանակ ցանկացած մասնակից պետության կողմից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հղված գրավոր ծանուցման միջոցով:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը որոշում է, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկել նման պահանջի կապակցությամբ, եթե այդպիսիներն անհրաժեշտ են:

Ֆոդված 24

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված բոլոր պետություններին հաղորդում է հետևյալ տեղեկությունները.

(ա) 17-րդ և 18-րդ հոդվածներին համապատասխան ստորագրման, վավերացման և միանալու մասին,

(բ) սույն Կոնվենցիայի՝ 19-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու մասին,

(գ) 14, 20 և 23-րդ հոդվածներին համապատասխան ստացված հաղորդումների ու հայտարարությունների մասին,

(դ) 21-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին:

Ֆոդված 25

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, պահվում են Միավորված ազգերի կազմակերպության արխիվում:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկում է Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետում հիշատակված կատեգորիաներից ցանկացածին պատկանող բոլոր պետություններին:

Վրաստանը «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիային միացել է 1999 թվականի հունիսի 2-ին, այն ուժի մեջ է մտել Վրաստանում մեկ ամիս անց՝ 1999թ. հուլիսի 2-ին³²:

1975 թվականին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց «Խոշտանգումների և այլ դաժան, անարդար կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչկագիրը»³³.

32 Организация Объединенных Наций, А/55/203, Генеральная Ассамблея Distr.: General, 19 July, 2000, Russian, Original: English, Пятьдесят пятая сессия, Пункт 114 предварительной повестки дня, Ликвидация расизма и расовой дискриминации, О состоянии Международной конвенции о ликвидации всех форм расовой дискриминации, Доклад Генерального секретаря, Приложение, Список государств - участников Международной, конвенции о ликвидации всех форм расовой дискриминации по состоянию на 30 июня 2000 года.

33 Ոչ պաշտոնական բարձրագույն ռուսերենից:

**Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ
նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց
բոլոր անձանց պաշտպանության մասին հռչկագիրը
(Декларация о защите всех лиц от пыток и других
жестоких, бесчеловечных или унижающих достоинство
видов обращения и наказания)**

Գլխավոր Ասամբլեան

հաշվի առնելով, որ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված սկզբունքներին համապատասխան մարդուն բնորոշ արժանապատվության և մարդկության բոլոր անդամների հավասար և անառարկելի իրավունքների ընդունումն ամբողջ աշխարհում՝ հիմնարար ազատությունների, արդարադատության և խաղաղության գրավականն է,

հաշվի առնելով, որ այս իրավունքները բխում են մարդկային արժանապատվությունից,

հաշվի առնելով նաև Կանոնադրության, մասնավորապես, 55-րդ հոդվածի պարտականությունները՝ գործակցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգանքին և կատարմանը,

հաշվի առնելով Մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրի 5-րդ (1) և քաղաքական ու քաղաքացիական իրավունքների մասին Միջազգային պակտի 7-րդ (2) հոդվածները, որոնք երկուսն էլ նախատեսում են, որ ոչ ոք չի կարող ենթարկվել կտտանքների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների, և, որի տեքստը կցվում է սույն բանաձևին՝ որպես արդյունավետ իշխանություն իրականացնող բոլոր պետությունների և ինքնավար այլ միավորների հիմնական սկզբունք:

**1975 թվականի դեկտեմբերի 9-ի
2433-րդ լիազումար նիստ**

Հավելված

Հռչակագիր բոլոր անձանց կտտանքներից և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի և պատժի տեսակներից պաշտպանելու մասին:

Հոդված 1

1. Սույն Հռչակագրի նպատակների համար կտտանքը նշանակում է ցանկացած գործողություն, որի միջոցով պաշտոնական անձի կողմից կամ նրա հրահրմամբ մարդուն միտումնավոր հասցվում է ֆիզիկական կամ բարոյական ուժեղ ցավ կամ տառապանք՝ նպատակ հետապնդելով՝ նրանից կամ որևէ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն կորզել, պատժել որևէ արարքի համար, որը նա կատարել է կամ մեղադրվում է դրանց կատարման համար՝ նրան կամ ուրիշ անձանց վախեցնելու մեթոդով: Այս մեկնաբանության մեջ չեն ներառվում օրինական ազատագրկմանը բնորոշ կամ նրա արդյունք հանիսացող ցավը կամ տանջանքները այն աստիճանով, որքանով, որ դա համատեղելի է ազատագրկվածների հետ վերաբերմունքի կանոնների նվազագույն չափորոշիչներին (3):

2. Կտտանքը դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի խորացված և կանխանաժամակ տեսակ է:

Հոդված 2

Ցանկացած գործողություն, որը կտտանք է կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակ, մարդկային արժանապատվության նկատմամբ վիրավորանք է և պետք է դատապարտվի որպես Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության նպատակների և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտում, որը հռչակված է Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագրում:

Հոդված 3

Ոչ մի պետություն չպետք է թույլ տա կամ համբերատար վերաբերվի կտտանքներին կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների: Այնպիսի բացառիկ հագանանքներ, ինչպիսիք են, օրինակ, պատերազմական իրավիճակները կամ պատերազմի վտանգները, քաղաքական ներքին անկայունությունը կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չեն կարող որպես արդարացում ծառայել կտտանքների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների համար:

Յոդված 4

Յուրաքանչյուր պետություն պետք է սույն Յոճակագրի դրույթներին համապատասխան արդյունավետ միջոցներ ձեռնարկի, որպեսզի իր իրավասությանը թույլ չտա կտտանքներ կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակներ:

Յոդված 5

Օրենքի պաշտպանության համար ստեղծված անձնակազմի և պաշտոնական այլ անձանց նախապատրաստումը, որոնք կարող են պատասխանատվություն կրել ազատազրկված անձանց նկատմամբ, պետք է ապահովի այնպիսի պայմաններ, որի ժամանակ անբողջապես հաշվի են առնվում կտտանքների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների արգելքը: Այս արգելքը անհրաժեշտության դեպքում պետք է նույնպես ներառվի այնպիսի ընդհանուր կանոններում կամ կանոնադրություններում, որոնք վերաբերում են նման անձանց հսկողության տակ պահելու կամ նրանց հարաբերություններ ունենալու հետ յուրաքանչյուրի պարտականություններին և գործառույթներին:

-
- 1) 217 A(III) բանաձև
 - 2) 2200 A(XXI) բանաձև, հավելված
 - 3) First United Nations Congress on the prevention of Crime and the Treatment of offenders: Report by the Secretariat (Միավորված Ազգերի Կազմակերպության հրատարակություն, վաճառքում է N 1956. IV.04, annex I.A.)

Վերոնշյալ հոճակագրի հիման վրա 1984թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ը ընդունեց «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան» (CAT).

ԿՈՆՎԵՆՑԻԱ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՍ ԵՎ ԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՔԻ ՈՒ ՊԱՏՃԻ ԴԵՄ³⁴ (10 դեկտեմբերի 1984թ.)

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները, հաշվի առնելով, որ, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված սկզբունքների համաձայն, մարդկության ընտանիքի բոլոր անդամների հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության աշխարհում խաղաղության հիմքն է,

ընդունելով, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատականությանը ներհատուկ արժանապատվությունից,

հաշվի առնելով Կանոնադրությամբ, մասնավորապես, 55-րդ հոդվածով պետությունների ստանձնած պարտավորությունը՝ աջակցել մարդու հիմնարար իրավունքների ազատությունների համընդհանուր հարգմանն ու պահպանմանը,

հաշվի առնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածն ու Քաղաքացիական քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածը, որոնք երկուսն էլ նախատեսում են, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների ու դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի,

հաշվի առնելով նաեւ 1975թ. դեկտեմբերի 9-ին Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված խոշտանգումների այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագիրը,

կամենալով խոշտանգումների այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ պայքարը ողջ աշխարհում դարձնել ավելի արդյունավետ,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

34 Պաշտոնական հայերեն թարգմանությունը տրամադրել է Միջազգային իրավունքի հայկական ընկերակցությունը:

ՄԱՍ 1

Յոդված 1

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում միջազգային որևէ փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության, որոնք բովանդակում են կամ կարող են բովանդակել ավելի լայն կիրառման դրույթներ:

Յոդված 2

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է օրենսդրական, վարչական, դատական կամ այլ արդյունավետ միջոցներ՝ իր իրավազորության ներքո ցանկացած գտնվող տարածքում խոշտանգումների դեպքերը կանխելու համար:

2. Ոչ մի բացառիկ հանգամանք, ինչպիսին էլ այն լինի՝ պատերազմական դրություն կամ պատերազմի վտանգ, ներքին քաղաքական անկայունություն կամ ցանկացած այլ արտակարգ իրավիճակ, չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում:

3. Վերադաս պետի կամ պետական իշխանության հրամանը չի կարող վկայակոչվել որպես խոշտանգումների արդարացում:

Յոդված 3

1. Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի («refouler») կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վտանգ:

2. Նման հիմքերի առկայությունը որոշելու նպատակով իրավա-

սու իշխանությունները նկատի են առնում գործին առնչվող բոլոր հանգամանքները, ներառյալ, համապատասխան դեպքերում, տվյալ պետությունում մարդու իրավունքների կոպիտ, աղաղակող զանգվածային խախտումների գոյությունը:

Յոդված 4

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ խոշտանգման բոլոր գործողություններն իր քրեական օրենսդրությանը համապատասխան քննության առնվեն որպես հանցագործություններ: Նույնը վերաբերում է խոշտանգման ենթարկելու փորձին, ինչպես նա ցանկացած անձի այն գործողություններին, որոնք ներկայանում են որպես մասնակցություն կամ գործակցություն խոշտանգմանը:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն այս հանցագործությունների համար սահմանում է համապատասխան պատիժներ՝ հաշվի առնելով դրանց ծանր հետևանքները:

Յոդված 5

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել 4-րդ հոդվածում նշված հանցագործությունների նկատմամբ իր իրավազորությունը հետյալ դեպքերում հաստատելու համար.

(a) երբ հանցագործությունները կատարվել են նրա իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում կամ տվյալ պետությունում զրանցված ծովային կամ օդային նավի վրա,

(b) երբ ենթադրյալ հանցագործը տվյալ պետության քաղաքացի է,

(c) երբ զոհը տվյալ պետության քաղաքացի է եթե տվյալ պետությունը նպատակահարմար է գտնում դա:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն համանման կերպով ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր իրավազորությունը նման հանցագործությունների նկատմամբ որոշելու համար այն դեպքերում, երբ ենթադրյալ հանցագործը գտնվում է իր իրավազորությանը ենթակա ցանկացած տարածքում, այդ պետությունը 8-րդ հոդվածին համապատասխան չի հանձնում նրան սույն հոդվածի 1-ին կետում նշված պետություններից որևէ մեկին:

3. Սույն Կոնվենցիան չի բացառում ներպետական օրենսդրությանը համապատասխան ցանկացած քրեական իրավազորության իրականացում:

Յոդված 6

1. Ցանկացած մասնակից պետություն, որի տարածքում գտնվում է 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որևէ մեկի կատարման մեջ կասկածվող անձը, առկա տեղեկատվությունը քննության առնելուց հետո համոզվելով, որ հանգամանքներն այդ են պահանջում, կալանավորում է նրան կամ ձեռնարկում նրա ներկայությունն ապահովող իրավական այլ միջոցներ: Կալանքը կամ նմանօրինակ միջոցառումներն իրականացվում են տվյալ պետության օրենսդրությանը համապատասխան, սակայն, կարող են տեղ միայն այնքան ժամանակ, որն անհրաժեշտ է քրեա-դատավարական կամ հանձնման գործողություններ ձեռնարկելու համար:

2. Այդ պետությունն անհապաղ կատարում է փաստերի նախնական քննություն:

3. Սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա կալանքի տակ գտնվող ցանկացած անձի ցույց է տրվում աջակցություն՝ անհապաղ կապ հաստատելու այն պետության մոտակա համապատասխան ներկայացուցչի հետ, որի քաղաքացին է ինքը, կամ, եթե քաղաքացիություն չունեցող անձ է, այն պետության ներկայացուցչի հետ, որտեղ նա սովորաբար բնակվում է:

4. Երբ պետությունը, սույն հոդվածին համապատասխան, կալանավորում է որևէ անձի, ապա 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված պետություններին անհապաղ տեղեկացնում է այդ անձի կալանավորման այն հանգամանքների մասին, որոնք հիմք են ծառայել նրան կալանքի վերցնելու համար: Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված՝ նախնական հետաքննություն անցկացնող պետությունն իր ստացած տվյալների մասին անմիջապես հայտնում է վերոհիշյալ պետություններին մատնանշում, թե մտադիր է արդյոք իրականացնել իր իրավագործությունը:

Յոդված 7

1. Մասնակից պետությունը, որի իրավագործությանը ենթակա տարածքում հայտնաբերվել է 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որևէ մեկի կատարման մեջ կասկածվող անձը, 5-րդ հոդվածում նշված դեպքերում, եթե չի հանձնում նրան, տվյալ գործը հետապնդման նպատակով հանձնում է իր իրավասու մարմիններին:

2. Այս մարմիններն իրենց որոշումը կայացնում են նույն կարգով, ինչ լուրջ բնույթի ցանկացած սովորական հանցագործության դեպքում՝ այդ պետության օրենսդրության համաձայն: 5-րդ հոդվածի 2-րդ կետում թվարկված դեպքերում հետապնդման դատապարտման

համար անհրաժեշտ ապացույցներին ներկայացվող պահանջները ոչ մի դեպքում չպետք է լինեն պակաս խիստ, քան նրանք, որոնք կիրառվում են 5-րդ հոդվածի 1-ին կետում նշված դեպքերում:

3. Ցանկացած անձի համար, որի նկատմամբ քննություն է կատարվում կապված 4-րդ հոդվածում նշված հանցագործություններից որևէ մեկի հետ, երաշխավորվում է արդարացի վերաբերմունք՝ դատավարության բոլոր փուլերում:

Յոդված 8

1. 4-րդ հոդվածում նշված հանցագործությունները, որպես հանձնման հանգեցնող հանցագործություններ, ենթակա են ներառման մասնակից պետությունների միջև հանձնման մասին գոյություն ունեցող ցանկացած պայմանագրի մեջ: Մասնակից պետությունները պարտավորվում են նման հանցագործությունները, որպես հանձնման հանգեցնող հանցագործություններ, ներառել իրենց միջև կնքվող հանձնման մասին ցանկացած պայմանագրում:

2. Եթե մասնակից պետությունը, որը հանձնումը պայմանավորում է պայմանագրի առկայությամբ, մեկ այլ մասնակից պետությունից, որի հետ չունի հանձնման մասին պայմանագիր, ստանում է հանձնման խնդրանք, նա կարող է սույն Կոնվենցիան դիտել որպես այդպիսի հանցագործությունների դեպքում հանձնման իրավական հիմք: Հանձնումն իրականացվում է խնդրանքն ստացած պետության օրենսդրությամբ նախատեսված այլ պայմաններին համապատասխան:

3. Մասնակից պետությունները, որոնք հանձնումը չեն պայմանավորում պայմանագրի առկայությամբ, իրենց միջև հարաբերություններում նման հանցագործությունները դիտում են որպես հանձնման հանգեցնող հանցագործություններ՝ խնդրանքն ստացող պետության օրենսդրությամբ նախատեսված պայմաններին համապատասխան:

4. Նման հանցագործությունները մասնակից պետությունների միջև հանձնման նպատակով դիտվում են այնպես, ինչպես, եթե դրանք կատարված լինեին ոչ միայն իրենց կատարման վայրում, այլ այն պետությունների տարածքներում, որոնք իրենց իրավագործությունը պետք է հաստատեն 5-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

Յոդված 9

1. Մասնակից պետությունները 4-րդ հոդվածում նշված հանցա-

գործություններից որևէ մեկի առնչությամբ իրականացվող քրեական դատավարության կապակցությամբ միմյանց տրամադրում են առավել լայն աջակցություն, ներառյալ՝ իրենց տրամադրության ներքո եղած, դատավարության համար անհրաժեշտ բոլոր ապացույցների տրամադրումը:

2. Մասնակից պետությունները սույն հոդվածի 1-ին կետի համաձայն իրենց պարտավորությունները կատարում են փոխադարձ իրավական օգնության մասին ցանկացած պայմանագրին համապատասխան, որ կարող է կնքված լինել նրանց միջ:

Ֆոդված 10

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի խոշտանգումների արգելմանը վերաբերող ուսումնական նյութերն ու տեղեկատվությունն ամբողջովին ընդգրկվեն իրավակիրառող մարմինների՝ քաղաքացիական, թե ռազմական, բժշկական աշխատակազմների, պետական ծառայողների այլոց վերապատրաստման ծրագրերում, ովքեր կարող են ներգրավված լինել ձերբակալության, կալանավորման կամ բանտարկության ցանկացած ձևի ենթարկված անձանց կալանքի տակ պահելու, հարցաքննելու կամ նրանց հետ վարվեցողության մեջ:

2. Յուրաքանչյուր մասնակից պետություն այս արգելքը ներառում է ցանկացած այդպիսի անձի պարտականություններին ու գործառույթներին վերաբերող կանոնների կամ հրահանգների մեջ:

Ֆոդված 11

Յուրաքանչյուր մասնակից պետություն պաբերաբար վերանայում է հարցաքննության կանոնները, հրահանգները, մեթոդներն ու պրակտիկան, ինչպես նա իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում ցանկացած ձով ձերբակալման, կալանավորման կամ բանտարկության ենթարկված անձին կալանքի տակ պահելու կամ նրա հետ վարվելու պայմանները:

Ֆոդված 12

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի իր իրավասու մարմիններն անհապաղ անաչառ հետաքննություն անցկացնեն, երբ առկա է բավարար հիմք ենթադրելու, որ խոշտանգումը կիրառվել է իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում:

Ֆոդված 13

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որ ցանկացած անձ, ով պնդում է, թե ինքն այդ պետության իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում ենթարկվել է խոշտանգումների, ունենա տվյալ պետության իրավասու մարմիններին բողոք ներկայացնելու նրանց կողմից իր գործի անհապաղ ու անաչառ քննության իրավունք: Չեռնարկվում են միջոցներ՝ ապահովելու համար հայցվորի վկաների պաշտպանությունն ընդդեմ վատ վերաբերմունքի կամ ահաբեկման՝ որպես նրա բողոքի կամ վկայության հետևանքի:

Ֆոդված 14

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգում ապահովում է, որպեսզի խոշտանգումների զոհը ստանա փոխհատուցում ունենա հարկադրանքի միջոցով ապահովվող արդարացի համարժեք փոխհատուցման իրավունք, ներառյալ՝ հնարավորինս լիակատար արդարացման (ռեաբիլիտացման) միջոցները: Խոշտանգումների պատճառով զոհի մահվան դեպքում փոխհատուցման իրավունքը վերապահվում է նրա խնամառուներին:

2. Սույն հոդվածում ոչինչ չի շոշափում զոհի կամ այլոց փոխհատուցման ցանկացած իրավունք, որը կարող է գոյություն ունենալ ներպետական օրենսդրության համաձայն:

Ֆոդված 15

Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի ցանկացած վկայություն, որ տրվել է խոշտանգման արդյունքում, ցանկացած դատավարության ընթացքում չվկայակոչվի որպես ապացույց, բացառությամբ այն դեպքերը, երբ վկայությունն օգտագործվում է ընդդեմ խոշտանգում կատարելու մեջ մեղադրվող անձի՝ որպես ապացույց, որ այդ վկայությունը տրվել է:

Ֆոդված 16

1. Յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավագործության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձերք, որոնք չեն դասվում 1-ին հոդվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքը, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից, կամ նրանց հրահրմամբ, կամ

նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ: Մասնավորապես, 10, 11, 12 13-րդ հոդվածներում նշված պարտավորությունները կիրառվում են խոշտանգման մասին հիշատակությունը փոխարինելով դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի մասին հիշատակմամբ:

2. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն խոչընդոտում ցանկացած այլ միջազգային փաստաթղթի կամ ներպետական օրենսդրության դրույթներին, որոնք արգելում են դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը, կամ վերաբերում են հանձնմանը կամ արտաքսմանը:

ՄԱՍ II

Հոդված 17

1. Ստեղծվում է Խոշտանգումների դեմ կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե), որն իրականացնում է ստորև նախատեսված գործառույթները: Կոմիտեն կազմված է 10 փորձագետից, որոնք ունեն բարոյական բարձր նկարագիր ճանաչված իրազեկություն մարդու իրավունքների բնագավառում: Նրանք հանդես են գալիս անձնապես: Փորձագետներին ընտրում են մասնակից պետությունները, ընդ որում հաշվի է առնվում աշխարհագրական արդարացի բաշխումը իրավաբանական աշխատանքի փորձ ունեցող մի քանի անձանց մասնակցության նպատակահարմարությունը:

2. Կոմիտեի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, մասնակից պետությունների առաջադրած անձանց ցուցակից: Յուրաքանչյուր մասնակից պետություն իր քաղաքացիների թվից կարող է առաջադրել մեկ թեկնածու: Մասնակից պետությունները հաշվի են առնում այն անձանց առաջադրման նպատակահարմարությունը, ովքեր անդամակցում են Քաղաքացիական քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի համաձայն ստեղծված Մարդու իրավունքների կոմիտեին ովքեր ցանկություն են հայտնում աշխատել Կոմիտեում:

3. Կոմիտեի անդամների ընտրություններն անցկացվում են մասնակից պետությունների՝ երկու տարին մեկ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի հրավիրած նիստերում: Այդ նիստերում, որտեղ քվորում է կազմում մասնակից պետությունների երկու երրորդը, Կոմիտեում ընտրված անդամներ են համարվում Կոնվենցիայի՝ ներկա քվեարկությանը մասնակցող մասնակից

պետությունների ներկայացուցիչների ամենաշատ ծայները ծայների բացարձակ մեծամասնությունն ստացած թեկնածուները:

4. Առաջին ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամիս հետո: Դերթական ընտրությունների օրվանից առնվազն չորս ամիս առաջ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը մասնակից պետություններին է ուղարկում նամակ՝ առաջարկելով եռամսյա ժամկետում ներկայացնել իրենց թեկնածուներին: Գլխավոր քարտուղարն այբբենական կարգով կազմում է այս կերպ առաջադրված անձանց ցուցակ՝ նշելով նրանց առաջադրած մասնակից պետություններին, այդ ցուցակը ներկայացնում է վերջիններիս:

5. Կոմիտեի անդամներն ընտրվում են չորսամսյա ժամկետով: Կրկին առաջադրվելու դեպքում նրանք ունեն վերընտրության իրավունք: Սակայն, առաջին ընտրություններում ընտրված հինգ անդամի լիազորությունների ժամկետը լրանում է երկրորդ տարվա վերջին. առաջին ընտրություններից անմիջապես հետո այդ հինգ անդամների անունները որոշում է սույն հոդվածի 3-րդ կետում նշված նիստի նախագահողը՝ վիճակահանությամբ:

6. Կոմիտեի անդամի մահվան կամ պաշտոնաթողության դեպքում կամ եթե ցանկացած այլ պատճառով նա այլս Կոմիտեում չի կարող իրականացնել իր պարտականությունները, նրա թեկնածությունն առաջադրած մասնակից պետությունը, մասնակից պետությունների մեծամասնության հաստատմամբ, իր քաղաքացիների թվից նշանակում է մեկ այլ փորձագետի՝ մնացած ժամկետի համար: Թեկնածությունը համարվում է հաստատված, եթե մասնակից պետությունների կեսը կամ ավելին առաջարկվող նշանակման մասին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի տեղեկացնելուց հետո վեց շաբաթվա ընթացքում բացասական պատասխան չի տալիս:

7. Մասնակից պետությունները հոգում են Կոմիտեի անդամների ծախսերը՝ Կոմիտեում իրենց պարտականությունները կատարելու ընթացքում:

Հոդված 18

1. Կոմիտեն ընտրում է իր պաշտոնատար անձանց՝ երկամսյա ժամկետով: Նրանք կարող են վերընտրվել:

2. Կոմիտեն սահմանում է իր ընթացակարգի կանոնները, բայց այդ կանոնները, մասնավորապես, նախատեսում են, որ.

(a) քվորում կազմում են վեց անդամներ,

(b) Կոմիտեի որոշումներն ընդունվում են ներկա գտնվող անդամների ձայների մեծամասնությամբ:

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն ապահովում է անհրաժեշտ աշխատակազմ պայմաններ՝ Կոմիտեի գործառույթները սույն Կոնվենցիային համապատասխան արդյունավետորեն իրականացնելու համար:

4. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը գումարում է Կոմիտեի առաջին նիստը: Իր առաջին նիստից հետո Կոմիտեն հավաքվում է իր ընթացակարգով նախատեսված հաճախականությամբ:

5. Մասնակից պետությունները հոգում են մասնակից պետությունների ու Կոմիտեի նիստերի հետ կապված ծախսերը, ներառյալ՝ Միավորված ազգերի կազմակերպության այնպիսի ցանկացած ծախսերի փոխհատուցումը, ինչպիսին են՝ սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան Միավորված ազգերի կազմակերպության կողմից ապահովվող աշխատակազմի ու պայմանների համար կատարվող ծախսերը:

Ֆոդված 19

1. Մասնակից պետությունները համապատասխան մասնակից պետության համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտեին ներկայացնում են զեկույցներ այն միջոցառումների մասին, որ իրենք ձեռնարկել են սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար: Հետագայում մասնակից պետությունները չորս տարին մեկ անգամ ներկայացնում են լրացուցիչ զեկույցներ ցանկացած նոր միջոցառման մասին այլ զեկույցներ, որոնք կարող է պահանջել Կոմիտեն:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն այդ զեկույցներն ուղարկում է բոլոր մասնակից պետություններին:

3. Յուրաքանչյուր զեկույց քննարկվում է Կոմիտեի կողմից, որը կարող է զեկույցի վերաբերյալ անել ընդհանուր բնույթի այնպիսի դիտողություններ, որոնք ինքը նպատակահարմար կգտնի, դրանք ուղարկել համապատասխան մասնակից պետությանը: Տվյալ մասնակից պետությունն ի պատասխան կարող է Կոմիտեին ներկայացնել ցանկացած դիտողություն, որն ինքը տեղին կհամարի:

4. Կոմիտեն իր հայեցողությամբ կարող է որոշել 24-րդ հոդվածին

համապատասխան կազմված իր տարեկան զեկույցում ընդգրկել սույն հոդվածի 3-րդ կետի համաձայն իր կատարած ցանկացած դիտողություն՝ վերջինիս վերաբերյալ շահագրգիռ մասնակից պետությունից ստացած դիտողությունների հետ միասին: Կոմիտեն կարող է ընդգրկել նա սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա ներկայացված զեկույցի պատճենը, եթե այդ մասին խնդրում է շահագրգիռ մասնակից պետությունը:

Ֆոդված 20

1. Եթե Կոմիտեն ստանում է վստահելի տեղեկատվություն, որը, նրա կարծիքով, պարունակում է հիմնավորված ցուցումներ, թե մասնակից պետություններից որէ մեկի տարածքում կանոնավոր կերպով կիրառվում են խոշտանգումներ, ապա նա տվյալ մասնակից պետությանն առաջարկում է համագործակցել այդ տեղեկատվության քննարկման հարցում այդ նպատակով ներկայացնել իր դիտողությունները տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

2. Հաշվի առնելով բոլոր դիտողությունները, որոնք կարող է ներկայացնել համապատասխան մասնակից պետությունը, ինչպես նա գործին առնչվող առկա ցանկացած տեղեկատվություն, Կոմիտեն կարող է, եթե նպատակահարմար է համարում, նշանակել իր մեկ կամ մի քանի անդամի՝ անցկացնելու խորհրդապահական քննություն անհապաղ Կոմիտեին ներկայացնելու համապատասխան զեկույցագիր:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն անցկացվում է քննություն, Կոմիտեն ձգտում է համագործակցել համապատասխան մասնակից պետության հետ: Նման հետաքննությունը, տվյալ մասնակից պետության համաձայնությամբ, կարող է ներառել նաև այցելություն այդ պետության տարածք:

4. Կոմիտեի անդամի կամ անդամների կողմից սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան ներկայացված եզրակացությունների քննարկումից հետո Կոմիտեն այդ եզրակացություններն ուղարկում է համապատասխան մասնակից պետությանը՝ ցանկացած դիտողության կամ առաջարկության հետ միասին, որոնք նպատակահարմար են համարվում տվյալ իրավիճակում:

5. Կոմիտեի՝ սույն հոդվածի 1-4-րդ կետերում նշված ողջ ընթացակարգը խորհրդապահական է, նրա բոլոր փուլերում պետք է ձգտել համագործակցել մասնակից պետության հետ: 2-րդ կետին համապատասխան անցկացված հետաքննության կապակցությամբ նման ընթացակարգի ավարտից հետո Կոմիտեն կարող է, համապա-

տասխան մասնակից պետության հետ խորհրդակցելուց հետո, որոշել այդ ընթացակարգի արդյունքների մասին համառոտ հաշվետվությունն ընդգրկել 24-րդ հոդվածին համապատասխան կազմված իր ամենամյա զեկույցում:

Յոթված 21

1. Սույն Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն, սույն հոդվածին համապատասխան, ցանկացած ժամանակ կարող է հայտարարել, թե ինքը ճանաչում է Կոմիտեի՝ այնպիսի հաղորդումներ ստանալու քննության առնելու իրավասությունը, որոնք վերաբերում են այդ մասնակից պետության հայտարարությանն այն մասին, թե մեկ այլ մասնակից պետություն չի կատարում սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունները: Նման հաղորդումները կարող են սույն հոդվածում շարադրված ընթացակարգերին համապատասխան ընդունվել քննարկվել միայն այն դեպքում, եթե ներկայացվել են այն մասնակից պետության կողմից, որն իր առնչությամբ հայտարարել է Կոմիտեի այդ իրավասությունը ճանաչելու մասին: Կոմիտեն սույն հոդվածի համաձայն չի քննարկում որևէ հաղորդում, եթե դա վերաբերում է նման հայտարարություն չկատարած մասնակից պետությանը: Սույն հոդվածի համաձայն ստացված հաղորդումները քննարկվում են հետյալ ընթացակարգով.

(a) եթե որևէ մասնակից պետություն գտնում է, որ մեկ այլ մասնակից պետություն չի կատարում սույն Կոնվենցիայի դրույթները, ապա նա կարող է, զրավոր հաղորդմամբ, տվյալ հարցի մասին տեղեկացնել այդ մասնակից պետությանը: Հաղորդումն ստացած պետությունն այն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում հաղորդումն ուղարկած պետությանը ներկայացնում է այդ հարցի պարզաբանմամբ զրավոր բացատրություն կամ որևէ այլ հայտարարություն, որը, որքան հնարավոր է ու նպատակահարմար, ներառում է տվյալ հարցի առնչությամբ ձեռնարկված, ձեռնարկվող կամ ձեռնարկվելիք ներպետական ընթացակարգերը պաշտպանության միջոցները,

(b) եթե հաղորդումն ստացող պետության կողմից նախնական հաղորդումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում հարցը չի կարգավորվում ի բավարարումն երկու շահագրգիռ մասնակից պետությունների, նրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի հարցը ներկայացնել Կոմիտե՝ վերջինիս մյուս պետությանը ծանուցելու միջոցով,

(c) Կոմիտեն սույն հոդվածի համաձայն իրեն հանձնված հարցը քննարկում է միայն այն բանից հետո, երբ համոզվում է, որ տվյալ

հարցի կապակցությամբ կիրառվել սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր միջոցները՝ միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներին համապատասխան: Այս կանոնը չի գործում այն դեպքում, երբ պաշտպանության միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է կամ հազիվ թե արդյունավետ լինի սույն Կոնվենցիայի խախտման գոհ հանդիսացող անձի համար,

(d) սույն հոդվածի համաձայն հաղորդումները քննարկելիս Կոմիտեն գումարում է փակ նիստեր,

(e) պահպանելով (c) ենթակետի դրույթները՝ Կոմիտեն իր բարի ծառայություններն է առաջարկում համապատասխան մասնակից պետություններին՝ սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների հարգման հիման վրա հարցի բարիդրացիական լուծման նպատակով: Այս նպատակով, անհրաժեշտության դեպքում, Կոմիտեն կարող է ստեղծել ad hoc համաձայնեցման հանձնաժողով,

(f) սույն հոդվածի համաձայն իրեն հանձնված ցանկացած հարցի կապակցությամբ Կոմիտեն կարող է դիմել

(b) ենթակետում նշված համապատասխան մասնակից պետություններին՝ ներկայացնելու գործին վերաբերող ցանկացած տեղեկատվություն,

(g) (b) ենթակետում նշված համապատասխան մասնակից պետություններն իրավունք ունեն ներկայացված լինելու Կոմիտեում հարցի քննարկման ժամանակ հանդես գալու բանավոր կամ գրավոր հաղորդումներով,

(h) Կոմիտեն (b) ենթակետի համաձայն ծանուցում ստանալու օրվանից հետո տասներկու ամսվա ընթացքում ներկայացնում է զեկույց:

(i) եթե հարցը լուծվում է (e) ենթակետի պայմաններին համապատասխան, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի ձեռք բերված կարգավորման համառոտ շարադրանքով,

(ii) եթե հարցը (a) ենթակետի պայմաններին համապատասխան չի կարգավորվում, ապա Կոմիտեն իր զեկույցում սահմանափակվում է փաստերի համառոտ շարադրանքով. զեկույցին կցվում են համապատասխան մասնակից պետությունների զրավոր դիմումներն ու բանավոր դիմումների զրառումը: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ զեկույցն ուղարկվում է շահագրգիռ մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ Կոնվենցիայի հինգ մասնակից պետություն հայտարարություն են կատարել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան: Այդպիսի հայտարար-

րությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մյուս մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Հայտարարության հետ վերցնելը չի խոչընդոտում քննությանը ցանկացած հարցի, որն սույն հոդվածին համապատասխան արդեն ներկայացված հաղորդման առարկա է. ցանկացած մասնակից պետությունից սույն հոդվածի հիման վրա ոչ մի հետագա հաղորդում չի ընդունվում այն բանից հետո, երբ Գլխավոր քարտուղարն ստացել է հայտարարությունը հետ վերցնելու մասին ծանուցումը, եթե համապատասխան մասնակից պետությունը չի կատարել նոր հայտարարություն:

Հոդված 22

1. Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունը կարող է ցանկացած ժամանակ սույն հոդվածին համապատասխան հայտարարել, որ ինքը ճանաչում է Կոմիտեի՝ տվյալ պետության իրավագործության ներքո գտնվող այն անձանցից կամ նրանց անունից հաղորդումներ ստանալու քննարկելու իրավասությունը, ովքեր պնդում են, թե իրենք մասնակից պետության կողմից սույն Կոնվենցիայի դրույթների խախտման զոհ են: Կոմիտեն չի ընդունում որևէ հաղորդում, եթե դա վերաբերում է նման հայտարարություն չկատարած մասնակից պետությանը:

2. Կոմիտեն չի քննարկում սույն հոդվածի համաձայն ցանկացած հաղորդում, որն անանուն է կամ որը, իր կարծիքով, նման հաղորդումների ներկայացման իրավունքի չարաշահում է կամ անհամատեղելի է սույն Կոնվենցիայի դրույթների հետ:

3. Պահպանելով 2-րդ կետի դրույթները՝ Կոմիտեն սույն հոդվածի համաձայն իրեն ներկայացված ցանկացած հաղորդման մասին տեղեկացնում է սույն Կոնվենցիայի այն մասնակից պետությանը, որը հայտարարություն է կատարել 1-ին կետի համաձայն մատնանշվում է որպես սույն Կոնվենցիայի որևէ դրույթ խախտող պետություն: Հաղորդումն ստացող պետությունը վեց ամսվա ընթացքում Կոմիտեին ներկայացնում է գրավոր բացատրություն կամ հարցը պարզաբանող հայտարարություններ, ինչպես նա պաշտպանության միջոցը, որը կարող է կիրառված լինել այդ պետության կողմից:

4. Սույն հոդվածի համաձայն ստացված հաղորդումները Կոմիտեն քննարկում է այն ողջ տեղեկատվության լույսի ներքո, որը նրան ներկայացվել է տվյալ անձի կողմից կամ նրա անունից համապատասխան մասնակից պետության կողմից:

5. Կոմիտեն սույն հոդվածի համաձայն չի քննարկում որևէ անձի որևէ հաղորդում, եթե չի համոզվում, որ.

(a) սույն հարցը չի քննարկվել չի քննարկվում միջազգային քննության կամ կարգավորման որևէ այլ ընթացակարգով,

(b) տվյալ անձն սպառել է իրավական պաշտպանության գոյություն ունեցող բոլոր ներքին միջոցները. այս կանոնը չի գործում այն դեպքում, երբ պաշտպանության միջոցների կիրառումն անհիմն կերպով ձգձգվում է կամ հազիվ թե արդյունավետ լինի սույն Կոնվենցիայի խախտման զոհ համոզուած անձի համար:

6. Սույն հոդվածի համաձայն հաղորդումներ քննարկելիս Կոմիտեն գումարում է փակ նիստեր:

7. Կոմիտեն իր տեսակետները ներկայացնում է համապատասխան մասնակից պետությանը տվյալ անձին:

8. Սույն հոդվածի դրույթներն ուժի մեջ են մտնում, երբ սույն Կոնվենցիայի հինգ մասնակից պետություն հայտարարություն են կատարել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան: Նման հայտարարությունները մասնակից պետություններն ի պահ են հանձնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրանց պատճեններն ուղարկում է մյուս մասնակից պետություններին: Հայտարարությունը ցանկացած ժամանակ կարող է հետ վերցվել Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով: Հայտարարության հետ վերցնելը չի խոչընդոտում ցանկացած հարցի քննությանը, որը դարձել է սույն հոդվածին համապատասխան արդեն ներկայացված հաղորդման առարկա. որևէ անձի կողմից կամ նրա անունից ոչ մի հետագա հաղորդում չի ընդունվում այն բանից հետո, երբ Գլխավոր քարտուղարն ստացել է հայտարարությունը հետ վերցնելու մասին ծանուցումը, եթե համապատասխան մասնակից պետությունը չի կատարել նոր հայտարարություն:

Հոդված 23

Կոմիտեի ad hoc համաձայնեցման հանձնաժողովների անդամները, ովքեր կարող են նշանակվել 21-րդ հոդվածի 1-ին կետի (e) ենթակետի համաձայն, ունեն Միավորված ազգերի կազմակերպության առաքելության փորձագետների արտոնությունների, առավելությունների անձեռնմխելիության իրավունք, ինչպես նախատեսված է Միավորված ազգերի կազմակերպության արտոնությունների անձեռնմխելիության մասին կոնվենցիայի համապատասխան բաժիններում:

Յոթերորդ 24

Կոմիտեան, սույն Կոնվենցիային համապատասխան, մասնակից պետություններին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային ներկայացնում է իր գործունեության մասին տարեկան զեկույց:

ՄԱՍ III

Յոթերորդ 25

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման բոլոր պետությունների համար:

2. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Յոթերորդ 26

Սույն Կոնվենցիան բաց է միանալու բոլոր պետությունների համար: Միանալը կատարվում է միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելու միջոցով:

Յոթերորդ 27

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում քսաներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր պետության համար, որը սույն Կոնվենցիան վավերացնում կամ նրան միանում է քսաներորդ վավերագրի կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Յոթերորդ 28

1. Ցանկացած պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս կամ վավերացնելիս կամ նրան միանալիս կարող է հայտարարել, որ ինքը չի ճանաչում Կոմիտեի՝ 20-րդ հոդվածով նախատեսված իրավասությունը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի համաձայն վերապահում կատարած ցանկացած մասնակից պետություն կարող է ցանկացած ժա-

մանակ հանել իր վերապահումը՝ այդ մասին ծանուցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Յոթերորդ 29

1. Սույն Կոնվենցիայի մասնակից ցանկացած պետություն կարող է առաջարկել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ներկայացնել փոփոխություն ու լրացում: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարն առաջարկված փոփոխությունն ու լրացումն այնուհետ ուղարկում է մասնակից պետություններին՝ խնդրելով ծանուցել իրեն, թե կողմնակից են արդյոք մասնակից պետությունների խորհրդատուների հրավիրմանն այդ առաջարկությունը քննարկելու քվեարկելու նպատակով: Եթե այդպիսի հաղորդում ուղարկելու օրվանից հետո չորս ամսվա ընթացքում մասնակից պետությունների առնվազն մեկ երրորդն արտահայտվում է նման խորհրդատուների օգտին, Գլխավոր քարտուղարը հրավիրում է խորհրդատուներով Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո: Խորհրդատուներին ներկա քվեարկությանը մասնակցող մասնակից պետությունների մեծամասնության կողմից ընդունված ցանկացած փոփոխություն ու լրացում Գլխավոր քարտուղարը հաստատման է ներկայացնում բոլոր մասնակից պետություններին:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ընդունված փոփոխությունն ու լրացումն ուժի մեջ են մտնում այն բանից հետո, երբ սույն Կոնվենցիայի մասնակից պետությունների երկու երրորդը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցում է իրենց սահմանադրական ընթացակարգի համաձայն սովյալ փոփոխությունն ու լրացումն ընդունելու մասին:

3 Ուժի մեջ մտնելուց հետո փոփոխություններն ու լրացումները պարտադիր են դառնում այն մասնակից պետությունների համար, որոնք ընդունել են դրանք, իսկ մյուս մասնակից պետությունների համար պարտադիր են մնում սույն Կոնվենցիայի այն դրույթները նախորդ ցանկացած փոփոխություններն ու լրացումները, որոնք իրենք ընդունել են:

Յոթերորդ 30

1. Երկու կամ ավելի մասնակից պետությունների միջև սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած վեճ, որը չի կարող կարգավորել բանակցությունների միջոցով, նրանցից մեկի խնդրանքով տրվում է արբիտրաժի: Եթե խնդրանքն

արբիտրաժի հանձնելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում կողմերն ի վիճակի չեն համաձայնության գալու արբիտրաժի կազմակերպման հարցում, ցանկացած կողմի խնդրանքով վեճը կարող է փոխանցվել Միջազգային դատարան՝ նրա ստատուտի համաձայն:

2. Յուրաքանչյուր պետություն սույն Կոնվենցիան ստորագրելիս, վավերացնելիս կամ նրան միանալիս կարող է հայտարարել, որ ինքն իրեն կապված չի համարում սույն հոդվածի 1-ին կետի դրույթներով: Մյուս մասնակից պետությունները ևս կապված չեն լինի սույն հոդվածի առաջին կետի դրույթներով՝ նման վերապահում կատարած ցանկացած մասնակից պետության վերաբերմամբ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն վերապահում կատարած ցանկացած պետություն ցանկացած ժամանակ կարող է հանել իր վերապահումը՝ այդ մասին ծանուցելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 31

1. Ցանկացած մասնակից պետություն կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարի կողմից ծանուցումն ստանալու օրվանից մեկ տարի անց:

2. Այդպիսի չեղյալ հայտարարումը մասնակից պետությանը չի ազատում սույն Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից՝ ցանկացած գործողության կամ անգործության կապակցությամբ, որը տեղի է ունեցել չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելուց առաջ, չեղյալ հայտարարումը ոչ մի դեպքում չի խոչընդոտում այն հարցի քննարկումը շարունակելուն, որը մինչ չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելն արդեն քննարկման առարկա էր Կոմիտեում:

3. Որև մասնակից պետության համար չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելուց հետո Կոմիտեն չի սկսում տվյալ պետությանը վերաբերող ցանկացած նոր հարցի քննարկում:

Հոդված 32

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետություններին սույն Կոնվենցիան ստորագրած կամ նրան միացած բոլոր պետություններին տեղեկացնում է.

(a) 25 26-րդ հոդվածներին համապատասխան ստորագրման, վավերացման միանալու մասին,

(b) սույն Կոնվենցիայի՝ 27-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելու ցանկացած փոփոխության ու լրացման՝ 29-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտնելու մասին,

(c) 31-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարումների մասին:

Հոդված 33

1. Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, արաբերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի վավերացված պատճեններն ուղարկում է բոլոր պետություններին:

Չետագա տարիներին ՄԱԿ-ի կողմից ռասայական ամենատարբեր խտրականությունների դեմ ընդունվել են մի շարք հռչակագրեր, դաշնագրեր, հանձնարարականներ:

Կրոնական և համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի լուծարման մասին ՅՈՒՆԵՍԿՈՒՆ-ի Կոնվենցիայի 36/55. Декларация о ликвидации всех форм нетерпимости и дискриминации на основе религии или убеждений³⁵

Գլխավոր Ասամբլեան,

հաշվի առնելով, որ, համաձայն Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության հիմնական սկզբունքներից մեկի՝ արժանապատվությունն ու հավասարությունը հասու են յուրաքանչյուրին, և, որ բոլոր անդամ-պետությունները պարտավորվել են նախաձեռնել համատեղ և ինքնուրույն գործողություններ Միավորված Ազգերի Կազմակերպության հետ համագործակցելով՝ գործակցելու և խթանելու մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգանքն ու հետևողականությունը՝ առանց ռասայական, սեռական, լեզվական և կրոնական տարբերության,

հաշվի առնելով, որ մարդու իրավունքների Յամբուդիանուր Յճակագրում (1) և Մարդու իրավունքների մասին Միջազգային Պակտերում (2) հռչակվում է օրենքի առաջ ոչ խտրականության և հավասարության սկզբունքները, ինչպես նաև մտքի, խղճի, դավանանքի և կրոնի ազատությունը,

հաշվի առնելով, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների անտեսումն ու խախտումը, մասնավորապես մտքի, խղճի, դավանանքի և ցանկացած տեսակի համոզմունքների իրավունքը, ուղղակի կամ անուղղակի պատճառ են դառնում պատերազմների և մարդկության ծանր տառապանքների, հատկապես երբ նրանք ծառայում են որպես այլ պետությունների ներքին գործերին

³⁵ Միավորված Ազգերի Կազմակերպություն A, Գլխավոր Ասամբլեա A/RES/36/55, Երեսուներկուերորդ նստաշրջան, Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված բանաձև: Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

արտաքին միջամտության միջոց և հանգեցնում են պետությունների և ժողովուրդների միջև ատելության,

հաշվի առնելով, որ կրոնը և համոզմունքները դրանց կողմնակիցների համար նրանց կյանքի ըմբռնման հիմնական տարրերից մեկն են, և, որ կրոնի ու համոզմունքների ազատությանը հարկ է ամբողջությամբ հետևել և երաշխավորել այն,

կարևոր համարելով աճակցել կրոնի և դավանանքի ազատության հարցերում ըմբռնմանը, հանդուրժողականությանը, հարգանքին և չթուլատրել կրոնի կամ համոզմունքների օգտագործումը, որոնք չեն համապատասխանում Կանոնադրությանը, Միավորված Ազգերի Կազմակերպության համապատասխան այլ փաստաթղթերին և սույն Յճակագրի համապատասխան սկզբունքներին,

վստահ լինելով, որ կրոնի և համոզմունքների ազատությունը պետք է նույնպես աջակցի հանրնդիանուր խաղաղությանը, սոցիալական արդարությանը, ժողովուրդների միջև բարեկամությանը և ռասայական խտրականության ու գաղութարարության գաղափարախոսությանն ու պրակտիկայի վերացմանը,

նշելով Միավորված Ազգերի Կազմակերպության և մասնագիտացված հաստատությունների հովանավորությամբ խտրականության տարբեր ձևերի վերացման մասին համապատասխանաբար ընդունված մի քանի և ուժի մեջ մտած որոշ կոնվենցիաներ,

անհանգստացած լինելով կրոնի կամ համոզմունքների հարցում խտրականության առկայությամբ և անհանդուրժողականության դրսևորմամբ, որոնք դեռ նկատվում են աշխարհի որոշ վայրերում,

լեցուն լինելով նման անհանդուրժողականությունը իր բոլոր ձևերով և դրսևորումներով հնարավորինս արագ վերացնելու, կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականությունը կանխելու և դրա դեմ պայքարելու վճռականությամբ,

հռչակում է սույն Յճակագիրը կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին:

Յոդված 1

1. Յուրաքանչյուր մարդ մտքի, խղճի կրոնի ազատության իրավունք ունի: Այս իրավունքը իր մեջ ներառում է ըստ իր ընտրության ցանկացած տեսակի կրոն կամ համոզմունք ունենալու ազատությունը և իրավունք ունի ազատորեն դավանել իր կրոնը և արտահայտել իր հավատամքները ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների

հետ, հասարակական կամ մասնավոր կերպով, պաշտամունքի ձևավորման, կրոնական կամ ծիսական կարգերի և ուսուցման մասին:

2. Ոչ մեկ չպետք է ենթարկվի պարտադրման, որը կարող է սահմանափակել, ըստ իր ընտրության, կրոն կամ հավատալիք ունենալու ազատությունը:

3. Կրոնին դավանելու և հավատալիքները արտահայտելու ազատությունը ենթարկվում է միայն այն սահմանափակումներին, որոնք հաստատված են օրենքով և անհրաժեշտ են հասարակական անվտանգության, կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության համար, համահավասար այլ անձանց հիմնարար իրավունքներին և ազատություններին:

Յրդված 2

1. Ցանկացած պետության, հաստատության, մարդկանց խմբի կամ անհատի կողմից ոչ մեկ չպետք է կրոնի կամ համոզմունքների հիմքի վրա ենթարկվի խտրականության:

2. Սույն Յրդվածի նպատակներում «կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականություն կամ խտրականություն» տերմինը նշանակում է ցանկացած տարբերություն, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որը հիմնված է կրոնի կամ հավատալիքների վրա և նպատակ ունի կամ ոչնչացման ուղիներով, կամ ճանաչման, օգտագործման նվազեցմամբ՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների անհավասարության իրագործում:

Յրդված 3

Մարդկանց խտրականությունը կրոնի կամ համոզմունքների հիմքի վրա հանդիսանում է մարդկային անհատականության արժանապատվության վիրավորում կամ Միավորված Ազգերի Կազմակերպության սկզբունքների հերքում, և քննադատվում է որպես արգելք պետությունների միջև, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, որը հռչակված է մարդու իրավունքների Զանդնդհանուր Յրդվածում և մանրամասն շարադրված է մարդու իրավունքների մասին Միջազգային Պակտերում:

Յրդված 4

1. Բոլոր պետությունները պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկեն կրոնի և համոզմունքների հիման վրա խտրականությունը վերացնելու և կանխարգելելու՝ մարդու իրավունքների և հիմնարար

ազատությունները քաղաքացիական, տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային կյանքի բոլոր ոլորտներում ընդունելու, իրականացնելու համար:

2. Բոլոր պետությունները ջանք են գործադրում, որպեսզի արգելեն յուրաքանչյուր նման խտրականություն, անհրաժեշտության դեպքում փոխելով կամ ընդունելով նոր օրենսդրություն, ինչպես նաև այդ շրջանակներում ընդունելով բոլոր համապատասխան մեթոդները՝ պայքարելով կրոնական կամ այլ համոզմունքային հիմքով անհանդուրժողականության դեմ:

Յրդված 5

1. Ծնողները, կամ համապատասխան դեպքում երեխայի օրինական խնամակալները իրավունք ունեն ընտանիքի սահմաններում սահմանել կենսակերպ, իրենց կրոնին կամ համոզմունքներին համապատասխան, ինչպես նաև բարոյական դաստիարակությունից ելնելով, որոնք, ըստ նրանց, պետք է ստանա երեխան:

2. Ցանկացած երեխա իրավունք ունի հասու լինել կրոնի կամ այլ համոզմունքների ոլորտում կրթություն ստանալուն, իր ծնողների կամ, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ցանկությամբ, և ճնշման չի ենթարկվում կրոնի կամ այլ հավատալիքների բնագավառում իր ծնողների կամ օրինական խնամակալների ցանկություններին հակառակ, ընդ որում՝ երեխայի շահերն առաջատար սկզբունք է:

3. Երեխային պետք է զերծ պահել կրոնական կամ այլ համոզմունքների հիման վրա ցանկացած խտրականությունից: Նա պետք է դաստիարակվի ընթացման, հանդուրժողականության, ժողովուրդների միջև բարեկամության, խաղաղության և համընդհանուր եղբայրության, այլ մարդկանց կրոնական կամ այլ հավատալիքների ազատության նկատմամբ հարգանքի ոգով, ինչպես նաև այն բանի լիակատար գիտակցումով, որ էներգիան և ընդունակությունները պետք է ծառայեն այլ մարդկանց բարօրությանը:

4. Եթե երեխան չի գտնվում իր ծնողների կամ օրինական խնամակալների խնամակալության տակ, ապա պարտադիր կերպով ուշադրության տակ են առնվում նրանց արտահայտած կամքը կամ նրանց կամքի արտահայտման ցանկացած դրսևորում՝ կրոնի կամ համոզմունքների հարցում, ընդ որում՝ երեխայի շահերն առաջնորդող ուժ են:

5. Կրոնի կամ համոզմունքների փորձերը, որով դաստիարակվում է երեխան, չպետք է վնաս հասցնեն նրա ֆիզիկական կամ

հոգևոր առողջությանը, նրա լիակատար զարգացմանը՝ հաշվի առնելով սույն Հռչակագրի 1 հոդվածի 3 կետը:

Հոդված 6

Սույն Հռչակագրի 1 հոդվածի դրույթների համապատասխան և հետևելով 1 հոդվածի 3 կետին՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատության իրավունքը իր մեջ ներառում է հետևյալ ազատությունները՝

a) ձևավորել պաշտամունքի առարկաները կամ կազմակերպել հավաքներ կրոնի կամ հավատալիքների հետ կապված, այդ նպատակների համար ստեղծել և պահել հատուկ վայրեր:

b) ստեղծել և պահպանել համապատասխան բարեգործական կամ մարդասիրական հաստատություններ

c) արտադրել, ձեռք բերել և համապատասխան ծավալով օգտագործել անհրաժեշտ նյութեր և առարկաներ, որոնք կապված են կրոնական ծեսերի, սովորույթների կամ հավատալիքների հետ:

d) գրել, թողարկել և տարածել այս ոլորտներում համապատասխան հրատարակություններ

e) կրոնի և համոզմունքների հարցերով դասախոսություն վարել՝ այդ նպատակներին ծառայող հարմար վայրերում

f) խնդրել և կամավոր ֆինանսական կամ այլ զոհաբերություններ ստանալ առանձին անձանցից ու կազմակերպություններից

g) պատրաստել, նշանակել, ընտրել կամ ժառանգական կարգով նշանակել համապատասխան ղեկավարների՝ համաձայն այս կամ այն կրոնի կամ համոզմունքների նորմերի

h) հետևել հանգստի օրերին, նշել տոները և ծեսերը՝ կրոնի կամ հավատալիքների հրամայականներին համապատասխան

i) սահմանել և պահպանել կապեր կրոնի կամ հավատալիքների ոլորտներում՝ ազգային կամ միջազգային մակարդակներում, առանձին անհատների կամ համայնքների հետ:

Հոդված 7

Սույն Հռչակագրում հռչակված իրավունքներն ու ազատությունները այնպես են ներկայացվում ազգային օրենսդրությանը, որ յուրաքանչյուր մարդ գործնականում կարողանա օգտվել նման իրավունքներից կամ ազատություններից:

Հոդված 8

Սույն Հռչակագրում ոչ մի բան չի կարող մեկնաբանվել որպես

ցանկացած իրավունքից սահմանափակում կամ խուսափում, ինչպես դա սահմանված է մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրում և մարդու իրավունքների մասին Միջազգային պակտերում:

57-րդ լիագումար նստաշրջան 1981 թվականի նոյեմբերի 13

(1). **Բանաձև 217 A (III).**

(2). **Բանաձև 2200 A (XXI), ներածություն**

ՄԱԿ-ին անդամակցելուց կարճ ժամանակ անց՝ 1992թ. հոկտեմբերի 7-ին, Վրաստանը դարձավ ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (UN Educational, Scientific and Cultural Organization - UNESCO) անդամ երկիր³⁶, որով պարտավորվածություն ձեռք բերեց կատարելու վերջինիս մի շարք կոնվենցիաներում տեղ գտած պահանջները: Իր անդամակցությունից մինչ օրս Վրաստանը ստորագրել է UNESCO-ի՝ թվով շուրջ 11 կոնվենցիա: Այդպիսիներից ամենահայտնի փաստաթուղթը, որը Ջավախքի համար ունի կենսական նշանակություն, դա «Կրթության բնագավառում խտրականությունների դեմ պայքարի մասին» 1960թ. ընդունված կոնվենցիան է, որին Վրաստանը միացել է 1993թ. փետրվարի 4-ին³⁷:

36 UNESCO-ին անդամակցող բոլոր երկրների ցանկը տես՝ List of the 193 Member States (and the 6 Associate Members) of UNESCO and the date on which they became Members (or Associate Members) of the Organization, as of October 2007 (in alphabetical order), <http://erc.unesco.org/portal/UNESCOMemberStates.asp?language=en>. ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը ինքնավար մասնագիտացված կազմակերպություն է, որը ՄԱԿ-ին է միացել հատուկ պայմանագրերով: Այն խթանում է կրթության, մշակույթի, աշխարհի բնական և մշակութային ժառանգության զարգացումը, գիտության մեջ միջազգային համագործակցությունը, մամուլի և հաղորդակցման ազատությունը:

37 Ministry of Foreign Affairs of Georgia, UNESCO Conventions, http://mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=541&info_id=9752:

Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին Կոնվենցիա³⁸

Ընդունվել է 1960 թվականի դեկտեմբերի 14-ին Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի ոլորտում Գլխավոր Կոնֆերանսի կողմից իր 11-րդ նստաշրջանում 24-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ է մտել 1962 թվականի մայիսի 22-ին

(Convention against Discrimination in Education, Paris, 14 December 1960)

(Конвенция о борьбе с дискриминацией в области образования)

Принята 14 декабря 1960 года Генеральной конференцией Организации Объединенных Наций по вопросам образования, науки в культуры на ее одиннадцатой сессии Вступление в силу: 22 мая 1962 года в соответствии со статьей 24)

Կրթության, գիտության և մշակույթի ոլորտում Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Կոնֆերանսն իր 11-րդ նստաշրջանի համար հավաքվել էր Փարիզում 1960 թվականի նոյեմբերի 14-ից դեկտեմբերի 15-ը,

հիշեցնելով, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հաստատում է խտրականության անթույլատրելիության սկզբունքը և հռչակում է յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը.

նկատի ունենալով, որ խտրականությունը կրթության ոլորտում այդ հռչակագրում շարադրված իրավունքների խախտում է,

նկատի ունենալով, որ իր Կանոնադրության ուժով Միավորված Ազգերի Կազմակերպությունը կրթության, գիտության և մշակույթի հարցերում ձգտում է հաստատել համագործակցություն ազգերի մեջ այն նպատակով, որպեսզի ապահովի մարդու իրավունքների պահպանման նկատմամբ համընդհանուր հսկողություն և կրթությանը բոլորի հավասար հասանելիությունը,

ընդունելով, հետևաբար, որ Միավորված Ազգերի Կազմակերպությունը կրթության, գիտության և մշակույթի հարցերում, ելնելով տար-

բեր երկրներում ընդունված կրթության համակարգերի բազմազանությունից, ոչ միայն պետք է վերացնի ամեն տեսակի խտրականությունը կրթության բնագառում, այլ նաև խրախուսի հնարավորությունների համընդհանուր հավասարությունը և այս ոլորտում բոլորի նկատմամբ հավասար վերաբերմունքը.

ստանալով առաջարկությունները, որոնք վերաբերվում է կրթության ոլորտում խտրականության տարբեր ասպեկտների, այսինքն՝ նստաշրջանի օրակարգի 17.1.4 կետում ներառնված հարցին,

նկատի ունենալով տասներորդ նստաշրջանում ընդունված որոշումն այն մասին, որ այս հարցը կդառնա միջազգային կոնվենցիայի, ինչպես նաև անդամ-պետություններին տրված հանձնարարականների առարկա.

1960 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունում է սույն Կոնվենցիան:

Ֆոդված 1

1. Սույն Կոնվենցիայում «խտրականություն» արտահայտությունը ներառում է ամեն տեսակի տարբերությունը, բացառությունը, սահմանափակումը կամ նախապատվությունը ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, տնտեսական դիրքի կամ ծագման նշաններով, որը նպատակ ունի կամ արդյունքն է կրթության ոլորտում հավասարության վերացման կամ խախտման, և մասնավորապես՝

a) որևէ անձի կամ մարդկանց խմբի համար ցանկացած աստիճանի կամ տեսակի կրթության հասանելիության փակումը

b) որևէ անձի կամ մարդկանց խմբի համար կրթության սահմանափակում կրթության ցածր մակարդակով

c) որևէ անձի կամ անձանց խմբի համար կրթական առանձնացված համակարգերի կամ ուսումնական հաստատությունների ստեղծում կամ պահպանում, բացի այն դեպքերից, որոնք նախատեսված են սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներով, կամ

d) մարդու արժանապատվության հետ անհամատեղելի դրությունը, որի մեջ դրվում է որևէ անձ կամ անձանց խումբ:

2. Սույն Կոնվենցիայում «կրթություն» բառը վերաբերվում է կրթության բոլոր ձևերին և աստիճաններին և ներառում է կրթության հասանելիությանը, ուսուցման մակարդակը և որակը, ինչպես նաև այն պայմանները, որոնցում այն անցկացվում է:

Ֆոդված 2

Սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածի տեսանկյունից հետևյալ դրույթ-

38 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

ները չեն դիտարկվում որպես խտրականություն, եթե դրանք թույլատրվում են առանձին պետություններում:

a) կրթական առանձնացված համակարգերի կամ ուսումնական հաստատությունների ստեղծում կամ պահպանում տարբեր սեռի սովորողների համար այն դեպքերում, երբ այդ համակարգերը կամ հաստատությունները ապահովում են կրթության հասանելիության հավասարություն, երբ դրանց դասախոսական կազմն ունի նույն որակավորումը, երբ դրանք ունեն հավասար որակի շենքեր և սարքավորումներ և թույլատրում են ուսուցումն անցկացնել նույնանման ծրագրերով

b) կրոնական կամ լեզվական բնույթի նախադրյալներով առանձնացված կրթական համակարգերի կամ ուսումնական հաստատությունների ստեղծում կամ պահպանում, որոնք տալիս են կրթություն, որը համապատասխանում է սովորողների ծնողների կամ օրինական խնամակալների ընտրությանը, այն դեպքերում, երբ այս համակարգերին միանալը կամ այդ հաստատություններ ընդունվելը կամավոր է և եթե դրանց կողմից տրված կրթությունը համապատասխանում է կրթության կոմպետենտ մարմինների կողմից նախատեսված կամ հաստատված նորմերին, մասնավորապես, նույն աստիճանի կրթության նկատմամբ

c) մասնավոր ուսումնական հաստատությունների ստեղծում կամ պահպանում այն դեպքերում, երբ դրանց նպատակը ոչ թե ինչ-որ խմբի բացառումն է, այլ ընդամենը այն կրթության հնարավորությունների լրացում, որը տրամադրվում է պետության կողմից, այն պայմանով, որ դրանց գործունեությունն իրոք համապատասխանում է նշված նպատակին և որ դրանց կողմից տրված կրթությունը համապատասխանում է կրթության կոմպետենտ մարմինների կողմից նախատեսված կամ հաստատված նորմերին, մասնավորապես, նույն աստիճանի կրթության նկատմամբ:

Ֆոդված 3

Այն խտրականության վերացման կամ կանխարգելման նպատակով, որն ներառվում է սույն Կոնվենցիայով տրված բնորոշման սահմանների մեջ, վերջինիս կողմ հանդիսացող պետությունները պարտավորվում են.

a) չեղյալ հայտարարել կրթության ոլորտում խտրական բնույթի բոլոր օրենսդրական ակտերը և ադմինիստրատիվ հրահանգները և դադարեցնել խտրական բնույթի վարչական գործունեությունը

b) անհրաժեշտության դեպքում օրենսդրական կարգով միջոցներ ձեռնարկել, որոնք անհրաժեշտ են ուսումնական հաստատություններ սովորողների ընդունման ժամանակ խտրականությունը վերացնելու համար

c) թույլ չտալ ուսման վարձավճարի, կրթաթոշակների և սովորող-

ներին ցուցադրվող ցանկացած այլ օգնության, ինչպես նաև թույլտվությունների և արտոնությունների, որոնք կարող են անհրաժեշտ լինել արտասահմանում ուսումը շարունակելու համար, հարցերում տվյալ պետության քաղաքացիներ-սովորողների նկատմամբ որևէ տարբերության սահմանում տվյալ երկրի պետական մարմինների կողմից, բացի այն տարբերություններից, որոնք հիմնված են նրանց առաջադիմության կամ պահանջմունքների վրա

d) այն դեպքերում, երբ պետական մարմինները ուսումնական հաստատություններին տրամադրում են այս կամ այն տեսակի օգնություն, թույլ չտալ ոչ մի նախապատվություն կամ սահմանափակում, որոնք հիմնված են բացառապես սովորողների որևէ որոշակի խմբին պատկանելիության վրա

e) իր տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիներին տրամադրել կրթությանը նույնպիսի հասանելիություն, ինչպեսին տրվում է իր քաղաքացիներին:

Ֆոդված 4

Բացի այդ սույն Կոնվենցիայի կողմ-պետությունները պարտավորվում են մշակել, զարգացնել և կյանքի կոչել համապետական քաղաքականությունը, որը օգտագործում է ազգային պայմաններին և սովորույթներին համապատասխանող մեթոդներ կրթության ոլորտում հնարավորությունների և հարաբերության հավասարության համար, և մասնավորապես՝

a) նախնական կրթությունը դարձնել պարտադիր և անվճար; միջնակարգ կրթությունը իր տարբեր ձևերով դարձնել համընդհանուր հարստություն և ապահովել նրա հանրամատչելիությունը; բարձրագույն կրթությունը դարձնել հասանելի բոլորի համար լիակատար հավասարության հիմքով և յուրաքանչյուրի ընդունակություններից կախված; ապահովել օրենքով նախատեսված ուսուցման պարտադիր լինելու պահպանումը

b) հավասար աստիճանի պետական բոլոր ուսումնական հաստատություններում ապահովել կրթության հավասար մակարդակը և կրթության որակի նկատմամբ հավասար պայմաններ

c) կրթության համապատասխան մեթոդներով խրախուսել և զարգացնել այն անձանց, որոնք չեն ստացել նախնական կրթություն կամ չեն ավարտել այն, ինչպես նաև նրանց ուսման շարունակությունը նրանցից յուրաքանչյուրի ունակություններին համապատասխան

d) առանց խտրականության ապահովել նախապատրաստումը դասախոսական մասնագիտությանը:

Յոդված 5

1. Սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունները համարում են, որ՝

a) կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ավելի շատ հարգանքին; այն պետք է աջակցի բոլոր ժողովուրդների և բոլոր ռասայական կամ կրոնական խմբերի փոխըմբռնմանը, համբերատարությանն ու բարեկամությանը, ինչպես նաև խաղաղության պահպանման Միավորված Ազգերի Կազմակերպության գործունեությանը

b) ծնողները և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալները պետք է հնարավորություն ունենան, նախ և առաջ, յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ սահմանված շրջանակներում իրենց երեխաներին ազատորեն ուղարկել ոչ թե պետական, այլ ուրիշ ուսումնական հաստատություններ, որոնք համապատասխանում են կրթական կոմպետենտ մարմինների նախատեսած կամ հաստատած նվազագույն պահանջներին և, երկրորդը, ապահովել երեխաների կրոնական և բարոյական դաստիարակությունը՝ նրանց սեփական համոզմունքներին համապատասխան; ոչ մեկին առանձին և անձանց ոչ մի խմբին չի թույլատրվում պարտադրել այն կրոնական դաստիարակությունը, որն անհամատեղելի է նրանց համոզմունքների հետ

c) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետևից պետք է ճանաչել սեփական լուսավորչական աշխատանքներ տանելու իրավունքը, ներառյալ դպրոցների ղեկավարումը, և կրթության ոլորտում յուրաքանչյուր պետության քաղաքականությանը համապատասխան, կիրառել կամ դասավանդել սեփական լեզուն, սակայն այն պայմանով, որ՝

i) այդ իրավունքի իրականացումը չի խանգարում փոքրամասնություններին պատկանող անձանց հասկանալ ամբողջ կոլեկտիվի մշակույթն ու լեզուն և մասնակցել նրա գործունեությանը, և որ այն չի թուլացնում երկրի ինքնավարությունը,

ii) այս տեսակի դպրոցներում կրթության մակարդակը ցածր է ընդհանուր մակարդակից, որը նախատեսված կամ հաստատված է կոմպետենտ մարմինների կողմից, և

iii) նման դպրոցներ այցելելը համարվում է ֆակուլտատիվ:

2. Սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունները պարտավորվում են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ապահովեն սույն հոդվածի 1-ին կետում շարադրված ակզբունքների կիրառումը:

Յոդված 6

Սույն Կոնվենցիայի կիրառման ժամանակ նրա կողմ հանդիսացող պետությունները պարտավորվում են հնարավորինս շատ դեպքերում հաշվի առնել այն հանձնարարականները, որոնք Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր Կոնֆերանսը կարող է ընդունել կրթության ոլորտում խտրականության տարբեր ասպեկտների դեմ պայքարի միջոցների և այդ ոլորտում հնարավորությունների և հարաբերության հավասարության ապահովման միջոցների որոշման նպատակով:

Յոդված 7

Սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունները պարբերական զեկույցներում, որոնք նրանք պետք է ներկայացնեն Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր կոնֆերանսին այն ժամկետներում և ձևերով, որոնք կհաստատվեն Կոնֆերանսի կողմից, պետք է հայտնեն իրենց կողմից ընդունված օրենսդրական, վարչական և այլ միջոցների մասին, որոնք ընդունվել են իրենց կողմից սույն Կոնվենցիան իրականացնելու համար, մասնավորապես, համապետական քաղաքականության մշակման և զարգացման համար, որը հիշատակված է 4-ում հոդվածում, ձեռք բերված արդյունքների և արգելքների մասին, որոնց նրանք հանդիպել են այդ քաղաքականությունը կյանքի կոչելու ճանապարհին:

Յոդված 8

Եթե սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող երկու կամ ավելի պետությունների միջև տարածայնություններ ծագեն դրա մեկնաբանման կամ կիրառման հարցերում, և եթե այդ տարածայնությունները չկարգավորվեն բանակցությունների միջոցով, ապա դրանք, կողմերի խնդրանքով, վճիռ կայացնելու համար կփոխանցվեն Միջազգային դատարան այն դեպքում, երբ տարածայնությունների կարգադրման համար այլ միջոցներ չլինեն:

Յոդված 9

Սույն Կոնվենցիայի նկատմամբ ոչ մի վերապահություն չի թույլատրվում:

Յոդված 10

Սույն Կոնվենցիան չի նվազեցնում այն իրավունքները, որոնցից

կարող են օգտվել առանձին անձինք կամ անձանց խմբեր այն համաձայնությունների ուժով, որոնք կնքվել են երկու կամ ավելի պետությունների միջև այն պայմանով, որ այդ իրավունքները չեն հակասում Կոնվենցիայի տառին և ոգուն:

Յոթված 11

Սույն Կոնվենցիան կազմված է անգլերեն, իսպաներեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով, ընդ որում բոլոր չորս տեքստերն էլ հավասար ուժ ունեն:

Յոթված 12

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման կամ ընդունման Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ-պետությունների կողմից կրթության, գիտության և մշակույթի հարցերով այն կարգով, որը նախատեսված է նրանց սահմանադրություններով:

2. Վավերականացման հավաստագրերը կամ ընդունման մասին ակտերն ի պահ են հանձնվում Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր տնօրենին:

Յոթված 13

1. Սույն Կոնվենցիային կարող է միանալ ցանկացած պետություն, որը կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ չէ, որը Գործադիր խորհրդի կողմից իրեն միանալու հրավեր կստանա:

2. Միացումը տեղի է ունենում միացման մասին փաստաթուղթը կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր տնօրենին ի պահ հանձնալու միջոցով:

Յոթված 14

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի երրորդ վավերականացման հավաստագրի կամ ընդունման կամ միացման մասին ակտը ի պահ հանձնելուց երեք ամիս հետո, բայց միայն այն պետությունների նկատմամբ, որոնք իրենց վավերականացման, ընդունման կամ միացման մասին ակտերը ի պահ են հանձնել որոշված օրը կամ նախօրոք: Ցանկացած այլ պետության նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերականացման, ընդունման կամ միացման մասին ակտն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո:

Յոթված 15

Սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունները ընդունում են, որ նրա գործողությունները տարածվում է ոչ միայն իրենց մետրոպոլիայի տարածքում, այլ նաև բոլոր ոչինքնակառավարվող ենթակա, գաղութային և այլ տարածքների վրա, որոնց արտաքին հարաբերությունների համար նրանք են կրում պատասխանատվությունը: Նրանք պարտավորվում են անհրաժեշտության դեպքում խորհրդակցել տվյալ տարածքների կառավարությունների կամ կոնպետենտ մարմինների հետ վավերականացման, ընդունման կամ միացման պահին կամ դրանից առաջ, որպեսզի ապահովեն Կոնվենցիայի գործողությունն այդ տարածքներում, ինչպես նաև հայտնել Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր տնօրենին այն տարածքների մասին, որտեղ Կոնվենցիան պետք է գործի: Այդ հայտագրումը ուժի մեջ է մտնում այն ստանալուց երեք ամիս հետո:

Յոթված 16

1. Սույն Կոնվենցիայի կողմ հանդիսացող ցանկացած պետություն կարող է իր անունից կամ ցանկացած այն տարածքի անունից, որի արտաքին հարաբերությունների համար նա պատասխանատվություն է կրում, չեղյալ հայտարարել այն:

2. Չեղյալ հայտարարումը հայտագրվում է գրավոր ակտով, որը հանձնվում է Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր տնօրենին:

3. Չեղյալ հայտարարումը ուժի մեջ է մտնում չեղյալ հայտարարելու մասին ակտը ստանալուց տասներկու ամիս հետո:

Յոթված 17

Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր տնօրենը Կազմակերպության անդամ-պետություններին, 13-րդ հոդվածում հիշատակված Կազմակերպության անդամ չհանդիսացող պետություններին, ինչպես նաև Միավորված Ազգերի Կազմակերպությանը հայտնում է 12-րդ և 13-րդ հոդվածներում նշված վավերականացման, ընդունման կամ միանալու մասին ակտերն ի պահ հանձնելու մասին, ինչպես նաև 15-րդ և 16-րդ հոդվածներում նշված հայտագրումների և չեղյալ հայտարարելու մասին հայտարարությունների մասին:

Յոթված 18

1. Սույն Կոնվենցիան կարող է վերանայվել Միավորված Ազգերի

Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր կոնֆերանսի կողմից: Սակայն նրա վերանայված տեքստը պարտադիր կլինի միայն այն պետությունների համար, որոնք կդառնան վերանայված Կոնվենցիայի կողմ:

2. Այն դեպքում, երբ Գլխավոր կոնֆերանսը սույն Կոնվենցիայի լրիվ կամ մասնակի վերանայման արդյունքում կընդունի նոր Կոնվենցիա և եթե նոր Կոնվենցիան չպարունակի այլ ցուցումներ, սույն Կոնվենցիան կփակվի վավերականացման, ընդունման կամ միանալու համար վերանայված տեքստը պարունակող նոր Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից:

Յոթերորդ 19

Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության 102-րդ հոդվածի համաձայն սույն Կոնվենցիան կգրանցվի Միավորված Ազգերի Կազմակերպության Քարտուղարությունում՝ Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր տնօրենի խնդրանքով:

Կազմված է Փարիզում, 1960 թվականի դեկտեմբերի 15-ին երկու հավասարազոր օրինակով Գլխավոր կոնֆերանսի Նախագահի ստորագրությամբ, որը հավաքվել էր տասնեկերորդ նստաշրջանին, և Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով Գլխավոր տնօրենի ստորագրությամբ: այս օրինակները ի պահ կհանձնվեն կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության արխիվ և պատշաճ ձևով դրանց հաստատված պատճենները կուղարկվեն 12-րդ և 13-րդ հոդվածներում նշված բոլոր պետություններին, ինչպես նաև Միավորված Ազգերի Կազմակերպությանը:

Վերոնշյալ տեքստը հանդիսանում է Կոնվենցիայի իսկական տեքստը, որը պատշաճ ձևով ընդունվել է կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր կոնֆերանսի տասնեկերորդ նստաշրջանում, որը տեղի է ունեցել Փարիզում և ավարտվել է 1960 թվականի դեկտեմբերի 15-ին:

Ի ՅԱՍՏՏՈՒՄ ԻՆՉԻ սույն Կոնվենցիան ստորագրեցին սույն 1960 թվականի դեկտեմբերի 15-ին:

Ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին Հռչակագիրը³⁹ **(Декларация о расе и расовых предрассудках** **Принята и провозглашена Генеральной конференцией** **Организации Объединенных Наций по вопросам** **образования, науки и культуры на ее двадцатой сессии 27** **ноября 1978 года)**

Ընդունված և հռչակված է կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության 20-րդ նստաշրջանում 1978 թվականի նոյեմբերի 27-ին

Նախաբան

Կրթության, գիտության և մշակույթի հարցերով Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր կոնֆերանսը, որը հրավիրվել էր Փարիզում 1978 թվականի հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 28-ը իր քսաներորդ նստաշրջանի համար,

հիշեցնելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանոնադրության, որն ընդունվել է 1945 թվականի նոյեմբերի 16-ին, նախաբանում ասվում է, որ «հենց նոր ավարտված սարսափելի համաշխարհային պատերազմը հնարավոր դարձավ մարդկային անհատականության, հավասարության և մարդկանց փոխադարձ հարգանքի ժողովրդավարական սկզբունքներից հրաժարվելու պատճառով, ինչպես նաև մարդկանց և ռասաների անհավասարության դոկտրինայի անգիտության և նախապաշարմունքների հիման վրա» և որ «համաձայն նշված Կանոնադրության 1-ին հոդվածի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր առջև խնդիր է դրել նպաստել խաղաղության և անվտանգության ամրապնդմանը կրթության, գիտության և մշակույթի ոլորտում ժողովուրդների համագործակցությունն ընդլայնելու միջոցով Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությամբ հռչակված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր հարգանքի, արդարության և օրինականության ապահովման շահերից ելնելով՝ բոլոր ժողովուրդների համար առանց ռասայի, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերակման»,

39 Վրաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջ ստորագրած փաստաթղթերի ցանկում բացակայում է սույն դեկլարացիան, հետևաբար՝ Վրաստանը մինչ օրս չի միացել վերջինիս:

ընդունելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիմնադրումից ավելի քան երեք տասնամյակ անց այս սկզբունքները նույնքան արդիական են, որքան այն ժամանակ, երբ դրանք գրանցվել են Կանոնադրության մեջ,

գիտակցելով, որ ապագադրությամբ և պատմական այլ փոփոխությունների գործընթացում նախկինում կախյալ ժողովուրդների մեծամասնությունը կրկին ձեռք է բերել ինքնավարություն, որի արդյունքում միջազգային հանրությունը վերածվել է իր բազմազանության մեջ ունիվերսալ մեկ ամբողջության և նոր հնարավորություններ են բացվել ռասիզմի աղետները վերացնելու և կանխելու դրա ստոր դրսևորումները սոցիալական և քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում՝ ազգային և միջազգային մասշտաբով,

վստահ լինելով այն բանում, որ մարդկության օրգանական միասնությունը և, հետևաբար, բոլոր մարդկանց և ժողովուրդների հիմնական հավասարությունը, որն արտահայտված է փիլիսոփայության, բարոյականության և կրոնի ամենաբարձր գաղափարներում, արտացոլում է այն իդեալը, որին ներկայումս ձգտում է էթիկան և գիտությունը,

վստահ լինելով այն բանում, որ բոլոր ժողովուրդները և մարդկանց բոլոր խմբերը, ինչպիսին էլ որ լինի դրանց կազմը կամ էթնիկ ծագումը, իրենց ինքնատիպ ներդրումն են ունենում քաղաքակրթությունների և մշակույթների զարգացման մեջ, որոնք իրենց պլուրալիզմում և իրենց փոխներթափանցման շնորհիվ կազմում են մարդկության համընդհանուր ձեռքբերումը,

հաստատելով իր նվիրվածությունը Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակված սկզբունքներին, ինչպես նաև իր վճռականությունը աջակցել մարդու իրավունքների մասին միջազգային պակտերի, ինչպես նաև Միջազգային նոր տնտեսական կարգի հաստատման մասին հռչակագրի իրականացմանը,

լեցում լինելով վճռականությամբ նպաստել նաև Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Միավորված Ազգերի Կազմակերպության Կոնվենցիան և Միջազգային հռչակագիրը կյանքի կոչելուն,

նկատի ունենալով Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին միջազգային կոնվենցիան, Ապարտեիդի հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին միջազգային կոնվենցիան, Ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին կոնվենցիան,

հիշեցնելով նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից արդեն ընդունված միջազգա-

յին ակտերը և, մասնավորապես, Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին կոնվենցիան և հանձնարարագիրը, Ուսուցիչների կարգավիճակի մասին հանձնարարագիրը, Միջազգային մշակութային համագործակցության սկզբունքների հռչակագիրը, Միջազգային փոխընթացման, համագործակցության և խաղաղության ոգով դաստիարակելու և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգանքի ոգով դաստիարակելու մասին հանձնարարագիրը, Գիտա-հետազոտական աշխատողների կարգավիճակի մասին հանձնարարագիրը և Մարդկային զանգվածների մշակութային կյանքում մասնակցության և մշակույթի զարգացման գործում նրանց ներդրումների մասին հանձնարարագիրը,

հաշվի առնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հրավիրված փորձագետների ժողովների կողմից ընդունած չորս հայտարարությունները ռասայական հարցի վերաբերյալ,

կրկին հաստատելով իր ձգտումը աշխույժ և կառուցողական ձևով մասնակցել Ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի տասնամյակի ծրագրի իրականացմանը, որը հռչակված էր Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի քսանութերորդ նստաշրջանում,

խոր անհանգստությամբ նշելով, որ ռասիզմը, ռասայական խտրականությունը, գաղութացումը և ապարտեիդը դեռևս զոյատևում են աշխարհում, ձեռք բերելով նորանոր ձևեր, որն արտահայտվում է ինչպես օրենսդրական դրույթների ուժի մեջ պահպանման և կառավարական ու վարչական ապարատի պրակտիկայի մեջ, որոնք համատեղելի չեն մարդու իրավունքների հարգանքի հետ, ինչպես նաև քաղաքական և սոցիալական կառույցների, հարաբերությունների և դիրքերի անփոփոխականության հետ, որոնք դրոշմված են մարդկային անհատականության նկատմամբ անարդարությամբ և առհամարիանքով և առաջացնում են ավելի անբարենպաստ պայմաններում գտնվող խմբերի անդամների մեկուսացում, ստորացում և շահագործում կամ բռնի ասսիմիլյացիա,

իր վրդովմունքն արտահայտելով մարդկային արժանապատվության դեմ նման ոտնձգությունների նկատմամբ, ափսոսանք հայտնելով այն արգելքների մասին, որոնք դրանք ստեղծում են ժողովուրդների միջև փոխադարձ հասկացողության ճանապարհին և ահազանգելով այն վտանգի մասին, որը դրանք ստեղծում են համընդհանուր խաղաղության և միջազգային անվտանգության համար,

ընդունում և հանդիսավոր հռչակում են սույն Հռչակագիրը ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին.

Յոդված 1

1. Բոլոր մարդիկ պատկանում են միևնույն տեսակին և ունեն նույն ծագումը: Նրանք ծնվում են հավասար արժանապատվությամբ և իրավունքներով և բոլորը կազմում են մարդկության անքակտելի մասը:

2. Բոլոր մարդիկ և մարդկանց խմբեր իրավունք ունեն տարբերվել մեկը մյուսից, դիտարկել իրենց որպես այդպիսին և համարվել իրենց այդպիսին: Սակայն կյանքի ձևերի բազմազանությունը և տարբերության իրավունքը ոչ մի կերպ չեն կարող առիթ հանդիսանալ ռասայական նախապաշարմունքների համար. ոչ իրավաբանորեն, ոչ էլ փաստացի դրանք չեն կարող ծառայել որպես արդարացում որևէ խտրական պրակտիկայի համար կամ հիմք լինել ասպարտեիդի քաղաքականության համար, որը ռասիզմի ամենածայրահեղ դրսևորումն է:

3. Ծագման նույնությունը ոչ մի կերպ չի ազդում տարբեր կենսակերպ ունենալու մարդկանց հնարավորությունների վրա. այն նաև չի բացառում ոչ տարբերությունների առկայությունը, որոնք հիմնված են մշակույթների, միջավայրի և պատմության բազմազանության վրա, ոչ էլ մշակութային ինքնատիպության պահպանման իրավունքը:

4. Աշխարհի բոլոր ժողովուրդներն ունեն հավասար հնարավորություններ, որոնք նրանց թույլ են տալիս հասնել ինտելեկտուալ, տեխնիկական, տնտեսական, մշակութային և քաղաքական զարգացման ամենաբարձր մակարդակին:

5. Տարբեր ժողովուրդների ձեռքբերումների միևնույն տարբերությունները բացատրվում են բացառապես աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային գործոններով: Այս տարբերությունները ոչ մի դեպքում չեն կարող առիթ հանդիսանալ ազգությունների և ժողովուրդների որևէ հիերարխիկ դասակարգման համար:

Յոդված 2

1. Ցանկացած տեսություն, որը գերակայություն կամ թերարժեքություն է վերագրում առանձին ռասայական կամ էթնիկ խմբերին, որը իրավունք կտար մի խումբ մարդկանց իշխել մյուսների նկատմամբ կամ հերքել նրանց, որպես իրենցից ցածրերի, կամ որը հիմնում է գնահատականները ռասայական տարբերությունների, գիտականորեն կայացած չէ և հակասում է մարդկության բարոյականության և էթիկայի սկզբունքներին:

2. Ռասիզմը իր մեջ ներառում է ռասիստական գաղափարախոսություն, հաստատումներ, որոնք հիմնված են ռասայական նախապաշարմունքների վրա, խտրական վարքագիծ, կառուցվածքային կազմա-

կերպվածություն և ինստիտուցիոնալ պրակտիկա, որը հանգեցնում է ռասայական անհավասարության, ինչպես նաև արատավոր գաղափարի այն մասին, որ խտրական հարաբերությունները խմբերի միջև արդարացված են բարոյական և գիտական տեսանկյունից. այն արտահայտվում է խտրական օրենսդրական կամ նորմատիվ դրույթներում և խտրական պրակտիկայում, ինչպես նաև հակասոցիալական հայացքներում և գործողություններում. այն արգելում է իր զոհերի զարգացումը, այլասերում է նրանց, ով արմատացնում է այն գործնականում, ներքնապես բաժանում է ազգություններին, արգելքներ է ստեղծում միջազգային համագործակցության ծանապարհին և սրում է քաղաքական լարվածությունը ժողովուրդների միջև հարաբերություններում. այն հակասում է միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին և, հետևաբար, լուրջ վտանգ է ստեղծում միջազգային խաղաղության և անվտանգության համար:

3. Ռասայական նախապաշարմունքները, որոնք պատմականորեն կապված են իշխանության մեջ անհավասարության հետ, որոնք հզորանում են մարդկանց և մարդկանց խմբերի միջև տնտեսական և սոցիալական տարբերությունների ուժով և որոնք անգամ այսօր կոչված են արդարացնելու նման անհավասարությունը, միանգամայն արդարացված չեն:

Յոդված 3

Ցանկացած տարբերություն, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որը հիմնված է ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ ազգային ծագման նշանների անհանդուրժողականության վրա, որը բխում են ռասիստական հայացքներից, որը խաթարում կամ վտանգի տակ է դնում պետությունների ինքնավար հավասարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կամ որը ինքնական կամ խտրական կերպով սահմանափակում է ցանկացած մարդու կամ մարդկանց խմբի բազմակողմանի զարգացման իրավունքը, որը ենթադրում է բացառապես հավասար հասանելիություն առաջընթացի միջոցներին և անհատի ու կուլտուրայի լիակատար զարգացում արժեքների, ինչպես նաև ազգային և համաշխարհային մշակութային նկատմամբ հարգանքի մթնոլորտում, անհամատեղելի է մարդու իրավունքների հարգանքը երաշխավորող արդարացի միջազգային կարգի պահանջների հետ:

Յոդված 4

1. Ցանկացած արգելք, որը բարդացնում է անհատի ազատ զարգացումը և մարդկանց միջև ազատ հաղորդակցությունը և հիմնված է ռա-

սայական կամ էթնիկ հայացքների վրա, հակասում է արժանապատվության և իրավունքների հավասարության սկզբունքին. այն անթույլատրելի է:

2. Այս սկզբունքների ամենալուրջ խախտումներից մեկը հանդիսանում է ապարտեիդը, որը ինչպես ցեղասպանությունը, մարդկության դեմ ողողված հանցագործություն է և իրենից լուրջ վտանգ է ներկայացնում միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը:

3. Սեգրեգացիայի և ռասայական խտրականության պրակտիկայի և քաղաքականության այլ ձևերը իրենցից ներկայացնում են հանցագործություն խղճի և մարդկության արժանապատվության դեմ և կարող են քաղաքական լարվածություն առաջացնել և լուրջ վրանգ ստեղծել միջազգային խաղաղության և անվտանգության համար:

Ֆոդված 5

1. Մշակույթը, որը բոլոր մարդկանց ստեղծածն է և ամբողջ մարդկության ձեռքբերումը, և կրթությունը, այս բառի ամենալայն իմաստով, տղամարդկանց և կանանց համար ադապտացիայի ավելի արդյունավետ միջոցներ են ստեղծում, որումը թույլ են տալիս նրանց ոչ միայն հաստատել, որ նրանք ծնվում են հավասար իրավունքներում և արժանապատվության մեջ, այլ նաև ընդունել, որ նրանք պետք է հարգեն մարդկանց բոլոր խմբերի իրավունքը մշակութային ինքնատիպության ունենալու և ազգային և միջազգային շրջանակներում իրենց սեփական մշակութային կյանքի զարգացման համար, ընդ որում նկատի է առնվում, որ յուրաքանչյուր խումբ ինքը ազատ լուծում է իր ինքնատիպության համար իր կարծիքով հիմնարար արժեքների պահպանման և, անհրաժեշտության դեպքում, ադապտացման կամ հարստացման հարցը:

2. Պետությունը, իր սահմանադրական սկզբունքներին և գործընթացներին համապատասխան, ինչպես նաև բոլոր կոմպետենտ մարմինները և կրթության ոլորտի բոլոր աշխատակիցները պատասխանատու են այն բանի համար, որպեսզի բոլոր երկրների կրթության ոլորտի բոլոր ռեսուրսներն օգտագործվեն ռասիզմի դեմ պայքարի համար, մասնավորապես հասնելով այն բանին, որ ծրագրերում և դասագրքերում մարդկանց միասնության ու տարբերությունների գիտական և էթիկական հասկացություններին տեղ հատկացվի և չթույլատրվի անցկացնել որևէ ժողովրդի արժանապատվությունը նվաստացնող տարբերություններ. Այդ նպատակների համար ապահովելով դասախոսական անձնակազմի նախապատրաստումը, տրամադրելով դպրոցական համակարգի ռեսուրսները բնակչության բոլոր խմբերին՝ առանց սահմանափակումների կամ ռասայական խտրականության, և միջոցներ ձեռնար-

կելով, որոնք հնարավորություն ունեն վերացնել սահմանափակումները, որոնցից տուժում են առանձին ռասայական կամ էթնիկ խմբեր ինչպես կրթության մակարդակի, այնպես էլ կենսամակարդակի հետ կապված, և մասնավորապես այն բանի համար, որպեսզի խուսափել այդ սահմանափակումը երեխաների վրա տարածելուց:

3. Ձանգվածային լրատվամիջոցները և նրանք, ով ղեկավարում կամ սպասարկում են դրանք, ինչպես նաև մարդկանց ցանկացած խումբ, որը ստեղծված է ազգային հասարակության ներսում, կոչված են, պատշաճ ձևով հաշվի առնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հռչակված սկզբունքները, և մասնավորապես, արտահայտման ազատության սկզբունքը, զարգացնելու փոխըմբռնումը, հանդուրժողականությունը և բարեկամությունը առանձին անձանց և մարդկանց խմբերի միջև և նպաստել ռասիզմի, ռասայական խտրականության և նախապաշարմունքների վերացմանը, մասնավորապես, խուսափելով ստերեոտիպային, հատվածային, միակողմանի կամ շփոթության մեջ զցող պատկերացումներ առանձին մարդկանց և մարդկանց խմբերի մասին: Ռասայական և էթնիկ խմբերի միջև հաղորդակցությունը պետք է փոխադարձ գործընթաց լինի, որն ապահովում է նրանց լիակատար և միանգամայն ազատ հնարավորություն արտահայտվել և լսելի լինել: Յետևաբար, զանգվածային լրատվամիջոցները պետք է կարողանան ընդունել առանձին մարդկանց կամ մարդկանց խմբերի այն գաղափարները, որոնք կիեշտացնեն այդ հաղորդակցությունը:

Ֆոդված 6

1. Պետությունը, առաջին հերթին, պատասխանատվություն է կրում բոլոր մարդկանց և մարդկանց խմբերի կողմից արժանապատվության և իրավունքների լիակատար հավասարության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման համար:

2. Իր իրավասության շրջանակներում և իր սահմանադրական դրույթներին համապատասխան պետությունը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ օրենսդրականը, մասնավորապես, կրթության, գիտության և տեղեկատվության ոլորտներում, նպատակ ունենալով կանխարգելել, արգելել և վերացնել ռասիզմը, ռասայական քարոզչությունը, ռասայական սեգրեգացիան և ապարտեիդը, և նպաստում է ռասայական նախապաշարմունքների և ռասիստական հայացքների առաջացման պատճառների վերաբերյալ բնական և սոցիալական գիտությունների համապատասխան հետազոտությունների գիտելիքների և արդյունքների տարածմանը, և դրանց կանխարգելման մասին, պարտադիր կերպով հաշվի առնելով Մարդու իրավունքների համընդ-

հանուր հռչակագրում և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտում շարադրված սկզբունքներում:

3. Այն դեպքում, երբ ռասայական խտրականությունն արգելող օրենսդրական միջոցները բավարար չեն լինի, պետությունը պետք է լրացնի դրանք ռասայական խտրականության դեպքերի պարբերական հետազոտման վարչական մեխանիզմով, ռասայական խտրականության ակտերի դեմ պայքարի իրավաբանական միջոցների լայն համակարգով, լայնամասշտաբ կրթական և հետազոտական ծրագրերով, որոնք նախատեսված են ռասայական նախապաշարմունքների և ռասայական խտրականության դեմ պայքարի համար, ինչպես նաև քաղաքական, սոցիալական, կրթական և մշակութային բնույթի դրական միջոցների ձեռնարկմամբ, որոնք կկարողանան նպաստել մարդկանց խմբերի միջև փոխադարձ հարգանքի ձեռքբերմանը: Համապատասխան պայմանների դեպքում պետք է անցկացվեն հատուկ ծրագրեր անբարենպաստ պայմաններում գտնվող խմբերի վիճակը բարելավելու համար և, երբ խոսքը գնում է ազգային խմբերի մասին, նրանց հանրության մեջ որոշումների ընդունման գործընթացին նրանց արդյունավետ մասնակցության համար:

Յոթերորդ օրենք

Քաղաքական, տնտեսական և սոցիալական միջոցների հետ համատեղ իրավունքը անհատի իրավունքների և արժանապատվության հավասարության ապահովման և ամեն տեսակի քարոզչության, կազմակերպման կամ գործունեության կանխարգելման միջոցներից մեկն է, որոնք հիմնված են ռասայական կամ էթնիկ խմբերի այսպես կոչված գերակայության գաղափարների կամ տեսությունների վրա կամ որոնք փորձում են արդարացնել կամ խրախուսել ցանկացած ձևի ռասայական խտրականությունը կամ ատելությունը: Պետությունները պետք է համապատասխան իրավաբանական միջոցներ ձեռնարկեն և ապահովեն դրանց կյանքի կոչումն ու իրականացումը իր բոլոր ծառայությունների միջոցով, պատշաճ ձևով հաշվի առնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում շարադրված սկզբունքները: Այս իրավաբանական միջոցները պետք է ընդգրկվեն այն քաղաքական, սոցիալական կամ տնտեսական շրջանակների մեջ, որոնք ի վիճակի են նպաստել դրանց իրականացմանը: Ֆիզիկական և իրավաբանական անձինք, հասարակական կամ մասնավոր կազմակերպությունները պետք է հետևեն դրանց և ամեն կերպ նպաստեն, որպեսզի դրանք հասկանալի լինեն և պատշաճ կերպով կյանքի կոչվեն:

Յոթերորդ օրենք

1. Իրավունք ունենալով միջազգային և ազգային տեսանկյունից ապահովել այնպիսի տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական կարգը, որը թույլ կտա ցանկացած մարդու բացահայտել իր կարողությունները իրավունքների և հնարավորությունների լրիվ հավասարության հիման վրա, յուրաքանչյուր մարդ ունի համապատասխան պարտականություններ իր նմանների, հասարակության նկատմամբ, որտեղ նա ապրում է, և միջազգային հանրության նկատմամբ: Հետևաբար, նրա պարտքն է նպաստել ժողովուրդների միջև ներդաշնակությանը, ռասիզմի և ռասայական նախապաշարմունքների դեմ պայքարին և բոլոր միջոցներով, որոնց նա տիրապետում է, նպաստել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացմանը:

2. Ռասայական նախապաշարմունքների, ռասիստական վարքագծի և գործունեության տեսանկյունից բնական, սոցիալական գիտությունների և մշակութային հետազոտությունների ոլորտի մասնագետները, ինչպես նաև գիտական կազմակերպությունները և ասոցիացիաները կոչված են անցկացնել օբյեկտիվ ուսումնասիրություններ միջճյուղային լայն հենքի վրա. բոլոր պետությունները պետք է աջակցեն նրանց այդ հարցում:

3. Այդ մասնագետները, մասնավորապես, պետք է հետևեն, օգտագործելով իրենց տրամադրության տակ եղած բոլոր միջոցները, որպեսզի նրանց ջանքերը չդառնան կեղծ մեկնաբանության օբյեկտ, և օգնեն բնակչությանը հասկանալ դրանցից բխող եզրակացությունները:

Յոթերորդ օրենք

1. Բոլոր մարդկանց և ժողովուրդների իրավունքների և արժանապատվության հավասարության սկզբունքը, անկախ ռասայից, մաշկի գույնից և ծագումից, համընդհանուր ընդունվածություն ունեցող սկզբունք է, որը ճանաչված է միջազգային իրավունքում: Հետևաբար, պետության կողմից անցկացվող ռասայական խտրականության ցանկացած ձև հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում, որն առաջացնում է պետության միջազգային պատասխանատվությունը:

2. Անհատների և մարդկանց խմբերի արժանապատվության և իրավունքների հավասարությունն ապահովելու համար հատուկ միջոցները պետք է ձեռնարկվեն ամենուր, որտեղ դա անհրաժեշտ է, թույլ չտալով, որպեսզի այդ միջոցներն ընդունեն այնպիսի բնույթ, որը կարող է ռասայականության տեսանկյունից դիտարկվի որպես խտրականություն: Այդ կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ռասայական կամ էթնիկ այն խմբերին, որոնք գտնվում են տնտեսական կամ սոցիա-

լական անբարենպաստ պայմաններում, որպեսզի լիակատար հավասարության հիմքի վրա, առանց խտրականության կամ սահմանափակումների օրենքների և որոշումների ընդունման միջոցով ապահովվի նրանց պաշտպանությունը, ինչպես նաև գոյություն ունեցող սոցիալական բարիքներից օգտվելը, մասնավորապես, բնակավայրի հարցում, աշխատանքով ապահովելու և առողջապահության հարցերում, հարգել նրանց մշակույթների և արժեքների ինքնատիպությունը, նպաստել, մասնավորապես, կրթության միջոցով, նրանց սոցիալական և մասնագիտական առաջընթացին:

3. Այլազգի ծագմամբ բնակչության խմբերը, մասնավորապես գաղթական-բանվորները և նրանց ընտանիքները, որոնք նպաստում են ընդունող երկրի զարգացմանը, պետք է օգտվեն համապատասխան միջոցներից, որոնք նախատեսված են անվտանգության, նրանց արժանապատվության և նրանց մշակութային արժեքների հարգանքի ապահովմանը, ընդունող միջավայրին ադապտացվելու հեշտացմանը և մասնագիտական աճին նպաստելուն, հաշվի առնելով նրանց հետագա վերադարձը հայրենիք և նրա զարգացմանը ներդրում կատարելը. պետք է նպաստել, որպեսզի գաղթականների երեխաներին հնարավորություն տրվի սովորել իրենց մայրենի լեզուն:

4. Միջազգային տնտեսական հարաբերություններում գոյություն ունեցող անհավասարակշռությունը նպաստում է ռասիզմի և ռասայական նախապաշարմունքների սրմանը. հետևաբար, բոլոր պետությունները պետք է ձգտեն իրենց ներդրումն անել միջազգային տնտեսությունը ավելի արդարացի հիմքի վրա վերակառուցելու համար:

Յոթերորդ 10

Չամաշխարհային կամ կրոնական միջազգային կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունները կոչված են համագործակցել և իրենց իրավասության սահմաններում օգնել սույն Յոթակարգով հռչակված սկզբունքների լրիվ և համընդհանուր իրականացմանը, դրանով իսկ նպաստելով հավասար իրավունքներով և արժանապատվությամբ ծնված բոլոր մարդկանց օրինական պայքարին բռնապետության և ռասիզմը ճնշելու, ռասայական սեգրեգացիայի, ապարտեիդի կամ ցեղասպանության դեմ, որպեսզի աշխարհի բոլոր ժողովուրդներն ընդմիջտ ազատվեն այդ վտանգներից:

Աղբյուրը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1978 թվականի նոյեբերի 27-ի Գլխավոր կոնֆերանսի 3/1.1/2 բանաձև

Չամաշխարհային սկզբունքների Յոթակարգի⁴⁰ Չաստատված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր կոնֆերանսի 1995 թվականի նոյեբերի 16-ի 5.61 բանաձևով Չռչակված և ստորագրված է 1995 թվականի նոյեբերի 16-ին (Декларация принципов терпимости Утверждена резолюцией 5.61 Генеральной конференции ЮНЕСКО от 16 ноября 1995 года)

Միավորված Ազգերի Կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի հարցերով անդամ-պետությունները 1995 թվականի հոկտեմբերի 25-ից նոյեբերի 16-ը հավաքվել են Փարիզում Գլխավոր կոնֆերանսի 28-րդ նստաշրջանին,

Նախաբան

հիշատակելով այն մասին, որ Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը հռչակում է. «Մենք՝ Միավորված Ազգերի ժողովուրդներս, լեցուն լինելով վճռականությամբ ազատել եկող սերունդներին պատերազմի չարիքներից ... կրկին հաստատելու հավատը մարդու հիմնական իրավունքների նկատմամբ, արժանապատվության և մարդկային անհատականության արժեքավորության նկատմամբ ... և այդ նպատակներով հանդուրժողականություն ցուցաբերել և միասին ապրելով միմյանց հետ խաղաղության մեջ, որպես բարի հարևաններ»,

հիշեցնելով, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1945 թվականի նոյեբերի 16-ին ընդունված Կանոնադրության նախաբանում ընդգծվում է, որ «խաղաղությունը պետք է հիմնվի մարդկության ինտելեկտուալ և բարոյական համերաշխության վրա»,

հիշեցնելով նաև, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում հայտարարվում է, որ «յուրաքանչյուր մարդ ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք» (հոդված 18), «կարծիքների ազատության և դրանց արտահայտման ազատության իրավունք» (հոդված 19) և որ կրթությունը «պետք է աջակցի ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը և բարեկամությանը» (հոդված 26),

40 Չռչակված և ստորագրված է 1995 թվականի նոյեբերի 16-ին: Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից: Նշենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ին անդամակցելուց ի վեր Վրաստանի՝ այս կազմակերպության առաջ ստորագրած փաստաթղթերի ցանկում բացակայում է սույն հռչակագիրը, հետևաբար՝ Վրաստանը մինչ օրս չի միացել վերջինին:

նկատի ունենալով միջազգային համապատասխան ակտերը, այդ թվում՝

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտը,

- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտը,

- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան,

- Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին կոնվենցիան,

- Երեխաների իրավունքի մասին կոնվենցիան,

- 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և 1967 թվականի Արձանագրությունը, որը վերաբերվում է փախստականների կարգավիճակին, ինչպես նաև այդ ոլորտի տարածաշրջանային իրավական ակտերը,

- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան,

- Կտտանքների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստեցնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիան,

- Կրոնի կամ հավատալիքների հիման վրա խտրականության և անհանդուրժողականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագիրը,

- Ազգային կամ էթնիկ, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագիրը,

- Միջազգային ահաբեկչության վերացման միջոցների մասին հռչակագիրը,

- Մարդու իրավունքների վերաբերյալ Վիեննայի հռչակագիրը և Համաշխարհային կոնֆերանսի գործունեության ծրագիրը,

- Սոցիալական զարգացման շահերից ելնելով Կոպենհագենում բարձրագույն մակարդակով տեղի ունեցած Համաշխարհային հանդիպման ժամանակ ընդունված Հռչակագիրը և Գործունեության ծրագիրը,

- Ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագիրը,

- Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան և հանձնարարագիրը,

հիշատակելով ռասիզմի և ռասայական խտրականության դեմ պայքարի երրորդ Տասնամյակի գործողությունների, Միավորված Ազգերի Կազմակերպության մարդու իրավունքների ոլորտում կրթության

Տասնամյակի և Աշխարհի բնիկ ժողովուրդների Միջազգային տասնամյակի նպատակների մասին,

հաշվի առնելով հանդուրժողականությանը նվիրված Միավորված Ազգերի Կազմակերպության տարվա շրջանակներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր Կոնֆերանսի 27C/5.14 արձանագրությանը համապատասխան անցկացված տարածաշրջանային կոնֆերանսների հանձնարարագրերը, ինչպես նաև հանդուրժողականությանը նվիրված Միավորված Ազգերի Կազմակերպության տարվա ծրագրով Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ-պետությունների կողմից կազմակերպված այլ կոնֆերանսների ու խորհրդակցությունների եզրակացություններն ու հանձնարարագրերը,

անհանգստության զգացում ապրելով վերջին ժամանակներս հասարակության ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների, փախստականների, գաղթական-բանվորների, գաղթականների և սոցիալապես առավել անապահով խավերի նկատմամբ անհանդուրժողականության, բռնության, ահաբեկչության, քսենոֆոբիայի, ագրեսիվ ազգայնականության, ռասիզմի, հակասեմիթիզմի, օտարացման, մարգինալացման ակտերի, ինչպես նաև մտքի ազատության և կարծիքների արտահայտման ազատության իրենց իրավունքն իրականացնող առանձին անձանց նկատմամբ բռնության և ահաբեկչական ակտերի քանակի ավելացմամբ, որոնք վտանգ են ներկայացնում ազգային և միջազգային մակարդակներով խաղաղության և ժողովրդավարության ամրապնդման գործընթացին և արգելք են հանդիսանում զարգացման ճանապարհին,

հատուկ ուշադրություն դարձնելով անդամ-պետությունների պարտականությանը զարգացնել և խրախուսել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը բոլորի համար, առանց ռասայի, սեռի, լեզվի, ազգային պատկանելության, կրոնի կամ առողջական վիճակի տարբերության, և պայքարել անհանդուրժողականության դրսևորումների դեմ,

ընդունում են և հանդիսավոր հռչակում են Անհանդուրժողականության սկզբունքների մասին սույն հռչակագիրը

լեցուն լինելով վճռականությամբ անել անհրաժեշտ ամեն ինչ մեր հասարակություններում հանդուրժողականության իդեալները հաստատելու համար, քանի որ հանդուրժողականությունը ոչ միայն կարևորագույն սկզբունք է, այլ նաև բոլոր ժողովուրդների խաղաղության և սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտ պայման,

մենք հայտարարում ենք հետևյալը՝

Յոդված 1-Հանդուրժողականության հասկացությունը

1.1 Հանդուրժողականությունը նշանակում է մեր աշխարհի մշակույթների հարուստ բազմազանության, ինքնարտահայտման մեր ձևերի և մարդկային անհատականության դրսևորման միջոցների նկատմամբ հարգանք, ընդունում և ճիշտ ըմբռնում: Դրան նպաստում են գիտելիքները, բաց լինելը, շփումը և մտքի, խղճի ու հավատալիքների ազատությունը: Հանդուրժողականությունը դա ներդաշնակություն է բազմազանության մեջ: Սա ոչ միայն բարոյական պարտք է, այլ նաև քաղաքական և իրավական պահանջարկ: Հանդուրժողականությունը դա առաքինություն է, որը հնարավոր է դարձնում խաղաղության հասնելը և նպաստում է պատերազմի մշակույթը խաղաղության մշակույթով փոխարինմանը:

1.2 Հանդուրժողականությունը զիջում, ներողամտություն կամ թողտվություն է: Հանդուրժողականությունը դա նախ և առաջ մարդու ունիվերսալ իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման վրա հիմնված ակտիվ վերաբերմունք է: Ոչ մի դեպքում հանդուրժողականությունը չի կարող այս հիմնական արժեքների վրա ոտնձգությունների արդարացում լինել, հանդուրժողականությունը պետք է ցուցաբերեն առանձին մարդիկ, խմբեր և պետություններ:

1.3 Հանդուրժողականությունը դա պարտավորություն է նպաստել մարդու իրավունքների, պլյուրալիզմի (այդ թվում նաև մշակութային պլյուրալիզմի), ժողովրդավարության և իրավակարգի հաստատմանը: Հանդուրժողականությունը դա հասկացություն է, որը նշանակում է հրաժարում դոգմատիզմից, ճշմարտության բացարձակացումից և հաստատում է նորմեր, որոնք սահմանված են մարդու իրավունքների ոլորտին վերաբերվող միջազգային իրավական ակտերում:

1.4 Հանդուրժողականության դրսևորումը, որը համահունչ է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին, չի նշանակում հանդուրժողական վերաբերմունք սոցիալական անարդարությանը, սեփական հանոգմունքներից հրաժարում կամ ուրիշ հանոգմունքների համար զիջումներ: Դա նշանակում է, որ յուրաքանչյուրը ազատ է հետևել իր հանոգմունքներին և ճանաչում է մյուսների նույն իրավունքը: Դա նշանակում է ճանաչել այն, որ մարդիկ իրենց էությանը տարբերվում են արտաքինով, դիրքով, խոսքով, վարքագծով և արժեքներով և իրավունք ունեն ապրել խաղաղության մեջ և պահպանել իրենց անհատականությունը: Դա նաև նշանակում է, որ մի մարդու հայացքները չեն կարող կապվել ուրիշներին:

Յոդված 2-Պետական մակարդակ

2.1 Պետական մակարդակով հանդուրժողականությունը պահանջում է արդարացի և անկողմնակալ օրենսդրություն, իրավակարգի և դատական-դատավարական և վարչական նորմերի պահպանում: Հանդուրժողականությունը նաև պահանջում է յուրաքանչյուր մարդուն հնարավորություններ տրամադրել առանց որևէ խտրականության տնտեսական և սոցիալական զարգացման համար: Օտարացումը և մարգինալացումը կարող են ճնշվածության, թշնամանքի ու ֆանատիզմի պատճառ դառնալ:

2.2 Հասարակությունը ավելի հանդուրժող դարձնելու համար պետությունները պետք է վավերացնեն մարդու իրավունքների մասին գոյություն ունեցող միջազգային կոնվենցիաները և, եթե դա անհրաժեշտ է, մշակեն նոր օրենսդրություն հասարակության մեջ բոլոր խմբերի և առանձին մարդկանց համար իրավահավասար մոտեցում և հնարավորությունների հավասարություն ստեղծելու նպատակով:

2.3 Միջազգային համաձայնության շահերի համար էապես կարևոր է, որպեսզի առանձին մարդիկ, համայնքներ ու ազգություններ ճանաչեն և հարգեն մարդկային հանրության մշակութային պլյուրալիզմը: Խաղաղությունն անհնարին է առանց հանդուրժողականության, իսկ զարգացումն ու ժողովրդավարությունը անհնարին են առանց խաղաղության:

2.4 Անհանդուրժողականությունը կարող է սոցիալապես առավել քիչ պաշտպանված խմբերի մարգինալացման, հասարակական և քաղաքական կյանքից նրանց հեռացման, ինչպես նաև նրանց նկատմամբ բռնության և խտրականության կիրառման ձևեր ընդունել: Ինչպես հռչակում է Ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին հռչակագիրը «բոլոր մարդիկ և մարդկանց խմբեր իրավունք ունեն տարբերվել միմյանցից» (հոդված 1.2):

Յոդված 3-Սոցիալական ասպեկտներ

3.1 Հանդուրժողականությունը ինչպես երբևէ կարևոր է ժամանակակից աշխարհում: Մենք ապրում ենք տնտեսության գլոբալացման և ավելի մեծ շարժունակության, հաղորդակցությունների արագ զարգացման, ինտեգրման և փոխադարձ կախվածության դարում, լայնամասշտաբ գաղթի և բնակչության տեղափոխման, ուրբանիզացիայի և սոցիալական կառույցների վերափոխման դարում: Յուրաքանչյուր տարածաշրջան բազմադեմ է և այդ իսկ պատճառով անհանդուրժողականության և կոնֆլիկտների սրացումը պոտենցիալ վտանգ է աշխարհի բոլոր մասերին: Նման վտանգից չի կարելի մեկուսանալ ազգային սահմաններով, քանի որ այն գլոբալ բնույթ է կրում:

3.2 Հանդուրժողականությունը անհրաժեշտ է ինչպես առանձին մարդկանց միջև, այնպես էլ ընտանիքի և համայնքի մակարդակով հարաբերություններում: Դպրոցներում և համալսարաններում, ոչ պաշտոնական կրթության շրջանակներում, տանը և աշխատավայրում անհրաժեշտ է ամրապնդել հանդուրժողականության ոգին և ձևավորել բաց լինելու, միմյանց նկատմամբ ուշադրության և համերաշխության հարաբերություններ: Հաղորդակցության միջոցները ի վիճակի են կառուցողական դեր խաղալ ազատ և բաց երկխոսության ու քննարկման, հանդուրժողականության արժեքների տարածման և ուժ հավաքող անհանդուրժողականություն քարոզող խմբերի և գաղափարախոսությունների նկատմամբ անտարբերության դրսևորման վտանգի բացատրության գործում:

3.3 Ռասայի և ռասայական նախապաշարմունքների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագրում հայտարարվում է, որ ամենուր, որտեղ դա անհրաժեշտ է, պետք է հատուկ միջոցներ ձեռնարկվեն առանձին անձանց և մարդկանց խմբերի արժանապատվության և իրավունքների հավասարության ապահովման նպատակներով: Այս կապակցությամբ հատուկ ուշադրություն պետք է դարձնել սոցիալապես առավել անապահով խմբերին, որոնք գտնվում են սոցիալական կամ տնտեսական անբարենպաստ պայմաններում, որպեսզի նրանց տրամադրվի իրավական և սոցիալական պաշտպանություն, մասնավորապես, բնակատարածության, զբաղվածության և առողջության պահպանման հարցերում, ապահովել հարգանքը նրանց մշակույթի և արժեքների ուրույնության նկատմամբ և աջակցել, հատկապես կրթության միջոցով, նրանց սոցիալական և մասնագիտական աճին և ինտեգրմանը:

3.4 Այս գլոբալ խնդրի լուծման շահերից ելնելով անհրաժեշտ է անցկացնել համապատասխան գիտական ուսումնասիրություններ և ստեղծել կապեր միջազգային հանրության գործունեությունը համակարգելու նպատակով, ներառյալ այս երևույթի արմատական պատճանների վերլուծություն սոցիալական գիտությունների համատեքստում, արդյունավետ հակամիջոցների ընդունում, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգի իրականացում, որոնք կնպաստեն քաղաքական որոշումների մշակմանը և անդամ-պետությունների վարչարարական գործունեությանը:

Յոթերորդի 4-Դաստիարակություն

4.1 Դաստիարակությունը հանդիսանում է անհանդուրժողականության կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը: Հանդուրժողականության ոգով դաստիարակությանը սկսվում է նրանից, որ

մարդկանց սովորեցնում են, թե ինչու են կայանում նրանց ընդհանուր իրավունքներն ու ազատությունները, որպեսզի ապահովվի այդ իրավունքների իրականացումը, և ուրիշների իրավունքների պաշտպանության ձգտման խրախուսումից:

4.2 Հանդուրժողականության ոգով դաստիարակությունը պետք է դիտարկել որպես անհետաձգելի իմպերատիվ: այդ կապակցությամբ անհրաժեշտ է խրախուսել հանդուրժողականության պարբերաբար և ռացիոնալ ուսուցման մեթոդները, որոնք բացահայտում են անհանդուրժողականության մշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական և կրոնական աղբյուրները, որոնք ընկած են բռնության և օտարման հիմքում: Կրթության բնագավառում քաղաքականությունը և ծրագրերը պետք է նպաստեն փոխըմբռնման բարելավմանը, համերշխության և հանդուրժողականության ամրապնդմանը ինչպես առանձին մարդկանց, այնպես էլ էթնիկ, սոցիալական, մշակութային, կրոնական և լեզվական խմբերի, նաև ազգերի միջև հարաբերություններում:

4.3 Հանդուրժողականության ոգով դաստիարակությունը պետք է ուղղված լինի վախի զգացում և ուրիշների նկատմամբ օտարման զգացում առաջացնող ազդեցության հակազդում: Այն պետք է նպաստի երիտասարդության մոտ անկախ մտածելակերպի, քննադատական իմաստավորման և բարոյական արժեքների վրա հիմնված դատողությունների մշակման հմտությունների ձևավորմանը:

4.4 Մենք հայտարարում ենք մեր պատրաստակամության մասին պահպանել և կյանքի կոչել սոցիալական գիտությունների ոլորտում և հանդուրժողականության, մարդու իրավունքների և ոչբռնության ոգով դաստիարակության գործում գիտական ուսումնասիրությունների ծրագրերը: Դա նշանակում է մանկավարժական պատրաստվածության, ուսումնական ծրագրերի, դասագրքերի և պարապմունքների բովանդակության, այլ ուսումնական նյութերի կատարելագործման մակարդակի բարձրացման հարցերին հատուկ ուշադրություն, ներառյալ նոր կրթական տեխնոլոգիաներ, նպատակ ունենալով դաստիարակել զգայուն և պատասխանատու քաղաքացիներ, որոնք բաց են ըմբռնել այլ մշակույթներ, ի վիճակի են գնահատել ազատությունը, հարգել մարդկային արժանապատվությունը և անհատականությունը, կանխարգելել կոնֆլիկտները և լուծել դրանք ոչ բռնի միջոցներով:

Յոթերորդի 5-Պատրաստվածությունը գործելուն

Մենք պարտավորվում ենք խրախուսել հանդուրժողականություն և ոչ բռնություն, դրա համար օգտագործելով կրթության, գիտության,

մշակույթի և հաղորդակցության ոլորտներում ծրագրեր և հաստատություններ:

Յոթերորդ 6-Յանդուրժողականությանը նվիրված Միջազգային օր

Հասարակությունը մոբիլիզացնելու, անհանդուրժողականության հետևում թաքնված վտանգների նկատմամբ ուշադրություն հրավիրելու և հանդուրժողականության խրախուսման աջակցության և դրա ոգով դաստիարակման համար գործողությունների ակտիվացման և հավատարմության ամրապնդման նպատակով մենք հանդիսավոր հռչակում ենք նոյեմբերի 16-ը որպես ամեն տարի նշվող Յանդուրժողականությանը նվիրված Միջազգային օր:

Հետաքրքրական են նաև տարբեր տարիներին ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից ընդունված «Պատերազմի դրդման, ապարտեիդի, ռասիզմի դեմ պայքարի, մարդու իրավունքների զարգացման, միջազգային փոխընթացման և խաղաղության ամրապնդման մեջ զանգվածային լրատվամիջոցների դերին վերաբերող հիմնական սկզբունքների մասին» դեկլարացիան (“Декларация об основных принципах, касающихся вклада средств массовой информации в укрепление мира и международного взаимопонимания, в развитие прав человека и в борьбу против расизма и апартеида и подстрекательства к войне”) (1978թ. նոյեմբերի 28)⁴¹, «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման մասին» (“Convention for the Safeguarding of the Intangible Cultural Heritage, Paris, UNESCO, 17 October, 2003”, “Конвенция об охране нематериального культурного наследия”) (2003թ. հոկտեմբերի 17)⁴², «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պահպանման և աջակցման մասին կոնվենցիա»

41 Հռչակված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր Կոնֆերանսի 1978թ. նոյեմբերի 28-ի 20-րդ նստաշրջանի կողմից: Վրաստանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջ ստորագրած փաստաթղթերի ցանկում բացակայում է սույն դեկլարացիան, հետևաբար՝ Վրաստանը մինչ օրս չի միացել վերջինին:

42 Բանաձևն ընդունված է Հանձնաժողով IV-ի 2003թ. նոյեմբերի 17-ի 21-րդ պլենար նիստի զեկույցի հիման վրա: Վրաստանը միացել է սույն կոնվենցիային 2008թ. հուլիսի 18-ին, տես՝ Ministry of Foreign Affairs of Georgia, UNESCO Conventions, http://mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=541&info_id=9752:

(«Convention on the Protection and Promotion of the Diversity of Cultural Expressions, Paris, 20 October, 2005», “Конвенция об охране и поощрении разнообразия форм культурного самовыражения”) (Փարիզ, 2005թ., հոկտեմբերի 20)⁴³ կոնվենցիաները:

ՄԱԿ-ին վերաբերող բաժնի ամփոփումից առաջ՝ նշենք, որ 2006թ. նոյեմբերի 7-ին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հրապարակեց իր հերթական զեկույցը Վրաստանի մասին⁴⁴, որտեղ մանրամասն քննության է առնված Վրաստանի վիճակը, վերջինիս մեջ ոչ մեծ չափով տեղեկություններ կան նաև փոքրամասնությունների առաջ ծառայած խնդիրների, ինչպես նաև այդ խնդիրների լուծման ուղղությամբ Վրաստանի կատարած քայլերի մասին: Վերջինիս 400-րդ կետում բերված են հետևյալ հավելված-վիճակագրական տեղեկությունները.

Table 7

Population by ethnic origin (based on population census data)

	Thousands			Total population (in per cent)		
	1979	1989	2002	1979	1989	2002
Total population	4 993.2	5 400.8	4 371.5	100	100	100
Georgian	3 433.0	3 787.4	3 661.2	68.8	70.1	83.8
Abkhaz	85.3	95.9	3.5	1.7	1.8	0.1
Ossetian	160.5	164.1	38.0	3.2	3.0	0.9
Russian	371.6	341.2	67.7	7.4	6.3	1.5
Ukrainian	45.0	52.4	7.0	0.9	1.0	0.2
Azerbaijani	255.7	307.6	284.8	5.1	5.7	6.5
Armenian	448.0	437.2	248.9	9.0	8.1	5.7
Jewish	28.3	24.8	3.8	0.6	0.5	0.1
Greek	95.1	100.3	15.2	1.9	1.9	0.3
Kurd	25.7	33.3	20.8	0.5	0.6	0.5

43 Վրաստանը միացել է սույն կոնվենցիային 2008թ. հոկտեմբերի 1-ին, տես՝ Ministry of Foreign Affairs of Georgia, UNESCO Conventions, http://mfa.gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=541&info_id=9752:

44 UN, Human rights committee, International covenant on civil and political rights (CCPR/C/GEO/3), Consideration of reports submitted by states parties under article 40 of the covenant. Third periodic report of States parties due in 2006, Georgia, 7 November, 2006. Նշենք, որ Վրաստանի համար նախորդ նման զեկույցը կազմվել էր 2001-2002թթ.:

Table 8
Preschool institutions by language of instruction

	At the end of year		
	2003		2004
	Preschool institutions - total	Number of children	Preschool institutions - total
Total	1 225	74 309	1 247
Instructed in:			
Georgian	1 143	65 027	1 159
Russian	5	112	6
Azeri	2	75	-
Armenian	1	20	2
Georgian - Russian	67	8 541	72
Georgian - Armenian	2	152	2
Georgian - Azeri	1	33	2
Russian - Armenian	1	98	1
Georgian - Russian - Azeri	2	219	2
Ossetian	1	32	1

Table 9

Public day general educational school students by language of instruction (excluding schools for mentally and physically retarded children, at the beginning of school year)

	2000/01	2001/02	2002/03	2003/04	2004/05
Number of students - total (thousands)	697.4	680.8	664.0	647.9	620.6
Of which are instructed in:					
Georgian	595.1	584.0	572.1	560.1	530.8
Russian	38.1	35.9	34.0	32.1	34.1
Azeri	38.2	36.8	35.4	34.3	33.5
Armenian	25.8	23.9	22.3	21.2	21.6
Abkhaz	0.4
Ossetian	0.2	0.2	0.2	0.2	0.2
In per cent to the total number of students	100	100	100	100	100
Georgian	85.3	85.8	86.2	86.4	85.5
Russian	5.5	5.3	5.1	5.0	5.5
Azeri	5.5	5.4	5.3	5.3	5.4
Armenian	3.7	3.5	3.4	3.3	3.5
Abkhaz	0.07
Ossetian	0.03	0.03	0.03	0.03	0.03

Source: Ministry of Education and Science of Georgia.

Յ աջորդ միջազգային կառույցը, որի մասին խոսելու ենք, դա **Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունն է (ԵԱՀԿ):** ԵԱՀԿ-ն սկզբնավորվել է 1970-ական թվականներին՝ երկրների միջև հարաբերությունների բարելավման ժամանակաշրջանից, երբ հիմնադրվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովը (ԵԱՀԿ)՝ նպատակ ունենալով ստեղծել բազմակողմ ֆորում Արևմուտքի և Արևելքի միջև բանակցություններ և երկխոսություն իրականացնելու համար: Երկու տարվա ընթացքում Հելսինկիում և Ժնևում անցկացված հանդիպումների արդյունքում ԵԱՀԿ-ի մասնակիցները 1975թ. օգոստոսի 1-ին ստորագրեցին Հելսինկյան եզրափակիչ ակտը: Այս փաստաթուղթը պարունակում էր մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական պարտավորությունները /«Չամբյուղ III»/, որոնք հիմք հանդիսացան այսպես կոչված «Հելսինկյան գործընթացի» համար: Այն նաև հաստատագրեց այն հիմնական սկզբունքները /թվով 10, «Դեկալոգ»/, որոնք պետք է ուղղորդեն պետությունների վարքագիծը իրենց քաղաքացիների հանդեպ և միմյանց նկատմամբ: Մինչև 1990թ. ԵԱՀԿ-ն գործում էր իբրև հանդիպումների և համաժողովների շարք, որտեղ մշակվել և ընդլայնվել էին անդամ պետությունների պարտավորությունները և պարբերաբար վերանայվում էր դրանց կատարումը: Սակայն, Սառը Պատերազմի ավարտից հետո 1990թ. նոյեմբերին, Փարիզի գագաթաժողովը նոր ուղղվածություն տվեց ԵԱՀԿ-ի գործունեությանը: Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայով ԵԱՀԿ-ի առջև խնդիր էր դրվել իր ներդրումը ունենալ Եվրոպայում տեղի ունեցող պատմական փոփոխությունների գործընթացին և արձագանքել սառը պատերազմի ավարտից հետո ընկած ժամանակաշրջանի նոր զարգացումներին՝ ձևավորելով մշտական հաստատություններ և ձեռք բերելով գործառնական կարողություններ:

Սպառազինությունների վերահսկման վերաբերյալ կարևորագույն համաձայնագիրը՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրը /ԵՍՁՈ/, նույնպես ստորագրվել էր Փարիզի գագաթաժողովի շրջանակներում: Մի շարք այլ կարևոր ռազմական և անվտանգության պայմանագրեր, ինչպիսիք են՝ 1992թ. Բաց երկնքի մասին պայմանագիրը, 1990, 1992, 1994 և 1999 թթ. Վիեննայի փաստաթղթերը, ինչպես նաև 2000թ. Փոքր սպառազինությունների և թեթև զենքի մասին փաստաթուղթն այժմ կազմում են ԵԱՀԿ/ԵԱՀԿ-

ի ռազմաքաղաքական ոլորտում համագործակցության հիմքը: 1990-ականների սկզբին կազմակերպությունում ստեղծվեցին գրասենյակներ ու հաստատություններ, հանդիպումները դարձան ավելի կանոնավոր, հիմնադրվեցին առաքելություններ և խորհրդաժողովի աշխատանքներն ավելի կանոնակարգված բնույթ ստացան: 1994թ. Բուդապեշտի գազաթափողովը՝ փաստելով, որ ԵԱՀԽ-ն այլևս զուտ խորհրդաժողով չէ, վերանվանեց այն Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն /ԵԱՀԿ/: Սա մի նոր քաղաքական շունչ հաղորդեց կազմակերպությանը և միաժամանակ արտացոլեց կազմակերպության զարգացումը սառը պատերազմի ավարտից հետո:

1996թ. Լիսաբոնի գազաթափողովն էլ ավելի ամրապնդեց ԵԱՀԿ-ի դերը՝ նպաստելով գործունեության բոլոր ուղղություններով անվտանգության և կայունության հաստատմանը: Այս հանդիպումը նաև խթան հանդիսացավ ԵԱՀԿ-ի Եվրոպական անվտանգության խարտիայի մշակման համար, որն ի վերջո ընդունվեց 1999թ. նոյեմբերին Ստամբուլի գազաթափողովում: Այն կարևոր էր կազմակերպության գործունեության հնարավորությունները և այլ գործընկերների հետ համագործակցությունը ամրապնդելու գործում: Ստամբուլում 30 ԵԱՀԿ անդամ երկրների կողմից նաև ստորագրվեց Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին վերանայված պայմանագիրը:

Այսօր ԵԱՀԿ-ն եզակի տեղ է զբաղեցնում Եվրոպական անվտանգության կառույցների շարքում: ԵԱՀԿ որոշումներ կայացնող և բանակցություններ վարող հաստատությունները կանոնավոր կերպով հանդիպում են Վիեննայի Յոֆբուրգի համաժողովների կենտրոնում: Հանդիսանալով տարածաշրջանային համաձայնություն, ՄԱԿ-ի կանոնադրության 8-րդ գլխի համաձայն, ԵԱՀԿ-ը հանդես է գալիս որպես առաջնային միջոց՝ հակամարտությունների վաղ ազդարարման և կանխարգելման, ճգնաժամերի կառավարման, հետհակամարտային վերականգնման գործում: ԵԱՀԿ-ի մոտեցումն անվտանգությանը և համապարփակ է, և իրականացվում է համագործակցության սկզբունքով. Համապարփակ, քանի որ զբաղվում է անվտանգության երեք ուղղություններով՝ մարդու իրավունքների ժողովրդավարության ռազմաքաղաքական և տնտեսական/բնապահպանական: Հետևաբար՝ կազմակերպության գործունեության ոլորտը ներառում է անվտանգությանն առնչվող խնդիրների լայն շրջանակը, այն է՝ սպառազինությունների վերահսկում, կանխարգելող դիվանագիտություն, վստահություն ձևավորող և անվտանգություն ապահովող միջոցառումներ, մարդու իրավունքներ, ժողովրդավա-

րություն և տնտեսական ու բնապահպանական հարցեր: Կազմակերպության համագործակցության սկզբունքը պայմանավորված է նրանով, որ ԵԱՀԿ-ի գործունեությանը մասնակցող բոլոր պետություններն ունեն հավասար կարգավիճակ և պարտավորված չեն որևիցե պայմանագրով, այսպիսով՝ որոշումներն ընդունվում են կոնսենսուսով՝ քաղաքական և ոչ իրավականորեն պարտադիր կատարման սկզբունքով:

1992թ. մարտի 24-ից Վրաստանը հանդիսացել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության մասնակից երկիր: Այս հիմքի վրա Ջավախքի հիմնահարցի արժարժույթը մեզ պարտավորեցնում է խոսել այն մի քանի հիմնարար փաստաթղթերի մասին, որոնք անմիջականորեն առնչվելով տարածաշրջանի հիմնահարցին, մշտապես շրջանցվել են Վրաստանի կողմից. Հաագայի, Օսլոյի և Լուդոյան հանձնարարականներ, սրանք այն հիմնարար փաստաթղթերն են, որոնց վրա հիմնվելով, ջախխահայությունը կարող է հիմնախնդիրների լուծման ուղղությամբ ունենալ ինչ-ինչ առաջընթաց քայլեր.

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱԱԳԱՅԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ⁴⁵

Յոկտեմբեր, 1996թ.

Ներածություն

Իր որոշումներով, որոնք 1992թ. հուլիսին Յեկսիսկիում ընդունել է Եվրոպայում անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (ԵԱՀԿ), հիմնադրել է ազգային փոքրամասնությունների գործերով Գերագույն Կոմիսարի պաշտոնը «տարածայնությունները հնարավորինս սկզբնական փուլում կանխարգելման նպատակով»: Այս պաշտոնի ստեղծումը մեծ մասամբ նախկին Հարասլավիայում ստեղծված իրավիճակի արձագանքն էր, որը, որոշ մարդկանց մտավախությամբ, կարող էր կրկնվել Եվրոպայում, մա-

45 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

նավանդ դեպի ժողովրդավարություն գնացող երկրներում, և կարող է խաթարել խաղաղության և բարեկեցության հասնելու հույսերը, որոնք արտահայտված են Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիայում, որն ընդունվել է պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից 1990թ. նոյեմբերին:

1993թ. հունվարի 1-ին պարոն Մաքս վան դեր Ստուլը անցավ իր պարտականությունների կատարմանը Ազգային փոքրամասնությունների գործերով ԵԱՀԿ առաջին Գերագույն Կոմիսարի (ԱՓԳԿ) պաշտոնում: Յենվելով իր մեծ աշխատանքային փորձին, որը նա ձեռք է բերել խորհրդարանի անդամ, Նիդերլանդների արտաքին գործերի նախարար, ՄԱԿ-ում մշտական ներկայացուցիչ, Մարդու իրավունքների պաշտպան երկար տարիների ընթացքում աշխատելիս, պարոն Մ. վան դեր Ստուլը իր ուշադրությունը սևեռել է ազգային փոքրամասնությունների և Եվրոպայի իշխանության կենտրոնական մարմինների միջև առաջացող բազմաթիվ տարածայնությունների վրա, որոնք, նրա կարծիքով, իրենց մեջ կոնֆլիկտի զարգացման պոտենցիալ վտանգ են պարունակում: Գործելով «հանդարտ, լուռ» դիվանագիտության միջոցներով, ԱՓԳԿ-ն ներկա պահին իր գործունեությունն է իրականացնում աշխարհի շատ երկրներում, այդ թվում Ալբանիայում, Խորվաթիայում, Էստոնիայում, Հունգարիայում, Ղազախստանում, Ղրղզստանում, Լատվիայում, նախկին հարասլավական հանրապետություն Սակեդոնիայում, Ռումինիայում, Սլովակիայում և Ուկրաինայում: Առաջին հերթին, նրա ուշադրության կենտրոնում գտնվում են այն իրավիճակները, որոնց մեջ ներքաշված են այն ազգային կամ էթնիկ խմբերի ներկայացուցիչները, որոնք մի պետությունում կազմում են մեծամասնությունը, իսկ մյուսում՝ փոքրամասնությունը, և որոնց մեջ այսպիսով ներքաշված են այդ պետությունների շահերը: Իսկ դա արդեն միջպետական հարաբերությունների լարվածության կամ նույնիսկ կոնֆլիկտների պոտենցիալ աղբյուր է ստեղծում: Պետք է նշել, որ նման լարվածությունը շատ բաներ է որոշել Եվրոպական պատմության մեջ:

Ուսումնասիրելով լարված իրավիճակների էությունը, որոնց մեջ ներքաշված են ազգային փոքրամասնությունները, ԱՓԳԿ-ն այդ խնդիրների լուծմանը մասնակցում է որպես անկախ, անաչառ և համագործակցության պատրաստ կողմ: Չհանդիսանալով հսկող մարմին, իր գործունեության մեջ նա օգտագործում է միջազգային նորմեր, որոնք ընդունված են բոլոր պետությունների կողմից, որպես վերլուծության և խորհուրդների հիմք: Այդ կապակցությամբ կարևոր

է հիշեցնել այն պարտականությունների մասին, որոնք ստանձնել են ԵԱՀԿ բոլոր անդամ-պետությունները, մասնավորապես 1990թ. Մարդկային չափման հարցերով կոնֆերանսում ընդունված Կոպենհագենյան փաստաթղթի նորմերի մասին, որի 4-րդ մասում մանրամասն թվարկված են ազգային փոքրամասնությունների նկատմամբ պարտականությունները: Կարևոր է նաև նշել, որ ԵԱՀԿ բոլոր պետությունները կապված են նաև Մարդու իրավունքների ոլորտի ՄԱԿ-ի պարտականություններով, ներառյալ փոքրամասնությունների իրավունքները: ԵԱՀԿ պետությունների գերակշիռ մասը կապված է նաև Եվրոպայի խորհրդի նորմերով:

Մոտ չորս տարվա լարված աշխատանքներից հետո ԱՓԳԿ-ն կարողացավ սահմանել պարբերաբար առաջացող վիճելի հարցերն ու թեմաները, որոնք դարձել են նրա ուշադրության առարկան մի շարք երկրներում, որոնք ընկել են նրա ուշադրության և գործունեության դաշտում: Փոքրամասնությունների համար կրթության հարցը, մասնավորապես փոքրամասնության լեզվով կրթությունը կամ էլ այդ լեզուն սովորեցնելը, ունի բարձր առաջնահերթություն այդ խնդիրների շրջանակներում, քանի որ համաձայն ԱՓԳԿ-ի վերջերս արված հայտարարության, դարձել է «պարզ, որ կրթությունը - դա բացառիկ կարևոր գործոն է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ինքնատիպության պահպանման և խորացման գործում»: Նկատի ունենալով դա, ԱՓԳԿ-ն 1995թ. աշնանը Միջէթնիկական հարաբերությունների հիմնադրամին խնդրել է դիմել ճանաչված միջազգային փորձագետների մի փոքր խմբին, որպեսզի ստանա խորհուրդներ փոքրամասնությունների կրթության իրավունքների պատշաճ և հետևողական կիրառման վերաբերյալ ԵԱՀԿ գործունեության տարածաշրջանում:

Միջէթնիկական հարաբերությունների հիմնադրամը դա ոչ կառավարական կազմակերպություն է, որը հիմնվել է 1993թ. ԱՓԳԿ-ին օգնելու նպատակով մասնագիտացված աշխատանքներ իրականացնելու համար: Այն անցկացրել է փորձագետների խորհրդատվական մի շարք ժողովներ տարբեր համապատասխան թեմաներով, ներառյալ երկու ժողով Հասագայում: Փորձագետների կազմում էին՝ Ա.Գ.Բոյդ Ռոբերտսոնը, հալլական լեզվի ավագ դասախոս, Ստրասլյայդի համալսարան (Մեծ Բրիտանիա), դոկտոր Պիտեր վան Դայկը, Պետական խորհրդի անդամ (Նիդերլանդներ), դոկտոր Աբբյորն Էյդեն, Մարդու իրավունքների Նորվեգական Ինստիտուտի տնօրեն (Նորվեգիա), պրոֆեսոր Ռեյն Մյուլգերսոնը, միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, Քինգս Զոլեջ (Մեծ Բրիտանիա), պրոֆես-

սոր Ալլան Ռոասս, Աբո Ակադեմի Համալսարան (Ֆինլանդիա), դոկտոր Տովե Սկուտհարբ-Կանգգաս, ադյունկտ-պրոֆեսոր, լեզուների և մշակույթի ֆակուլտետ, Ռոսկիլդե Համալսարան (Դանիա), պրոֆեսոր Դյերդ Շեվե, լեզվաբանության ֆակուլտետ, Յանոշ Պանև-Նիուսի Համալսարան (Հունգարիա), պրոֆեսոր Պատրիկ Տորբերրի, իրավաբանական ֆակուլտետ, Կիլի Համալսարան (Մեծ Բրիտանիա), պարոն Յեննե վան դեր Վելդե, ուսումնական ծրագրերի ավագ խորհրդատու, Ուսումնական ծրագրերի մշակման Ազգային Ինստիտուտ (Նիդերլանդներ):

Քանի որ փոքրամասնությունների իրավունքների շրջանակի համապատասխան նորմերը վերաբերվում են մարդու իրավունքների ոլորտին, ապա այդ խորհրդակցությունների ելակետը դա պետությունների կողմից պարտականությունների պահպանման մասին ենթադրությունն էր մարդու մյուս բոլոր իրավունքների նկատմամբ, ներառյալ, մասնավորապես, ազատությունը խտրականություններից: Փորձագետները կոչված են ապահովելու մարդու ամծի լրիվ և ազատ զարգացումը հավասարության պայմաններում: Այնուհետև ենթադրվում էր, որ քաղաքացիական հասարակությունը պետք է լինի բաց և շարժուն և դրանով իսկ ի վիճակի լինի միավորել բոլոր քաղաքացիներին, այդ թվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին:

Արդյունքում ստեղծվեցին Ազգային փոքրամասնությունների կրթության իրավունքների վերաբերյալ Հանձնարարականներ, որոնք օգնում են պարզ դարձնել, համեմատաբար մատչելի լեզվով, փոքրամասնությունների կրթության իրավունքների էություն, որոնք սովորաբար կիրառվում են այնպիսի իրավիճակներում, որոնց ներգրավված է ԱՓԳ-ն: Դրանից բացի, այդ նորմերը պարզաբանվում են այնպես, որպեսզի ապահովվի դրանց փոխկապվածությունը կիրառման ժամանակ: Հանձնարարականները բաժանված են ութ զլխի, որոնցից յուրաքանչյուրը բարձրացնում է կրթության ոլորտում պրակտիկորեն առաջացող խնդիրները: Հանձնարարականների առավել մանրամասն բացատրությունը տրված է դրանց կցված Բացատրագրում, որտեղ արված են որոշակի ուղղումներ միջազգային նորմերին համապատասխան:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱԱԳԱՅԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Միջազգային փասթաթղթերի ոգին:

1. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ինքնատիպության պահպանման իրավունքը կարող է լիարժեք իրականացվել միայն այն դեպքում, եթե նրանք կրթական գործընթացի ժամանակ ստանան մայրենի լեզվի պատշաճ ուսուցում: Միևնույն ժամանակ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պատասխանատու են իրենց պետության հասարակությանը ինտեգրելու համար պետական լեզվի բավարար իմացություն ձեռք բերելու միջոցով:

2. Կիրառելով միջազգային պայմանագրերը, որոնք կարող են լինել ի օգուտ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, պետությունները պետք է հետևողականորեն պահպանեն հավասարության և խտրականությունների անթույլատրելիության հիմնական սկզբունքները:

3. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համապատասխան միջազգային պարտավորությունները իրենցից ներկայացնում են նվազագույն ստանդարտներ: Այդ պարտավորությունների սահմանափակումային մեկնաբանումը կհակասեր դրանց ոգուն և նպատակներին:

Միջոցներ և ռեսուրսներ

4. Պետությունները պետք է գործնականորեն [OSCE1] մոտենան կրթության ոլորտում փոքրամասնությունների իրավունքների խնդրին: Անհրաժեշտության դեպքում պետությունները պետք է հատուկ միջոցառումներ ձեռնարկեն, առավելագույնս օգտագործելով իրենց հասանելի միջոցները և միջազգային օգնությունն ու համագործակցությունը, հատկապես տնտեսական ու տեխնիկականը, որպեսզի ակտիվորեն իրականացվի փոքրամասնությունների իրենց լեզվով կրթության և իրենց լեզուն ուսուցանելու իրավունքը:

5. Պետությունները պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան համապատասխան ազգային փոքրամասնություններ ներկայացնող կազմակերպություններին ակտիվորեն մասնակցել փոքրամասնությունների կրթության հետ կապված ծրագրերի և քաղաքականության մշակմանը և իրագործմանը:

6. Տարածքային և տեղական մարմիններին պետությունները պետք է տան համապատասխան լիազորություններ փոքրամասնությունների կրթության ոլորտում, դրանով իսկ նպաստելով տարածքային և /կամ/ տեղական մակարդակի վրա քաղաքականության ձևավորման գործընթացին փոքրամասնությունների մասնակցությամբ:

7. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի խրախուսեն ծնողական մասնակցությունը և կրթական համակարգում ընտրության հնարավորությունը տեղական մակարդակի վրա, նեռարյալ փոքրամասնությունների լեզվով կրթության կամ դրա ուսուցանման ոլորտում:

Հասարակական և մասնավոր կազմակերպությունները

8. Միջազգային իրավունքի համաձայն ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, ինչպես և այլոք, իրավունք ունեն ստեղծել իրենց սեփական մասնավոր կրթական կազմակերպությունները և տնօրինել դրանք տեղական օրենսդրությանը համապատասխան: Այդ կազմակերպությունները կարող են ներառել փոքրամասնության լեզվով ուսուցանմամբ դպրոցներ:

9. Հաշվի առնելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքը ստեղծել սեփական կրթական կազմակերպություններ և տնօրինել դրանք, պետությունները չպետք է խոչընդոտեն այդ իրավունքի տիրապետմանը ծանրաբեռնելով այն անօրինական իրավաբանական և վարչական պահանջներով նորմերով, որոնք կարգավորվում են այդ կազմակերպությունների ստեղծումն ու դրանց կառավարումը:

10. Մասնավոր կրթական կազմակերպությունները, որոնք դասավանդում են փոքրամասնությունների լեզուն կամ լեզվով, իրավունք ունեն հայթայթել միջոցների սեփական աղբյուրներ առանց որևէ խոչընդոտի կամ խտրականության, լինի դա պետական բյուջեից, միջազգային աղբյուրներից կամ մասնավոր հատվածից:

Փոքրամասնությունների կրթությունը տարրական և միջին մակարդակի վրա

11. Ուսուցման առաջին տարիներն վճռորոշ նշանակաթյուն ունեն երեխայի զարգացման համար: Կրթության ոլորտում անցկաց-

ված ուսումնասիրությունների համաձայն երեխայի մայրենի լեզուն հանդիսանում է ուսուցման իդեալական միջոցը նախադպրոցական շրջանում և մանկապարտեզում: Պետությունները հնարավորության սահմաններում/դեպքում պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան ծնողներին ունենալ այդպիսի ընտրություն:

12. Ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ տարրական դպրոցի ուսումնական ծրագիրը իդեալական պայմաններում պետք է դասավանդվի փոքրամասնության լեզվով: Փոքրամասնության լեզուն պետք է դասավանդվի որպես ուսումնական առարկա մշտական հիմունքներով: Պաշտոնական պետական լեզուն նույնպես պետք է դասավանդվի մշտական հիմունքներով որպես ուսումնական առարկա: Նախընտրելի կլինի, որ այն դասավանդվի երկլեզու ուսուցչի կողմից, որը լավ է հասկանում երեխաների ծագման մշակութային և լեզվական առանձնահատկությունները: Այդ ժամանակաշրջանի ավարտին մի քանի պրակտիկ կամ ոչ թեորետիկ առարկաներ պետք է դասավանդվեն պետական լեզվով: Հնարավորության սահմաններում պետությունները պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք հնարավորություն կտան ծնողներին օգտագործել այդ հնարավորությունները:

13. Միջին դպրոցի ուսումնական ծրագրի զգալի մասը պետք է դասավանդվի փոքրամասնության լեզվով: Փոքրամասնության լեզուն պետք է դասավանդվի որպես ուսումնական առարկա մշտական հիմունքներով: Պետական լեզուն նույնպես պետք է դասավանդվի որպես ուսումնական առարկա մշտական հիմունքներով: Նախընտրելի է, որ այն դասավանդվի երկլեզու ուսուցիչների կողմից, որոնք լավ են հասկանում երեխաների ծագման մշակութային և լեզվային առանձնահատկությունները: Այդ ժամանակաշրջանում այն առարկաների թիվը, որոնք դասավանդվում են պետական լեզվով, պետք է հետզհետե ավելանա: Ուսումնասիրությունների համաձայն, որքան ավելի փուլային լինի այդ ավելացումը, այնքան ավելի լավ կլինի երեխայի համար:

14. Փոքրամասնության լեզվով տարրական և միջնակարգ կրթության ապահովումը կամ այդ լեզվի դասավանդումը մեծմասամբ կախված է այնպիսի ուսուցիչների առկայությունից, որոնք անցել են վերապատրաստում բոլոր առարկաներից մայրենի լեզվով: Դրա պատճառով փոքրամասնության լեզվով կրթության պետության պարտավորությունից ելնող հետևանք է հանդիսանում անհրաժեշտությունը տրամադրել բավարար բարենպաստ պայման-

ներ ուսուցիչների համապատասխան պատրաստման համար և նպաստել այդպիսի պատրաստման մատչելիությունը կամ դրա ուսումնասիրման համապատասխան հնարավորություն ընձեռել:

Փոքրամասնությունների կրթությունը մասնագիտական ուսումնարաններում

15. Փոքրամասնության լեզվով մասնագիտական կրթությունը պետք է լինի մատչելի հատուկ առարկաների մասով, եթե տվյալ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները ցանկություն և պահանջարկ են հայտնել դրանում և եթե նման պահանջը հիմնավորված է ցանկացողների թվաքանակով:

16. Մայրենի լեզվով ուսուցմամբ մասնագիտական ուսումնարանների ուսումնական ծրագրերը պետք է կազմված լինեն այն երաշխիքով, որ այդ ծրագրի ավարտից հետո ուսանողները կկարողանան աշխատել ստացված մասնագիտությամբ ինչպես իրենց մայրենի, այնպես էլ պետական լեզվով:

Բարձրագույն կրթությունը փոքրամասնությունների համար

17. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան ստանալ բարձրագույն կրթությունը մայրենի լեզվով, եթե նրանք արտահայտել են իրենց պահանջը դրանում և եթե նման ցանկությունը հիմնավորված է ցանկացողների թվաքանակով: Փոքրամասնության լեզվով բարձրագույն կրթությունը կարող է մատչելի դարձվել գործող կրթական համակարգում, անհրաժեշտ պայմանների ստեղծմամբ այն պայմանով, որ դրանք բավարար չափով կբավարարեն տվյալ ազգային փոքրամասնության ներկայացուցիչների պահանջները: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են հայթայթել ճանապարհներ և միջոցներ իրենց սեփական բարձրագույն ուսումնական հաստատությունները ստեղծելու համար:

18. Եթե ազգային փոքրամասնությունը ոչ վաղ անցյալում ունեցել է իր բարձրագույն ուսումնական հաստատությունը և կառավարել է այն, ապա այդ փաստը պետք է հաշվի առնվի ապահովման ապագա մոտիվների ստեղծման ժամանակ:

Ուսումնական ծրագրերի մշակումը

19. Նկատի ունենալով այն կարևորությունը և նշանակությունը, որը միջազգային փաստաթղթերում տրվում փոքրամասնությունների միջմշակութային կրթությանը, պատմության, մշակույթի և ավանդույթների լուսաբանմանը, պետական կրթական հաստատությունները պարտավոր են ապահովել համապատասխան ազգային փոքրամասնությունների պատմության, մշակույթի և ավանդույթների դասավանդումը ընդհանուր պարտադիր ուսումնական ծրագրերում: Մեծամասնության կողմից այն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսումնասիրման խրախուսումը, որոնք ապրում են տվյալ պետության տարածքում, կնպաստի տվյալ պետությունում հանդուրժողականության մթնոլորտի և մշակութային բազմազանության ամրապնդմանը:

20. Ազգային փոքրամասնությունների համար ուսումնական ծրագրերի բովանդակությունը պետք է մշակվի համապատասխան փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ:

21. Պետությունները պետք է աջակցեն ազգային փոքրամասնությունների ուսումնական ծրագրերի մշակման և ատեստավորման կենտրոնների ստեղծմանը: Այդ կենտրոնները կարող են կապվել արդեն գործող կազմակերպություններին այն պայմանով, որ դրանք կարող են բավարար չափով նպաստել այն նպատակներին հասնելու, որոնք կապված են ուսումնական ծրագրերի մշակման հետ:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՎԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Ներածություն

1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան բացեց նոր դարաշրջան, դառնալով առաջին միջազգային փաստաթուղթը, որում կրթությունը հռչակվել է մարդու իրավունք:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 26-րդ հոդվածը ենթադրում է, որ տարրական կրթությունը համարվում է պարտադիր: Այն պարտադրում է պետություններին տեխնիկական և մասնագիտական կրթությունը դարձնել

հանրամատչելի, իսկ բարձրագույն կրթությունը մատչելի նվաճումների հիմունքներով: Այն նաև բացատրում է, որ կրթության նպատակը պետք է լինի մարդու անձի լրիվ զարգացումը և մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդումը: Այնուհետև 26-րդ հոդվածում ասվում է, որ կրթությունը կնպաստի հասկացությանն, հանդուրժողականության և բարեկամության զարգացման ազգերի, տարբեր ռասայական ծագում ունեցող և տարբեր կրոնական դավանանք ունեցող անձանց խմբերի միջև և իր ներդրումը կունենա խաղաղության պահպանման գործում: Այստեղ նաև ընդգծվում է, որ ծնողներն ունեն նախապատվության իրավունք ընտրելու, թե ինչ կրթություն պետք է ստանան իրենց երեխաները: 26-րդ հոդվածի դրույթները ավելի ուժեղ են կրկնված պայմանագրային իրավունքի ենթատեքստում և ավելի մանրամասն Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտի 13-րդ հոդվածում:

26-րդ հոդվածը կանխորոշել է այն հետագա միջազգային փաստաթղթերի բաց համընդգրկվող բնույթը, որոնք ի հայտ են եկել ավելի ուշ և որոնցում հաստատվել և ավելի է մշակվել կրթության իրավունքը, ինչպես ընդհանրապես, այնպես էլ մասնավորապես փոքրամասնությունների համար:

Հոդված 27 Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտ

Հոդված 30 Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա

Վերոնշյալ հոդվածներն ապահովում են փոքրամասնությունների իրավունքը օգտագործել մայրենի լեզուն իրենց խմբի այլ անդամների հետ համագործակցելիս: Ներքոնշյալ հոդվածները, իրենց հերթին, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ապահովում են իրենց մայրենի լեզուն սովորելու կամ մայրենի լեզվով կրթվելու հնարավորությունը:

Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին 3ՈՒՆԵՍԿՈՒ-ի կոնվենցիայի 5-րդ հոդված:

Մարդկային չափանիշների ԵԽԱԽ կոնֆերանսի Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթի 34-րդ պարագրաֆ:

Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի դեկլարացիայի 4-րդ հոդված:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 14-րդ հոդված:

Բոլոր այս փաստաթղթերը տարբեր չափով հայտարարում են

փոքրամասնությունների իրենց մայրենի լեզվի միջոցով իրենց կուլտիվի ինքնատիպության պահպանման իրավունքը: Նախ և առաջ այդ իրավունքը իրականացվում է կրթության միջոցով: Այդ նույն փաստաթղթերը, սակայն, ընդգծում են, որ իրենց մայրենի լեզվի միջոցով կուլտիվի ինքնատիպությունը պահպանելու փոքրամասնությունների իրավունքը պետք է հավասարակշռության մեջ լինի իրենց ավելի լայն քաղաքացիական հասարակությանը ինտեգրելու և մասնակցելու համար պատասխանատվության հետ: Այդպիսի ինտեգրումը պահանջում է ինչպես այդ հասարակության, այնպես էլ պետական լեզվի /լեզուների/ համապատասխան գիտելիքների ձեռք բերում: Համբերատարության և պլյուրալիզմի խթանումը նույնպես հանդիսանում է այդ գործընթացի կարևոր մասը:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը, որոնցում խոսվում է փոքրամասնությունների լեզվով կրթության կամ դրա ուսուցման մասին, մնում են որոշ չափով անորոշ և ընդհանուր: Դրանք չեն մատնանշում մատչելիության աստիճանը, չի խոսվում, թե մայրենի լեզվի ուսուցման որ մակարդակները պետք է մատչելի դարձվեն փոքրամասնությունների համար և ինքնապես միջոցներով: Այնպիսի հասկացություններ, ինչպիսին են փոքրամասնությունների լեզվի ուսումնասիրման համար «համապատասխան հնարավորությունները» կամ այդ լեզվով կրթության ստացումը պետք է դիտարկվեն այլ գործոնների լույսի ներքո, ինչպես նշված է Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին սահմանային կոնվենցիայի 14-րդ հոդվածում: Դրանք իրենց մեջ ներառում են այնպիսի բարենպաստ պայմանների ստեղծման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն լեզվի և մշակույթի պահպանմանը, օժանդակությանը և զարգացմանը, ինչպես նշված է նույն կոնվենցիայի 5-րդ հոդվածում, կամ էլ պահանջում է ընդունել անհրաժեշտ միջոցներ ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնատիպության պաշտպանության համար, ինչպես նշված է Մարդկային չափման վերաբերյալ ԵԽԱԽ կոնֆերանսի Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթի 33-րդ պարագրաֆում:

Անկախ մատչելիության մակարդակից, որը ի վիճակի է ապահովել պետությունը, այն չպետք է սահմանափակվի կամայականորեն: Պետությունները պետք է պատշաճ ձևով քննարկեն ազգային փոքրամասնությունների կարիքները, ինչպես դրանք հետևողականորեն արտահայտված և դրսևորված են տվյալ համայնքի կողմից:

Իրենց հերթին, ազգային փոքրամասնությունները պետք է երաշ-

խավորեն, որ իրենց պահանջները կլինեն խելամիտ: Դրանք պետք է պատշաճ ձևով հաշվի առնեն այնպիսի արդարացի գործոններ, ինչպիսիք են իրենց սեփական քանակը, ժողովրդագրական խորությունը յուրաքանչյուր տվյալ տարածաշրջանում /կամ տարածաշրջաններում/, ինչպես նաև իրենց հնարավորությունը պահպանել այդ կազմակերպությունների երկարակետությունը ժամանակի մեջ:

Միջազգային փաստաթղթերի ոգին

Մի շարք տարիների ընթացքում փոքրամասնությունների իրավունքների ձևակերպումների եղանակը միջազգային նորմատիվ փաստաթղթերում կրել է որոշակի փոփոխություններ: Այնպիսի ձևակերպումները, կրավորական հոլովի օգտագործմամբ, ինչպիսիք են «անձանց, որոնք պատկանում են փոքրամասնություններին, չպետք է մերժել իրավունքում...», որը ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտում (1966թ.) տեղի են տվել ավելի դրական, գործուն մոտեցումներին: Նման օրինակ կարելի է գտնել Մարդկային չափման վերաբերյալ Ե-ԽԱԽ կոնֆերանսի Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթերում (1990թ.) «... պետությունները կպաշտպանեն ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնատիպությունը ...»:

Մոտեցման այդպիսի առաջընթաց փոփոխությունը ցույց է տալիս, որ փաստաթղթերի սահմանափակային կամ պարզեցված մեկնաբանումը չի համապատասխանում այն ոգուն, որով դրանք ձևակերպվել են:

Միաժամանակ, մատչելիության մակարդակը պետք է սահմանվի հավասարության և խտրականության անթույլատրելիության հիմնական սկզբունքներին համապատասխան, ինչպես որ դրանք ձևակերպվել են ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածում և Մարդու իրավունքների համընդհանուր Դեկլարացիայի 2-րդ հոդվածում և ինչպես որ դրանք կրկնօրինակվել են միջազգային փաստաթղթերի մեծ մասում: Մինչև ժամանակ պետք է նկատի ունենալ յուրաքանչյուր պետության յուրահատուկ պայմանները:

Միջոցները և պաշարները

ԵԱԿ պետություններին խորհուրդ է տրվում փոքրամասնությունների իրավունքների հարցին մոտենալ գործնականորեն, այսինքն՝ Կոպենհագենյան փաստաթղթի 31-րդ հոդվածի ոգով, որը խրախուսում է նրանց ձևակերպել հատուկ միջոցներ, որպեսզի ապահովվի ազգային փոքրամասնությունների անդամների լրիվ հավասարությունը: Այդ նույն իմաստով Կոպենհագենյան փաստաթղթի 33-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի պետությունները իրենց տարածքներում պաշտպանեն ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնատիպությունը և պայմաններ ստեղծել իրենց ինքնատիպության պահպանմանը աջակցելու համար:

Որոշ դեպքերում ԵԱԿ պետությունները հանդիպում են լուրջ բյուջետային սահմանափակումների, որոնք կարող են օրինականորեն խոչընդոտել նրանց ունակությանը իրականացնել կրթական քաղաքականության և ազգային փոքրամասնությունների բարգավաճմանն ուղղված ծրագրեր: Չնայած որ որոշ իրավունքներ պետք է իրականացվեն անմիջապես, պետությունները պետք է ձգտեն աստիճանաբար հասնել իրենց լեզվով կրթություն ստանալու փոքրամասնությունների իրավունքների կամ դրա ուսումնասիրման լրիվ իրականացմանը, առավելագույնս օգտագործելով բոլոր հասանելի միջոցները, ներառյալ միջազգային օգնությունը և համագործակցությունը: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտի 2-րդ հոդվածի ոգով:

Ապակենտրոնացում և մասնակցություն

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածը, Մարդկային չափման վերաբերյալ ԵԽԱԽ կոնֆերանսի Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթի 30-րդ պարագրաֆը և Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի դեկլարացիայի 3-րդ հոդվածը ընդգծում են որոշումների ընդունման գործընթացին ազգային փոքրամասնությունների մասնակցության անհրաժեշտությունը, մասնավորապես այն դեպքերում, երբ քննարկվող հարցերը ունեն ուղղակի ազդեցություն փոքրամասնությունների վրա:

Ակտիվ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացում, մանավանդ, եթե դրանք ազդեցություն ունեն փոքրամասնությունների վրա, հանդիսանում է ժողովրդավարական գործընթացի կարևոր բաղկացուցիչ մասը:

Ծնողների ակտիվ ներքաշվածությունը տեղական և տարածաշրջանային մակարդակով, ինչպես նաև ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների ակտիվ մասնակցությունը կրթական գործընթացին /ներառյալ փոքրամասնություններին վերաբերող ուսումնական ծրագրերի մշակման գործընթացը/ պետք է խրախուսվեն պետությունների կողմից Կոպենհագենյան փաստաթղթի 35-րդ պարագրաֆի ոգով, որն ընդգծում է ազգային փոքրամասնությունների անդամների էֆեկտիվ մասնակցության կարևորությունը պետական գործերին, ներառյալ փոքրամասնությունների պաշտպանության խնդիրները և նրանց ինքնատիպության խրախուսումը:

Հասարակական և մասնավոր կազմակերպությունները

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 27-րդ հոդվածում խոսքը գնում է փոքրամասնությունների այնպիսի իրավունքի մասին, ինչպիսին է իր լեզվի օգտագործումը իր խմբի այլ անդամների հետ համագործակցելիս: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտի 13-րդ հոդվածը երաշխավորում է ծնողների իրավունքը իր երեխաների համար ընտրել այլ դպրոցներ, քան իշխանությունների կողմից հիմնվածները: Այն նաև երաշխավորում է անձանց և կազմակերպությունների իրավունքը ստեղծել այլընտրանքային կրթական հաստատություններ և ղեկավարել դրանք, քանի դեռ դրանք համապատասխանում են պետության կողմից սահմանված կրթական նվազագույն ստանդարտներին: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 13-րդ հոդվածում ասվում է իրենց սեփական կրթական հաստատություններ ստեղծելու և դրանք ղեկավարելու փոքրամասնությունների իրավունքի մասին, չնայած պետությունը պարտավոր է ֆինանսավորել դրանք: Կոպենհագենյան փաստաթղթի 32-րդ պարագրաֆը չի պարտավորեցնում պետությանը ֆինանսավորել այդ կազմակերպություններին, սակայն ասվում է, որ այդ կազմա-

կերպությունները կարող են «ընտրել պետական աջակցություն ազգային օրենսդրությանը համապատասխան»:

Ազգային փոքրամասնությունների իրավունքը ստեղծել իրենց կազմակերպությունները և ղեկավարել դրանք, ներառյալ կրթական ոլորտում, լավ հիմնավորված է միջազգային իրավունքում և պետք է ճանաչվի որպես այդպիսին: Չնայած պետությունը իրավունք ունի վարչական կարգով և իր սեփական օրենսդրությանը համապատասխան հսկել այդ գործընթացը, այն չպետք է խոչնդոտի այդ իրավունքի տիրապետմանը, դնելով չհիմնավորված վարչական պահանջներ, որոնք կարող են գրեթե անհնարին դարձնել ազգային փոքրամասնությունների համար իրենց սեփական կրթական հաստատությունների ստեղծումը:

Չնայած, որ պետությունը ձևականորեն չպետք է ֆինանսավորի այդ մասնավոր հաստատությունները, չի կարելի խոչընդոտել այդ կազմակերպություններին փնտրել/հայթհայթել միջոցներ հայրենական և միջազգային աղբյուրներից:

Փոքրամասնությունների կրթությունը տարրական և միջին մակարդակով

Միջազգային փաստաթղթերը, որոնք վերաբերվում են փոքրամասնությունների կրթությանը իրենց լեզվով, հռչակում են, որ փոքրամասնությունները ոչ միայն իրավունք ունեն պահպանել իրենց ինքնատիպությունը մայրենի լեզվի միջոցով, այլ նաև նրանք իրավունք ունեն ինտեգրվել և մասնակցել ավելի լայն ազգային հասարակության կյանքին պետական լեզուն ուսումնասիրելու միջոցով:

Վերոգրյալից ելնելով, ԵԱՀԿ պետությունների ազգային փոքրամասնությունների կողմից բազմալեզվության ձեռք բերումը կարող է դիտարկվել որպես այն միջազգային փաստաթղթերի նպատակներին համապատասխանելու ամենաէֆեկտիվ ճանապարհը, որոնք վերաբերվում են ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը, ինչպես նաև դրանց ինտեգրումը: Տարրական և միջնակարգ կրթության վերաբերյալ խորհուրդները նախատեսված են այն բանի համար, որ ծառայեն որպես ուղեցույց փոքրամասնության լեզվով կրթության կամ լեզուն ուսումնասիրելու քաղաքականության զարգացման գործում և համապատասխան ծրագրերի իրականացման համար:

Տվյալ մոտեցումը առաջարկվում է կրթության ոլորտում անցկացված հետազոտությունների հիման վրա և իրենից ներկայաց-

նում է համապատասխան միջազգային նորմերի պրակտիկ մեկնաբանում:

Տվյալ մոտեցման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից: Առաջինը դա աստիճանն է, որում տվյալ մոտեցումը ուժեղացնում է փոքրամասնության ավելի թույլ մայրենի լեզուն այն որպես ուսուցման միջոց օգտագործելու միջոցով: Մյուս գործոնը դա աստիճանն է, որում երկլեզու ուսուցիչները ներգրավված են ամբողջ գործընթացին:

Բացի դրանից, պետք է հաշվի առնել այն աստիճանը, որում և փոքրամասնության լեզուն, և պետական լեզուն դասավանդվում են որպես առարկաներ կրթվելու 12 տարիների ընթացքում, և, վերջապես, աստիճանը, որում երկու լեզուները առավել բարենպաստ ձևով են օգտագործվում որպես ուսուցման միջոց երեխայի կրթության տարբեր փուլերում:

Տվյալ մոտեցումը արտահայտում է ձգտումը ստեղծել տարածություն, որն անհրաժեշտ է փոքրամասնության ավելի թույլ լեզուն զարգացնելու համար: Այն կտրուկ տարբերվում է այլ մոտեցումներից, որոնց նպատակն է ուսուցանել փոքրամասնության լեզուն կամ նույնիսկ իրականացնել նվազագույն դասավանդումը մայրենի լեզվով միայն նրա համար, որպեսզի հեշտացվի սկզբնական անցումը զուտ պետական լեզվով ուսուցման:

Սուզման նման մոտեցումները, երբ դասընթացը մատուցվում է միայն պետական լեզվով և երեխաները, փոքրամասնության ներկայացուցիչները, ամբողջովին ինտեգրված են մեծամասնության երեխաների դասարաններում, չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին: Դա նաև վերաբերվում է այն դպրոցներին, որոնցում ուսուցումը ամբողջ ժամանակ կատարվում է փոքրամասնության ներկայացուցիչների լեզվով, և որտեղ մեծամասնության լեզուն չի դասավանդվում ընդհանրապես կամ դասավանդվում է նվազագույն ձևով:

Փոքրամասնությունների կրթությունը մասնագիտական ուսումնարաններում

Ազգային փոքրամասնությունների իրավունքը ուսումնասիրել իրենց մայրենի լեզուն կամ սովորել այդ լեզվով, որը ձևակերպված է Կոպենհագենյան փաստաթղթի 34-րդ պարագրաֆում, պետք է նշանակի առանձին մասնագիտական առարկաները մայրենի լեզվով

սովորելու իրավունքը: Հավասարության և առանց խտրականությունների ոգով ԵԱՀԿ պետությունները պետք է ապահովեն հնարավորությունը ձեռք բերել այդպիսի կրթություն այնտեղ, որտեղ բացահայտ է ձգտումը դրան և որտեղ այն հիմնավորված է ցանկացողների քանակով:

Մյուս կողմից, պետության կարողությունը պլանավորել և հսկել իր տնտեսական և կրթական քաղաքականությունը չպետք է սահմանափակվի: Մասնագիտական ուսումնարաններ ավարտած ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հնարավորությունը աշխատել մասնագիտությամբ պետական լեզվով կլիմի առավելություն: Դա հնարավորություն կտա նրանց աշխատելու ինչպես տարածաշրջանում, որտեղ կենտրոնացված է տվյալ փոքրամասնությունը, այնպես էլ այլուր տվյալ պետությունում: Շուկայական տնտեսության անցնելու ժամանակ, որը նախատեսում է ապրանքների, ծառայությունների և աշխատանքի ազատ շարժը, նման սահմանափակումը տվյալ պետության համար կարող է դժվարեցնել աշխատանքի տեղավորման և ընդհանուր տնտեսական զարգացման աջակցությունը: Հետևաբար, ազգային փոքրամասնությունների համար իրենց մայրենի լեզվով մասնագիտական կրթությունը ուսանողներին պետք է երաշխավորի նաև համապատասխան կրթությունը պետական լեզվով (լեզուներով) կամ դրա (դրանց) ուսուցումը:

Փոքրամասնությունների բարձրագույն կրթությունը

Ինչպես և նախորդ դեպքում, մայրենի լեզուն սովորելու կամ դրանով կրթություն ստանալու իրավունքը, ինչպես արձանագրված է Կոպենհագենյան փաստաթղթի 34-րդ պարագրաֆում, կարող է ենթադրել նաև ազգային փոքրամասնությունների բարձրագույն կրթությունը մայրենի լեզվով ստանալու իրավունքը: Այս դեպքում հավասար մատչելիության և խտրականության անթույլատրելիության սկզբունքները նույնպես պետք է նկատի ունենալ, ինչպես նաև հանրության պահանջները և ցանկացողների բավարար քանակը: Պետության կողմից ֆինանսավորման բացակայության դեպքում փոքրամասնությունների սեփական բարձրագույն ուսումնական հաստատություններ ստեղծելու ազատ իրավունքը չպետք է սահմանափակվի:

Կոպենհագենյան փաստաթղթերի 33-րդ պարագրաֆն ընդգծում է պետության կարևոր դերը ոչ միայն փոքրամասնությունների ինք-

նատիպության ուղորտում, այլ նաև նրա խրատումները: Ելնելով վերոգրյալից, պետությունները պետք է դիտարկեն փոքրամասնության լեզվով բարձրագույն կրթությունը մատչելի դարձնելու հնարավորությունն այնտեղ, որտեղ արտահայտվել է պահանջը դրանում և որտեղ այն արդարացված է փոքրամասնության քանակային կազմով: Այս կոնտեկստում բարձրագույն կրթությունը մայրենի լեզվով չպետք է սահմանափակվի ուսուցիչների վերապատրաստմամբ:

Վերոնշվածը սահմանելուց հետո անհրաժեշտ է նկատի ունենալ նաև բյուջետային սահմանափակումները, որոնց հանդիպում են պետությունները, մանավանդ շուկայական տնտեսությանը անցնելու փուլում: Փոքրամասնության լեզվով բարձրագույն կրթության ապահովումը հոմանիշ չէ զուգահեռ կառույցներ ստեղծելուն: Ավելին, զուգահեռ ուսումնական հաստատությունների ամրապնդումը կարող է նպաստել փոքրամասնության մեկուսացմանը մեծամասնությունից: Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 26-րդ հոդվածը ընդգծում է, որ կրթության նպատակն է ազգերի, տարբեր ռասայական ծագում ունեցող և տարբեր կրոնական դավանք ունեցող անձանց խմբերի միջև հասկացողությանը, հանդուրժողականությանը և բարեկամությանը համագործակցելը: Այդ ոգով և ինտեգրման անհրաժեշտությունը հասկանալով, այլ ոչ թե մեկուսացված լինելը, պետք է իրականանա մեծամասնության և փոքրամասնության մտավոր և մշակութային զարգացումը:

Ուսումնական ծրագրերի մշակումը

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո միջազգային փաստաթղթերի քանակի ավելացումը ավելի մեծ նշանակություն է տալիս կրթության նպատակներին: Այդ փաստաթղթերի համաձայն, կրթությունն անհրաժեշտ է ոչ միայն ակադեմիական կամ տեխնիկական պատրաստվածության ապահովման համար, այլ նաև այնպիսի արժեքների արմատավորմանը, ինչպիսիք են հանդուրժողականությունը, պլուրալիզմը, հակառասիզմը, ինչպես նաև միջազգային և միջհամայնքային համերաշխության ձգտումը: Այսպիսի պահանջներն ակնհայտորեն հատուկ պատասխանատվություն են դնում այն պետությունների վրա, որոնք իրենց կազմում ունեն ազգային փոքրամասնություններ: Այդ պետություններում միջխմբային/միջէթնիկ համակցության և համերաշխության հարցը նույնպես շատ կարևոր է կայունության համար: Այդպիսի համակե-

ցությունը և համերաշխությունը հանդիսանում են կարևոր գործոն տարածաշրջանում խաղաղության և անվտանգության պահպանման գործում:

Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի դեկլարացիայի 4-րդ հոդվածը պետություններին կարգադրում է «խրախուսել իրենց տարածքում ապրող փոքրամասնությունների պատմության, ավանդույթների, լեզվի և մշակույթի իմացությունը»: Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 12-րդ հոդվածը կարգադրում է պետություններին «խրախուսել իրենց ազգային փոքրամասնությունների մշակույթի, պատմության, լեզվի և կրոնի իմացությունը»:

Մարդկային չափման վերաբերյալ կոնֆերանսի Կոպենհագենյան փաստաթղթի 34-րդ պարագրաֆում խոսքը գնում է այն պայմանների անհրաժեշտության մասին, որ պետական դպրոցական ծրագրերում «նկատի ունենան ազգային փոքրամասնությունների պատմությունը և մշակույթը»: Այդ պահանջները պետությունների վրա դնում են պարտականություն դպրոցական ծրագրի շրջանակում հնարավորություն ընձեռեն իր սահմաններում ապրող տարբեր ազգային փոքրամասնությունների պատմության և ավանդույթների դասավանդման համար: Պետական իշխանությունները կարող են հասնել դրան միակողմանի կարգով, առանց համապատասխան փոքրամասնությունների մասնակցության մասին հոգացության: Այդպիսի մոտեցումը հանձնարարողական չեն և կարող են վնասակար լինել:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածը, Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթի 30-րդ պարագրաֆը և Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի դեկլարացիայի 3-րդ հոդվածը ընդգծում են որոշումների ընդունման գործընթացին ազգային փոքրամասնությունների մասնակցության անհրաժեշտությունը, մանավանդ այն դեպքերում, երբ քննարկվող հարցերը ուղիղ ազդեցություն ունեն նրանց վրա:

Փոքրամասնությունների լեզվով կրթական ծրագրերի մշակման կենտրոնների ստեղծումը կնպաստի այդ երկկողմանի գործընթացին և կապահովի դրա որակն ու պրոֆեսիոնալիզմը:

Եզրափակիչ դիտողություններ

Փոքրամասնությունների կրթության իրավունքի պրոբլեմը հանդիսանում է զգայուն հարց ԵԱՀԿ մի քանի անդամ-պետությունների համար: Միևնույն ժամանակ կրթական գործընթացի միջոցով հնարավոր է էֆեկտիվ համագործակցել և ամրապնդել փոխադարձ հարգանքը և հասկացությունը տարբեր համայնքների միջև տվյալ պետությունների սահմաններում:

Ներկա ժամանակ տվյալ հարցի նուրբ բնույթից և մարդու իրավունքներ պարունակող տարբեր միջազգային փաստաթղթերի նորմերի որոշ անհրաժեշտության և ընդհանուր բնույթից ելնելով մի շարք հանձնարարականների մշակումը կարող է իր ներդրումը ունենալ փոքրամասնությունների կրթության իրավունքների հարցերը ավելի լավ հասկանալ և ճիշտ մոտեցումներ ձևավորելու գործում: Հաագայի հանձնարարականներն սպառնալից են: Դրանք ենթադրվում է օգտագործել որպես ընդհանուր հիմք, որը կարող է օգնել պետություններին փոքրամասնությունների համար կրթության հարցերի վերաբերյալ քաղաքականության մշակման գործընթացում:

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՍԼՈՅԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ⁴⁶

Փետրվար, 1998 թ.

Անուններ և անվանումներ

1. Անձինք, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին, իրավունք ունեն օգտագործել իրենց անունները, ազգանունները և հայրանունները իրենց լեզվով իրենց ավանդույթների և լեզվաբանական համակարգերին համապատասխան, այդ անուն, ազգանունները և հայրանունները պաշտոնական ճանաչում են ստանում և կիրառվում պետական իշխանությունների կողմից:

2. Նույն ձևով, մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև մշակութային ասոցիացիաներն ու հաստատությունները, որոնք ստեղծված են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից, օգտվում են նման իրավունքից դրանց անվանումների նկատմամբ:

3. Այն տարածքներում, որոնք բնակեցված են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների զգալի թվով, և այնտեղ, որտեղ կա զգալի պահանջարկ, պետական իշխանությունները միջոցներ են ձեռնարկում տեղանունների, փողոցների անվանումների, այլ տոպոգրաֆիկ ցուցանակներ տեղադրելու համար նաև փոքրամասնությունների լեզվով:

Կրոն

4. Սեփական կրոնի դավանման և կիրառման մեջ, մասնավոր կարգով կամ համատեղ, յուրաքանչյուր մարդ իրավունք ունի օգտագործել լեզուն (լեզուները) իր ընտրությամբ:

5. Այն կրոնական ծեսերի կամ արարողությունների համար, որոնք առնչվում են քաղաքացիական կացության հետ և որոնք ունեն օրենքի ուժ տվյալ պետությունում, պետությունը կարող է պահանջել, որպեսզի այդ կարգավիճակին առընչվող փաստաթղթերն ու վկայագրերը վարվեն նաև տվյալ պետության պաշտոնական լեզ-

46 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

վով կամ լեզուներով: Պետությունը կարող է պահանջել, որպեսզի քաղաքացիական կացությանը վերաբերվող փաստաթղթերը կրոնական իշխանությունների կողմից վարվեն նաև տվյալ պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներով:

Չանրության կյանքը և ոչպետական կազմակերպությունները

6. Բոլոր անձինք, ներառյալ այն անձանց, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին, իրավունք ունեն ստեղծել իրենց ոչպետական կազմակերպությունները, ասոցիացիաները և հաստատությունները և ղեկավարել դրանք: Այդ մարմինները կարող են օգտագործել լեզուն (լեզուները) իրենց ընտրությամբ: Պետությունը չի կարող իրականացնել խտրականություն այդ մարմինների նկատմամբ և չի կարող ոչ պատշաճ ձևով սահմանափակել այդ մարմինների իրավունքը միջոցներ հայթայթել պետական բյուջեյից, միջազգային աղբյուրներից կամ մասնավոր հատվածից:

7. Եթե պետությունը ակտիվորեն սատարում է գործունեությանը, այդ թվում նաև սոցիալական, մշակութային և սպորտային ոլորտներում, ապա պետության կողմից հատկացվող բոլոր միջոցների արդարյի մասը գնում է նման գործունեության աջակցմանը, որն իրականացվում է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզվով իրականացվող գործունեության պետական ֆինանսական աջակցությունը այդ ոլորտներում իրականացվում է առանց խտրականությունների սկզբունքի հիման վրա:

Տեղեկատվության միջոցներ

8. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ստեղծել և աջակցել իրենց զանգվածային լրատվության միջոցները փոքրամասնության լեզվով: Լրատվական միջոցների պետական կարգավորումը հիմնվում է օբյեկտիվ և ոչ խտրական չափանիշների վրա և չպետք է օգտագործվի այն բանի համար, որպեսզի սահմանափակվի փոքրամասնությունների իրավունքների տիրապետումը:

9. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար պետք է մատչելի լինի իրենց մայրենի լեզվով հեռարձակման

ժամանակը հանրորեն ֆինանսավորվող տեղեկատվության միջոցներում: Ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակով տվյալ փոքրամասնության լեզվով հեռարձակման համար հատկացված ժամանակի ծավալը և որակը պետք է համամասնորեն լինեն ազգային փոքրամասնության թվաքանակին և կենտրոնացվածությանը և համապատասխանեն նրա դրությանը և պահանջներին:

10. Պաշտպանվում է ազգային փոքրամասնությունների լեզվով (լեզուներով) հանրային և մասնավոր լրատվամիջոցների ծրագրերի հաղորդումների վարման անկախ բնույթը: Չանրային լրատվամիջոցների ռեդակցիոն խորհուրդները, որոնք հետևում են ծրագրերի բովանդակությանը և ուղղվածությանը, պետք է լինեն անկախ և ներգրավվեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց, որպես մասնավոր անձանց:

11. Արտասահմանից եկող լրատվամիջոցների մատչելիությունը չի սահմանափակվում ոչ պատշաճ ձևով: Նման մատչելիությունը չպետք է արդարացնի հեռարձակման ժամանակի կրճատումը, որը հատկացված է փոքրամասնությանը հանրորեն ֆինանսավորվող լրատվամիջոցներում այն պետությունում, որտեղ տվյալ փոքրամասնությունը բնակվում է:

Տնտեսական կյանքը

12. Բոլոր անձինք, այդ թվում ազգային փոքրամասնություններին պատկանողները, իրավունք ունեն զբաղվել մասնավոր ձեռներեցությամբ իր ընտրությամբ որևէ լեզվով: Պետությունը կարող է պահանջել լրացուցիչ օգտագործել տվյալ պետության պաշտոնական լեզուն կամ լեզուները միայն այնտեղ, որտեղ կարող է ցուցաբերվել օրինական հանրային հետաքրքրություն, այնպիսին, ինչպիսին է աշխատողների կամ սպառողների հետ կամ կազմակերպությունների ու պետական իշխանությունների միջև հարաբերությունների հետ կապված հետաքրքրությունը:

Վարչական իշխանություններ և հանրային ծառայություններ

13. Այն տարածաշրջաններում և վայրերում, որտեղ մարդիկ, որոնք պատկանում են ազգային փոքրամասնություններին, բնակվում են մեծ քանակով և որտեղ կա ցանկություն, այդ փոքրամաս-

նությանը պատկանող անձինք տարածաշրջանային և տեղական հաստատություններից իրավունք ունեն ստանալ քաղաքացիական փաստաթղթեր և վկայագրեր պետության պաշտոնական լեզվով կամ լեզուներով: Նման ձևով տարածաշրջանային և տեղական պետական հաստատությունները համապատասխան քաղաքացիական գրանցումները վարում են նաև այդ փոքրամասնության լեզվով:

14. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց տրամադրվում են ադեկվատ հնարավորություններ կիրառել իրենց լեզուն վարչական իշխանությունների հետ հարաբերություններում, մասնավորապես այն տարածքներում և տարածաշրջաններում, որտեղ այդ անձինք արտահայտել են նման ցանկությունը և որտեղ նրանք բնակվում են մեծ քանակով: Նույն տեղում էլ վարչական իշխանությունները, որտեղ որ դա հնարավոր է, ապահովում են հանրային ծառայությունների մատուցումը ազգային փոքրամասնության լեզվով: Այդ նպատակով նրանք վարում են համապատասխան քաղաքականություն կամ ընդունում են ծրագրեր վարձելու և սովորեցնելու վերաբերյալ:

15. Այն տարածաշրջաններում կամ տարածքներում, որտեղ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք զգալի թիվ են կազմում, պետությունը միջոցներ է ձեռնարկում այն բանի համար, որպեսզի ապահովի տարածաշրջանային և տեղական պետական մարմինների ընտրովի անդամների կողմից իրենց գործունեության ժամանակ օգտագործվի նաև այդ փոքրամասնության լեզուն:

Անկախ ազգային ինստիտուտներ

16. Այն պետությունները, որոնցում ապրում են ազգային փոքրամասնությունները, պարտավոր են, բացի դատական մարմիններին դիմելու առկա հնարավորություններից, ապահովել այդ անձանց այնպիսի անկախ ինստիտուտներին դիմելու հնարավորություն, ինչպիսիք են օմբուդսմենը կամ մարդու իրավունքների վերաբերյալ հանձնաժողովները, այն դեպքերում, երբ այդ անձինք համարում են, որ նրանց լեզվային իրավունքներն են խախտվել:

Դատական իշխանություններ

17. Բոլոր անձինք, այդ թվում նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, իրավունք ունեն արագացված կարգով

իրենց հասկանալի լեզվով տեղեկական իրենց ձեռքակալման կամ կալանավորման պատճառների մասին, դրանց առաջադրված ցանկացած մեղադրանքի բնույթի մասին և պաշտպանվել այդ նույն լեզվով, անհրաժեշտության դեպքում նաև թարգմանչի անվճար ծառայության օգնությամբ մինչև դատը, դատի ժամանակ և բողոքարման ընթացքում:

18. Այն տարածաշրջաններում և տարածքներում, որտեղ ազգային փոքրամասնությունները զգալի թիվ են կազմում և որտեղ արտահայտված է համապատասխան ցանկություն, այդ փոքրամասնությանը պատկանող անձինք դատավարության ընթացքում պետք է իրավունք ունենան արտահայտվել սեփական լեզվով, իսկ եթե անհրաժեշտ է նաև անվճար թարգմանչի օգնությամբ:

19. Այն տարածաշրջաններում և տարածքներում, որտեղ ազգային փոքրամասնությունները զգալի թիվ են բնակվում և որտեղ դրանում ցանկություն է արտահայտված, պետությունները պետք է պատշաճ ձևով քննարկեն բոլոր դատավարությունները փոքրամասնության լեզվով անցկացնելու հնարավորությունը:

Ազատությունից զրկել

20. Ուղղիչ հաստատությունների ղեկավարները և մյուս աշխատողները պարտավոր են խոսել կալանավորված անձանց մեծամասնության լեզվով կամ լեզուներով, կամ էլ նրանցից շատերի կողմից հասկացվող լեզվով: Ուսուցման կամ վարձակալության ծրագրերը պետք է ուղղված լինեն այդ նպատակին հասնելուն: Այնտեղ, որտեղ անհրաժեշտ է, օգտագործվում են թարգմանչի ծառայությունները:

21. Ազգային փոքրամասնություններին պատկանող ձեռքակալված անձինք իրավունք ունեն ընտրել լեզուն այլ կալանավորված անձանց և այլ անձանց հետ հարաբերություններում: Այնտեղ, որտեղ հնարավոր է, իշխանությունները միջոցներ են ձեռնարկում, որոնք հնարավորություն կտան կալանավորներին շփվել իրենց լեզվով ինչպես բանավոր, այնպես էլ անձնական թղթակցության մեջ, օրենքով արված սահմանափակումների շրջանակներում: Այդ կապակցությամբ կալանավորվածները կամ ձեռքակալվածները պետք է գլխավորապես պահվեն իրենց սովորական բնակության վայրին մոտ գտնվող կալանավայրում:

**ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ԼՈՒՆԴԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ⁴⁷**

1999 թ. Սեպտեմբեր

Ներածություն

Հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին Լուսինի հանձնարարականները

1. Ընդհանուր սկզբունքներ

2. Մասնակցությունը որոշումների ընդունմանը

- a) Կենտրոնական կառավարության մակարդակով մեխանիզմներ
- b) Ընտրությունները
- c) Տարածաշրջանային և տեղական մակարդակի մեխանիզմները
- d) Խորհրդակցական և կոնսուլտատիվ մարմիններ

3. Ինքնակառավարում

- a) Ոչ տարածքային մեխանիզմներ
- b) Տարածքային մեխանիզմներ

4. Երաշխիքներ

- a) Սահմանադրական և իրավական երաշխիքներ
- b) Իրավական պաշտպանություն

Հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին Լուսինի հանձնարարականների բացատրական մեկնաբանությունները

1. Ընդհանուր սկզբունքներ

2. Մասնակցությունը որոշումների ընդունմանը

- a. Կենտրոնական կառավարության մակարդակով մեխանիզմներ
- b. Ընտրություններ

47 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

- c. Տարածաշրջանային և տեղական մակարդակի մեխանիզմներ
- d. Խորհրդակցական և կոնսուլտատիվ մարմիններ

3. Ինքնակառավարում

- a. Ոչ տարածքային մեխանիզմներ
- b. Տարածքային մեխանիզմներ

4. Երաշխիքներ

- c. Սահմանադրական և իրավական երաշխիքներ
- d. Իրավական պաշտպանություն

Ներածություն

1999թ. հուլիս

1992թ. հուլիսին Հելսինկիում ընդունված որոշմամբ Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպությունը (ԵԱՀԿ) հիմնադրել է ազգային փոքրամասնությունների գործերով Գերագույն Կոմիսարի պաշտոնը, որը կոչված է «տարածայնությունները հնարավորինս սկզբնական փուլում կանխարգել»: Այս քայլը մեծ մասամբ նախկին Հարասլավիայում ստեղծված իրավիճակի արձագանքն էր, որը, որոշ մարդկանց մտավախությամբ, կարող էր կրկնվել Եվրոպայի այլ երկրներում, մանավանդ դեպի ժողովրդավարություն զնացող երկրներում, և դրանով իսկ կարող էր խաթարել խաղաղության և բարեկեցության հասնելու հույսերը, որոնք արտահայտված են պետությունների և կառավարությունների ղեկավարների կողմից 1990թ. նոյեմբերի ընդունված Նոր Եվրոպայի Փարիզյան Խարտիայում:

1993թ. հունվարի 1-ին Ազգային փոքրամասնությունների գործերով ԵԱՀԿ առաջին Գերագույն Կոմիսար (ԱՓԿ) դարձավ Մաքս վան դեր Ստուլը: Հենվելով իր մեծ աշխատանքային փորձին, որը նա ձեռք է բերել խորհրդարանի անդամի, Նիդերլանդների արտաքին գործերի նախարարի, ՄԱԿ-ում մշտական ներկայացուցչի պաշտոններում աշխատելիս, ինչպես նաև երկարամյա իրավապաշտպան գործունեությամբ զբաղվելիս, նա սկսեց զբաղվել բազմաթիվ իրավիճակներով, երբ ազգային փոքրամասնությունների և Եվրոպայի իշխանության կենտրոնական մարմինների միջև առաջացող բազմաթիվ տարածայնությունները, նրա կարծիքով, կարող էին սրվել: Գործելով «դիվանագիտության» միջոցներով, ԱՓԿ-ն միացավ խնդիրների լուծմանը ավելի քան տասը երկրներում, այդ թվում Ալբանիայում, Հունգարիայում, Ղազախստանում, Ղրղզստանում,

ճարարականներ և կորոշի հնարավոր այլընտրանքներ համապատասխան միջազգային ստանդարտների հիման վրա:

Այդ նախաձեռնության արդյունքն եղավ հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին Լուսնի հանձնարարականները, որոնք այդպես են կոչվում շվեդական քաղաքի անունով, որտեղ տեղի ունեցավ փորձագետների եզրափակիչ հանդիպումը, նվիրված հանձնարարականների տեքստի վերջնական համաձայնեցմանը: Փորձագետների թվում էին այդ ոլորտում մասնագիտացող իրավաբան-միջազգայնագետները, քաղաքագետները, որոնք զբաղվում են սահմանադրական կառուցվածքի և ընտրական համակարգերի խնդիրներով, և սոցիոլոգները, որոնք ուսումնասիրում են փոքրամասնությունների խնդիրները: Ստորև ներկայացված է խմբի անդամների անվանացանկը, որը գլխավորում է Ռաուլ Վալլենբերգի անվան ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Գուդմունդուր Ալֆրեդսոնը:

Լաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և հումանիտար իրավունքի ինստիտուտի (Լուսնի համալսարան) տնօրեն պրոֆեսոր Գուդմունդուր Ալֆրեդսոն (Հոլանդիա), Օքսֆորդի համալսարանի կառավարման ամբիոնի պրոֆեսոր Վերնոն Բոգդանոր (Մեծ Բրիտանիա), Մարդու իրավունքների Բելգրադի կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Վոլիմ Դիմիտրիեվիչ (Հարավսլավիա), Մարդու իրավունքների նորվեգական ինստիտուտի ավագ գիտ. աշխատող դոկտոր Ասբյորն Էյդե (Նորվեգիա), պրոֆեսոր Յաշ Գիայ (Քենիա), Հոնկոնգի համալսարանի հանրային իրավունքի պրոֆեսոր սեռ Յու. Կ. Պաո, Տաֆտսի համալսարանի Ֆլետչերի անվան իրավունքի և դիվանագիտություն ֆակուլտետի միջազգային իրավունքի պրոֆեսոր Խերստ Խեննեն (ԱՄՆ), Դիվանագիտության և ընտրություններին աջակցելու միջազգային ինստիտուտի տնօրեն Պիտեր Խարիս (ՀԱՀ), Ռուռի համալսարանի (Բոխում) հումանիտար իրավունքի և խաղաղության պահպանման իրավական ասպեկտների ֆակուլտետի դեկան դոկտոր Հանս Հեյնսոն (Գերմանիա), միջազգային իրավունքի պրոֆեսոր, Երուսաղեմի հրեական համալսարանի Եվրոպայի ինստիտուտի կոլեգիայի նախագահ Ռուֆ Լապիդոտ (Իսրայել), Լոնդոնի համալսարանի Կինգս-քոլեջի միջազգային իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Ռեյն Սյուլլերսոն (Էստոնիա), «Փոքրամասնությունները և քաղաքացիները» հիմնադրամի (Փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ խումբ) տնօրեն դոկտոր Շարլոտա Պուֆլեբրովա (Սլովակիա), Տեխասի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Ստիվեն Ռատներ (ԱՄՆ), Նոտրդամի համալսարանի

պետական կառավարման ամբիոնի դոցենտ դոկտոր Էնդրյու Ռեյնոլդս (Մեծ Բրիտանիա), Կատալոնիա նահանգի Կատալոնական սոցիո-լեզվաբանության ինստիտուտի տնօրեն Միգել Ստրուբելլ (Իսպանիա և Մեծ Բրիտանիա), Ակադեմիական համալսարանի քաղաքացիական իրավունքի պրոֆեսոր Աբո Մարկո Սուկսի (Ֆինլանդիա), Լյուբլյանայի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Դանիլո Տյուրկ (Սլովենիա), Մերդոկի համալսարանի էթնիկական կոնֆլիկտների կանխարգելման և մարդու իրավունքների Ասիական-խաղաղօվկիանոսյան կենտրոնի տնօրեն, իրավունքի ավագ դասախոս դոկտոր Ֆերնան դե Վարեն (Կանադա), Լեհաստանի գիտությունների ակադեմիայի մարդու իրավունքների Պոզնանի կենտրոնի տնօրեն պրոֆեսոր Ռոման Վերուշևսկի (Լեհաստան):

Քանի որ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ գոյություն ունեցող նորմերը վերաբերվում են մարդու իրավունքների ոլորտին, ապա փորձագետները իրենց աշխատանքում ելնում էին մյուս բոլոր պարտավորությունները պետությունների կողմից պահպանելուց, ներառյալ ազատությունը խտրականությունից: Նրանք ղեկավարվում էին նաև այն հասկացությամբ, որ վերջին հաշվով մարդու բոլոր իրավունքները կոչված են ապահովելու յուրաքանչյուր անձի ազատ և լրիվ զարգացումը հավասարության պայմաններում: Համապատասխանաբար ենթադրվում է, որ քաղաքացիական հասարակությունը պետք է լինի ազատ և դինամիկ, ուրեմն իր մեջ ներառի բոլոր մարդկանց, այդ թվով նրանց, ով պատկանում է ազգային փոքրամասնություններին: Այնուհետև, քանի որ կառավարման օպտիմալ ժողովրդավարական պրակտիկան կոչված է ապահովել ամբողջ բնակչության շահերը և պահանջները, ապա որպես ելակետային հիմք ընդունված էր բոլոր պետությունների կառավարությունների ցանկությամբ ստեղծել առավելագույն հնարավորություններ, որպեսզի մարդիկ, որոնք իրենց վրա զգում են պետական որոշումների հետևանքները, կարողանան մասնակցել դրանց ընդունմանը:

Լուսնի հանձնարարականների, ինչպես նաև ավելի վաղ ընդունված Հասագայի և Օսլոյի հանձնարարականների նշանակությունն այն է, որ հորդորվի և հեշտացվի պետության կողմից այն կոնկրետ միջոցների ընդունումը, որոնք թուլացնում են ազգային փոքրամասնությունների հետ հարաբերություններում եղած լարվածությունը, և դրանով իսկ նպաստում են կոնֆլիկտների խոչընդոտմանը, ինչը և հանդիսանում է ԱՓԳԿ-ի գլխավոր նպատակը: Հասարակական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մաս-

նակցության մասին Լուսինի հանձնարարականները իրենցից ներկայացնում են մի փորձ համեմատաբար պարզ լեզվով բացատրել և ճշտել փոքրամասնությունների իրավունքների և այլ ուղորտներում հանրնդհանուր ճանաչված այն նորմերի բովանդակությունը, որոնք առընչություն ունեն այն իրավիճակների հետ, որոնք դիտարկում է ԱՓԳԿ-ն: Հանձնարարականներում տրված է այդ նորմերի մեկնաբանությունը, որը հատուկ նախատեսված է միատեսակ կիրառման համար բաց ժողովրդավարական պետություններում: 24 հանձնարարականներից կազմված հանձնարարականները ներառում են չորս ենթաբաժին, որոնք համապատասխանաբար նվիրված են ընդհանուր սկզբունքներին, որոշումների ընդունմանը մասնակցությանը, ինքնակառավարմանը և միջոցներին, որոնք թույլատրում են երաշխավորել հասարակական կյանքում մասնակցության արդյունավետ ձևերը: Կոնցեպտուալ առումով Լուսինի հանձնարարականները կառուցված են երկու հիմնական ուղղություններով՝ մասնակցությունը պետության կառավարմանը ընդհանուր առմամբ և ինքնակառավարումը տեղական կամ ներքին որոշ հարցերում: Այդ առումով հնարավոր են և արդեն հայտնի են ամենատարբեր սխեմաները: Որոշ հանձնարարականների հետ կապված բերվում են այլընտրանքային տարբերակներ: Բոլոր հանձնարարականները մեկնաբանվում են ընդհանուր սկզբունքներին համապատասխան, որոնք շարադրված են առաջին մասում: Ավելի մանրամասն բացատրությունները յուրաքանչյուր հանձնարարականի համար կարելի է գտնել մեկնաբանություններում, որտեղ արվում է կոնկրետ հղում համապատասխան միջազգային նորմին:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՒՆԴԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

I. Ընդհանուր սկզբունքներ

1. Հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը հանդիսանում է խաղաղ ժողովրդավարական հասարակության կարևոր բաղկացու-

ցիչ մասը: Եվրոպայում ու դրանից դուրս ձեռք բերված փորձը ցույց է տալիս, որ նման մասնակցությունը խթանելու համար պետությունները հաճախ ստիպված են լինում ստեղծել հատուկ մեխանիզմներ, որոնք ապահովում են ազգային փոքրամասնությունների շահերը: Տվյալ հանձնարարականների նպատակն է հեշտացնել ազգային փոքրամասնությունների ներգրավվածությունը հասարակական կյանքում, դրա հետ մեկտեղ թույլ տալով նրանց պահպանել իրենց ինքնատիպությունը և իրենց առանձնահատկությունները, դրանով իսկ նպաստելով կառավարմանը և պետության ամբողջականության պահպանմանը:

2. Սույն հանձնարարականները հիմնվում են միջազգային իրավունքի այնպիսի հիմնադիր սկզբունքների և նորմերի վրա, ինչպիսիք են մարդկային արժանապատվության հարգանքը, իրավունքների հավասարությունը և անխտրականությունը, դրանց կիրառումը ազգային փոքրամասնությունների հասարակական-քաղաքական կյանքում մասնակցելու և այլ քաղաքական իրավունքների նկատմամբ: Պետությունների պարտքն է հարգել միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների և օրենքի գերակայությունը, որոնք ապահովում են քաղաքացիական հասարակության բազմակողմանի հանդուրժողականության, խաղաղության և բարգավաճման մթնոլորտում:

3. Հասարակական-քաղաքական կյանքում փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունն ապահովող հատուկ ինստիտուտների ստեղծման դեպքում, ինչը կարող է ենթադրել այդ ինստիտուտների կողմից իշխանական ֆունկցիաների կամ լիազորությունների իրականացումը, այդ ինստիտուտները պետք է հարգեն այն բոլոր անձանց իրավունքները, որոնց առընչվում է դրանց գործունեությունը:

4. Բացի ազգային փոքրամասնությանը պատկանելիությունից անձի տրամադրության տակ կան նաև ինքնաիդենտիֆիկացման այլ ձևեր: Փոքրամասնությանը կամ մեծամասնությանը իր պատկանելու կամ չպատկանելու որոշումը անձն ընդունում է ինքնուրույն և այն չի կարող թելադրվի դրսից: Ընդ որում այդպիսի ընտրությունը կամ հրաժարումը նման ընտրությունից չպետք է հանգեցնի տվյալ անձի շահերի սահմանափակմանը:

5. Ինստիտուտների և գործընթացների ձևավորման ժամանակ, տվյալ հանձնարարականների համաձայն, պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն բովանդակությանը, այլ նաև տվյալ գործընթացի ձևին: Վստահության մթնոլորտի պահպանության համար պետական իշխանությունների և փոքրամասնությունների միջև խորհրդակցու-

յունների գործընթացը պետք է բաց լինի լայն մասնակցության համար, տրանսպարենտ և հիմնված լինի հաշվետվության սկզբունքի վրա: Պետությունը պետք է խրախուսի լրատվական միջոցների կողմից միջնաշաբաթային հասկացողությանն աջակցումը և դրանց կողմից փոքրամասնությունների խնդիրների լուսաբանումը:

II. Մասնակցությունը որոշումների ընդունման

A). Կենտրոնական կառավարության մակարդակի մեխանիզմները

6. Պետությունները պետք է փոքրամասնություններին հնարավորություն տան ունենալ կենտրոնական կառավարության մակարդակով ազդեցություն ռեալ ազդակներին առընչվելու, անհրաժեշտության դեպքում ստեղծելով դրա համար հատուկ մեխանիզմներ: Հանգամանքներից կախված այդ մեխանիզմները կարող են ներառել`

- ազգային փոքրամասնությունների ներկայացուցչության հատուկ ձևեր, օրինակ` խորհրդարանի մեկ կամ երկու պալատներում կամ խորհրդարանական կոմիտեներում նրանց համար որոշակի քանակի տեղերի ապահովում, ինչպես նաև օրենսդրական գործընթացում երաշխավորված մասնակցության այլ ձևեր,

- պաշտոնական կամ ոչ պաշտոնական պայմանավորվածություններ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար կառավարությունում, զերագույն կամ սահմանադրական դատարաններում կամ ստորադաս ատյանների դատարաններում, ինչպես նաև նշանակովի խորհրդակցական կամ այլ բարձր մակարդակի մարմիններում տեղերի և պաշտոնների ամրագրում,

- համապատասխան նախարարությունների շրջանակում մեխանիզմներ, որոնք ապահովում են ազգային փոքրամասնությունների շահերի հաշվի առումը, օրինակ` փոքրամասնությունների գործերով աշխատակիցներ նշանակելու կամ մշտապես գործող կարգագրեր հրապարակելու միջոցով և

- պետական մարմիններում աշխատելու համար ազգային փոքրամասնություններին ներգրավելու համար հատուկ միջոցառումներ, ինչպես նաև ազգային փոքրամասնության լեզվով հանրային հաստատություններում ծառայությունների մատուցում:

B). Ընտրություններ

7. Փորձը, որը ձեռք է բերվել Եվրոպայում և նրա սահմաններից դուրս, վկայում է ընտրական գործընթացի կարևոր դերի մասին քաղաքական կյանքում փոքրամասնությունների մասնակցության համար պայմանների ստեղծման ժամանակ: Պետությունները պետք է երաշխավորեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պետական գործերին մասնակցելու իրավունքը, այդ թվում նաև ձայնի իրավունքը և ընտրովի պաշտոններում առաջադրվելու իրավունքը անխտրականության հրմքով:

8. Քաղաքական կուսակցությունների ձևավորումը և գործունեությունը պետք է կանոնակարգվեն ասոցիացիայի ազատության միջազգային իրավական սկզբունքին համապատասխան: Այդ սկզբունքը ներառում է այս կամ այն համայնքին պատկանելու հիմքով քաղաքացիներին միավորող, ինչպես նաև որևէ առանձին վերցված համայնքի շահերը չարտահայտող, քաղաքական կուսակցությունների ստեղծման ազատություն:

9. Ընտրական համակարգը պետք է պայմաններ ստեղծի փոքրամասնությունների ներկայացվածության և իրենց ազդեցության իրագործման համար:

- Խիտ /կոմպակտ/ բնակության դեպքում նրանց բավարար ներկայացվածությունը կարող է ապահովել մեծամասնական/միամանդատ ընտրատարածքներ ստեղծելով:

- Փոքրամասնությունների ներկայացվածությանը կարող են նպաստել համամասնական ընտրական համակարգերը, որոնց դեպքում այս կամ այն կուսակցությանը խորհրդարանում հատկացվող տեղերի չափը կապված է ձայների չափից:

- Փոքրամասնությունների ներկայացվածությանը և համագործակցությանը համայնքների միջև կարող են նպաստել պրեֆերենցիալ քվեարկության որոշ ձևեր, որոնց դեպքում ընտրողները դասավորում են թեկնածուներին իրենց նախապատվության հերթականությամբ:

- Ընդլայնել ազգային փոքրամասնությունների մասնակցությունը երկրի կառավարմանը կարելի է խորհրդարան ընտրելու տոկոսային շեմի իջեցմամբ:

10. Ընտրատարածքների սահմանները պետք է որոշվեն այնպես, որպեսզի դա համապատասխանի ազգային փոքրամասնությունների արդար ներկայացվածության շահերին:

C). Տարածաշրջանային և տեղական մակարդակի մեխանիզմներ

11. Պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն տարածաշրջանային և տեղական մակարդակի վրա հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների մասնակցությունը ընդլայնելու համար, որոնք կնմանվեն նրանց, ինչի մասին խոսվել է կենտրոնական իշխանության պարագայում (6-10-րդ կետեր): Պետք է ապահովել, որպեսզի տարածաշրջանային և տեղական կառավարման մարմինների կառուցվածքը և դրանց կողմից կիրառվող որոշումների ընդունման միջոցները լինեն տրանսպարենտ և մատչելի բնակչության համար և դրանով իսկ հեշտացվի փոքրամասնությունների մասնակցությունը:

D). Խորհրդակցական և խորհրդատվական մարմիններ

12. Համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների շրջանակներում պետք է ստեղծել խորհրդատվական կամ խորհրդակցական մարմիններ, որոնք կկարողանան կապող օղակ (ալիք) ծառայել պետական իշխանության և ազգային փոքրամասնությունների միջև երկխոսության համար: Այդ մարմինները կարող են ունենալ մասնագիտացված կոմիտեներ այնպիսի հարցերով, ինչպիսիք են բնակարաններով ապահովումը, հողային ֆոնդը, կրթությունը, լեզուն և մշակույթը: Այդ մարմինների անդամային կազմը պետք է համապատասխանի նրանց նշանակությանը և նպաստի փոքրամասնությունների շահերի ավելի արդյունավետ արտահայտմանը և ապահովմանը:

13. Նշված մարմինները պետք է հնարավորություն ունենան հարցեր բարձրացնել ղեկավարության առջև, պատրաստել հանձնարարականներ, մշակել օրենսդրական և այլ առաջարկություններ, հետևել իրավիճակի զարգացմանը և մեկնաբանություններ ներկայացնել կառավարության պատրաստվող որոշումների վերաբերյալ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով անդրադառնալ փոքրամասնության կարգավիճակի վրա: Պետական իշխանությունները պարբերաբար պետք է խորհրդակցեն այդ մարմինների հետ օրենսդրական և վարչական միջոցառումների վերաբերյալ փոքրամասնությունների համար ակտուալ հարցերի լուծման և վստահության ամրապնդման շահերից ելնելով: Այդ մարմինների արդյունավետ գործունեությունը կպահանջի նրանց բավարար միջոցներով (ռեսուրսներով) ապահովել:

III. Ինքնակառավարում

14. Փոքրամասնությունների հասարակական-քաղաքական կյանքում գործնական մասնակցության համար կարող են պահանջվել ոչ տարածքային կամ տարածքային ինքնակառավարման մեխանիզմներ, առանձին-առանձին կամ միասին վերցրած: Այդ մեխանիզմների հետ կապված կարիքների համար պետությունը պետք է բավարար ռեսուրսներ հատկացնի:

15. Վերոհիշյալ մեխանիզմների հաջող գործունեության համար պարտադիր նախապայման է թե պետական իշխանության և թե փոքրամասնությունների կողմից պետական կառավարման որոշ ոլորտներում միասնական, կենտրոնական որոշումների անհրաժեշտության ընդունումը, ինչպես նաև բազմազանության պահպանման առավելությունների ընդունումը այլ բնագավառներում:

- Սովորաբար իշխանության կենտրոնական մարմիններին վերաբերվող ֆունկցիաները ներառում են պաշտպանությունը, արտաքին հարաբերությունները, իմիգրացիոն (ներգաղթի) և մաքսային ռեժիմները, մակրոտնտեսական և դրամավարկային քաղաքականությունը:

- Այլ գործառնությունները, ներառյալ ստորև թվարկվածները, կարող են իրականացվել փոքրամասնությունների կամ տարածքային կառավարման մարմինների կողմից ինքնուրույն կամ կենտրոնական իշխանությունների հետ համատեղ:

- Ֆունկցիաների բախշումը պետք է լինի ասիմետրիկ, կապված միևնույն պետության սահմաններում փոքրամասնությունների կարգավիճակի մեջ եղած տարբերություններից:

16. Ինքնակառավարման, տարածքային թե ոչ տարածքային, ինստիտուտները պետք է հիմնվեն ժողովրդավարության սկզբունքների վրա, որպեսզի գործնականում արտահայտեն բնակչության համապատասխան խմբերի կարծիքը:

A). Ոչ տարածքային մեխանիզմներ

17. Ինքնակառավարման ոչ տարածքային ձևերը օգտակար միջոց են հանդիսանում ազգային փոքրամասնությունների ինքնատիպության և մշակույթի պահպանման ու զարգացման գործում:

18. Հարցերը, որոնք կարող են առավել արդյունավետ լուծվել այդպիսի մեխանիզմների միջոցով, վերաբերվում են կրթության, մշակույ-

թի, փոքրամասնությունների լեվուները օգտագործելու, կրոնի և այլ ուղորտներին, որոնք առավել կարևոր են ազգային փոքրամասնությունների բնորոշ ապրելակերպի և ինքնատիպության համար:

- Անձինք և խմբերը իրավունք ունեն իրենց հայեցողությամբ օգտվել իրենց անուններից և անվանումներից փոքրամասնության լեզվով, ինչպես նաև օգտվում են պաշտոնական մարմինների կողմից այդ անունների և անվանումների ճանաչման իրավունքից:

- Հաշվի առնելով այն, որ կրթության ոլորտում սահմանված ստանդարտների համար պատասխանատվությունը ընկնում է պետական իշխանության վրա, փոքրամասնությունների կազմակերպությունները կարող են որոշել տվյալ փոքրամասնության լեզվի, մշակույթի կամ երկուսն միասին դասավանդման ուսումնական ծրագրի բովանդակությունը:

- Փոքրամասնությունները կարող են ընտրել և օգտագործել սեփական նշանները և մշակութային ինքնատիպության այլ ձևերը:

B). Տարածքային մեխանիզմներ

19. Բոլոր ժողովրդավարական հասարակություններում գոյություն ունեն պետական կառավարման մեխանիզմներ տարբեր տարածքային մակարդակների համար: Եվրոպայում և նրա սահմաններից դուրս ձեռք բերված փորձը ցույց է տալիս, որ նպատակահարմար է որոշ գործադիր և օրենսդիր լիազորություններ կենտրոնական մակարդակից իջեցնել տարածքաշրջանային, ինչը չպետք է սահմանափակվի պետական ապարատի ապակենտրոնացմամբ և նրա ֆունկցիաները տարածաշրջանային կամ տեղական ստորաբաժանումների միջև բախշելով: Համապարտության (սուբսիդիար) լույսի ներքո պետությունները պետք է դրականորեն դիտարկվեն լիազորությունների նման տարածքային վերահսկման հնարավորությունը ներառյալ ինքնակառավարման կոնկրետ ֆունկցիաները, հատկապես այն դեպքերում, երբ դա կընդլայնի փոքրամասնությունների հնարավորությունները իրենց վերաբերող հարցերն ինքնուրույն լուծելու համար:

20. Տեղական, տարածքաշրջանային կամ ինքնավար ադմինիստրացիաների համապատասխան մարմինները, որոնք ձևավորվել են կոնկրետ ազգային փոքրամասնությունների պատմական և տարածքային առանձնահատկությունները հաշվի առնելով, այդ փոքրամասնությունների խնդիրների վրա ավելի արդյունավետ ար-

ծագանքման շահերից ելնելով, կարող են իրենց վրա վերցնել մի շարք ֆունկցիաներ:

- Ֆունկցիաներ, որոնք հիմնականում կամ մեծ մասամբ վերաբերվում են այդպիսի մարմիններին, որոնք դրանք իրականացնելու ժամանակ ձեռք են բերել հաջողված փորձ, տարածվում են կրթության, մշակույթի, փոքրամասնությունների լեզուների օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության, տեղական պլանավորման, բնական պաշարների յուրացման, տնտեսական զարգացման, տեղերում իրավապաշտպանական գործունեության, ինչպես նաև բնակարաններով ապահովման, առողջապահական և սոցիալական սպասարկման այլ տեսակների վրա:

- Ֆունկցիաներ, որոնք իրականացվում են կենտրոնական և տարածաշրջանային իշխանությունների կողմից համատեղ, վերաբերվում են հարկային ոլորտին, արդարադատությանը, զբոսաշրջության և տրանսպորտի զարգացմանը:

21. Իշխանության տեղական, տարածաշրջանային և ինքնավար մարմինները պետք է հարգեն և ապահովեն բոլոր անձանց իրավունքները, ներառյալ ցանկացած փոքրամասնության իրավունքները, որոնք բնակվում են իրենց ենթակա տարածքում:

IV. Երաշխիքներ

A). Սահմանադրական և իրավական երաշխիքներ

22. Ինքնակառավարման մեխանիզմները պետք է սահմանվեն օրենքով և դրանց վերանայման կարգը, որպես կանոն, պետք է տարբերվի սովորական օրենսդրության նկատմամբ կիրառվողից: Որոշումների ընդունմանը փոքրամասնությունների մասնակցությունը խրախուսող մեխանիզմները պետք է որոշվեն օրենսդրական կարգով կամ համապատասխան այլ եղանակներով:

- Սահմանադրության դրույթներով ամրապնդվող մեխանիզմների ընդունումը կամ վերանայումը սովորաբար պայմանավորվում է օրենսդիրների կամ ընտրողների միջև համաձայնության ավելի բարձր մակարդակով, քան մյուս դեպքերում:

- Օրենսդրությամբ սահմանված կարգով ինքնակառավարման մեխանիզմների փոփոխումը հաճախ պահանջվում է օրենսդիր մարմնում, ինքնակառավարման մարմիններում կամ ազգային փոքրամասնությունները ներկայացնող մարմիններում, կամ եր-

կուսու՛մ միասին, ձայների որակյալ մեծամասնության կողմից հաստատում:

- Ինքնակառավարման մեխանիզմների և որոշումների ընդունմանը փոքրամասնությունների մասնակցության մեխանիզմների գործողության պարբերական դիտարկումը հաճախ արժեքավոր հնարավորություն է տալիս պարզել, արդյոք այդ մեխանիզմներն ունեն վերանայման կարիք ձեռք բերված փորձի և փոփոխված հանգամանքների լուսի ներքո:

23. Կարող է դիտարկվել ժամանակավոր կամ փուլային այլ մեխանիզմների օգտագործման հարցը, որոնք թույլ են տալիս փորձարկել և զարգացնել փոքրամասնությունների մասնակցության նոր ձևերը: Այդպիսի մեխանիզմները կարող են ստեղծվել օրենսդրական կամ ոչ ֆորմատ կարգով, որոշակի ժամանակահատվածով, որը ձեռքբերված հաջողություններից կախված կարող է երկարացվել, վերանշակվել կամ կրճատվել:

Բ). Իրավական պաշտպանություն

24. Հասարակական-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության համար անհրաժեշտ են կոնֆլիկտների կանխարգելման և վեճերի լուծման խորհրդատվությունների մշակված ուղիներ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում միանվագ կամ այլընտրանքային մեխանիզմների օգտագործման հնարավորություն: Համապատասխան մեթոդներին վերաբերվում են՝

- կոնֆլիկտների լուծումը դատական կարգով, մասնավորապես օրենսդրական կամ վարչական որոշումների բողոքարկումը դատական ատյաններում, ինչը պահանջում է պետությունում անկախ, բնակչության համար մատչելի և անաչառ դատական մարմինների առկայություն և հարգանք դրանց որոշումների նկատմամբ,

- վեճերի լուծման լրացուցիչ մեխանիզմներ, այնպիսիք, ինչպիսիք են բանակցությունները, փաստերի հաստատումը, միջնորդությունը, արբիտրաժը, ազգային փոքրամասնությունների հարցերի օմբուդսմենը, ինչպես նաև հատուկ հանձնաժողովներ, որոնք կարող են իրականացնել պետական կառավարման հարցերով բողոքների ընդունման և քննարկման խնդիրները:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԼՈՒՆԴԻ ՀԱՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

I. Ընդհանուր սկզբունքներ

1. Ինչպես Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությունը (այսուհետ՝ «ՄԱԿ-ի Կանոնադրությունը»), այնպես էլ ԵԻՍԱԽ հիմնադիր փաստաթղթերը ուղղված են միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանն ու ամրապնդմանը իրավահավասար ինքնավար այն պետությունների միջև բարեկամության և համագործակցության հարաբերությունների զարգացման հաշվին, որոնք հարգում են մարդու իրավունքները, ներառյալ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները: Իսկապես, ինչպես ցույց է տալիս ժամանակը, անհարգալից վերաբերմունքը մարդու իրավունքների նկատմամբ, այդ թվում փոքրամասնությունների իրավունքներին, կարող է հանգեցնել ներպետական կայունության խաթարմանը և բացասաբար է ազդում պետությունների միջև հարաբերությունների վրա, դրանով իսկ վտանգի տակ դնելով միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը:

Սկսած 1975թ. Հելսինկյան Եզրափակիչ ակտի դեկալոգի 7-րդ սկզբունքից, ԵԱՀԿ անդամ-պետությունները ընդգծում էին ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց օրինական շահերի հարգանքի և խաղաղության ու կայունության պահպանման միջև հիմնական կապը: Այդ կապի վրա կրկին ու կրկին անգամ հղում է կատարվել նաև ավելի ուշ ընդունված հիմնական փաստաթղթերում, մասնավորապես Մադրիդյան հանդիպման Եզրափակիչ փաստաթղթում (1983թ.) (15-րդ սկզբունք), Վիեննայի հանդիպման Եզրափակիչ փաստաթղթում (1983թ.) (18-րդ և 19-րդ սկզբունքներ) և Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիայում (1990թ.), ինչպես նաև բարձր մակարդակի վրա հետագա հանդիպումների փաստաթղթերում, օրինակ՝ Հելսինկյան փաստաթղթում (1992թ.) (4-րդ մասի 24-րդ կետ) և Լիսաբոնյան փաստաթղթում (1996թ.) (1-ին մաս, 21-րդ դարի Եվրոպայի ընդհանուր մոդելի և համընդհանուր անվտանգության մասին Լիսաբոնյան դեկլարացիա, 2-րդ կետ): Միավորված Ազգերի Կազմակերպության մակարդակով փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և ապահովման ու խաղաղության և

կայունության պահպանման միջև կապը ընդգծվում է, մասնավորապես, Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Դեկլարացիայի նախաբանում (1992թ.) (այսուհետ՝ «Փոքրամասնությունների մասին ՄԱԿ-ի Դեկլարացիա»): Բացի այդ, ընդունելով Նոր Եվրոպայի Փարիզյան հարտիան, ԵԱՀԿ բոլոր անդամ-պետությունները դրանով իսկ արտահայտել են իրենց կողմնակցությունը կառավարման ժողովրդավարական սկզբունքներին:

Փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից մարդու իրավունքների իրավահավասար իրականացման համար բազմակողմ հնարավորությունների ստեղծումը ենթադրում է նրանց արդյունավետ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին, մասնավաճայն որոշումների, որոնք անմիջապես իրենց են վերաբերվում: Չնայած որ կոնկրետ իրավունքները կարող են բավականին տարբեր լինել և փոքրամասնությունների պահանջների և սպասելիքների բավարարման համար կարող են բավարար լինել միայն ժողովրդավարական ընթացակարգերին, բայց փորձը ցույց է տալիս նաև, որ որոշումների ընդունմանը փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության նպատակով հաճախ անհրաժեշտ է ձեռնարկել հատուկ միջոցներ: Պետությունների պարտավորությունը անել դա նման դեպքում ամրագրված է մի շարք միջազգային նորմերում: Այսպես, Մարդկային չափման վերաբերյալ Կոպենհագենյան խորհրդակցության փաստաթղթի (1990թ.) (այսուհետ՝ «Կոպենհագենյան փաստաթուղթ») 35-րդ կետի համաձայն ԵԱՀԿ անդամ-պետությունները «կհարգեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց պետական գործերի արդյունավետ մասնակցելու իրավունքները, ներառյալ մասնակցությունը նման փոքրամասնությունների ինքնատիպության պաշտպանության և խրախուսման վերաբերյալ գործերում», Փոքրամասնությունների մասին դեկլարացիայի (1992թ.) 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն «փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ակտիվորեն մասնակցել [...] պետական կյանքին», ինչպես նաև «իրավունք ունեն մասնակցել այն որոշումների ընդունմանը ազգային և, որտեղ դա անհրաժեշտ է, նաև տարածաշրջանային մակարդակի վրա, որոնք վերաբերվում են այն փոքրամասնությանը, որին նրանք պատկանում են, կամ այն տարածաշրջաններում, որտեղ իրենք բնակվում են», Եվրոպայի Խորհրդի Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի 15-րդ հոդվածի համաձայն (1994թ.) (այսուհետ՝ «Շրջանակային կոն-

վենցիա»), անդամ-պետությունները «պարտավորվում են ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք արդյունավետ մասնակցեն մշակութային, հասարակական և տնտեսական կյանքին, ինչպես նաև պետական գործերին մասնակցելու ժամանակ, մասնավաճայն այն որոշումներին, որոնք իրենց են վերաբերվում»:

Արդյունավետ մասնակցության համար հնարավորությունների ստեղծումը, բնականաբար, ենթադրում է, որ այդպիսի մասնակցությունը կլինի կամավոր: Յենց ինքը՝ սոցիալ-քաղաքական ինտեգրացիայի ելակետային հասկացությունը դիտարկվում է որպես ինչ-որ բան, որը տարբերվում է գործընթացներից, որոնք, կամ որոնց հետևանքները, իրենցից ներկայացնում են պարտադիր ասիմիլյացիա, ինչից նախազուգացնում է Շրջանակային կոնվենցիայի 5-րդ հոդվածը: Միայն կամավորության պայմաններում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց օրինական շահերի իրագործումը կարող է կրել խաղաղ բնույթ և պետական քաղաքականության ու օրենսդրության ոլորտում ունենալ օպտիմալ արդյունք: Այդպիսով, նման գործընթացները, որոնք նախատեսված են լայն շրջանակների և բնակչության տարբեր խմբերի ակտիվ մասնակցության համար, նպաստում են հասարակության ավելի արդյունավետ կառավարմանը, քանի որ համապատասխանում են ամբողջ բնակչության պահանջներին, ներառելով նրանց հասարակական միավորված կյանքի մեջ և դրանով իսկ, վերջին հաշվով, ամրապնդելով պետության ամբողջականությունը: Հասարակական-քաղաքական կյանքում փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությանը վերաբերվող միջազգային նորմերում ընդգծվում է, որ դրանք ոչ մի ձևով չեն ենթադրում իրավունք զբաղվել այնպիսի գործունեությամբ, որը հակասում է Միավորված Ազգերի Կազմակերպության, ԵԱՀԿ և Եվրոպայի Խորհրդի նպատակներին և սկզբունքներին, ներառյալ պետությունների ինքնավար հավասարության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության սկզբունքները (տես Կոպենհագենյան փաստաթղթի 37-րդ կետ, Փոքրամասնությունների մասին ՄԱԿ-ի Դեկլարացիայի 8-րդ հոդվածի 4-րդ կետը և Շրջանակային կոնվենցիայի նախաբան):

2. 1992թ. Գեյսինկյան փաստաթղթի 4-րդ բաժնի 25-րդ կետի դրույթների ոգով սույն Հանձնարարականները հիմնվում են այդ կապակցությամբ ընդունված պարտավորությունների վրա, առաջարկելով ԵԱՀԿ անդամ-պետություններին «իրենց համապատասխան պարտավորությունների ավելի արդյունավետ կատարման հետագա

հնարավորություններ ետևի հարցում, ներառյալ պարտավորություններ, որոնք կապված են ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնատիպության խրախուսման համար պայմաններ ստեղծելու և պաշտպանության հետ»:

ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածի 3-րդ կետը հռչակում է, որ Կազմակերպության նպատակներից մեկը դա «տնտեսական, սոցիալական, մշակութային և հումանիտար բնույթի միջազգային խնդիրների լուծման գործում միջազգային համագործակցության իրականացումն է և մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի զարգացումը անկախ ռասայից, սեռից, լեզվից և կրոնական դավանանքից» և ինչպես հետագայում հստակեցվում է Կանոնադրության 55-րդ հոդվածի «C» կետում աջակցել «բոլոր մարդկանց իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ համընդհանուր հարգանքին և պահպանմանը, անկախ սեռից, ռասայից, լեզվից և կրոնական դավանանքից»: Կանոնադրությունն էլնում է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման միջև սերտ փոխկապվածությունից: Մարդկային արժանապատվության հիմնադրությանը նշանակության մասին խոսվում էր նաև Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 1-ին հոդվածում (1948թ.) և Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների մասին միջազգային պակտի (1966թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային պակտի (1966թ.) և Բոլոր տեսակի ռասայական խտրականությունների վերացման մասին միջազգային կոնվենցիայի (1965թ.) նախաբաններում: Այդ արժանապատվությունը հավասարապես յուրահատուկ է բոլոր մարդկանց և ենթադրում է հավասար և անխզելի իրավունքներ:

Հավասար արժանապատվության և անխզելի իրավունքների գաղափարից բխում է նաև անխտրականության սկզբունքը, որը մարմնավորված է մարդու իրավունքներին վերաբերվող գրեթե բոլոր միջազգային փաստաթղթերում, որոնց մեջ պետք է նշել Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 2-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 2-րդ և 26-րդ հոդվածները և Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային պակտի 2-րդ հոդվածը: Բոլոր տեսակի ռասայական խտրականությունների վերացման մասին միջազգային կոնվենցիայի 1-ին հոդվածում շատ պարզ նշված է, որ այդ փաստաթուղթը արգելում է խտրականությունը, մասնավորապես, «ցեխային, ազգային կամ էթնիկ ծագման» նշան-

ներով: Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը (1950թ.) (այսուհետ՝ «Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիա») նույնպես միանշանակ տարածում է «ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնությանը պատկանելու» նշաններով խտրականության անթույլատրելիության սկզբունքը բոլոր այն դեպքերում, երբ խոսքը գնում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների մասին: Այդ դրույթներն ու սկզբունքներն արտացոլված են նաև ԵԱԴԿ անդամ-պետություններից շատերի Սահմանադրություններում:

Քանի որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք օժտված են հասարակական-քաղաքական կյանքում արդյունավետ մասնակցելու իրավունքով, նրանք պետք է հնարավորություն ունենան օգտվել այդ իրավունքից առանց սահմանափակումների, ինչի վրա ուշադրություն է սևեռում Կոպենհագենյան փաստաթղթի 31-րդ կետը, Շրջանակային կոնվենցիայի 4-րդ հոդվածը և Փոքրամասնությունների մասին ՄԱԿ-ի դեկլարացիայի 4-րդ հոդվածի 1-ին կետը: Դրա հետ մեկտեղ Շրջանակային կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն արժանապատվության հարգանքի նկատմամբ հավասար իրավունքների ապահովումը ենթադրում է ոչ միայն խտրականությունից հրաժարվելու սկզբունքը, այլ նաև «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց և բնակչության հիմնական խմբին պատկանող անձանց միջև լրիվ և գործնական հավասարությունը», ինչի համար պետությունները պարտավոր են «անհրաժեշտության դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ ... քաղաքական ... կյանքի բոլոր ոլորտներում», որոնց հետ կապված նրանք «պատշաճ ձևով հաշվի են առնում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հատուկ դրությունը»:

Մարդու իրավունքների հարգանքի և քաղաքացիական հասարակությունում ինստիտուտների զարգացման միջև կապը, որը նախատեսում են հանձնարարականները, արտացոլում է «արդյունավետ քաղաքական ժողովրդավարության» պահանջը, որը, ինչպես ասված է Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիայի նախաբանում, անխզելիորեն կապված է ամբողջ աշխարհում արդարության և խաղաղության ապահովման հետ: Նոր Եվրոպայի համար Փարիզյան խարտիայում ԵԱԴԿ անդամ-պետությունները հայտարարել են նաև այն մասին, որ կառավարման ժողովրդավարական համակարգը և մասնավորապես մարդու իրավունքների հարգանքը կազմում են բարեկեցության հիմքը:

3. Հատուկ ինստիտուտները, որոնք ապահովում են ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին, չպետք է ստեղծվեն այլ անձանց իրավունքների սահմանափակման հաշվին: Մարդու իրավունքները պետք է պահպանվեն ամբողջությամբ և բոլոր դեպքերում, այդ թվում նաև այն ինստիտուտների կողմից, որոնց պետությունը կարող է տալ համապատասխան լիազորություններ: Կոպենհագենյան փաստաթղթի 33-րդ կետի համաձայն անդամ-պետությունների կողմից ազգային փոքրամասնությունների ինքնատիպության պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու ժամանակ «ցանկացած այդպիսի միջոցներ կհամապատասխանեն համապատասխան անդամ-պետությունների այլ քաղաքացիների նկատմամբ հավասարության և անխտրականության սկզբունքներին»: Այնուհետև, Կոպենհագենյան փաստաթղթի 38-րդ կետում ասվում է, որ «անդամ-պետությունները ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների պաշտպանության և խրախուսման իրենց պայմաններում ամբողջությամբ կպահպանեն իրենց պարտավորությունները մարդու իրավունքների վերաբերյալ գործող կոնվենցիաների և մյուս համապատասխան միջազգային գործիքների համաձայն»: Նմանատիպ դրույթը պարունակվում է նաև Շրջանակային կոնվենցիայի 20-րդ հոդվածում. «Տվյալ Շրջանակային կոնվենցիայում արտահայտված սկզբունքներից ելնող իրավունքների և ազատությունների իրականացման ժամանակ, ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձ պահպանում է ազգային օրենսդրությունը և հարգում այլ անձանց իրավունքները, մասնավորապես բնակչության հիմնական խմբին կամ այլ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները»: Դա մասնավորապես վերաբերվում է նաև այն դեպքերին, երբ խոսքը գնում է «փոքրամասնություններին փոքրամասնությունների կազմում», մասնավորապես տարածքային ինքնավարության հետ կապված (տես մեկնաբանությունները 16 և 21 հանձնարարականներին ստորև): Այստեղ պետք է ներառել նաև հարգանքը կանանց իրավունքներին, այդ թվում նաև «երկրի քաղաքական և հասարակական կյանքում» ազատությունը խտրականությունից, ինչի մասին խոսվում է Կանանց վերաբերյալ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին Կոնվենցիայի 7-րդ հոդվածում (1979թ.):

4. Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ինքնահիշատակի ֆիկացման սկզբունքի հիմքում ընկած են մի շարք հիմնական պարտավորություններ: Կոպենհագենյան փաստաթղթի 32-

րդ կետում նշված է, որ «անձի պատկանելիությունը ազգային փոքրամասնությանը հանդիսանում է նրա անձնական ընտրության իրավունքը, և ոչ մի անբարենպաստ հետևանքներ չեն կարող առաջանալ նման ընտրություն կատարելու արդյունքում»: Շրջանակային կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետում նմանատիպ ձևով նախատեսված է, որ «ազգային փոքրամասնությանը պատկանող ցանկացած անձ ունի ազատ ընտրության իրավունք դիտարկվել կամ չդիտարկվել այդպիսին, և այդ ընտրությունը կամ այն իրավունքների իրականացումը, որոնք կապված են այդպիսի ընտրության հետ, չպետք է սահմանափակվեն տվյալ անձին»: Փոքրամասնությունների մասին ՄԱԿ-ի Դեկլարացիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետում նույնպես խոսվում է որևէ անցանկալի հետևանքների անթույլատրելիության մասին ցանկացած անձի համար, որը պատկանում է ազգային փոքրամասնությանը, Դեկլարացիայում թվարկված իրավունքների իրագործման կամ չիրագործման արդյունքում:

Առանց անհատին իրեն իր հայեցողությամբ իդենտիֆիկացման իրավունքը տրամադրելու չի կարելի ապահովել հարգանքը մարդկային անձի ինքնատիպության և ազատության նկատմամբ: Մարդը կարող է ինքնահիշատակի ֆիկացվել տարբեր ուղղություններով, ընդ որում ոչ միայն մասնավոր, այլև հասարակական կյանքում: Համապատասխանաբար, բաց հասարակարգերում, որտեղ բարձրանում է մարդկանց շարժունակությունը և ընդլայնվում է գաղափարների փոխանակումը, շատերը միաժամանակ հանդես են գալիս մի քանի կերպարներով, որոնք կարող են համընկնել, համատեղ գոյատևել կամ դասավորվել այս կամ այն ձևով (հիերարխիկ կամ ոչհիերարխիկ), իրենց տարբեր սոցիալական կապերին համապատասխան: Իհարկե, ոչ միայն էթնիկ ծագումն է որոշում մարդու կողմից իր կերպարի ընտրությունը, որը, ի դեպ, փոփոխական է նույն խմբի շրջանակներում: Նրա տարբեր անդամների մոտ այն կարող է ունենալ տարբեր երանգներ և խորություն: Կապված այն բանից, թե կոնկրետ ինչի մասին է գնում խոսքը, տարբեր կերպարների հարաբերական նշանակությունը կարող է փոփոխվել: Համապատասխանաբար, միևնույն անձը կարող է ոչ նույնանման իրեն իդենտիֆիկացնել, կապված կոնկրետ հարցից, ինքնանույնացման խորությունից այս կամ այն գործում և իր մասնակցությունից դրանում: Օրինակ, որոշ պետություններում մարդը հարկային հայտարարագրերի լրացման և հարևանների հետ ամենօրյա շփման համար լեզվի ընտրության ժամանակ կարող է տարբեր ձևով ինքնորոշվել:

5. Ժողովրդավարական հասարակություններում որոշումների ընդունման գործընթացային կողմն ունի ոչ պակաս նշանակություն, քան

բովանդակայինը: Քանի որ կառավարման պատշաճ պրակտիկան կիրառվում է ոչ միայն ժողովրդի նկատմամբ, այլ նաև ի շահ ժողովրդի, ապա համապատասխան գործընթացները պետք է նախատեսեն այն բոլոր անձանց մասնակցությունը, ում դրանք վերաբերվում են, չպետք է աչքերից և հասարակության գնահատականից թաքցված լինեն և պետք է վերահսկվող լինեն նրանց կողմից, ում դրանք առընչվում են: Միայն այդպիսի կարգը կվայելի հասարակության կայուն վստահությունը: Համապատասխան գործընթացներում լայն մասնակցությունը կարող է ապահովել խորհրդատվությունների, հարցումների, հանրաքվեների, բանակցությունների և նույնիսկ անմիջականորեն առընչվող անձանց կողմից կոնկրետ սանկցիաներ ստանալու հաշվին: Կարելի է սպասել, որ նման գործընթացների կիրառմամբ ընդունված որոշումները կկատարվեն կամավոր կերպով: Այն դեպքերում, երբ պետական մարմինների և առընչվող խմբի մոտեցումները զգալիորեն տարբերվում են, կառավարման պատշաճ գործընթացների տեսանկյունից առավել բավարարող որոշման հարցում ճիշտ կլինի դիմել 3-րդ կողմի ծառայությանը:

Ազգային փոքրամասնությունների նկատմամբ կոնկրետ կիրառման ժամանակ Կոպենհագենյան փաստաթղթի 33-րդ կետը ԵԱՀԿ անդամ-պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել «իրենց տարածքների ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնատիպության» պաշտպանության համար «և այդ ինքնատիպության խրախուսման համար պայմաններ ստեղծել ... պատշաճ խորհրդակցություններ անցկացնելուց հետո, ներառյալ այդպիսի փոքրամասնությունների կազմակերպությունների կամ ասոցիացիաների հետ կապերը»: Հելսինկյան փաստաթղթի 6-րդ բաժնի 26-րդ կետի համաձայն ԵԱՀԿ անդամ-պետությունները նաև պարտավորվել են «ազգային փոքրամասնությունների խնդիրները լուծել կառուցողական ոգով, խաղաղ միջոցներով և բոլոր շահագրգիռ կողմերի միջև երկխոսության ճանապարհով ԵԱՀԿ սկզբունքների և պարտավորությունների հիման վրա»: Ինչ վերաբերվում է «բոլոր շահագրգիռ կողմերին», ապա Կոպենհագենյան փաստաթղթի 30-րդ կետում ճանաչվում է «ոչ պետական կազմակերպությունների, այդ թվում քաղաքական կուսակցությունների, արհմիությունների, մարդու իրավունքների հարցերով կազմակերպությունների և կրոնական խմբերի կարևոր դերը հանդուրժողականության, մշակութային բազմազանության խրախուսման և ազգային փոքրամասնություններին վերաբերվող հարցերի լուծման գործում»:

Լայն մասնակցության վրա հիմնված գործընթացների գործելու անհրաժեշտ պայման է հանդուրժողականությունը: Փոխադարձ վստահության և հավասարության սոցիալ-քաղաքական կլիման պետք է ապահովել օրենսդրական եղանակով, միաժամանակ ամբողջ բնակչության մասշտաբով վարելով դաստիարակչական աշխատանք այդ սոցիալական էթիկայի ամրապնդման համար: Այդ կապակվությամբ հատուկ դեր ունեն զանգվածային լրատվամիջոցները: Շրջանակային կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսվում է, որ «կողմերը խրախուսում են հանդուրժողականության ոգին և մշակութային միջև երկխոսությունը, ինչպես նաև արդյունավետ միջոցներ են ձեռնարկում իրենց տարածքում բնակվող բոլոր անձանց միջև, անկախ նրանց էթնիկ, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելիությունից, փոխադարձ հարգանքի, հասկացությանը և համագործակցությանը աջակցելու գործում, մասնավորապես կրթության, մշակութային և լրատվության միջոցների ոլորտներում»: Մասնավորապես, պետությունները պարտավոր են կանխել առհամարիական կամ նվաստացնող բառերի կամ արտահայտությունների օգտագործումը հանրային ելույթներում և արմատախիլ անել բացասական ստերեոտիպները: Ի դեպ, նաև է, երբ առընչվող խմբերի ներկայացուցիչները պետք է մասնակցեն նման խնդիրների լուծմանն ուղղված ցանկացած միջոցների սահմանմանն ու մշակմանը:

II. Մասնակցությունը որոշումների ընդունմանը

A). Կենտրոնական կառավարության մակարդակով մեխանիզմները

6. Ի զարգացումն Կոպենհագենյան փաստաթղթի 35-րդ կետի դրույթների ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԽԱԽ փորձագետների խորհրդակցության զեկույցի 3-րդ բաժնի առաջին պարագրաֆում (1991թ., ժնկ) նշվում է, որ «երբ ազգային փոքրամասնություններին վերաբերվող հարցերը քննարկվում են իրենց երկրներում, նրանց պետք է հնարավորորոշություն տալ արդյունավետ մասնակցել այդ գործընթացին... [և] որ պետական գործերին արդյունավետ մասնակցելու կարևոր մասն է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կամ նրանց ներկայացուցիչների [այդպիսի] ժողովրդավարական մասնակցությունը ղեկավար կամ խորհրդատվական մարմինների աշխատանքին»: Հելսինկյան

փաստաթղթի 6-րդ բաժնի 24-րդ կետում ԵԱՀԿ անդամ-պետությունները պարտավորվել են «այդ կապակցությամբ ... ակտիվացնել իրենց ջանքերը ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից մարդու իրենց իրավունքներն ու հիմնական ազատություններն ազատ իրականացումը ապահովելու համար, անհատական հիմունքներով և մյուսների հետ համատեղ, ներառյալ իրավունքը լրիվ չափով ժողովրդավարական գործընթացներին համապատասխան մասնակցել իրենց պետությունների քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում որոշումների ընդունմանը, այդ թվում ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ղեկավար և խորհրդատվական մարմինների աշխատանքին ժողովրդավարական մասնակցության հիմունքներով, մասնավորապես, քաղաքական կուսակցությունների և ասոցիացիաների շրջանակներում»:

Մասնակցությունը, ըստ էության, նշանակում է ներգրավվածություն, ինչպես որոշումների ընդունմանը ազդեցիկ ներդրումներ անելու հնարավորության տեսանկյունից, այնպես էլ այդպիսի գործողությունների հետևանքների համար պատասխանատվության տեսանկյունից: Պատշաճ կառավարման հայեցակարգի դրույթներից մեկը կայանում է նրանում, որ որոշումների ընդունումը պարզ մեծամասնության մեթոդով միշտ չէ, որ աղեկվատ է: Պետության կառուցվածքի տեսանկյունից կարելի է օգտագործել ապակենտրոնացման տարբեր ձևեր, որոնք առավելագույնս ապահովում են որոշումների ընդունման գործընթացի կապը այդ որոշումներին առնչվող խմբերի հետ և ստեղծում համապատասխան հաշվետվություն ինչպես ամբողջ պետության մակարդակով, այնպես էլ նրա կազմի մեջ մտնող կառուցվածքների մակարդակով: Ունիտար պետություններում, դաշնություններում և համադաշնություններում այդ խնդիրները տարբեր ձևով կարող են լուծվել: Ղեկավար մարմիններում փոքրամասնության ներկայացվածությունը կարող է ապահովվել նրանց որոշակի թվով տեղեր տրամադրելով (չափաբաժիններ, ծառայողական առաջխաղացում կամ այլ միջոցներ): Հնարավոր են նաև մասնակցության այլ ձևեր, օրինակ՝ երաշխավորված մասնակցությունը այս կամ այն հանձնաժողովներում, ձայնի իրավունքով կամ առանց դրա: Նույն կարգով, որն ամրագրված է իրավաբանորեն կամ հիմնվում է ձևավորված պրակտիկայի վրա, ապահովվում է մասնակցությունը գործադիր, դատական, վարչական և այլ մարմիններում: Փոքրամասնությունների շահերը հաշվի առնելու նպատակով կարող են ստեղծվել նաև հատուկ մարմիններ: Որպեսզի փոքրամասնություն-

ները ունենան ռեալ հնարավորություն իրականացնել իրենց իրավունքները, ամիրաժեշտ են կոնկրետ միջոցառումներ պետական ծառայության գծով, ներառյալ «պետական ծառայությանը իրավահավասար» մատչելիությունը, ինչի մասին խոսվում է բոլոր տեսակի ռասայական խտրականությունների վերացման մասին միջազգային կոնվենցիայի 5-րդ հոդվածի «C» կետում:

B). Ընտրություններ

7. Ժամանակակից ժողովրդավարության կարևորագույն խորհրդանիշն է հանդիսանում կառավարման ներկայացուցչական համակարգը, որը հիմնված է պարբերաբար անցկացվող և արդար ընտրությունների վրա: Այդ ժամանակ լուծվող կարևորագույն խնդիրը ձևակերպված է Մարդու իրավունքների հանընդհանուր դեկլարացիայի 21-րդ հոդվածի 3-րդ կետում՝ «ժողովրդի կամքը պետք է լինի կառավարության իշխանության հիմքը»: Այդ հիմունքային նորմը ավելի ընդլայնված ձևով ձևակերպված է մի շարք միջազգային և եվրոպական պայմանագրերում, իսկ ավելի հստակ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 25-րդ հոդվածում և Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի արձանագրության 3-րդ հոդվածում: Կոպենհագենյան փաստաթղթի 5-րդ և 6-րդ կետում ԵԱՀԿ անդամ-պետությունների նկատմամբ կիրառելիս կոնկրետ թվարկված են «արդարության էլենետները, որոնք զգալիորեն անհրաժեշտ են մարդկային անձին արժանապատվության, բոլոր մարդկանց հավասար և անխզելի իրավունքների լրիվ դրսևորման համար», և նշված է, որ «ժողովրդի կամքը, որն արտահայտված է իրական և պարբերականորեն անցկացվող ազատ և արդար ընտրություններում, համարվում է ցանկացած կառավարության իշխանության և օրինականության հիմքը»:

Պետություններն օժտված են ոչ փոքր ազատությամբ որոշելու, թե ինչպես են իրենք կատարելու իրենց պարտավորությունները, սակայն նրանք պարտավոր են անել դա առանց խտրականության, ձգտելով ապահովել ներկայացուցչության առավել բարձր մակարդակը: ՄԱԿ-ի շրջանակներում գործող Մարդու իրավունքների կոմիտեն իր թիվ 25 Ընդհանուր բնույթի դիտողությունների (57-րդ նստաշրջան, 1996թ.) 12-րդ կետում տվեց 25-րդ հոդվածի հետևյալ բացատրությունը. «Իր կարծիքն ազատ արտահայտելու, խաղաղ ժողովների և ասոցիացիաների ազատության իրավունքը հանդիսա-

նում է հիմնադրույթային պայման ձայնի իրավունքի արդյունավետ իրականացման համար և պետք է օգտվի լրիվ պաշտպանությունից [...]։ Քվեարկության կարգի մասին տեղեկություններն ու նյութերը պետք է հրապարակվեն նաև փոքրամասնությունների լեզուներով»։ Այնուհետև, թիվ 25 Ընդհանուր բնույթի դիտողությունների 5-րդ կետում պարզաբանվում է, որ «պետական գործերի վարումը իրենից ներկայացնում է լայն հասկացություն, որը կապված է քաղաքական լիազորությունների իրականացման հետ, մասնավորապես, օրենսդիր, գործադիր և վարչական լիազորությունների իրականացման հետ։ Այն ընդգրկում է պետական կառավարման բոլոր ոլորտները, ինչպես նաև միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական նակարդակներում քաղաքականության մշակումն ու իրագործումը»։

Քանի որ գոյություն ունեցող տարաբնույթ հայացքների և շահերի պայմաններում ոչ մի ընտրական նակարդակ չի կարող ծանաչվել չեզոք, ապա պետությունները պետք է ընտրեն այն համակարգը, որն իրենց կոնկրետ պարագաներում կապահովի կառավարման առավել ներկայացուցչական բնույթը։ Դա առավել կարևոր է ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար, որոնք հակառակ դեպքում կարող են զրկվել ադեկվատ ներկայացուցչությունից։

8. Սկզբունքորեն, ժողովրդավարական հասարակությունը իր քաղաքացիներին չպետք է պարտադրի քաղաքական ինքնակազմակերպման եղանակները այնքան ժամանակ, քանի դեռ նրանք օգտվում են խաղաղ միջոցներից և հարգում են մյուսների իրավունքները։ Ըստ էության, խոսքը գնում է ասոցիացիայի ազատության մասին, ինչպես որ այն որոշված է տարբեր միջազգային փաստաթղթերում, ներառյալ Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 20-րդ հոդվածը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 22-րդ հոդվածը, Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի և Կոպենհագենյան փաստաթղթի 6-րդ կետը։ Բացի այդ փոքրամասնություններին պատկանող անձանց ասոցիացիաների ազատությունը հատուկ երաշխավորված է Կոպենհագենյան փաստաթղթի 32.6 կետով և Շրջանակային կոնվենցիայի 7-րդ հոդվածով։ Հելսինկյան փաստաթղթի 6-րդ բաժնի 24-րդ կետում լրացուցիչ կոնկրետացվում է ԵԱՀԿ անդամ-պետությունների պարտավորությունը ապահովել «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից մարդու իրենց իրավունքներն ու հիմնական ազատություններն ազատ իրականացումը, անհատական հիմունքներով

և մյուսների հետ համատեղ, ներառյալ իրավունքը լրիվ չափով [...] մասնակցել իրենց պետությունների քաղաքական [...] կյանքում, այդ թվում [...] քաղաքական կուսակցությունների և ասոցիացիաների շրջանակներում»։

Իրավահավասարության և անխտրականության սկզբունքների լրիվ պահպանման դեպքում էթնիկ նշաններով ձևավորվող քաղաքական կուսակցությունների մեջ միավորվելու օբյեկտիվ և սուբյեկտիվ պահանջը կնվազի կամ կվերանա ընդհանրապես, միևնույն ժամանակ որոշ դեպքերում էթնիկ համայնքների ձևավորված նման կուսակցությունները կարող են լինել իրենց յուրահատուկ շահերի արդյունավետ ներկայացման միակ հույսը և դրանով իսկ նրանց ռեալ մասնակցությունը հասարակության կյանքում։ Բնականաբար, անձինք կարող են միավորվել կուսակցություններում նաև այլ հիմունքներով, օրինակ՝ տարածաշրջանային շահերով։ Իդեալական է, որ կուսակցությունները իրենց կազմով պետք է լինեն բաց և չպետք է սահմանափակվեն մեղ էթնիկ շրջանակներով։ Համապատասխանաբար, խոշոր կուսակցությունները պետք է ձգտեն իրենց կազմում ներգրավել փոքրամասնությունների ներկայացուցիչներին, դրանով իսկ թուլացնելով պահանջը կամ ձգտումը ստեղծել կուսակցություններ էթնիկ նշաններով։ Այդ կապակցությամբ կարևոր նշանակություն է ձեռք բերում ընտրական համակարգի ընտրությունը։ Բոլոր դեպքերում քաղաքական կուսակցություններին և այլ ասոցիացիաներին պետք է արգելվի հրահրել ռասայական ատելությունը, ինչի մասին խոսվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 20-րդ հոդվածում և Բոլոր տեսակի ռասայական խտրականությունների վերացման մասին կոնվենցիայի 4-րդ հոդվածում։

9. Ընտրական համակարգի գործողությունը կարող է տարածվել օրենսդիր մարմնի և այլ մարմինների և ինստիտուտների ընտրությունների վրա, ներառյալ առանձին պաշտոնատար անձանց ընտրությունը։ Մի դեպքում, կապված այն բանից, թե ինչպես են որոշված ընտրատարածքների սահմանները և դրանցում բնակվող փոքրամասնությունների խտությունից, վերջիններիս պատշաճ ներկայացվածությունը կարող է ապահովվել միամանդատ ընտրատարածքներով, մյուս դեպքերում փոքրամասնությունների ներկայացվածության երաշխիք կարող է դառնալ համամասնական ընտրական համակարգը։ ԵԱՀԿ անդամ-պետություններում կիրառվում են համամասնական ներկայացուցչության տարբեր ձևեր, ներառյալ «պրեֆերենցիալ քվեարկությունը», որի դեպքում ընտրողները տեղավորում են թեկնածուներին իրենց նախընտրած հերթականությամբ

յամբ, «բաց ցուցակների համակարգը», որի դեպքում ընտրողները կարող են արտահայտել իրենց նախընտրանքը կուսակցական ցուցակի այս կամ այն թեկնածուի նկատմամբ, ինչպես նաև քվեարկել կուսակցության համար, «ընտրության խառը համակարգը», որի դեպքում թույլատրվում է քվեարկել տարբեր կուսակցությունների ավելի քան մեկ թեկնածուի համար, և «կունույատիվ համակարգ», որի դեպքում ընտրողները կարող են մեկից ավելի ձայն տալ իրենց նախընտրած թեկնածուի համար: Տոկոսային շեմը չպետք է այնքան բարձր անել, որպեսզի դա արգելք դառնա փոքրամասնությունների ներկայացվածության համար:

10. Ընտրատարածքների սահմանների որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ազգային փոքրամասնությունների խնդիրները և շահերը ղեկավար մարմիններում նրանց ներկայացվածությունն ապահովելու տեսանկյունից: «Իրավահավասարություն» հասկացությունը նշանակում է, որ նման ապահովման ընտրված մեթոդը չպետք է սահմանափակի ոչ ոքի շահերը և որ հաշվի են առնվելու բոլորի խնդիրներն ու շահերը: Ի դեպ, կան է, որ ընտրատարածքների սահմանները որոշվեն անկախ և անաչառ մարմնի կողմից, ինչը այլ խնդիրների լուծման հետ մեկտեղ կթույլատրեր ապահովել փոքրամասնությունների իրավունքների հարգումը: ԵԱՀԿ անդամ-պետություններից շատերում այդ խնդիրը լուծվում է մշտական ընտրական հանձնաժողովներ ստեղծելու միջոցով, որոնք ձևավորված են մասնագիտացված կադրերից:

Այսպես թե այնպես, պետությունները ընտրատարածքների սահմանները չպետք է վերանայեն կամ որևէ այլ ձևով փոփոխեն բնակչության տարբեր խմբերի համամասնական հարաբերակցությունը այս կամ այն ընտրատարածքում, որպեսզի նվազեցվի կամ ընդհանրապես վերացվի փոքրամասնությունների ներկայացվածությունը: Դա ուղղակի արգելվում է Շրջանակային կոնվենցիայի 16-րդ հոդվածով, իսկ Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 5-իդ հոդվածում ասվում է, որ տեղական տարածքային միավորումների սահմանների փոփոխությունը չի իրականացվում առանց առընչվող տեղական համայնքների հետ նախնական խորհրդակցության, որը կարող է անցկացվել հանրաքվեի ձևով այն դեպքում, երբ դա թույլատրվում է օրենքով (տես 19-րդ հանձնարարականի բացատրությունը, որը վերաբերվում է տարածքային մեխանիզմներին):

C). Տարածաշրջանային և տեղական մակարդակի մեխանիզմներ

11. Տվյալ հանձնարարականը վերաբերվում է կենտրոնականից ցածր բոլոր մակարդակների իշխանության մարմիններին՝ նահանգներում, դեպարտամենտներում, շրջաններում, պրեֆեկտուրաներում, մունիցիպալիտետներում, քաղաքներում և գյուղերում, որոնք մնում են ինչպես ունիտար, այնպես էլ դաշնության սուբյեկտ հանդիսացողները, ներառյալ ինքնավար մարզերը և այլ միավորումները: Բոլոր անձանց հավասարապես մարդու բոլոր իրավունքներն իրականացնել թույլ տվող պայմանների հետևողական ստեղծման խնդիրը ենթադրում է, որ այդ իրավունքների հարգանքը պետք է ապահովվի ոչ միայն կենտրոնական կառավարության մակարդակով, այլ նաև բոլոր ստորադաս մակարդակներով: Սակայն տարածաշրջանային կամ տեղական մակարդակի կառույցների ձևավորման ժամանակ կիրառվող չափանիշները կարող են տարբերվել կենտրոնական կառավարության մակարդակով կիրառվող չափանիշներից: Հնարավոր է նաև ասիմետրիա համապատասխան կառույցների ձևավորման ժամանակ, ինչը պայմանավորված է պահանջների և արտահայտվող ցանկությունների տարաբնույթությամբ:

D). Խորհրդակցական և կոնսուլտատիվ մարմիններ

12. Հելսինկյան փաստաթղթի 6-րդ բաժնի 24-րդ կետը ԵԱՀԿ անդամ-պետություններին պարտավորեցնում է ապահովել «ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց կողմից մարդու իրենց իրավունքներն ու հիմնական ազատություններն ազատ իրականացումը, անհատական հիմունքներով և մյուսների հետ համատեղ, ներառյալ իրավունքը լրիվ չափով [...] մասնակցել իրենց պետությունների քաղաքական [...] կյանքին, այդ թվում ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ղեկավար և խորհրդատվական մարմինների աշխատանքին ժողովրդավարական մասնակցության հիմունքներով, մասնավորապես, քաղաքական կուսակցությունների և ասոցիացիաների շրջանակներում»: Նման մարմինները կարող են լինել մշտական կամ նպատակային, կարող են վերաբերվել իշխանության օրենսդիր կամ գործադիր ծյուղին կամ էլ գործել դրանց կից կամ անկախ դրանցից: ԵԱՀԿ մի շարք անդամ-պետություններում գործում են խորհրդարանական

մարմիններին կից կոմիտեներ, ինչպիսիք են փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությամբ «կլոր սեղանները»: Դրանք կարող են ստեղծվել և արդեն ռեալ գործում են իշխանության բոլոր մակարդակների վրա, ներառյալ ինքնակառավարումը: Նման մարմինների արդյունավետությունն ապահովում են նրանց կազմի մեջ փոքրամասնությունների ներկայացուցիչների և հատուկ փորձագիտական գիտելիքներ ունեցող անձանց ներգրավմամբ, ինչպես նաև անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրելով և ղեկավար մարմինների խիստ ուշադրությամբ:

Բացի խորհրդատվական ֆունկցիաներ իրականացնելուց և հանձնարարականներ մշակելուց, նման մարմինները կարող են միջանկյալ օղակ ծառայել պետական ղեկավարության և փոքրամասնությունների միջև: Նրանք կարող են նաև դրդեն միջոցների ձեռնարկումը կառավարական մակարդակի և այն համայնքային մակարդակի վրա, որտեղ ապրում է փոքրամասնությունը: Բացի դրանից, նման մարմինները կարող են լուծել ծրագրերի իրականացման հետ կապված կոնկրետ խնդիրներ, օրինակ՝ կրթության ոլորտում: Բացի այդ, այս կամ այն մասնագիտացված կոմիտեի աշխատանքը կարող է հատուկ նշանակություն ունենալ որոշ փոքրամասնությունների համար, այդ պատճառով էլ այդ փոքրամասնությունները պետք է այնտեղ ներկայացված լինեն:

13. Այդպիսի մարմինների կառուցողական օգտագործման հնարավորությունները կախված են կոնկրետ իրավիճակից: Բայց բոլոր դեպքերում կառավարման պատշաճ պրակտիկան ենթադրում է իշխանությունների կողմից նպատակային միջոցառումների ձեռնարկում, խորհրդակցական և կոնսուլտատիվ հեղինակավոր մարմինների ներգրավում աշխատանքին և անհրաժեշտության դեպքում դիմել նրանց, այդ թվում համապատասխան հարցերի շուրջ աշխատանքներում իրենց ներդրումը կատարելու առաջարկով: Այդ մարմինների և նրանց անդամների նկատմամբ իշխանությունների բաց դիրքորոշումը և պատրաստակամությունը համագործակցել նրանց հետ առավել օպտիմալ որոշումների ընդունման երաշխիքը կդառնան և կբարձրացնեն իշխանության հեղինակությունը հասարակությունում:

III. Ինքնակառավարում

14. «Ինքնակառավարում» հասկացությունը ենթադրում է, որ համայնքը այս կամ այն չափով հսկում է իրեն վերաբերվող հարցերի

լուծումը: «Կառավարում» բառը չի ենթադրում բացառիկ իրավասություն: Բացի դրանից, այն կարող է նշանակել վարչական և տնօրինման լիազորություններ, ինչպես նաև հստակ մատնանշված օրենսդրական և դատական ֆունկցիաներ: Դրան կարելի է հասնել, եթե պետությունը իր գործառույթների մի մասը փոխանցի համապատասխան մարմիններին կամ էլ, ինչպես դաշնության դեպքում, սկզբնականորեն բաժանվեն պետության բազային լիազորությունները: ԵԱԳԿ անդամ-պետություններում ինքնակառավարման ձևերը տարբեր անուններ ունեն—ինքնավարության պատգամ, ինքնակառավարում կամ ներքին կառավարում: Ընդ որում էթնիկ չափանիշները ոչ մի պարագայում որոշիչ չեն տարածքային մեխանիզմների ձևավորման ժամանակ:

Կոպենհագենյան փաստաթղթի 35-րդ կետում ԵԱԳԿ անդամ-պետությունները նշել են «այդպիսի փոքրամասնությունների կոնկրետ պատմական և տարածքային պայմաններին համապատասխանող, շահագրգիռ պետության քաղաքականությանը համապատասխան կառավարման տեղական կամ ինքնավար պատշաճ մարմինների ստեղծմանն ուղղված ջանքերը, որոնք (մարմինները) կդառնան որոշակի ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվային և կրոնական ինքնատիպության պահպանման ու խրախուսման համար հնարավոր միջոցներից մեկը»:

Այդ կապակցությամբ ԵԽԱԽ փորձագետների ազգային փոքրամասնությունների հարցերի վերաբերյալ խորհրդակցության զեկույցի 4-րդ բաժնի 7-րդ պարագրաֆում (ԺՆԼ) նշվում էր, որ «որոշ (անդամ-պետություններ) համապատասխան ժողովրդավարական ճանապարհով հասել են դրական արդյունքների, մասնավորապես, [...] տեղական և ինքնավար կառավարման մարմինների, ինչպես նաև տարածքային հիմունքներով ինքնավարության տրամադրման միջոցով, ներառյալ խորհրդատվական, օրենսդիր և գործադիր մարմինների գոյությունը, որոնք ընտրվում են ազատ և պարբերաբար անցկացվող ընտրությունների արդյունքում, ազգային փոքրամասնության ինքնավարության միջոցով այն ոլորտներում, որոնք վերաբերվում են նրա ինքնատիպությանը, այն դեպքում, երբ գոյություն չունի տարածքային ինքնավարություն, կառավարման ապակենտրոնացված կամ տեղական ձևերի միջոցով. [...] ազգային փոքրամասնություններին պատկանող այն անձանց ֆինանսական և տեխնիկական օգնություն ցուցաբերելու միջոցով, որոնք ցանկանում են իրենց սեփական կրթական, մշակութային և կազմակերպությունների, հաստատությունների կամ ասոցիացիաների, ստեղծման և պահ-

պանման իրենց իրավունքն իրականացնել [...]»: Ընդհանուր առմամբ Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի նախաբանում իշխանության ժողովրդավարության և ապակենտրոնացման սկզբունքների մասին խոսվում է որպես մի գործոնի, որը նպաստում է տարբեր եվրոպական երկրներում տեղական ինքնակառավարման ապահովմանն ու ամրապնդմանը: Դրա կապակցությամբ Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 9-րդ հոդվածը նախատեսում է բավարար ֆինանսական միջոցներ ստանալու իրավունքը նման ստանձնած պարտավորություններն իրականացնելու համար:

15. Պետական մարմինները, իրենց վրա վերցնելով պետությանը առընչվող որոշ ոլորտների համար պատասխանատվությունը, պետք է ապահովեն այդ ոլորտներում համապատասխան միջոցառումների իրականացումը կենտրոնական իշխանության մակարդակով: Սովորաբար այդ ոլորտների թվին են դասվում՝ պաշտպանության հարցերը, որոնք ըստ էության հանգում են պետության տարածքային ամբողջականության ապահովմանը; մակրոտնտեսական քաղաքականությունը, որը կարևոր դեր է խաղում այն չափով, որ չափով որ կենտրոնական կառավարությունը իրականացնում է յուրատեսակ հավասարեցնողի դեր անհավասար տնտեսական վիճակում գտնվող շրջանների միջև; ինչպես նաև դիվանագիտության ավանդական ոլորտը: Քանի որ մյուս գործոնները կարող են ունենալ համազգային հետևանքներ, նրանք նույնպես, զոնե մասնակի, պետք է ներառվեն կենտրոնացված կարգավորման շրջանակի մեջ: Կարգավորումը այդ ոլորտներում կարող է իրականացվել նաև համատեղության հիմունքներով, այդ թվում նաև այն տարածքային միավորների կամ փոքրամասնությունների մասնակցությամբ, որոնց դա առանձնապես է վերաբերվում (տես 18 և 20 հանձնարարականները): Դրա հետ մեկտեղ կարգավորվող լիազորությունների այդպիսի բաժանումը չպետք է հակասի ինքնապաշպանման նորմերին և պետք է իրականացվի կոորդինացված և պրակտիկության պատշաճ չափով:

Ոլորտներից մեկը, որում, ընդհանուր կարծիքով, հավաքվում են բոլորի շահերը, անկախ ինքնակառավարման տարածքային կամ ոչ տարածքային ձևից, և որոնք հատուկ կարևորություն են ներկայացնում ինչպես ամբողջ պետության, այնպես էլ փոքրամասնությունների համար, հանդիսանում է կրթությունը: Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին ՅՈՒՆԵՍԿՈ-ի կոնվենցիայի 5.1 հոդվածը պարունակում է բավականին մանրամասն դրույթներ այն մասին, թե ինչ ճանապարհով պետք է հասնել վերոնշյալ նպա-

տակներին՝ «տվյալ Կոնվենցիայի կողմ հանդիսանող պետությունները կարծում են, որ [...]

b) Ծնողները և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալները, պետք է հնարավորություն ունենան, առաջինը, յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ որոշված շրջանակներում իրենց երեխաներին ազատ ուղարկեն ոչ թե պետական, այլ ուրիշ ուսումնական հաստատություններ, որոնք համապատասխանում են իրավասու կրթական մարմինների կողմից հաստատված կամ նախատեսված նվազագույն պահանջներին, և երկրորդը, ապահովեն երեխաների կրոնական և բարոյական դաստիարակությունը իրենց սեփական համոզմունքներին համապատասխան; ոչ ոքին առանձին և անձանց ոչ մի խմբին, ընդհանուր վերցրած, պետք չէ կապել իր կրոնական դաստիարակությունը, որը չի համընկնում նրանց համոզմունքների հետ;

c) ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հետևից պետք է ճանաչել սեփական լուսավորչական աշխատանք վարելու իրավունքը, ներառյալ դպրոցների ղեկավարումը և յուրաքանչյուր պետության կրթության ոլորտում անցկացվող քաղաքականությանը համապատասխան, օգտագործել կամ դասավանդել իր սեփական լեզուն, սակայն այն պայմանով, որ՝ 1) այդ իրավունքի իրագործումը չի խանգարում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց հասկանալ ամբողջ կոլեկտիվի մշակույթը և լեզուն և մասնակցել նրա գործունեությանը, և որ այն խաթարում երկրի ինքնիշխանությանը, 2) նման դպրոցներում կրթության մակարդակը չպետք է ցածր լինի ընդհանուր մակարդակից, որը նախատեսված է կամ հաստատված է իրավասու մարմինների կողմից, և 3) նման դպրոցների հաճախումը հանդիսանում է ֆակուլտատիվ (լրացուցիչ)»:

16. Ժողովրդավարական կառավարման սկզբունքը, որը ձևակերպված է Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայի 21-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 25-րդ հոդվածում, Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 3-րդ հոդվածում և ԵԱԿԿ նորմերում, վերաբերվում է կառավարմանը բոլոր մակարդակներում և բոլոր օղակներում: Եթե անհրաժեշտ է կամ նպատակահարմար է ձևավորել ինքնակառավարման ինստիտուտներ, ապա բոլոր քաղաքացիների կողմից իրենց իրավունքների հավասար իրականացման նախապայման է հանդիսանում այդ ինստիտուտներում ժողովրդավարության սկզբունքի պահպանումը:

A). Ոչ տարածքային մեխանիզմներ

17. Այդ բաժինը նվիրված է ոչ տարածքային մեխանիզմներին - հաճախ անվանում են «անձնակազմ» կամ «մշակութային» ինքնավարություն, - որոնք առավել կիրառելի են այս կամ այն խմբերի անդամների աշխարհագրորեն ոչ կոմպակտ բնակվելու դեպքում: Լիազորությունների համապատասխան բաժանումը, այդ թվում նաև գործերի վարումը կոնկրետ ոլորտներում, կարող է ապահովվել համապետական մակարդակի վրա կամ ըստ տարածքային միավորումների: Բոլոր դեպքերում անհրաժեշտ է երաշխավորել այդ միջոցներով գրավված անձանց իրավունքների նկատմամբ հարգանքը: Նման ձևերով ինքնավարությունը պետք է ամրապնդվի նաև համապատասխան ֆինանսավորմամբ, որն անհրաժեշտ է նրա հասարակական ֆունկցիայի իրականացման համար, և պետք է հիմնվի լայն մասնակցություն նախատեսող գործընթացների վրա (տես 5 հանձնարարական):

18.Սրանով հնարավոր ֆունկցիաների ցանկը չի սպառնում: Շատ բան կախված կլինի կոնկրետ իրավիճակից, այդ թվում և առաջին հերթին փոքրամասնությունների պահանջներից և արտահայտված ցանկություններից: Տարբեր իրավիճակներում այս կամ այն հարցերը կհետաքրքրեն փոքրամասնություններին ավել կամ պակաս չափով, և դրանցով ընդունված որոշումները կանդրադառնան փոքրամասնությունների վրա տարբեր ձևով: Որոշ ոլորտներ կարող են իրենցից ներկայացնել համատեղ գործունեության համար դաշտեր: Փոքրամասնությունների համար առավել ցավալի հարցերից մեկը դա իրենց անվանումը կամ անունը ինքնուրույն որոշելու իրավունք է, որը վերաբերվում է ինչպես հասարակական կազմակերպություններին, այդպես էլ առանձին քաղաքացիներին: Համապատասխան դրույթ նախատեսված է Շրջանակային կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին կետում: Եթե խոսքը գնում է կրոնի մասին, ապա տվյալ հանձնարարականի հեղինակները դեմ են արտահայտվում այդ ոլորտին պետական միջամտությանը, բացառությամբ կրոնական կազմակերպություններին տրվող լիազորությունների շրջանակը որոշելուց /օրինակ՝ քաղաքացիական կայունության ակտերի կապակցությամբ/: Հանձնարարականում նաև նախատեսված է, որպեսզի փոքրամասնությունների կազմակերպությունները հսկողություն իրականացնեն լրատվամիջոցների նկատմամբ, չնայած որ փոքրամասնությունների ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան ստեղծել և կիրառել իրենց սեփական ՁԼՄ-ները, ինչը երաշխավորված է Շրջանակային կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ կետով: Բնականաբար, մշակույթը բազմակողմանի

հասկացություն է, որը ընդգրկում է նաև այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են սոցիալական ապահովությունը, բնակարանային ֆոնդը և խնամքը երեխաների հետևից; այդ ոլորտներում ղեկավարումն իրականացնելով պետությունը դրա հետ մեկտեղ պարտավոր է հաշվի առնել նաև փոքրամասնությունների շահերը:

B).Տարածքային մեխանիզմներ

19. Եվրոպական պետությունների համար բնորոշ է լիազորությունների փոխանցման և համատեղության սկզբունքի իրականացման ընդհանուր միտումը, որպեսզի որոշումներն ընդունվեն հնարավորինս մոտ նրանց և հնարավորության դեպքում նրանց կողմից, ում դրանք անմիջապես առըջվում են և վերաբերվում են: Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետում այդ նպատակն արտահայտված է հետևյալ կերպ: Սկզբունքորեն, հասարակական ֆունկցիաները առաջին հերթին պետք է իրականացվեն այն իշխանությունների կողմից, որոնք առավել մոտ են կանգնած բնակչությանը: Իշխանության այլ մարմիններին ֆունկցիաները փոխանցելու դեպքում պետք է հաշվի առնել խնդրի բնույթը և մասշտաբը, ինչպես նաև արդյունավետության և խնայողության պահանջները: Տարածքային ինքնակառավարումը կարող է նպաստել պետության միասնության պահպանմանը և միաժամանակ բարձրացնել փոքրամասնությունների մասնակցության և ներգրավվածության մակարդակը, բարձրացնելով նրանց դերը կառավարման այն մակարդակում, որը համապատասխանում է նրանց բաժնին բնակչության ընդհանուր քանակի մեջ: Այդ խնդրին կարող է համապատասխանել դաշնային կառուցվածքը, ինչպես նաև հատուկ ինքնավար միավորումները ունիտար պետությունների կամ դաշնությունների սահմաններում: Հնարավոր է նաև խառը ադմինիստրացիաների գոյությունը: Ինչպես նշվում է 15-րդ հանձնարարականում, պարտադիր չէ, որ միավորումները լինեն միատեսակ պետության ամբողջ տարածքում և նրանք կարող են փոփոխվել ելնելով պահանջներից և արտահայտված ցանկություններից:

20. Ինքնավարությունների իշխանությունները պետք է ունենան իրական լիազորություններ օրենսդիր, գործադիր և դատական մակարդակներում: Լիազորությունները պետությունում կարող են բաժանված լինեն կենտրոնական, տարածաշրջանային և տեղական իշխանությունների միջև, ինչպես նաև ֆունկցիոնալ սկզբունքով: Կոպենհագեն-

յան փաստաթղթի 35-րդ կետում խոսվում է «պատշաճ տեղական կամ ինքնավար կառավարման մարմինների, որոնք համապատասխանում են այդպիսի փոքրամասնությունների կոնկրետ պատմական և տարածքային պայմաններին» տեսքով այլ ընտրանքների մասին: Դրանից պարզ երևում է, որ պետության սահմաններում միատեսակամուսուխունը պարտադիր չէ: Փորձը ցույց է տալիս, որ լիազորությունների բաժանումը հնարավոր է նաև հասարակական գործունեության նույնիսկ այն ոլորտներում, որոնք ավանդաբար վերաբերվում էին կենտրոնական իշխանության ենթակայությանը, նեռարյալ արդարադատության ոլորտում փոխանցված իրավազորությունները (ինչպես հիմնական, այնպես էլ դատավարական) և տնտեսության ավանդական ոլորտների վերաբերյալ լիազորությունները: Նվազագույն դեպքում, բնակչության տվյալ խմբերը պետք է պարբերական ներգրավվեն նման իրավասությունների իրականացմանը: Միևնույն ժամանակ կենտրոնական կառավարությունը պետք է իր համար պահպանի արդարության ապահովման և հնարավորությունների հավասարություն լիազորությունները ամբողջ պետության տարածքում:

21. Լիազորությունները, որոնք կարող են փոխանցվել տարածքային հիմունքներով փոքրամասնությունների առավել արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար, պետք է իրականացվեն հաշվի առնելով այն փոքրամասնությունների շահերը, որոնց վրա դրանք տարածվում են: Ադմինիստրատիվ-գործադիր իշխանությունը պետք է հաշվետու լինի համապատասխան տարածքի ամբողջ բնակչությանը: Դա երևում է Կոպենհագենյան փաստաթղթի 5.24 կետից, որը ԵԱՀԿ անդամ-պետություններին հրահանգում է բոլոր մակարդակներով և բոլոր անձանց համար ապահովել «իր բնույթով ներկայացուցչական կառավարման ձև, որի ժամանակ գործադիր իշխանությունը հաշվետու է ընտրված օրենսդիր մարմիններին կամ ընտրողներին»:

IV. Երաշխիքներ

A). Սահմանադրական և իրավական երաշխիքներ

22. Տվյալ բաժնում դիտարկվում է համապատասխան դրույթների «ամրապնդման» հարցը, այսինքն՝ դրանց ամրագրումը օրենսդրական կարգով: Մի դեպքում օգտակար կարող են լինել բավականին մանրամասն իրավական մեխանիզմներ, իսկ մյուս դեպքում բավարար կլինեն շրջանակային դրույթները: Ինչպես նշվում է 5-րդ հանձնա-

րարականում, բոլոր դեպքերում մեխանիզմների ընդունումը պետք է իրականացվի բաց գործընթացների միջոցով: Միևնույն ժամանակ դրանց ընդունումից հետո անհրաժեշտ է ապահովել կայունություն, որպեսզի երաշխավորվի առընչվող անձանց որոշակի պաշպանվածությունը, մասնավոր ազգային փոքրամասնություններին պատկանողներինը: Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 2-րդ և 4-րդ հոդվածներում նախապատվությունը տրվում է սահմանադրական մեխանիզմներին: Կայունության և ճկունության միջև ցանկալի հավասարակշռության հասնելու համար կարող է նպատակահարմար լինի նախօրոք պլանավորել վերանայումը որոշակի սահմանված ժամանակահատվածներում, դրանով իսկ ապաքաղաքականացնելով փոփոխություններ մտցնելու գործընթացը և դիտարկման գործընթացը դարձնել ավելի անտագոնիստական:

23. Այս հանձնարարականը տարբերվում է 22-րդ հանձնարարականից այնքանով, որ այն նախատեսում է նոր, նախկինում չկիրառված ռեժիմների փորձարկում, այլ ոչ թե գոյություն ունեցող մեխանիզմների փոփոխության համար պայմանների որոշում: Իրավասու իշխանություններին հնարավորություն է տրվում կիրառել տարբեր մոտեցումներ, իրականացնելով իր ընտրությունը տարբեր իրավիճակներում, որոնք առաջանում են կենտրոնական մարմինների և փոքրամասնությունների ներկայացուցիչների միջև հարաբերություններում: Չկանխորոշելով վերջնական արդյունքները, դա կարող է լինել օգտակար փորձի աղբյուր նորարարությունների ընդունման և իրականացման հաշվին ոչ վերջին հերթին:

B). Իրավական պաշտպանություն

24. Կոպենհագենյան փաստաթղթի 30-րդ կետում ԵԱՀԿ անդամ-պետությունները «ճանաչում են, որ ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերը կարող են բավարար ձևով լուծվել միայն ժողովրդավարական քաղաքական շրջանակներում, որոնք հիմնված են օրենքի գերակայության վրա, անկախ դատական համակարգի գործունեության պայմաններում»: Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների մասին նաև խոսվում է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 2-րդ հոդվածի 3-րդ կետում, իսկ «դատական պաշտպանության միջոցների» մասին հիշատակվում է տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի 11-րդ հոդվածում:

Դատական հսկողությունը կարող է իրականացվել սահմանադրական դատարանների և, փաստորեն, մարդու իրավունքների հարցերով համապատասխան միջազգային մարմինների միջոցով: Արտադատական մեխանիզմները և ինստիտուտները, այնպիսիք, ինչպիսիք են ազգային հանձնաժողովները, օմբուդսմենները, միջէթնիկական կամ «ռասայական» հարաբերությունների հարցերով խորհուրդները և այլն, նույնպես կարող են կարևոր դեր խաղալ, ինչպես դա ասվում է Կոպենհագենյան փաստաթղթի 27-րդ կետում, ցանկացած տեսակի ռասայական խտրականությունների վերացման մասին միջազգային կոնվենցիայի 14-րդ հոդվածի 2-րդ կետում, Վիեննայի դեկլարացիայի 3-րդ կետում և Սարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային կոնֆերանսում ընդունված գործողությունների ծրագրում (1993թ.):

Վերոնշյալ հանձնարարականների շարքում մեծ կարևորություն է իրենից ներկայացնում նաև ԵԱՀԿ «Ազգային փոքրամասնությունների ընտրական գործընթացներին մասնակցելուն օժանդակող հանձնարարականները» (Վարշավա, հունվար, 2001թ.) (Рекомендации, способствующие участию национальных меньшинств в избирательном процессе): Փաստաթուղթը հիմնված է միջազգային իրավունքի բոլոր նորմերի եւ Լունդյան հանձնարարականների վրա եւ, նպատակ ունենալով առավել դյուրին դարձնել ազգային փոքրամասնությունների մասնակցությունը ընտրական գործընթացներին, «ժողովրդավարական ինստիտուտների եւ մարդու իրավունքների Բյուրոն (ԺՄԻԲ) ընտրություններին վերաբերող Լունդյան չորս հանձնարարականների հիման վրա առաջարկել է մշակել սեփական գործնական հանձնարարականները»⁴⁸:

Ջավախքի և ջավախահայության հիմնախնդիրների լուծման համար Վրաստանի առջև իր հանձնարարականներով է հանդես եկել նաև **Միջազգային ճգնաժամային խումբը**, որի՝ 2006թ. նոյեմբերի 22-ին հրապարակված N 178 հանձնարարականում հիմնականում կարողում ենք⁴⁹:

48 Տե՛ս փաստաթղթի ներածականը:

49 Армянское и азербайджанское меньшинства Грузии, Доклад Крайсис Груп N°178 Европа, Тбилиси/Брюссель, 22 November 2006, <http://www.crisisgroup.org/home/index.cfm?id=4517&l=3>.

Համառոտ բովանդակությունը և հանձնարարականները⁵⁰

Վրաստանը բազմազգ պետություն է, որը ստեղծում է ժողովրդավարական ինստիտուտներ և կրում քաղաքացիական հարաբերություններ: Սակայն երկրի հաջողությունները հայկական և ադրբեջանական փոքրամասնություններին ինտեգրացնելու հարցում, որոնք կազմում են ընդհանուր բնակչության 12%-ը, աննշան են: Սամցխե-Ջավախք և Քվեմո Քարթլի տարածաշրջաններում, որտեղ կոմպակտ ձևով բնակվում են այս երկու համայնքները, ակնհայտ է հարաբերությունների լարվածությունը, որը վերջին երկու տարիների ընթացքում ի հայտ է եկել ցույցերի, ոստիկանության դաժան վերաբերմունքի մասին հայտարարությունների և սպանությունների տեսքով: Ու թեև բացակայում է այն բանի ռիսկը, որ հարաբերությունների այս լարվածությունը կարող է վերաճել Վրաստանի տարածքային ամբողջականության մասնատման վտանգի, այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Աբխազիայի և Չարավային Օսեթիայի պարագայում, Վրաստանի կառավարությունը, եթե ցանկանում է խուսափել հակամարտության խորացումից, պետք է մեծ ուշադրություն դարձնի փոքրամասնությունների իրավունքներին, այդ թվում նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքին:

Արդեն ձեռնարկվում են որոշ քայլեր էթնիկ փոքրամասնությունների կյանքը բարելավելու ուղղությամբ: Այն տարածաշրջաններում, որտեղ բնակվում են փոքրամասնություններ, դոմորների ֆինանսական օգնությամբ վերականգնում են ճանապարհներ և ինֆրակառույցներ, ստեղծվել է քաղաքացիական ինտեգրացիայի հարցերով նախարարություն, հիմնվել է փոքրամասնությունների համար պետական կառավարման ինստիտուտ, վավերացվել է ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին Շրջանակային կոնվենցիան: Սակայն ընդհանուր առմամբ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում գերակայությունը տրվել է ազգային միասնության գերակայությանը:

Բավականին սահմանափակ է հայերի և ադրբեջանցիների մասնակցությունը երկրի հասարակական կյանքին, հատկապես ղեկավար մարմիններում: Այս խնդիրն առավել սուր է արտահայտված Քվեմո Քարթլիում հոծ բնակվող ադրբեջանցիների մոտ: Այստեղ բոլոր կարևոր պաշտոններն զբաղեցնում են էթնիկ վրացիները: Փոք-

50 Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերենից:

րամասնությունների մասնակցության և ներկայացուցչության աստիճանը երկրի քաղաքական կյանքում, որը կարևոր պայման է առավել արդյունավետ ինտեգրացման համար, սարսափելի ցածր է: Թբիլիսիի հետ երկխոսության բացակայության պատճառով համայնքներում ուժեղանում է խտրականության և օտարման զգացումը: Փոքրամասնությունների հիմնական խնդիրը պետական լեզվին չտիրապետելն է: «Վարդերի հեղափոխությունից» հետո կառավարությունը մի շարք օրենքներ ընդունեց, որոնք պարտադրում են փոքրամասնություններին՝ շփվել տեղական պաշտոնական կառույցների ներկայացուցիչների հետ վրացերենով, լինի դա պաշտոնական փաստաթղթերի ձևակերպում, բողոքների կազմում կամ որևէ ծառայության ընդունում: Պետական հաստատություններում աշխատանքի տեղավորվելիս կամ մասնագիտական գործունեություն ծավալելիս պարտադիր պահանջ է վրացերենին տիրապետելը, ինչպես նաև վերջերս գործունեության մեջ մտցրած որակավորման քննությունները: Անբավարար է մնում դպրոցներում լեզվի ուսուցման մակարդակը և փոքրամասնությունների ավելի քիչ ներկայացուցիչներ են շարունակում իրենց ուսումը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Նախագահ Սահակաշվիլիի վարչակազմը տեղական ինքնակառավարման լուրջ բարեփոխում է իրականացնում: 2005թ. ընդունվեց տեղական ինքնակառավարման մասին նոր օրենք, իսկ 2006թ. հոկտեմբերին տեղի ունեցան ՏԻՄ ընտրություններ: Սակայն իշխանությունը նախկինի պես կենտրոնացած է տարածաշրջանային և թբիլիսյան չինովնիկների ձեռքում: Փոքրամասնությունները համոզիչ փաստարկներ չունեն, որ ապակենտրոնացումը թույլ կտա նրանց ավելի ակտիվ մասնակցություն ունենալ որոշումների կայացման գործընթացում: Հատկապես հայերը ցանկանում են ինքնուրույն որոշումներ կայացնել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք է, օրինակ, կրթությունն ու մշակույթը: Այն դեպքում, եթե ապակենտրոնացումը նրանց ոչ մի հնարավորություն չտա, նրանք կշարունակեն պահանջել Սամցխե-Ջավախքի ինքնավարությունը: (Քվենո Քարթլիի ադրբեջանցի ակտիվիստների համար տեղական իշխանության մարմիններում ավելի շատ ներկայացուցիչներ ունենալը ավելի առաջնային է, քան ինքնավարությունը):

Շարունակվում է փոքրամասնությունների ներգաղթի գործընթացը ՀՀ և Ադրբեջան: Սակայն Երևանը և Բաքուն զերծ են մնում Վրաստանում հայկական և ադրբեջանական էթնիկ համայնքների աջակցության վերաբերյալ բացահայտ հայտարարություններից:

Նրանք առաջնահերթությունը տալիս են Թբիլիսիի հետ բարիդրացիական հարաբերությունների պահպանմանը, և, թեկուզ կարճաժամկետ հեռանկարում, կայունության ապահովմանը: Հայերը քաղաքականապես ավելի ակտիվ են, քան ադրբեջանցիները, թե՛ նրանք, թե՛ մյուսները վերջին ժամանակներս հանդես են գալիս բողոքի ակցիաներով, որոնք երբեմն վերածվում են բռնության ակտերի: Թբիլիսի պետք է ավելի շատ խրախուսի փոքրամասնություններին, որպեսզի նրանք լուծեն իրենց հարցերը պետական կառույցների միջոցով, այլ ոչ թե փողոցային բողոքի ակցիաներով:

Հանձնարարագրեր Վրաստանի կառավարությանը՝ Փոքրամասնությունների հարցում ավելի արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար.

1. Ավարտել քաղաքացիական ինտեգրացիայի Ազգային ռազմավարությունն ու գործողությունների ծրագրի մշակումը: 2007թ. պետությունը միջոցներ հատկացնել դրանց իրականացման համար:

2. Ավելացնել քաղաքացիական ինտեգրացիայի ֆինանսավորումն ու հնարավորությունները և քաղաքացիական ինտեգրացիայի հարցերով նախագահի խորհրդական նշանակել բարձրաստիճան պաշտոնյայի:

3. Վավերացնել տարածաշրջանային և ազգային փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիան և Եվրոպական շրջանակային կոնվենցիան՝ տարածքային համայնքների և իշխանությունների միջև սահմանամերձ համագործակցության մասին:

4. Դրական միջոցներ ձեռնարկել իշխանության կենտրոնական և տարածաշրջանային մարմիններում փոքրամասնությունների ներկայացուցչությունների հզորացման խթանման համար:

5. Ապահովել Ազգային պաշտպանի ներկայացուցչի ֆինանսավորումը Մառնեուլում և Ախալքալաքում:

6. Խորհրդակցել փոքրամասնության նվազագույնը 20% ներկայություն ունեցող քաղաքների քաղխորհուրդների (սակրեբուլոնների) հետ և ներառել նրանց ներկայացուցիչներին քաղաքացիական ինտեգրացիայի և հանդուրժողականության հարցերով Ազգային խորհրդի մեջ:

7. Խորհրդակցել ազգային փոքրամասնությունների խորհրդի հետ, եթե նոր օրենքը կարող է ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերել:

8. Շարունակել Զվեմո Քարթլիի հողերի բաժանման հետաքննությունը, բռնագրավել անօրինական ձեռք բերված հողերը և օգտագործման համար փոխանցել դրանք տեղական ֆերմերներին:

9. Ապահովել փոքրամասնությունների լեզուներով լուրերի երեկոյան թողարկումների հեռարձակումը Զվեմո Քարթլիում և Սամցխե-Ջավախքում:

Պետական կառավարման և կրթության ոլորտներում փոքրամասնությունների իրավունքների ապահովման համար.

10. Ընդունել կանոնադրություն, որը թույլ կտա ադրբեջանցներին և հայերին տեղական ինքնակառավարման մարմիններում, որտեղ նրանք գերազանցում են բնակչության ընդհանուր թվաքանակի 20%-ը, օգտագործել իրենց հարազատ լեզուն վարչական մարմինների հետ շփվելիս, բողոքներ ներկայացնելիս, քաղաքացիական փաստաթղթեր և սերտիֆիկատներ ձեռք բերելիս, պետական ծառայություններից նպաստներ ստանալիս, քաղաքային (մունիցիպալային) գործնական հանդիպումներ և սակրեբուլոներում ժողովներ անց կացնելիս:

11. Ուղղումներ մտցնել բոլոր այն օրենքներում, որոնք վերաբերում են պետական ծառայողներին, որպեսզի պաշտոնյաներն զոնե անցումային 10-15 տարիների ընթացքում իրավունք ունենան աշխատանքի կարողության՝ առանց պետական լեզվի իմացության: Դա վերաբերում է այն շրջաններին, որտեղ փոքրամասնությունները կազմում են ազգաբնակչության 20%-ը:

12. Ուղղել 2005թ. ընդհանուր կրթության մասին օրենքը, ընդգծել երկլեզու կրթությունը ազգային փոքրամասնությունների բնակության վայրերում և ապահովել, որ հիմնական սոցիալական գիտությունները դասավանդվեն ադրբեջաներենով և հայերենով (վրացերենին զուգահեռ):

13. Ուժեղացնել վրացերեն դասավանդող մասնագետների վերապատրաստման գործընթացը որպես երկրորդ լեզու, մշակել վրացերենի ուսուցման նյութեր և հնարավորություն տալ փոքրամասնություններին՝ սովորելու վրացերենը որպես երկրորդ լեզու:

14. Բուհ ընդունվելու մասին օրենքի մեջ փոփոխություն մտցնելու միջոցով բարելավել բարձրագույն կրթության հասանելիությունը բոլորի համար, որպեսզի փոքրամասնությանը պատկանող ուսանողները ընդունելության քննությունները հանձնեն ռուսերենով, հայերենով կամ ադրբեջաներենով: Ուսանողներին հնարավորություն տալ ուսումնասիրելու վրացերենը՝ որպես երկրորդ լեզու:

15. Զուրաբ Ժվանիայի անվան պետական կառավարման

ոպրոցը վերափոխել քաղաքացիական կառավարման ակադեմիայի՝ փոքրամասնությունների համար ուսման երկու տարի ժամկետով՝ նրանց համար նախատեսելով վրացերենի՝ որպես երկրորդ լեզվի՝ ուսուցման հնարավորություն: Քվոտաներ հաստատել Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճյուղ և Իլյա Ճավճավաձեի անվան պետական համալսարանի Մառնեուլի մասնաճյուղ ընդունվելու համար, որը կերաշխավորի փոքրամասնություններին պատկանող դիմորդներին տեղերի առնվազն 50%-ը: Օգնություն ընդունել ԳԳ ղեկավարությունից Թբիլիսիի համալսարանի Ախալքալաքի մասնաճյուղերի բարեփոխումների համար:

16. Ադրբեջանի և ԳԳ-ի հետ համատեղ ստեղծել հանձնաժողովներ՝ վրացական դպրոցներում պատմության դասագրքերի մշակման համար:

Փոքրամասնությունների դատական համակարգին և տեղական ինքնակառավարությանը հասանելիության բարելավումը.

1. Պետական մարմինների և մունիցիպալ կազմավորումների կողմից ընդարձակել տրամադրված ծառայությունների շրջանակը

2. Դատական գործընթացները թույլատրել իրականացնելու ադրբեջաներենով և հայերենով՝ այն մունիցիպալիտետներում, որտեղ բնակվում են ավելի քան 20% փոքրամասնություններ

3. Օրենքները թարգմանել և տարածել հայերեն և ադրբեջաներեն

4. Ընտրությունների ժամանակ սահմանափակումների վերանայում՝ տեղական ինքնակառավարման մարմիններում հավասար ներկայացուցչության և ընտրական իրավունքի հավասարության համար

5. Հանել այն քաղաքական կուսակցությունների գրանցման արգելքը, որոնք կրում են էթնիկ կամ տարածաշրջանային բնույթ և կուսակցությունների խորհրդարան մտնելու շեմը իջեցնել մինչև 5%

6. Տարածել տեղեկատվական գիտական նյութեր՝ շրջանային ընտրական հանձնաժողովի անդամների համար: Ընտրական ցուցակները, տեղեկագրերը և ընտրական արդյունքների արձանագրությունները տարածել երկու լեզվով այն շրջաններում, որտեղ փոքրամասնությունները կազմում են բնակչության 20%-ը:

Թբիլիսի / Բոյուսել, 22 նոյեմբեր, 2006թ.

2009թ. փետրվարի 25-ին ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից հրապարակվեց Վրաստանի անցած 2008թ. ժողովրդավարության խնդիրների վերաբերյալ ընդարձակ զեկույցը, որում մասնավորաբար տեղ էին գտել խնդրո առարկա թեմային վերաբերող հետևյալ դրույթները⁵¹.

«Կրոնական մի քանի համայնքներ բավարարված չէին այն կարգավիճակով, որը նրանց խոստացել էին գրանցման պայմաններում: Հռոմեական կաթոլիկ եկեղեցին (ՀԿԵ) և Հայ Առաքելական եկեղեցին դեմ են (ՀԱԵ) որպես քաղաքացիական կազմակերպության գրանցմանը և նախընտրում են գրանցվել որպես կրոնական կազմակերպություններ: ԵՎ ՀԱԵ-ն, և՛ ՀԿԵ-ն վստահեցնում են, որ Վրաստանի համար հանդիսանում են ավանդական կրոնական կազմակերպություններ, իսկ որպես ասոցացիա կամ հիմնադրամ գրանցվելը կիջեցնի նրանց կարգավիճակը:

Չիրականացվեցին ՀԿԵ-ի և ՀԱԵ-ի՝ խորհրդային շրջանում փակված կամ ՎՈՒԵ տրված եկեղեցական շինությունների վերադարձման գործընթացները: 2007 թվականին Արդարադատության նախարարությունը ծրագիր կազմեց վանքերի պատկանելության ուղղման փորձագիտական հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ՝ ՎՈՒԵ-ի մասնակցությամբ, ներկայիս գոյություն ունեցող հանձնաժողովի փոխարեն: Նախկինի պես վիճարկվում է Նորաշենի եկեղեցու հարցը ՀԱԵ և ՎՈՒԵ –ի միջև: Նոյեմբերի 16-ին հայր Տարիել Սիկինչելաշվիլին՝ վրաց ուղղափառ քահանան, բուլղոզեր էր մտցրել վրացական եկեղեցու և Նորաշենի համար ընդահանուր գավիթ՝ հիմնավորելով այդ ամենը գավիթը աղբից մաքրելու իր ցանկությամբ: Հայր Տարիելը հայտարարեց, որ մուտքը խիստ նեղ էր բուլղոզերի համար և հեռացավ, ապա գավթում հայկական մի քանի շիրմաքարեր տեղափոխեց: Այս տեսնելով՝ հայ եկեղեցականները վրդովմունք հայտնեցին և այդ գործողությունը որակեցին որպես անհարգալից վերաբերմունք այնտեղ թաղված հայերի նկատմամբ: Տարվա վերջին կոտորածները դեռևս թափված էին հայկական գերեզմանների կողքին, իսկ բարենորոգման աշխատանքները շարունակվում էին: ՀՀ վարչապետ դեկտեմբերին այցելեց Նորաշեն եկեղեցի, և,

51 U.S., Department of State, 2008 Human Rights Report: Georgia, Bureau of Democracy, Human Rights, and Labor, 2008 Country Reports on Human Rights Practices, February 25, 2009, <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2008/eur/119080.htm>.

թեև այնտեղ տեղի ունեցավ եկեղեցու շենքի պատկանելության վերաբերյալ վիճելի հարցերը կարգավորող հանձնաժողովի ստեղծման շուրջ քննարկում, այնուամենայնիվ տարվա վերջին հանձնաժողովը դեռ ստեղծված չէր:

Ոչ մի միջոց չէր ձեռնարկվել Հռոմեական կաթոլիկ եկեղեցու 5 եկեղեցիների վերադարձման վերաբերյալ և Վատիկանի հրահանգով ՀԿԵ-ն դադարեցրեց բոլոր վեճերը: ՀԿԵ-ն համար արգելքներ էին ստեղծվում Քութայիսում և Ախալցխայում նոր եկեղեցիներ կառուցելու հարցում: Չնայած այն բանին, որ ՀԿԵ-ն առաջարկել էր ստեղծել հանձնաժողով՝ վիճելի եկեղեցիների ծագումը ուսումնասիրելու համար, ՀԿԵ-ն և ՀԱԵ-ն ոչինչ չէին լսել փորձագետների խմբի մասին, որոնք աշխատում էին եկեղեցիների պատկանելության վերաբերյալ: ՀԱԵ-ն թույլտվություն չունեց նոր եկեղեցիների կառուցման համար: Նրա գլխավոր խնդիրը հանդիսանում է թբիլիսիի 5 և Ախալցխայում 1 եկեղեցիների վերադարձը:

Խորհրդարանում ներկայացված էին փոքրամասնությունների 5 ներկայացուցիչներ՝ երկու հայ և երեք ադրբեջանցի: 2006 թվականի տեղական ինքնակառավարման բարեփոխման արդյունքներով տարածքային կառավարման մարմիններում էթնիկ փոքրամասնությունների զբաղեցրած տեղերը համաչափ էր երկրի յուրաքանչյուր տարածաշրջանի ազգային փոքրամասնության բնակչության թվաքանակին: Ավելի խոշոր քաղաքների ղեկավարները իրենց ցուցակում ներառել էին ազգային փոքրամասնությունների պատկանող լիդերների:

Օրենքի պահանջին համապատասխան՝ ազգային պաշտպան Սուբարին խորհրդարանում ներկայացրեց կիսամյակային հաշվետվությունները: Համեմայն դեպս, նրա ելույթը խորհրդարանի առաջ, որը նախօրոք ծրագրված էր 2007 թվականին, հետաձգվեց առնվազն 2 անգամ: Սուբարին վստահեցնում էր, որ իշխանությունները ուշացնում են իր զեկույցը, քանի որ այն ղեկավարության հանդեպ քննադատություն էր պարունակում 2007 թվականի նոյեմբերին բողոքի ցույցը ցրելու վերաբերյալ: Հունիսի 15-ին Սուբարին զեկույց ներկայացրեց խորհրդարանի քննարկմանը, որը վերաբերվում էր 2007 թվականին և կենտրոնացած էր 2007 թվականի նոյեմբերին ցուցարարների հանդեպ ոստիկանության կիրառած բռնություններին, մամուլի ազատության նվազմանը և հավաքների ազատության իրավունքը չհարգելուն, օրենքի գերակայության նվազմանը և հայկական ու վրացական եկեղեցիների միջև վեճերի կարգավորման կարևորությանը: Նրա շնորհանդեսը դեկտեմբերի 30-ից հետո

ընդգրկեց տարվա 6 ամիսը և կենտրոնացավ նմանատիպ թեմաների վրա, բայց նաև ներառում էր ընդդիմադիր թեկնածուների քաղաքական հետապնդման թեման և ընտրակեղծիքների հաստատումը: Սուբարին հաստատեց, որ կառավարությունը մինչև այժմ չի հետաքննել 2007 թվականին տեղի ունեցած ծեծերը:

Ախալքալաքի շրջանում բնակչության մեջ հայերի գերակայության հետ մեկտեղ շատ էթնիկ հայեր ասում էին, որ կառավարությունը պետք է հայոց լեզվին տեղաշրջանային կարգավիճակի հնարավորություն տա, քանի որ նախկինում շատ քչերը գիտեին վրացերեն և այդ պատճառով անկարող էին գործավարություն կատարել վրացերենով: Նրանք նաև բողոքում էին, որ կառավարությունը չէր ապահովում վրացերենի ուսուցումը: Էթնիկ ադրբեջանցիները նման բողոքներ էին հղում էթնիկ ադրբեջանցիների գերակայություն ունեցող Քվեմո Քարթլի տարածաշրջանի վերաբերյալ:

Յուլիսի 22-ին Վահագն Չախալյանը և Ռուբեն Չախալյանը՝ տեղական ոչ կառավարական «Միասնական Ջավախք» միության երկու անդամները, որոնք երկրի էթնիկ հայերի համար ինքնավարություն էին պահանջում, մեղադրվեցին հասարակական կարգը խախտելու, ձերբակալման ժամանակ դիմադրություն ցույց տալու, իրավապահ մարմինների աշխատակիցներին սպառնալու, ինչպես նաև հրազենային զենքի ապօրինի պահման մեջ: 2006 թվականին մարդիկ փորձեցին սողոսկել Ախալքալաքի քաղաքապետարանի շենք, որի ժամանակ վիրավորեցին ոստիկաններին: Տեղում նաև երրորդ անձ կար, որի նկատմամբ քրեական գործը ընթանում էր մինչև տարվա վերջ, թեև նա պաշտոնապես ձերբակալված կամ մեղադրված չէր:

Էթնիկ հայերը, ադրբեջանցիները, հույները, արխազները, օսերը և ռուսները սովորաբար հաղորդակցվում են իրենց մայրենիով կամ ռուսաց լեզվով այն շրջաններում, որտեղ նրանք գերակայող էթնիկ խումբ են կազմում: Օրենքը պահանջում է, որ ազգային փոքրամասնությունների աշակերտները սովորեն վրացերեն՝ որպես երկրորդ լեզու ավելի քան 200 տարրական և միջնակարգ ռուսական, ադրբեջանական և հայկական դպրոցներում, որոնց համար վրացերենը մայրենի լեզու չէ: Ձուրաբ Ժվանիայի անվան հանրային կառավարման դպրոցը հիմնվել է Քութայիսում և նախատեսված է հատուկ կոմպակտ բնակեցված վայրերում փոքրամասնությունների մասնակիցների համար: Թբիլիսիում էթնիկ խմբերի ճնշող մեծամասնությունը կենցաղում շփվում է վրացերենով:

2007թ. հուլիսին խորհրդարանը հաստատեց մահմեդական-մես-

խեթցիների՝ 1944թ. Ստալինի կողմից աքսորված ազգային փոքրամասնության խմբի հայրենադարձության մասին օրենքը: Օրենքը պատասխան էր այն պարտավորություններին, որոնք երկիրը իր ուսերին էր վերցրել 1999 թվականին Եվրոպայի խորհրդի առաջ՝ մինչև 2011 թվականը մեխեթցիների տեղափոխման ապահովման վերաբերյալ: Օրենքի ընդունումը հնարավորություն էր տվել կառավարությանը՝ սկսել մեսխեթցիների հայրենադարձության դիմումների ընդունումը՝ հայրենադարձությունը հաստատող փաստաթղթերով: Օրենքի ընդունումը ենթարկվում էր խիստ քննադատության զանգվածային մամուլի և խորհրդարանի ընդդիմադիր անդամների կողմից, որոնք մատնանշում էին էթնիկական նուրբ բալանսն այն շրջաններում, որոնք բնակեցված էին մեսխեթցիներով, իսկ հիմա բնակեցված հայկական մեծ բնակչությամբ: Ավելի քան 1700 մեսխեթցիներ հայրենադարձության դիմում տվեցին տարվա վերջին: Ոչ պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 150-ը վերջին երեք տարիների ընթացքում վերադարձան՝ խաղաղ բնակություն հաստատելով Ախալցխայում և Աբասթևանում: Դեկտեմբերի 26-ին խորհրդարանը քվեարկեց, որպեսզի դիմումների ընունման ժամկետը երկարացնեն մինչև 2009 թվականի հուլիսի մեկը»:

Ամփոփելով միջազգային իրավունքի եւ փաստաթղթերի շրջանակներում Ջավախք հայկական տարածաշրջանի հիմնախնդրի արժարժունը, նշենք, որ այդ «միջազգային իրավունքն» ու «փաստաթղթերի կույտը» սոսկ ինչ-ինչ իրավունքեր ունենալու հնարավորություն են ընձեռում: Ոչ ավելին: Միջազգային իրավունքի նորմերով ամրագրված ջավախահայության սրբազան իրավունքների պաշտպանության եւ դրանցով պաշտպանվող քայլերի իրականացման համար **ուժ է հարկավոր՝ «ուժն է ծնում իրավունք»:** Այլապես՝ ջավախահայության հարցերին միջազգային ատյաններում կվերաբերվեն այնպես, ինչպես վերաբերվեցին Բեռլինի հայտնի կոնգրեսում հայկական հարցին: Իսկ այդ ուժը միմիայն կարող է դառնալ կազմակերպված, սեփական խնդիրներին գիտակից ու գրագետ ջավախահայությունը: Յուսով ենք, որ այս գրքով մատուցվող տեղեկությունները կօգնեն այդպիսի որակային հատկանիշներով ջավախահայության երեւան գալուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	4
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ	15
ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	148
ՄԱԿ-Ի ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (UNESCO)	285
ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ԵԱՀԿ)	315
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ	380
ԱՄՆ ՊԵՏԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԶԵԿՈՒՅՑ	386

Նշումների համար

Հայոց հյուսիսային դարպասները.

ՋԱՎԱԽՔ

ԼՈՌԻ

ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Շապիկին պատկերված քարտեզի հեղինակ՝ Գ. Մ. Բադալյան

Հեղինակ - կազմող՝

Խմբագիր և առաջաբանի հեղինակ՝

Հրատարակիչ տնօրեն՝

Համակարգչային ձևավորումը՝

Վահե ՍԱՐԳՍՅԱՆ

Արա ՊԱՊՅԱՆ

Ռուզան Սահակյան

Արթուր Բոյախյանի

Ստորագրված է տպագրության 07.10.2009: Չափսը՝ 60 x 84 1/32:

Թուղթը՝ օֆսեթ- 1: Տառատեսակը՝ «Arial Armenian»:

Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 24,5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 150 օրինակ:

Տպագրվել է «Գևորգ - Հրայր» ՍՊԸ



հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:

Հեռ.՝ 52-79-74, 52-79-47:

Էլ. փոստ lusakn@rambler.ru